



ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

№ 9 1892

ՍԵՂՏԵՄԵՐ

1892 № 9

ԶՈՐՐՈՐԿ ՏԱՐԻ

	Երես	
1 ԱՐԱՍԻԱՆԵԱՆՅ, ԱԻՆՏԻՔ. . . . .	1247	Ազգայնական, չարժանները:
2 ՄԻՓՍԻՆԵԱՆՅ, ԱՐՇԱԼՈՅՍ . . . . .	1258	Գամառ-Քաթիկոսի վրաստ. (բան.).
3 ՄԱՉՏԷՏ, Գ. . . . .	1260	Անցեալից (պատկեր):
4 ԹՈՒՄԱՆԵԱՆՅ, ՅՈՎՀԱՆՆԷՍ . . . . .	1273	*** (բանաստեղծութիւն):
5 ԲԱՐԵԼԵԱՆ, Ա. . . . .	1274	Քրիստոֆ Աղունք:
6 ՏԷՐ-ՄԻՐԱՔԵԱՆ, ՅՈՎՀ. . . . .	1296	Հին ու նոր Աթլէր, Է
7 ՎԱՆՅԵԱՆ, ԳՐԻԳՈՐ. . . . .	1310	Հայ բուսաները (վերջ):
8 Ա. Ա. . . . .	1322	Աղեններ. — «Գառափարակութիւն»:
9 Ս. Մ. . . . .	1329	«Արդար Գառառտան» Փափաղանի:
10 ԱՐԱՍԻԱՆԵԱՆՅ, ԱԻՆՏԻՔ. . . . .	1356	Գարոցական-վարչական ընթացք:
11 ԼՈՒՍԻՆԻ. . . . .	1348	Ամուսն Գրանիկ:
12 ՄԱԼԻԱՍԵԱՆ, ՍՏ. . . . .	1354	Ռաֆայէլ Պատկանեան:
13 ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ, ՏԻԳՐՈՆ. . . . .	1360	Համաժողովները Մատիապոմ:
14 Ֆ. . . . .	1370	Թղթակցութիւններ Առատտանից:
15 ՄԱԼԻԱՍԵԱՆ, ՍՏ. . . . .	1379	Առաջիկայ «Արարտ» ամսագրում:
16 ԽՄԲ. . . . .	1381	Խնայարարական կողմից:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:




Թ Ի Ֆ Լ Ի Ս

ՏՊԱՐԱՆ Ա. Գ. ՈՍԻՆԵՆՅԻ

Типография М. Д. Ротшильда, Гол. пр., г. № 41.

1892



# Մ Ո Ւ Ր Ճ

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

## Ա Մ Ս Ա Գ Ի Ր

№ 9 1892

Ս Ե Պ Տ Ե Մ Ի Ե Ր

1892 № 9

ԶՈՐԲՈՐԴ ՏԱՐԻ

Թ Ի Ֆ Լ Ի Ս  
ՏՊԱՐԱՆ Ս. Դ. ՌՕՏԻՆԵԱՆՅԻ  
1892

Дозволено цензурою. Тифлисъ, 12 Сентября 1892 г.

Типографія М. Д. Ротиніанца. На Гол. просп. соб. домъ № 41.

## ԱԶԳԱՐՆԱԿՉԱԿԱՆ ԶԱՐԺՈՒՄՆԵՐԻ ԿԱՐԵՒՈՐՈՒԹԻՒՆԸ

Եւրոպական հրապարակախօսութեան մշտական և պարբերական թեմաներից մէկը կազմում է արդէն վաղուց որոշւած խնդիրը մի երկրի ազգաբնակչութեան կազմի և դորա հետ կից՝ այսպէս կուած՝ ազգաբնակչական շարժումների մասին:

Ազգաբնակչական շարժումներ ասելով հասկանում են այն թւական փոփոխութիւնները, որ առաջանում են մի երկրի կամ ազգի ցոյց տւած ծնունդներից, մահի դէպքերից, ներգաղութից և արտագաղութից:

Ներգաղութը այն նոր բնակիչներն են, որոնք զալիս են ուրիշ երկիրներից առմիշտ նոր երկրում հաստատուելու համար. արտագաղութը այն բնակիչներն են, որոնք թողնում են մի երկիր՝ ուրիշ երկրում հաստատուելու համար:

Մի երկրի ազգաբնակչութեան թիւը, սակայն, ամենից շատ նշանաւոր փոփոխութեան ենթարկւում է ոչ այնքան զաղթական շարժումներից, որքան ծնունդների և մահի դէպքերի համեմատական առաւելութիւնից: Գաղթական շատ նշանաւոր շարժումները միայն մի ազգի պատմութեան յայտնի շրջաններում կարող են գերակշիռ դեր խաղալ. բայց այն, ինչ մի ազգի թւի փոփոխութեան վերայ ամենից չարտուէ, է ազդում, դա՛ ծնունդների և մահի դէպքերի կամ այլապէս մահացութեան համեմատական առաւելութիւնն է: Մնունդը և մահացութիւնը անհրաժեշտ երևոյթներ են, որոնք արտայայտւում են մարդկութեան մէջ ամեն օր, ամեն ժամ և րոպէ մեծաքանակ դէպքերով, մինչդեռ միւս պատճառները, որոնք ազդում են մի երկրի ազգաբնակչութեան թւի վերայ՝ նոյն չարատուութիւնը, կանոնաւոր ընթացքը չունեն և հաւասար կարևորու-

Թիւն չին ներկայացնում ամեն ժամանակ: Վերջապէս ծնունդն ու մահացու թիւնը կապած են ամեն մի հակի գոյութեան հետ, ամեն մարդ պատճառ է դառնում այդ երևոյթների կրկնելուն, այդ պատճառով ազգաբնակութեան թւի վերայ ծնունդն ու մահացութիւնը ներգործում են ոչ թէ մի երկրի որոշ տեղերում, այլ ամենուրեք, ամեն մի տան ու օջախի մէջ:

Քաղթական երևոյթները, անկասկած նոյնպէս դեր են կատարում. բայց նոցա կատարած դերը հեռաւորապէս անգամ չեն կարող համեմատել այն դերի հետ, որ կատարում են ծնունդները ու մահացութիւնը բնակիչների թւի վերայ: Բայց այդ նկատմամբ աւելորդ չէ նկատել հետեւեալը.

1. Անդհանուր մարդկութեան թւի համար զաղթականութիւնը անմիջապէս մի նշանակութիւն չի ներկայացնում: Պարզ է, որ երկրագնդիս վերայ ապրողների թիւը ոչնչով չի փոփոխուիլ, եթէ զիցուք Ռուսիայում ապրող երեք թէ քանի միլիոն հրէաները տեղափոխելու լինեն Արգենտինեան հանրապետութիւնը, կամ եթէ մի քանի հարիւր հազար գերմանացիք, անգլիացիք, իրլանդացիք և այլն Ամերիկա կամ հեռաւոր կղզնիկները զաղթելու լինեն, ինչպէս որ այդ հէնց կատարում էլ է ներկայումս:

2) Քաղթականութիւնը, հետեւապէս, կարող է նշանակութիւն ունենալ բնակիչների թւի համար միայն առանձին-առանձին երկիրների նկատմամբ, նոցա համար, որտեղից դուրս են գաղթում, և նոցա համար, դէպի ուր նոքա ներս են գաղթում:

3) Այդ բաւական չէ: Ոչ մի երկիր չկայ աշխարհքումն առանց պետական կազմակերպութեան. բայց մի պետութեան մէջ կարող են ապրել այլ և այլ ազգեր: Նորեկ զաղթականները կարող են միանալ մի ազգի հետ, կամ չը միանալ: Մի պետութեան բնակիչների թւի աւելանալով զաղթականների միջոցով, ուրեմն, դեռ չի նշանակում թէ այդ պետութեան մէջ ապրող ամեն մի ազգ աւելացաւ: Հետեւապէս պետութեան տեսակէտը կարող է ուրիշ լինել, պետական-ազգային տեսակէտը ուրիշ, առանձին-առանձին ազգերի տեսակէտը ուրիշ,—նայած թէ ինչ պետութիւն է, ինչ ազգեր են և ինչ զաղթականներ են:

Քաղթականութիւնը հետեւապէս մարդկութեան թւի վերայ

չի ազդում, առանձին-առանձին պետութեան բնակիչների թւի վերայ ազդում է ամենից շատ, բայց առանձին-առանձին ազգերի համար նորա կարեորութիւնը շատ պայմանական է:

Բոլորովին այլ է ծնունդների և մահացութեան թւերի նշանակութիւնը յատկապէս ամեն ազգի համար առանձին-առանձին: Այստեղ ամեն մի նորածին աւերացնում է ոչ միայն մարդկութեան, և ոչ միայն պետութեան, այլ և անպատճառ մի ազգի անդամների թիւը. մահացութիւնը իսլում է մարդուս ոչ միայն մարդկութիւնից և ոչ միայն մի պետութիւնից, այլ և անպատճառ մի ազգից:

Հետաքրքրութիւնը ծնունդների և մահացութեան համար մի ազգի մէջ, նոյն այդ պատճառներով, թէ ազգային է, թէ պետական է և թէ ընդհանուր մարդկային. դորա հակառակ գաղթականութիւնից առաջացած բնակիչների թւի փոփոխութեան համար հետաքրքրութիւնը մասնաւոր է և պայմանաւորած թէ ազգերի համար, թէ պետութիւնների համար. իսկ մարդկութեան թւի համար նա անմիջական ոչ մի հետաքրքրութիւն չի ներկայացնում:

Այս ամենով մենք ուզեցինք կարելիին չափ խիստ շեշտել այն ահագին կարեորութիւնը, որ ունի մի ազգի մեծութեան չափի համար ծնունդների և մահացութեան համեմատական աւաւերութիւնը: Հէնց որովհետև ծնունդները և մահացութիւնը ամեն երկրում ոչ միևնոյնն է և ոչ էլ միևնոյնը կարող է լինել, հէնց այդ միակ պատճառով մի ազգ կարող է աճել և կամ նւազել ու ոչնչանալ աշխարհքիս երեսից, իւր հետ ամեն լով և կուրտուրան ու լեզուն և ամենը ինչ կապւած է այդ ազգի զոյցութեան հետ՝ ապագայ մարդկութեանը միայն աւերակներ և չիշատակարաններ աւանդելով...

Կար ժամանակ, երբ ազգաբնակչական շարժումների երևոյթները լոկ դիտնական հարցասիրութեան նիւթ էին. կար ժամանակ, երբ ծնունդների և մահացութեան թւեր ժողովելը և նոցա իրար մօտ շարել ու դիտելը գրեթէ մի կուրիոզի հետաքրքրութիւն էին ներկայացնում: Կար ժամանակ, երբ ծնունդների և մահացութեան վերայ լոկ կրօնական աչքով էին նայում, իսկ նոցա վերաբերեալ թւանշանները աստուածաբաններին էր միայն նիւթ տալիս եզրա-

կացնելու՝ ասուածային ստեղծագործութեան ներդաշնակութիւնը, նորա սահմանած կարգն ու կանոնը այս երկրիս վերայ:

Այժմ՝ և արդէն վաղուց խնդիրը դուրս է եկել ասուածաբանական շրջաններից. երկնքից նա վայր է իջել երկիր: Այդ թւանշաններով այս օրւայ օրս, և արդէն վաղուց, լուսաւորած երկիրներում ոչ թէ մետաքիզիական, այլ սոցիոլոգիական, սոցիալական և քաղաքագիտական օպերացիաներ են անում, մի խօսքով նոքա հիմք են ծառայում լուրջ հրապարակասութեան և առողջ առաջարկութիւնների՝ վերաբերեալ ազգերի կենցաղին, հասարակական խնդիրներին և քաղաքական կեանքին:

Այն գիտակցութիւնը, թէ մի ազգ կարող է ոչ միայն նւաճումներով, այլ դեռ աւելի ապահով կերպով իւր սեպհական ներքին ոյժով աճել, մեծանալ, զօրեղանալ և դորանով իսկ իւր կուլտուրական ու քաղաքական ոյժը տարածել ու ամրապնդել, — այդ գիտակցութիւնը մի յեղաշրջումն էր նաև եւրոպական ազգերի աշխարհայեցողութեան մէջ, այն եւրոպական ազգերի, որոնց համար օտար երկիրներ նւաճելը քաղաքական իղէալ էր և պետական հզօրութեան միակ ապացոյց և նպատակ էր համարուում:

Երբ սկսեց նկատուել, որ մի երկրի ազգաբնակչութեան կանոնաւոր կերպով աճելը կապ ունի ներքին քաղաքական և տնտեսական ու սոցիալական կարգ ու կանոնների հետ, այն ժամանակ ծնունդների և մահացութեան թւերը մեծ նշանակներ սկսեցին ծառայել նոյն այդ երկիրների ներքին կեանքի համար առհասարակ:

Ներքին ոյժով աճելը այժմ և արդէն վաղուց զլխաւոր և ամենաապահով գրաւականն է համարուում մի ազգի ապագայի, իւր դիրքին միւս ազգերի շարքում և դորա հետ կապւած նաև առաջդիմութեան ու կուլտուրականութեան ոյժին:

Մի հատիկ օրինակ բաւական է ցոյց տալու ծնունդների առաւելութիւնով աճելու կարելիութիւնը և այն ոյժի աճումը, որ կապւած է այդ իրողութեան հետ: Անա Անգլիան, առանց Շոտլանդիայի և առանց Իրլանդիայի, այլ զուտ Անգլիան և նորա հետ կից Ուէլսի երկիրը. այդ Անգլիան հարիւր տարի առաջ, այն է 1790 թւականին ունէր ընդամենը 8.540.000 բնակիչ, իսկ 100 տարի

անցած՝ անցեալ 1891 թւականին նոյն այդ բուն Անդլիան Ուէլսի հետ ունէր արդէն 29,001,000 հոգի բնակիչ:

Եւ այդ հաշուում դեռ չը կան նոյն այդ երկրից դուրս գաղթած անդլիացիք և ուէլսցիք, որոնց թիւը սակայն շատ նշանաւոր է, քանի որ 1815 թւականից մինչ 1890 թւականը, ուրիմնայս վերջին 75 տարւայ ընթացքում, Մեծ-Բրիտանիայից դուրս են գաղթել կողմ թւով 12,800,000 անձ, որոնցից բուն անգլիացիք պէտք է եղած լինեն յամենայն դէպս ոչ պակաս քան 6 միլիոն հոգի, այնպէս որ 1790-ից մինչ 1891 թւականը, դուրս գաղթած անգլիացիները և ուէլսցիները թիւը պէտք է ընդունել ոչ պակաս քան 7 միլիոն հոգի: Եւ եթէ վերադարձածներին ու ուրիշ երկիրներից Անգլիա եկած ու հաստատուածներին էլ հաշւի առնելու լինենք, էլի կը տեսնենք որ դուրս գաղթածների թիւը շատ աւելի գերազանց է եղած, այնպէս որ Անգլիան այս վերջին հարիւր տարում առնւազը 4 միլիոն հոգի աւելի է տւել ուրիշ երկիրներին, քան սոցանից ստացել:

Բայց չը նայած զորան բուն անգլիական ազգի անդամների թիւը, ուէլսցիների հետ միասին, այդ հարիւր տարում  $8\frac{1}{2}$  միլիոնից բարձրացել է 29 միլիոնի: Եւ ինչով? Ոչ նւաճումներով, ոչ այլ ազգեր միացնելով իւր հետ, ոչ կրօնափոխութիւնով, ոչ մի ուրիշ պատճառով, բայց միայն և միմիայն իւր ծնունդների առաւելութիւնով:

Եթէ մենք բերինք Անգլիայի օրինակը, այդ նրա համար չէ, որ Անգլիան մի բացառիկ բարեյաջող դէպք լինի ներկայացնում: Ոչ. այն, ինչ աւելց Անգլիայի համար, նոյնը կարելի է կրկնել մի շարք այլ եւրոպական ազգերի համար, որոնք հարիւր տարի առաջ կամ հայոց ազգի չափ էին, կամ նրանից պակաս կամ միայն երկու կամ երեք անգամ նորանից աւելի և որոնք այսօր կամ հայոց ազգի թւին հասել են և կամ հնգապատիկ ու տասնապատիկ նորանից գերազանցել են:

Եւ այդ բոլորը շնորհիւ այն կարգ ու կանոնների, այն կեանքին, որի շնորհիւ ծնունդները շատ աւելի են, քան մահացութեան դէպքերը: Այդ առաւելութիւնը այնքան մեծ է, որ այդ ազգերին հոգս չի պատճառում, երբ, որպէս Անգլիայի համար տեսանք, տարեկան տասնեակ ու հարիւր հազար հոգի գաղթում են ուրիշ երկիրներ:

Ասում ենք թէ բացառութիւնների մասին չէ խօսքս, որովհետև ծնունդների մեծ առաւելութիւններ ներկայացնում են զրեթէ բոլոր լուսաւորած երկիրները, որոնք դեռ ևս իրանց աճումի ոյժի գազաթնակէտին չեն հասել:

Ահա մի ցուցակ, որից ամեն ընթերցող կարող է եզրակացնել, թէ ինչ ուժեղ աճելութիւն ունեն յիշւած երկիրները և ազգերը: Դորա համար մենք կը վերցնենք իբր օրինակ նախ 1890 թւականը, ապա 1879 թւականը:

Ահա ցուցակը 1890 թւականի համար: Ամեն մի 10.000 հոգի բնակիչների վերայ եղել են ծնունդներ և մահի դէպքեր:

1890-ին 10,000 բնակիչների վերայ ընկնում է

	Ծնունդ	Մահ	Յակեւմն
1) Շէէյցարիայում . . . . .	266	209	57
2) Բելգիայում. . . . .	287	206	81
3) Նորւեգիայում, . . . . .	300	178	122
4) Անգլիայում (Ուէլսի հետ) . . . . .	302	195	107
5) Շոտլանդիայում. . . . .	303	197	106
6) Դանեմարքում. . . . .	306	190	106
7) Հոլլանդիայում . . . . .	329	205	124
8) Գերմանիայում . . . . .	357	244	113
9) Իտալիայում . . . . .	359	264	95
10) Աւստրիայում . . . . .	367	294	73
11) Պրուսիայում . . . . .	366	240	126

Մենք այդ ցուցակից տեսնում ենք, որ 1890 թւականին յիշւած երկիրներից ոչ մինում ազգաբնակչութիւնը չի պակսել, տեսնում ենք որ ամեն երկրում ազգաբնակչութիւնը աճել է և այն էլ այնպէս, որ այդ աճումը եղել է ամեն 10,000 հոգի բնակչի վերայ՝ սկսած 57-ից մինչ 126, և ուրեմն ամեն մի միլիոն բնակչի վերայ՝ սկսած 5,700 հոգուց մինչ 12,600 հոգի:

Բայց 1890 թւականը դեռ ստոր գաղափար է տալիս եւրոպական ազգերի աճելութեան մասին, որովհետև այս հարիւր տարիներում սովորական աճելութիւնը դրանից զերազանց է եղել:

Ահա նոյն տեսակ մի ցուցակ 1879 թւականի համար, որ ես

առաջ եմ բերում ոչ ուրիշ պատճառով, քան այն, որ այս բողոքին այդ թվերը ձեռքիս տակն են:

1879-ին 10,000 բնակիչների վերայ ընկնում է

	Ծնունդ	Մահ	Ցանկումն
Շէշցարիայում . . . . .	305	226	79
Շէկիայում . . . . .	305	169	136
Բեղիայում . . . . .	315	219	96
Գանեմարքայում . . . . .	320	198	122
Նորեգիայում . . . . .	320	158	170
Շոտլանդիայում . . . . .	343	200	143
Անգլիայում (Ուէլսի հետ) . . . . .	347	207	140
Հոլլանդիայում . . . . .	366	225	141
Իտալիայում . . . . .	376	299	77
Գերմանիայում . . . . .	389	256	133
Պրուսիայում առանձնապէս . . . . .	392	248	144
Աւստրիայում . . . . .	392	298	93

Այդ ցուցակից մենք տեսնում ենք որ անելութիւնը չիշած երկիրներում ամեն մի 10,000 բնակչի վերայ եղել է ամենապակասը 77 հոգի (Իտալիայում) և ամենաշատը 170 հոգի (Նորեգիայում), որ նոյնն է թէ մի միլիոն բնակիչների վերայ, որքան որ հայերս ենք Անգրկովկասում, զոնէ ենթադրաբար, չիշած երկիրներից 1879-ին աւելացել է ամենաքիչը 7,700 հոգով, ամենաշատը 17,000 հոգով:

Ընթերցողը ուրեմն այժմ համոզւած կը լինի, որ այն, ինչ աւելց Անգլիայի ազգաբնակչութեան անելութեան մասին այս վերջին հարիւր տարիներում, կարելի է աւելի կամ պակաս աստիճանով վերագրել մի շարք ուրիշ երկիրներին կամ ազգերին, որոնք շարունակ և անընդհատ կերպով անել են շնորհիւ ծնունդների առաւելութեան և ոչ նւաճումներով կամ զաղթականներ ընդունելով և կամ այլապէս:

Եւ նոյն իսկ Ֆրանսիան, որի ազգաբնակչութեան մասին արդէն ամենքին յայտնի է թէ որքան քիչ է բաղմանում, նոյն իսկ, ասում ենք մենք, այդ ամենից քիչ ծնունդներ տուող Ֆրանսիան այս հարիւր տարիներից ամեն մինում, շատ սակաւ բացառութեամբ, միշտ

աճել է, զոնէ այնքան որ եթէ նա 1789 թւականին ունէր 26 միլիոն բնակիչ, հարիւր տարից յետոյ, այն է 1891 թւականին նա ունէր 38,344,000 բնակիչ: Եւ այդ երևոյթի մէջ օտարականների Ծրանսիա հաստատելը երկրորդական դեր է կատարել. այդ երկիրն էլ աճել է գրեթէ միայն շնորհիւ իւր տւած ծնունդների առաւելութեանը մահացութեան վերայ:

Ով կարող է կասկածել որ այդ ներքին աճումը մեծապէս օգնել է եւրոպական ազգերին երկրագնդիս վերայ բռնել այն իշխող և ազդեցիկ դիրքը, որ նոքա ունեն այժմ:

Միթէ պատահական է, որ Եւրոպայի այն վեց պետութիւնները, որոնք մեծ պետութիւններ են կոչուում և որոնք Հիւսիսային Ամերիկայի Միացեալ Նահանգների հետ ղեկավարում են բարձր քաղաքակութիւնը ամբողջ երկրագնդի վերայ, պատահական է որ նոքա բոլորը ոչ միայն քաղաքակրթութիւնով, այլ և թւով մեծ ազգեր են? Այդ պետութիւններից նոցանում, ուր գերիշխող ազգը մէկն է, ինչպէս Ծրանսիայում, Նորախայում, ամեն մէկի գերիշխող ազգը ամենապակասը մօտ 30 միլիոն է, իսկ ընդհանրապէս շուրջ 40 միլիոն է: Եւ պատահական է միթէ որ միւս մեծ պետութիւնների մէջ, ուր մէկը չէ իշխող ազգը, այլ մի քանի ազգեր միութեան կապերով կապւած են իրար հետ, միասին ներկայացնում են նոյն թւական մեծ ոյժերը?

Կարող էր միթէ Պրուսիան իւր ազգային քաղաքականութիւնը առաջ տանել, եթէ ինքը մի քանի անգամ աւելի մեծ չը լինէր քան այդ նոյն ազգային քաղաքականութեան ընդդիմադրող այլ և այլ մանր գերմանական պետութիւնները, որոնք այսօր դաշնակցած են Պրուսիայի հետ? և կամ եթէ Պրուսիան միայնակ իւր թւով զոնէ մօտաւորապէս հաւասար չը լինէր իւր վաղեմի հակառակորդ Աւստրիային? Եւ սակայն այդ Պրուսիան, մեզնից եօթանասուն տարի առաջ ունէր միայն 11 միլիոն բնակիչ, իսկ այժմ, զեւ չը հաշւած նւաճումներով ձեռք բերած նոր նահանգները, նոյն Պրուսիան, իւր նախկին սահմաններում երկու անգամ աւելի բազմամարդ է:

Եւ ինչ տեսարան կը ներկայացնէր այսօր Ծրանսիայի քաղաքական դիրքը, եթէ նա իւր ազգաբնակչութեան մեծութիւնով գէթ մօտաւորապէս հաւասար չը լինէր իւր հակառակորդ Գերմանիային:

Եւ սակայն այդ նոյն Ֆրանսիայի այժմեայ ամենամեծ ցաւը հէնց այն է որ անելութեան կողմից յետ մնալով միւս պետութիւններինց, նրան վտանգ է սպառնում որ թերեւս մի պատերազմի զէպքում չը ճխլի իւր հակառակորդի թւական գերազանցութեան պատճառով:

Ոչ, պատահական չէ որ աշխարքումս ազգերի ճակատագիրները վերայ ազգող ամենանշանաւոր պետութիւնները ոչ միայն քաղաքակրթութիւնով, այլ և թւով մեծ պետութիւններ են: Մօտաւորապէս հաւասար քաղաքակրթութեան տէր ազգերը նաև քաղաքական դիրքով իրար հաւասար են միայն՝ երբ մօտաւորապէս հաւասար ազգաբնակչական թիւ են ներկայացնում: Այդ պատահական չէ հէնց այնպէս, ինչպէս պատահական չէ երկրորդական և երրորդական քաղաքական դիրքը առաջիններին թէկուզ քաղաքակրթութիւնով հաւասար բայց մեծութիւնով շատ աւելի պակաս ազգերի ու երկիրների, ինչպէս Իսպանիան, բայց մանաւանդ Շւեդիան ու Նորւիգեան, Բելգիան, Հոլլանդիան, Շւէյցարիան և այլն:

Սա, ուրեմն, մի լուրջ, շատ լուրջ խնդիր է թւական ոյժի օրէնքը ամեն մի ազգի յառաջդիմութեան, քաղաքական դիրքի և դեռ ամենինց առաջ նորա գոյութեան համար:

Եւ այն, ինչ ասեց քաղաքական դիրքի մասին մեծ ու մանր պետութիւնների նկատմամբ, այդ նոյնը վերաբերում է նաև առհասարակ բոլոր ազգերին, երբ խօսքը սոցա գոյութեան պայմանների մասին է:

Մեզ, հայերին է պատկանում արդեօք արհամարանքով կամ անփոյթ կերպով վերաբերել ազգերի գոյութեան տարրական պայմաններին?

Վերջ չէր լինիլ այն ապացոյցներին թէ որքան և որքան կարևոր է գոյութեան, ապահովութեան և յառաջդիմութեան նկատմամբ որ մի ազգ ուշք գարձնի իւր թւական ոյժերի մեծանալու վերայ և որ, յամենայն դէպս զիտակցութիւն ունենայ այն փոփոխութիւնների մասին, որ կրում է իւր թւական ոյժի կողմից: Ապացոյցները կարող կը լինէինք յանհունս շարունակել և թւական մեծութիւնը կապակցութեան մէջ բերել շատ և շատ բազմատեսակ երևոյթների հետ: Բայց այսքանն էլ բաւական ենք համարում, զէթ առայժմ, արծարծելու համար այդ խնդիրը, որին

Ճառայելու համար մենք աւելի առաջ գրել էինք նաև «Թիւ և Ոյժ» յօդածը <sup>1)</sup>: Բայց այստեղ մենք դորա վերայ աւելի էլ ենք շեշտում, այլ հիմքերի վերայ հիմնելով, և աւելացնելով միաժամանակ այն ամենաառաջնակարգ դերը, որ կատարում է մեր արծարծած խընդրում մի ազգի բնական աճումը կամ նւազումը, այսինքն այն, որ յառաջանում է ծնունդների և մահացութեան քանակութիւնից. այդ անում ենք մենք հակառակ այն աւանդական հայեացքին, որի համաձայն ազգաբնակութեան թւի խնդիր է տեսնում միայն երբ զաղթականութիւն է տեղի ունենում: Առանց զաղթականութեան նշանակութիւնը այդ խնդրում ուրանալու, բայց և այն առաջնակարգ նշանակութիւնը չը տալով զաղթականութեան մի ազգի գոյութեան խնդրում, ինչպէս որ այդ սովորաբար անում է մեզանում, մենք ուզեցինք ուշադրութիւն դարձնել մի աւելի մեծ և աւելի յարատև Ֆակտորի վերայ մի ազգի աճելու կամ նւազելու. խնդրում մի Ֆակտորի, որի հետ անձանօթ լինելը կորստաբեր հետեանքներ կարող է ունենալ ազգի նոյն իսկ գոյութեան համար:

Թէ որքան այդ բնական երևոյթը աննշմար է անցել և շարունակում է աննշմար մնալ մեզանում, թէ որքան մի ազգի գոյութեան համար այդքան կարևոր մի Ֆակտոր ոչ ոքի ուշադրութիւնը չի դարձնում, այդ երևում է արդէն նորանից որ մեր մամուլը երբէք չի զբաղել դորանով: Բայց մենք աւելին կ'ասենք. այն պաշտօնական մարմինները, որոնց ձեռքումն են նիւթերը հայերիս վերաբերեալ ազգաբնակչական շարժումները դիտելու և ընդհանուրի գիտութեանը բերելու համար, այն է հոգևոր կառավարութիւնները, երբէք չեն մտադրել արդիւնաւէտ կացուցանելու, շահեցնելու իրանց ձեռքում գտնւած լիակատար տեղեկութիւնները:

Յայտնի է, որ հոգևոր կառավարութիւնները պարտաւորւած են ամեն մէկը իւր դաւանութեան պատկանող ժողովրդի ամեն մի ծուխ և պատահած ծնունդները, պատկները և մահի դէպքերը ցուցակագրել: Այդ կատարում են քահանաները, ամեն մէկը իւր ծուխերի վերաբերմամբ: Այդ ցուցակները յանձնում են հոգևոր կառավարութիւններին, կոնսիստորիաներին, որոնք համազումարներ են

<sup>1)</sup> Տես «Մուրճ» 1890 թ. № 5.

անում այդ դրքերից և ներկայացնում ամեն մէկը իւր բարձր հոգևոր իշխանութեան: Արդ, ինչ զործածութիւն է անում այն բոլոր հարուստ նիւթերից, որ աճարւած մնում են արխիւներում: Ոչ մի այլ զործածութիւն, բացի այն որ նոքա ծառայում են մետրիկականների (վիայականների) համար: Ար և է ընդհանուր նպատակին նոքա չեն ծառայել երբէք և կարծես մարդիկ չեն էլ կասկածել որ այդ նիւթերը կարող են բարձր կամ աւելի ընդհանուր նպատակների ծառայել: Եւ այդ նրանից է որ մեզանում ամենեւին գիտակցութիւն չկայ թէ ինչ բարձր շահեր կան կապւած ազգաբնակչական շարժումների հետ, շարժումներ, որոնց մասին մեզանում տիրող կարծիքը նոյնքան մետաֆիզիկական է, որքան Եւրոպայում անցեալ դարերում:

Փամանակ է զործին այլ ընթացք տալ:

Շնորհիւ այն բանի, որ մենք մեր ձեռքում եղած հում նիւթերը շահացնել չը գիտենք, մենք այսօր զրկւած ենք հնարաւորութիւնից մեր ազգի թւական ոյժերի փոփոխութիւնները տարեցատարի գիտելու: Բայց մենք ոչ միայն զորանից ենք զրկւում, այլ զրկւում ենք նաև հնարաւորութիւնից գիտակցօրէն վերաբերւելու դէպի բոլոր այն խնդիրները, որոնք սերտ կապ ունեն ազգի անելութեան և նւազման և առհասարակ ազգաբնակչական շարժումների հետ: Այդ խնդիրները շատ և շատ բազմաթիւ են, այնքան բազմաթիւ, որ նոցա թւելը անհնարին է: Նոյն իսկ հրասարակախօսութեան բազմաթիւ նիւթեր մշակւում են մակերևութական կերպով և կնքւում ընդհանուր Ֆրագներով, որովհետև պակասել են անհրաժեշտ թւերը, որոնք պէտք է գաւառութեան հիմքը կազմէին:

ԱԻԵՏԻՔ ԱՐԱՍԽԱՆԵԱՆՅ

## ԳԱՄԱՌ-ՔԱԹԻՊԱՅԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Ա. ՄԻԻԹԱՐԵԱՆՅԻ

Ահա նորան էլ խրեց գերեզման...  
Հայի արխրամած, խաւար երկնքից,  
Ուր քանի մի ասող փայլում են միայն  
Մըւայլ ամպերի պատառւածքներից՝  
Ընկաւ և մի ասող յաւիտեան շիջած.  
Ողբն, ո՞վ Մուսա, կորուսող էր անգարձ:

\*  
\* \*

Հարազատ զաւակ խեղճ հայրենիքի՝  
Բաղդակից էր միշտ երգէչը նորան,  
Սիրած ամբոխին կեանքը նըւիրած՝  
Որպէս մեծ փոքրին առաջնորդ դարձաւ,  
Լացեց նորա հետ, նորա հետ ժրպտաց  
Եւ նորա նըման չարքաշ ապրեցաւ.  
Շըրջեց ափերով նա Մայր-Արաքսի,  
Իմացաւ նորա ցաւերն ու կըսկիծ,  
Իբր երկըրպագու ծերուկ Մասիսի՝  
Ուխտ ելաւ նորան հեռու աշխարհից.  
Տեսաւ, շօշափեց իւր խակ ձեռներով  
Խեղճ ժողովըրդի վէրքերը բացւած,  
Տեսաւ նա աշխարհ պատած խաւարով  
Եւ աւերակներ փոշու մէջ կորած...

\*  
\* \*

Աւ երկար օրեր անոյշ քընարով  
 նա լոյս, զիտութիւն, ուսումն քարոզեց,  
 «Հընութեան փոշին մեզնից թափ տալով»  
 թըմրած սըրտերում նա յոյս արծարծեց:  
 Սիրեց հայ մանկտին և ոգևորւած  
 Տաղեր յօրինեց ուրախ մանկութեան,  
 Աւսուցչի անվերջ տանջանքն յանձն առած՝  
 Զոհեց տարիներ նորա կըրթութեան.  
 Ատեց նա բոլոր սըրտով հարըստին,  
 Կեղծին, անպէտքին քարչեց նա հանդէս  
 Եւ ճըշմարտութեան սուտ ջատագովին  
 Մաղրով, թըքելով հանեց ասպարէզ.

\*  
\* \*

Եւ անոյշ էին նորա քաղցրսձայն  
 Քընարի երգեր. ամբոխն հըմայլւած  
 Բերան սերտեց այդ տաղեր զիւթական,  
 Որ երկար օրեր պահէ անմոռաց,  
 Որ երգէ և մեծն, երգէ պատանին,  
 Որ միշտ ուսանի այդ վեհ քարոզով,  
 Որ միշտ արձագանք զըտնի իւր սըրտին  
 Երգչի յիշատակն օրհնաբանելով:

# ԱՆՑԵԱԼԻՑ

(ՊԱՏԿԵՐ)

Գ. ՄԱՉՏԵՏԻ

1866 թ. շոքամառուայ ամիսներին զիշատիչ կառուի նման անլսելի, բայց արագ ու հաստատ քայլածքով զաղտագողի մօտենում էր մեզ անիծեալ հիւրը—խոլերան: Սարաւիք օրէցօր սասականում էր, թէև մեր մօտաւոր շրջակայքում դեռ ևս խոլերացին ոչ մի դէպք չէր պատահել: Հազար ու մի՝ մէկ-մէկից աւելի տազնասպիչ լուրեր կայծակի արագութեամբ տարածուում էին քաղաքի բոլոր անկիւններում: Ամենքը դողում էին, զանազան ընկալմանօր դեղեր էին ձեռք բերում և, գլուխները հեռահեռէ աւելի ու աւելի կորցնելով, միմիայն խոլերացի մասին էին մտածում ու խօսում: Այդ տազնասպի շնորհիւ համարեա բոլորն էլ հիւանդացան. բոլորի ջղերը քայքայւել էին, երեսները դեղնել ու փոս ընկել, աշխուժութիւնը կորել, իսկ զանազան դեղերի ու հազար ու մի նախապահականող կաթիլների ի շար գործ դնելը,—որ վախկոտութեան սովորական հեռականքն է,—շատ-շատերին ահագին վնասներ պատճառեց: Սարաւից գլուխները կորցրած՝ մարդիկ ծայրացեղութեան մէջ էին ընկնում, որին իհարկէ շատ նպաստում էր հասարակութեան օգիտութիւնը, և այդպիսով այդ դեղերը օգուտ տալու տեղ՝ վնասում էին: Ծրինակ՝ ազնեականների առաջնորդը, որ տաք-տաք սուսպի մէջ անդամ մի-մի հացի զգալ ինչ-որ պատենտաւոր դեղ էր ածու՛մ, իւր այդ «նախազգուշութիւններովը» այնտեղ հասցրեց, որ կարգին հիւանդացաւ, իսկ բանկիր Ջելմանը այնքան արիւն էր գործա-

ծում, որ թունաուրեց և կը մեռնէր, եթէ որ չը վրկէին: Չը գիտեմ ինչու մի տարօրինակ կարծիք էր տարածուել, թէ խոլերան ողելից քննիչներին վախենում է, և ամենքը սկսեցին հազար ու մի տեսակ «ЖЕДУЧНАЯ» ու «ТРАВНИКЪ» կոչող խմիչքներ և կոնեակ ու ուտմ խմել... Ոչ ոքի մօտենալ չէր կարելի, բերների հոտը մարդ էր վայր զցում: Խմացնում էին մինչև անգամ աիկիներին ու օրիորդներին, համոզուած լինելով, որ այդ «օգտակար» է... Բժշկական վարչութեան տեսուչը, որ մի ծեր մարդ էր՝ բուրգոնեան քթով և տանել չէր կարողանում՝ ոչ ջահէլ բժիշկներին, ոչ էլ «ստողջապահութիւն» խօսքը, անգոյար ասում էր ամենքին՝

— Մի կէս բաժակ լլն կոնեակ ածէք, յետոյ մէկ-երկու բիւմկա թոնդ առմ, վրայիցն էլ կարմիր գինի... նրանից յետոյ էլ զարչին ու պղպիղ... մի շնչումը կոնծէք, — ես մարդ չը լինեմ, թէ ինչ խոլերա-մոլերա լինի մէջներդ, դուրս չը գայ, կորչի: Հէնց հոսիցը կը վախենայ խեղձը, կը կորչի... Հաստատ խօսք եմ ասում... Ինչ ուզում են թող մեր նոր դուրս եկած բժիշկները ասեն... խոլերայի դէմ կուելու զրանից լաւ միջոց չը կայ:

Եւ «կոնծում էին», շատ դու «էին կոնծում», — մի շնչումը... Ամէնքի բերնից այդպիսի «կուել» հոտ էր փչում ու մարդի շմացնում...

Մարիա Լեոնայի սալնումն էլ զազարեց սովորական ուրախ կեանքը... Սկզբում նա ուզում էր փախչել արտասահան, բայց այդ մտադրութիւնից պէտք է ձեռք քաշէր, որովհետև վերջին անգամ Պարիզ դնալու համար վերցրած պարտքերը դեռ չէր վճարել ու ցանած արտերի երեսը պատկանում էր պարտատէրներին, իսկ ժլատ ամուսինն էլ չէր համոզւում նոր պարտք անելու: Մէկ մտքովը անց կացաւ դնալ իրանց տո՛մական կալածքը, բայց այդ միտքն էլ անիրագործելի դուրս եկաւ: Այնտեղ վաղուց անբնակ, անախրական թողած տան առաստաղը կաթում էր, տախտակամածը փտել էր, դռներից ու պատուհաններից մի քանիսը փեղկեր չունէին, մօտակայքում ոչ բժիշկ կար, ոչ դեղատուն, իսկ գիւղացիք ասորում էին վերին աստիճանի հակառողջական պայմաններում, որ իհարկէ այժմ երկիւղալի էր: Ամուսնականաց Մարիա Լեոնայն պէտք է մնար քաղաքում, բայց նա մոռացաւ իւր պիքնիքները, ուտու-

ները, երեկոյթները, որոնց ժամանակ այնքան հրապուրիչ կերպով փայլում էին նրա մարմարանման թովիչ ուսերը, տխրական սև շոր հագաւ և ժամ չէր անցնում, որ նազուն ու վշտահար տեսքով, որը այնքան սազ էր գալիս նրա «blonde mélancolique» շնորհալի կերպարանքին, չը վերադառնար դեղատնից անազին կապոցներով բերելով հետը նոր-նոր «նախապահպանող» ու պատենտաւոր դեղեր: Նրա շքեղ վարդագոյն հիւրասնեակում ամբրի փոխարէն կարբոլեան թթւատուի հոտ էր կանգնած, կապերտակալը (ШИФОНЬЕРКА) զարդարում էին զանազան կաթիլներ պարունակող սրւակներ, վարդագոյն փայտէ սատափազարդ հիանալի յարկադարանը (Этажерка) ամբողջապէս բռնւած էր ֆլանելով ու ֆրանսիական մանանեխի սպիղանիներով (ГОРЧУЧУМКАՅ) իսկ սեղանի վրայ, որ մինչև օրս զարդարում էին միայն անգլիական կիսսէլներ <sup>1)</sup>, այժմ ցցւած էին «Քորդո»-ի ու «հարիւր աւազակների» քացախի ռամկական շիշեր: Բժիշկ Կոթիկին այդ բոլորը այն աստիճան ծիծաղելի էր թւում, որ նա իւր սովորութեան համաձայն առանց քաշելու բարձրաձայն ծիծաղում էր...

Երեկոյ էր, այն սքանչելի երեկոներից մէկը, որ լինում են միշտ մայիսի վերջերքին օրհնւած հարաւում: Պատշգամբի բաց դռնովը ու պատուհաններովը պարտէզիցը ներս էր փչում յամիկների ու յափրուկների բուրմունքը և սպիտակ ակացիաների հրաշալի հոտը, որ՝ ինչպէս շատերն ասում են՝ սասակացնում է մարդուս աչքի բքի փայլն ու պայծառութիւնը: Նոր մայր մտածարեւր դալարի, պատերի ու մարդկանց դէմքերի վրայ վարդագոյն սուեր էր տարածում, որի մէջ ամեն ինչ այնքան խաղաղ երջանկութեան տպաւորութիւն էր գործում, որ մինչև անգամ Մարիա Լեոնայի տխուր սև հագուստը կորցրել էր իւր դաժանութիւնը... Մարիա Լեոնայան նոր էր տուն վերադարձել նոր տազնապիչ լուրերով և «նախապահպանողական» դեղերի նոր պաշարով՝ սրւակների ու արկղիկների մէջ, որ այժմ համաչափ կարգով դարստում էր...

— Այս եթեր (ЭФИР) է, — ասում են, սիրտը խառնելիս օգ-

<sup>1)</sup> Շքեղ սպտիկներով զարդարւած հրատարակութիւն:

նում է... Այս հեղուկն էլ պէտք է վառել, ծխել, հիւանդութեան թոյնը ոչնչացնում է... Այս էլ... այս էլ... Ախ այս թոյն է, պէտք է հեռու տեղ դնել:

Բժիշկը ծիծաղից թուլանում էր:

— Է այժմ, Մարիա Լեոնա, անյաղթելի արմաղա <sup>1)</sup> ունէք ձեր տանը... Խոլերան սկի քիթն էլ չի կոխիլ ձեր սենեակները...

Լսած լուրերից վատ տրամադրութեան մէջ ընկած ու վրդովլած Մարիա Լեոնան քիչ էր մնում բարկանար բժշկի վրայ...

— Դուք հօ բացի ծիծաղելուց ու ամեն բան հերքելուց ոչինչ չէք անում: Ել ինչի բժիշկն էք, եթէ որ բժշկականութեան հաստ չէք ընծայում...

— Բժշկականութեան ես հաւատում եմ, — ծիծաղելով պատասխանեց Կոմիսը, — և հէնց այդ է պատճառը, որ ձեզ խորհուրդ եմ տալիս իզուր չը քայքայել ձեր առողջութիւնը հազար ու մի անպէտք միքստուրաներով ու կաթիլներով և ջապականել սենեակների մաքուր օդը զանազան բաներ ծխելով...

— Ինչ է, ձեր առողջապահութեան համաձայն չը պէտք է նախազուշութիւններ ձեռք անել:

— Ընդհակառակը, Մարիա Լեոնա, պէտք է... Եւ եթէ ամենքը հետեւէին առողջապահութեան խրատներին ու նախազուշանային, հանրախտ չէր էլ լինիլ: Իսկ այժմ, հաւատացէք ինձ՝ ամենից կարեւորը սրտայնդութիւնը, մաքրութիւնն ու կանոնաւոր կեանքն է:

— Էհ, դուք միշտ ձեր...

— Այո, ես միշտ միևնոյնն եմ կրկնում... Հանրախտը մեր տղիտութեան, մեր բազմադարեան կեդատութեան ու անշարժութեան պատիժն է... Եթէ որ զիտութեան ձայնը ազդեցութիւն ունենար մեր կեանքի կազմակերպութեան վրայ, եթէ որ առաջաւոր մարդկանց ձայնը...

Լաւ, լաւ, լաւ, — կոկետաբար ընդհատեց նրա խօսքը Մարիա Լեոնան. — Գնանք սեղանատուն, զնանք... Թէչը արդէն պատրաստ է և մեզ սպասում են...

<sup>1)</sup> Մեծ նաւատորմից:

Բայց յամառ կոժինը այնու ամենայնիւ ճանապարհին խօսքը վերջացրեց.

—Այն ժամանակ, հաւատացած եղէք, հանրախոս ասած բանի հոռն անգամ չէր լինիլ մեզնում:

Այդ հրաշալի երեկոցեան Մարիա Լեոփնան ու հիւրերը մինչև անգամ ծիծաղում էին կարծես առ վայրկեան մոռանալով տաղնապիչ լուրերը: Կոմսուհին շնորհալի կերպով պատմում էր թիկնոցների ամենամոտր ֆառոնը, — «երկու հատ հանգոցց (ՃԱՄԻՅ), mesdames, երկու հանգոցց, — մէկը՝ առաջից, մէկը՝ յետևից», — բանկիրը ինչ որ՝ շըշըւացնելու ձայնով ասում էր պետութեան օգտի մասին, ազիւտանալը բերը վեր էր քաշում, իսկ ազնւականների առաջնորդը ըստ սովորականին կատաղի կերպով պաշտպանում էր ներկայ հասարակական կազմակերպութեան հիմունքները: Բոլորին էլ մի տեսակ քաջալիրում էր ուրախ ու համարձակ բժշկի ներկայութիւնը. տաղնապը կարծես անհետացել էր... Բայց այնու ամենայնիւ երբ որ թէյի ժամանակ մի աման հիանալի հասած մորի (КЛУՅՈՒՈՒՅԱ) բերեցին, ոչ մէկը ձեռք չը մեկնեց գէպի ամանը և միայն որկրամոլ առաջնորդը տխուր-տխուր այնպիսի ազահ հայեացք զցեց նրա վրայ, կարծես աչքերովն ուզում էր ուտել:

—Ափսոս, — հոգոց քաշեց նա լիակուրծք:

Կոժինը նորից ծիծաղեց.

—Մորիից վախենում էք: Քիչ է մնացել շաքներիցդ էլ վախենաք: Այ քեզ բան: Տասնեակ տարիներ ապրել էք ամենասարսափելի պայմանների մէջ, ոչնչից չէք վախեցել, անհանգիստ չէք եղել թէ ձեր ոյժերն ու առողջութիւնը արմատիցը քայքայւում են, իսկ այժմ՝ անփնաս պտուղից վախենում էք... էյ, պարոններ, պարոններ, մենք ինքներս ենք խոլերա պատրաստել մեր գլխին, վերջապէս պէտք է հասկանանք այդ...

Առաջնորդը յօնքերը վեր քաշեց ու զննող հայեացքով նայեց նրա վրայ:

—Այդ ինչ մտքով էք ասում, կարելի է իմանալ...

—Այս բոլեխ, — անվրդով կերպով պատասխանեց կոժինը մորի լցնելով իւր ամանի մէջ: — Երբ որ աշխարհումս չքաւորների թիւը շատ է շատանում, այն ժամանակ անհրաժեշտ կերպով հանդէս է

գալիս մահւան ոգին ձեռքին բռնած հանրախա կոչւող սուրբ և սկսում է սրբել չափազանց խիտ շարքերը...

—Սխալում էք,—տաք-տաք վրայ բերեց կոմսուհին,—հիւանդու թիւնը հարուստ-աղքատ չի ջոկում, ում պատահում է՝ տանում է...

Կոժինը ակամայ ծիծաղեց:

—Այդ նրանից է, կոմսուհի, որ հիւանդու թիւնը մարդկանցից արզարադատ է...

Ինքնասէր կոմսուհին վիրաւորւեց, կարմրեց ու մի քիչ կծելով ասաց.

—Գիտէք, բժիշկ, եթէ ես չիմանայի թէ որքան բարի էք դուք, կը կարծէի թէ դուք ուրախ էք որ խոլերա է մեղնում...

Կոժինը դադարեց ժպտալուց և թեթևակի շարժեց յօնքերը:

—Եւ կը սխալէիք, կոմսուհի,—վրայ բերեց նա մի քիչ հեղնական եղանակով: Ես էլ ձեզ պէս խոլերան չարիք եմ համարում, բայց ոչ անձնական չարիք, այլ՝ ամենքի համար... Եւ գիտէք, ինչ պէտք է ասեմ ձեզ: Այդ չարիքը, ինչպէս զրեթէ ամեն մի չարիք, ունի և իւր հակառակ կողմը...

—Լավ կողմը:

—Այո:

—Ի՞նչ լաւ կողմ,—հարցրեցին բոլորը միաձայն:

Մարիա Լեոֆեան, որ չէր կարողացել դիմանալ և գայթակղելով բժշկի օրինակից սկսել էր մորի ուտել, բայց հատ-հատ վերցնելով ամանից ոսկէ զլխաքորոցով հաւատացած լինելով, որ այդպէս աւելի քիչ վտանգաւոր կը լինի,—զարմացքիցը մինչև անզամ զլխաքորոցը մի կողմ դրեց:

—Ինչո՞ւն է այդ լաւ կողմը:

—Նրանում, որ մարդիկ նրա շնորհիւ բարոյապէս լաւանում են,—չարունակեց խօսքը Կոժինը մի քիչ խիտ ձայնով... Մրաները մի քիչ փափկում է և ակամայ հոգս են տանում ուրիշների մասին... Այ օրինակ դուք, կոմսուհի, խոլերայի ոչժը նւագիցնելու համար հազար բուբլի նւիրեցիք քաղաքում չբաւորների համար սեղանատուն բանալու նպատակով և այժմ ինքներդ էք կառավարում այդ սեղանատունը... Մարիա Լեոֆեան ուշադրութիւն զարձրեց

Իւր տան զեանայարկում կենողների դուրթեան վրայ և խոլերայի վախից աւեց նրանց ամեն բան ինչ որ անհրաժեշտ է նրանց: Նա մինչև անգամ հրաժարւեց նրանց բնակարանների վարձից այն պայմանով որ այդ փողը նրանք գործ գնեն իրանց սնունդը բարւօքելու վրայ: Խեղճ կոշկակարի բնակարանը այժմ ակտասահմանած է, եւի տւած ջրի համար թորանոց (ԿՄՍԻ) է շինւած, իսկ երեխաները սպիտակ հացով կաթ են խմում... Տեսնում էք ինչքան բարեգործեր է անել տւել խոլերան... Երևի Սոնեան այժմ ուրախութիւնից պար է գալիս...

Այդ լսելով Մարիա Լեոփեան, որ վերաւորւել էր բժշկի խօսելրից ու պատրաստւել էր նրան մի լաւ կճել, վախեցած նայեց չորս կողմը՝ աչքերով փնտռելով իւր աղջկան: Աղջիկը նստած էր սենեակի մի անկիւնում և նրա զուստո գէմքի վրայ վառ փայլում էին նրա մեծ, բարի աչքերը, որոնցով նա կարծես նոյնպէս ինչպէս և ականջներով ազահարար հետևում էր իւր բարեկամի—բժշկի ամեն մի խօսքին:

Բժիշկը նոյնպէս աչքը դարձրեց այն կողմը, ուր նայում էր Մարիա Լեոփեան:

—Սոնեա, ուրախ էք, որ ձեր բարեկամների վրայ հոգս են տանում, հարցրեց նա նկատելով նրան մթնում:

Ուրախ է արդեօք Սոնեան, որ հոգս են տանում իւր «արդէււած» բարեկամների, կոշկակարի՝ Կոստեա ու Վարեա երեխաների վրայ: Ի հարկէ ուրախ է, ուրախ՝ ի բոլոր մանկական սրտէ: Այդ պարզ երևում է թէ նրա երեսի կարմրելուց, թէ նրա հեղ ու բարի աչքերի փայլելուց, երբ որ նա ամօթխածութեամբ պատասխանեց «այո»:

—Դէ, վեր կաց գնա այստեղից, տազնապալից ասաց Մարիա Լեոփեան: Գնա պատշգամբը Ֆրէյլէյնի մօտ, ուր ուզում ես գնա, միայն թէ այստեղ մի նստիլ... Դու որ չը լսես մեր խօսակցութիւնը ոչ ոքից ոչինչ չի պակսիլ. դու գիտես որ ես այդպիսի բաներ չեմ սիրում...

Երբ որ Սոնեան դուրս թուաւ սենեակից, Մարիա Լեոփեան շարունակեց խօսքը նոյն տազնապալից ձայնով.

—Շատ վախենում եմ աղջկանս համար... Իւր տարիքի հետ

համեմատած՝ չափազանց զարգացած է և սաստիկ զգացուն, սաստիկ ջղաչին է: Իսկ նրա այդ մտերմութիւնը կօշկակարի երեխաների հետ ինձ սաստիկ զայրացնում է, բժիշկ, և դուք ի դուր էք քաջալերում նրան... Ես խստիւ արգելել եմ, որ չը համարձակի այսուհետև բարեկամութիւն անել նրանց հետ... Ասում էք, յանդուգն բժիշկ:

Ասաց նա ու շարածձի կերպով մատը թափ տւեց բժշկի վրայ:

Մութը աւելի էր պատել, — օդում զգացւում էր արդէն մօտալուտ հարաւային գիշերւան քաղցրութիւնը... Պարտէզի թաւ թփերի մէջից լսեցին սոխակի առաջին զայլայլիկները, առժամանակ լսեցին՝ կարծես հանդան, բայց յետոյ յանկարծ արագ-արագ և աւելի ուժգին հնչեցին: Մանգաղաձև նւազ լուսինը արդէն շողշողում էր ոսկեգոյն փայլով՝ դեռ ևս կիսաթափանցիկ մշուշի մէջ, իսկ նրա կողքին կարծես լողարանից դուրս զալով վառւեց մի փայլուն աստղ, որ փայլելում էր ու կարծես մարդուս կանչում էր դէպի երկինք... Գունատ դէմքով ու մեծ ու հեզ աչքերով աղջիկը կանգնած էր պատշգամբում և մի տեսակ լարւած դրութեամբ ակնապիշ նայում էր թէ մոխրագոյն — կապուտակ մշուշին, թէ բարձրում փայլելող աստղին, թէ խաւարամած թփերին, որոնց մէջից լսում էին սոխակի գեղգեղանքները... Ֆրէյլէյնի մօտ նա չէր ուզում գնալ, Ֆրէյլէյնը շատ էր փնփնջում ու երբէք չէր պատասխանում նրա հարցերին, ասում էր, որ այդ հարցերը աւելորդ, դատարկ կամ թէ չէ՝ փոքրիկ ազնկայ չը վայելող հարցեր են... Իսկ նա սաստիկ փափագում է իմանալ ամեն բան... ամեն բան... և այն թէ ինչու ինքը չը պէտք է լսի մեծերի խօսակցութիւնը, և այն, թէ ինչու չը պէտք է սիրի Կոստեային ու Վարեային, ինչու նրանք՝ ինչպէս իւր մայրիկն ու Ֆրէյլէյնը ասում են՝ իւր թացը չեն, թէև նրանք էլ իրան նման երեխաներ են և բարի Ատուածը պատուիրել է սիրել ամենքին... Վերջապէս ինչ բան է այդ խոլերան, որի մասին բոլորն էլ իրանից թաքուն, կամայ, փրսփրսալով են խօսում, և որից բոլորը սաստիկ վախենում են, թէև նա, բժշկի ասելով, շատ բարիք է արել կամ անել տւել երեխա-

ների և աղքատների համար... Շատ՝ վառվառուն, սուր մտքեր էին իրար զալիս Սոնեայի փոքրիկ մանկական զլխում, շատ հարցեր էին ծագում և թէև այդ հարցերն ու մտքերը նրա զլխում չէին պարզում ու կանոնաւոր կերպով կարգի ընկնում, բայց նրա մանկական սրտի համար ամեն բան պարզ էր... Նրա սրտիկը անդադար բաբախելով ասում էր, որ Կոստեան ու Վարեան այժմ կաթ ունեն խմելու, սպիտակ հաց ունեն ուտելու, որ նրանց հայրը այժմ տաք կերակուր ունի...

—Այդ դու ես, Վարեա, ասաց Սոնեան պատրջգամբի տակից շորերի խշխշոց լսելով ու կռացած՝ ուշադրութեամբ նայելով ներքևի մութ մշուշի մէջ:—Համ:

—Ես եմ, —խուլ ձայնով արտասանեց Վարեան զուրս զալով մշուշի մէջից՝ բերանը լիքը ու սպիտակ հացը ձեռքին:

—Ընթրիք ես անում, համ:

—Հա, մենք էլ այսօր թէյ խմեցինք...

—Թէյ:

—Հա... Հայրիկն էր բերել մասնախմբից...

—Ի՞նչ մասնախմբից:

—Աղքատների համար որ կայ... հիմա որ խոլերա է ընկել քաղաքը...

Վարեան սկսեց շուտ—շուտ շարժել ծնօտները, զժւարութեամբ կուլ աւեց բերնի հացը, շունչ քաշեց ու պատրաստում էր ինչ որ մի բան պատմելու. Սոնեան աւելի ցած կռացաւ, բայց այդ ժամանակ լուեց Մարեա Լոմփայի ձայնը:

—Սոնեան, Սոնեան,—գոռում էր մայրը, ով գիտի էլի փողոցային երեխաների հետ ես խօսում...

Սեղանատանը ամեն բան կերպարանափոխեց... Քաղցր խօսակցութեան ամենալաւ ժամանակը, երբ որ բոլոր տիկիները միացած վրէժ էին հանում Կոթիկից նրա չարձակումների համար, ջանկարծ վախորած ներս վազեց բժշկական վարչութեան տեսուչը... Նրան նայողը իսկոյն կը հասկանար, որ ինչ որ սարսափելի վատ բան պէտք է պատահած լինի... Նա հեթհեթում էր ու թաշկինակով սրբում էր ճաղատ զանգի քրտինքը:

— Խորէրան, հան, — միաձայն հարցրեցին նրան ամենքը և խփօջն լռեցին:

Տեսուչը դրականաբար շարժեց գլուխը:

— Այտե՛ղ, մեր քաղաքում:

— Այո, էլ կասկած չի կարող լինել... Մի անգամից հինգ մարդ... Նշանակեա՞ծ է մասնախմբի արտակարգ նիստ և ես եկել եմ կանչելու ձեզ, կոմսուհի, և ձեզ, collega...

Կոժինը խփօջն գնաց... Ամենքը վերցրեցին իրանց զլխարկները: Վախներիցը բոլորն էլ շտապում էին գնալ ծանօթներին հաղորդել այդ սարսափելի լուրը ու յետոյ թաք կենալ իրանց տանը, ուր ինչպէս նրանց թւում էր իրանք աւելի ապահով կը լինէին... Մարիա Լւոմբան մնաց մենակ և այդ մենակութիւնը այժմ, աղմկալից խօսակցութիւնից յետոյ, աւելի էր վախեցնում նրան... Ծնկները ծաւուում էին, նա նստեց, ուզում էր լալ, բայց արտասուքը չէր գալիս: Ամենատագնապալից բոպէներին նա սովորաբար ապաստանում էր մարդու առանձնասենեակը, բայց այժմ այդ էլ չէր կարող անել, — գեներալը գնացել էր մանեօւրներին... ըստ երևոյթին կատարեալ միայնակութիւնը և անօգնական դրութիւնը բոլորովին շշմանցրել էին նրան... Վախիցը չու՞ժ աչքերով և դունաթափ՝ լարած ականջ էր գնում նա իւր շուրջը տիրող խաղաղութեանը կարծես յուսալով լսել մի որ և է այնպիսի բան, որ հանէր նրան այդ թըմբած դրութիւնից: Աննպատակ, չոր հայեացքը ման էր ածում նա ամեն խորշ ու անկիւնում դարստած սրւակների ու արկղիկների վրայ և յանկարծ նրա մէջ ցանկութիւն ծագեց մի անգամից կուլ տալ այդ բոլոր դեղերը և փրկւել, անկասկած փրկւել ու բոլորովին ապահովւել... Ինչ որ մի ներքին ձայն շշնջում էր, թէ՛ եթէ այդ բոլոր դեղերը միասին նրա ստամոքսումը լինեն, նա այնուհետև կարող է բոլորովին աներկիւղ լինել... Բայց բարեբախտաբար Մարիա Լւոմբան գլուխը դեռ բոլորովին չէր կորցրել... Նա ուշքի եկաւ, չիշեց Սոնեային և սարսափի այդ արհաւիրքից ազատելու համար ձայն տւեց աղջկանը:

— Ո՞րտեղ էիր, — հարցրեց նա հետզհետէ հանգստանալով աղջկայ գալուց յետոյ:

— Պատշգամբումը, մայրիկ...

Կենդանի ու մօտիկ մարդու խօսքերի հնչիւնները սիրտ տեցին նրան... Նա ուշի ուշով ու հոգատարութեամբ նայեց աղջկան ոտից մինչև գլուխ և աւելի ու աւելի ազատուելով իրան փրած սարսափից, — թէև դեռ ևս լացը գալիս էր, — ասաց ցողո՞ղուն ձայնով.

— Այժմ՝ քեզ լաւ պահիր, Սոնեա, խելօք կաց... Դու լսեցիր, աւելորդ է քեզնից թաքցնել, — խոլէրան հասել է մեր քաղաքը, իսկ խոլէրան չար ու չիմար մարդկանց չի սիրում: Ուրեմն բարի եղիր, լսում ես...

Սոնեան լսում էր և իւր մեծ ու բարի աչքերով տաղնապալից նայում էր մօր գունաթափ ու փրած գէմքին: Մանկական նրբազգաց ականջը պարզ ըմբռնեց մօր ձայնի եղանակում նրան տանջող վիշտն ու խեղդած արտասուքը. Սոնեայի փոքրիկ սիրտը սկսեց աւելի աստիկ բաբախել:

— Դէ, խելօք պահիր քեզ, Սոնեա...

Բաց պատուհանի միջով արդէն ներս էր նայում հարաւային մութ զիշերը... Ծաղիկների բուրմունքը աւելի թանձրացել էր, սուխակի երզը աւելի բարձր էր հնչում, մուգ-կապուտակ երկնականութից կարծես ասաղեր էին թափւում երկրազնդի վրայ... Բարձր, գեղեցկակազմ կազամակները խրում էին կապուտակ սփիւռի մէջ իբրև՝ մեղմ, անվրդով աղօթքի ժամանակ գետնից վեր պարզած հսկայական ձեռքեր... Քուն եղող երկիրը կարծես չիրաւի աղօթում էր սոխակի գեղգեղանքով և ծաղիկների բուրմունքով...

— Դէ, աղօթք արա, Սոնեա, ու գնա քնիր, ժամանակն է, բարձրաձայն ասաց Մարիա Լուվան, աշխատելով իւր սեփական ձայնով խեղդել սրտի տագնապն ու բուզը խեղդող արտասուքը:

Սոնեան չոքեց սրբի պատկերի առաջ և ձեռները իրար սեղմեց:

— Բաց երէկւայ պէս չանես, շատ երկար պէտք չէ աղօթել, ասաց Մարիա Լուվան՝ վախենալով որ աղջիկը նորից ընկնի կէսէքստազային դրութեան մէջ: Կարճ կերպով աղօթք արա այն մարդկանց համար, որոնց սիրում ես... Բարձր ձայնով աղօթիր...

Սոնեան շփոթւեց, — նա միշտ սովորութիւն ունէր աղօթել ցած ձայնով, այնպէս, որ միայն ինքն էր լսում: Նա աւելի ևս աստիկ իրար սեղմեց ձեռները ու շարած՝ գլուխը կախ գցեց...

Ո՛ւժ համար աղօթք անէր,—եթէ Կոստեայի ու Վարեայի համար աղօթէր, մայրը կը բարկանար,—մտածում էր նա տարակուսած:

—Դէ, սկսիր, Սոնեա...

Նա բարձրացրեց գլուխը, բարձրացրեց երկար արտևանունքները դէպի պատկերը և բարձրաձայն արտասանեց:

—Ասուած, պահիր, պահպանիր հայրիկին, մայրիկին... և... և...

Սոնեան կմկմաց ու դարձրեց դէպի մայրը իւր բարի աչքերը... Այդ խոր ու սիրով լի հայեացքը, որ սրտազողած՝ պատասխանի էր սպասում, կարծես յանկարծ քնից սթափեցրեց Մարիա Լուվնային: Ինչ որ մի բան վայր ընկաւ նրա վրայից և կարծես ինչ որ մի նոր բան ծագեց նրա մէջ...

—Ամենքին, ամենքին, Սոնեա, ասաց նա յանկարծ սաստիկ յուզւած ու արագ-արագ խօսելով:—Բոլոր մարդկանց, սիրուն աղջիկս,—և նրա ցամաք աչքերը ջրակալեցին:

—Խեղճիկ Վարեային էլ, մայրիկ:

Երեխայի երկչոտ, միամիտ ու տաղնասպալից հարցը առաջին րոպէում շփոթեցրեց Մարիա Լուվնային: Նրա աչքերը շուտեցին, գունատ այտերը ինչ որ պատճառով կարմրատակեցին... Նա կարծես նեղ դրութեան մէջ ընկաւ այդ հարցից... Բայց յանկարծ այդ դրութիւնն անհետացաւ և նրան ամբողջապէս տիրեց ու ջերմացրեց ինչ որ մի մեղմ, քնքոյշ, բոլորովին նոր զգացմունք, որի բարերար ջերմութեան մէջ անհետ չքացան սարսափի բոլոր արհաւիրքները...

—Հն, բալիկս, բոլոր խեղճերին, հիւանդներին ու թշւառներին, ասում էր նա, ու նրա երեսովը արդէն գլորւում էին ջերմ, բարի արտասուքի կաթիլներ: Նրանց՝ մեզնից աւելի է պէտք քո աղօթքը, աղօթիր, աղօթիր նրանց համար, Սոնեա...

Եւ ոչ թ չ՛ունենալով այլ ևս դիմանալու ու չը կամենալով դիմադրել հետզհետէ աւելի ու աւելի անմաքառելի կերպով իրան տիրապետող զգացմունքին, և մի տեսակ անասելի քաղցր մեղկութեամբ լիովին անձնատուր լինելով նրան, նա արագ շոքեց աղջկայ կողքին, երկու ձեռքով բռնեց նրա գլուխը և ջերմ համբոյրներ դրոշմելով նրա բարի սևաթուր աչքերին ու համբոյրները, արտասուքն ու խօսքերը իրար խառնելով, յուզւած շշնջաց:

—Միշտ այդպէս մաքուր եղիր, աղջիկս, և սիրիւ բոլորին, բոլոր մարդկանց...

Երբ որ Կոժինը կէս զիշերից շաւ ուշ վերջապէս հիւանդանոցից տուն եկաւ և աչքի անցրեց Մարիա Աւովնայի ջղային, շտապող ձեռքով գրած նամակը, որով նա խորհուրդ էր հարցնում, թէ ինչպէս վարւէր ընդհանուր ազէտի դժուար բուպէին և առաջարկում էր չքաւորների համար իւր փողերն ու ծառայութիւնը, — նա, չը նայելով սարսափելի յոդնածութեանը, ժպտաց սովեւաներջանիկ ժպիտով...

—Ճիշտ են ասել, որ դժբախտութեան ժամանակ մարդու մէջ զարթնում են քնած մարդկային զգացմունքները, մտածեց նա ինքն իրան խօսելով՝ երկրորդ անգամ նամակը աչքի անցնելիս: Տեսէք, ինչ լեզու է բանեցնում... Եւ բոլորովին անակնկալ կերպով, յանկարծակի... Բաց այդ ոչինչ, — մարդու միայն դժբախտութեան ժամանակ կարելի է ճանաչել:

Եւ իւր յիշատակարանում իւր օդնականների թւին աւելցրեց Մարիա Աւովնային:

\*\*\*

ՅՈՒՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆԵԱՆՅԻ

Ամբան գիշերուայ երկինքն ասողալի,  
Իւր հսկայական վրանի ներքոյ  
Գրկած շարքերը բարձր լեռների,  
Պատմում է երկրին մեծութիւնն Աստուծոյ:

Եւ բարիքներով լցւած, լիացած  
Երկիրն ունկնդիր այս անխօսք ճառին,  
Քնեւուց առաջ, խոնարհ, երկիւղած  
Փառաւորում է մեծագոր Տէրին:

Եւ փառք են տալիս իմ շուրջը բոլոր,  
Ամեն մի տերև, ամեն շնչաւոր...:

1892 թ., յուլիսի 17:

## ՔՐԻՍՏՈՖ ԿՈԼՈՒՄԲՈՍ

(Վերջին հետազոտութիւնների հիման վերայ):

(ԱՄԵՐԻԿԱՅԻ ԳԻՒՏԻ 400-ԱՄԵԱԿԻ ԱՌԻՓՈՎ)

### Ա. ԲԱՐԵԼԵԱՆԻ

XV-րդ դարի միջերթից սկսում են հսկայական յառաջադիմութիւններ այն գիտութիւնների մէջ, որոնցով մարդու հասկացողութիւնը երկրագնդի և տիեզերքի մասին արագ և հիմնովին յեղափոխութեան ենթարկւեց: Պորտուգալացոց զիւտերը ակներև դարձրին, որ չը կան երկրիս վերայ «անբնակելի» տեղեր և որ ամեն տեղ, ուր մարդս ոտք է կոխում, կարելի է յուսալ թէ մարդիկ են բնակում: Աֆրիկայի եզրերը աւելի պարզւեցին, իսկ 1486 թւականից սկսած ոչ մի կասկած չէր կարող լինել, որ կարելիութիւն կայ ծովով հասնել Արևելքի հրաշքների երկիրները (Հնդկաստան) և որ արդէն այդ ճանապարհը գտնւած կարելի է համարել: Միաժամանակ, շնորհիւ Պէուէրբախի և Ռեջիոմոնտանի, այլ կերպարանք ստացաւ աստղաբաշխութիւնը, որը Պտղոմէոսի ժամանակներից դէս ոչ մի նշմարելի քայլ առաջ չէր արել: Մոլորակների ճանաչելը որպէս անկախ մարմիններ աւելի ու աւելի անհաւանական էին դարձնում Արիստոտելի հիպոթէզը երկնային կրիստալական ափերանների մասին, և մինչդեռ Ռեջիոմոնտանի ազատ ոգին ճանապարհ չարթեց Կոպերնիկի աշխարհակենտրոն ուեֆորմի համար, նա կատարելագործեց նաև մի գործիք, որով կարելի դարձւեց երկրւող նաւերի վերայ աստղաբաշխական զիտումներ անել— իսկ դորանից էր կախւած որ կարելի եղաւ այնուհետև փոխանակ ծովի եզրերով վախժախելով նաւարկելու ազատ ծովում նաւարկել քիչ թէ

շատ ասպահովութեամբ: Աւ նոյն այն 1492 թւականին, որը մեծ բացող Կոլումբոսին իւր համարձակ երազների իրազորմանը հասցրեց, Գերմանիացի Նիւրնբերգ քաղաքում Մարտին Բեհայմը պատրաստեց այն հուշակաւոր «երկրախնձորը» կամ զրբուսը (աշխարհագրական երկրագունդ), որ ժամանակաց բոլոր տեղեկութիւնները երկրադնդի մասին պարզ տեսութեան է բերում և մեզ ծանօթացնում այն անորոշ գաղափարների հետ որ այն ժամանակ ունէին Սպանտեան ովկիանոսի եզրների մասին:

Ար այդ մեծ հանելուկը լուծւեց, զորա համար սարտական ենք, որպէս ամեն ոք գիտէ, այն զարմանալի մարդուն, որը իբրև խաւացի՝ Քրիստոֆորո Կոլումբո, իբրև խալանացի զարձած՝ Կրիստոբալ Կոլոն էր կոչուում, և որը սովորապէս իւր անունի լատինական ձևով իբր Կոլումբոս (հայացրած՝ Կոլումբոս) է յայանի: Բացողի իսկ որ արկածական կեանքը պարզելը վերին աստիճանի չաջողել է հին և նոր ժամանակների հետազոտութիւններին: Կոլումբոսի մասին գրականութիւնը մեր օրերում արդէն այնքան մեծացել է, որ տեսութեան առնել անհնարին է զարձել: Մի քանի հեղինակներ, ինչպէս Ֆրանսիացի պատուական Հարրիսը և աշխարհագրութեան պատմաբան գերմանացի Սոֆոս Ռոզէն մեծ թւով հետազոտութիւններ և գրքեր են նւիրել այս միշտ հետաքրքրական աւարկային: Աւելի հին ժամանակներից յիշելու է իսպանացի Նաւարրեսի «Viajes y descubrimientos», որի հինգ հատորը զեռ մինչ օրս էլ գնահատելի գանձ են մնացել: Ամենասպահով արդիւնքների ներկայացնում է առանց կասկածի Ռոզէի «Christoph Columbus», սպւած Գրեզէն 1892 թ., որին զլսաւորապէս հետևել է նաև այն հեղինակը, որի նոր լոյս տեսած բողբուրի <sup>1)</sup> հետևում ենք նաև մեր այս ներկայ յօււածում:

Մի քանի կարևոր սրտմական խնդիրների համար պէտք է դիմել է. Գելցիխի «Կոլումբոսեան ուսումնասիրութիւններ» գրւած-

<sup>1)</sup> Günther, S., professor in München.—Columbus und die Erweiterung des geographisch—kosmischen Horizonts. Sammlung gemeinverständlicher Vorträge, herausgegeben von Rud. Virchow und W. Wattenbach. Heft 154.

քին <sup>2)</sup>: Վերջապէս իտալացիների մէջ այժմեայ լաւագոյն գիտցողը բացումներն (աշխարհագրական գիւտերն) պատմութեան, Լ. Հոլգէսը (Hugues), ջանք է տւել իրան մանրամասնօրէն լուսաբանել Կոլումբոսի նշանակութիւնը դիտական աշխարհագրութեան զարգացման համար <sup>3)</sup>: Օրինակելի է, բայց իհարկէ տեղ-տեղ հնացած է հռչակաւոր գերմանացի Ալեքսանդր Ֆոն Հոլմբոլդտի աշխատութիւնը <sup>4)</sup> 1830-ական թուականներից: Ինչ վերաբերում է Կոլումբոսի ծննդեան տարւայ շատ վիճաբանւած խնդրին, այդ մասին կայ մի ֆրանսիական շատ պատուական գրւածք Գ'Աւեզակի <sup>5)</sup>:

Շնորհիւ այդ բոլոր աշխատութիւնների մենք այժմ կարող ենք Կոլումբոսի փոթորկալից կեանքի գէթ զխաւոր շրջանները պարզ ճանաչել: Ճիշդ է որ նորա ծննդեան տեղն ու տարին կատարելապէս ճշգրտութեամբ որոշել զեռ կարելի չէ եղած: Անկասկած է սակայն որ Կոլումբոսը, սերւած է Ջենովայի <sup>6)</sup> մի ընտանիքից, բայց թէ արդեօք նորա ծնելու օրը այդ ընտանիքը Ջենովայում էր թէ այն ժամանակեայ ջենովեան հանրապետութեան մի այլ քաղաքում, այդ զեռ մի փոքր վիճելի է մնացած, և մանաւանդ նախնադաստատեղի Սաւոնան վաղուց անտի մրցում է Ջենովա քաղաքի հետ այդ կէտի նկատմամբ: Ռոլգէն, հիմնւելով մարկիզ Սաագլիէնօի արխիւական թղթերի վերայ, այն հայեացքի է թէ Կոլումբոսը ծնւել է Ջենովայում, ուր նորա ծնողները այդ ժամանակ ուստացնանկ էին, յետոյ երկար տարիներ Սաւոնայում անցկացրին. ապա հայրը, որի որդիքը վաղուց արդէն արտասահման էին գնացել, 1484-ին նորից Ջենովա վերադարձաւ:

<sup>2)</sup> Zeitschrift der Gesellschaft für Erdkunde zu Berlin, հատոր 22, էջ 245 ու շարունակութիւն և էջ 437 ու շարունակութիւն:

<sup>3)</sup> L'opera scientifica di Cristoforo Colombo. 1892 թ.:

<sup>4)</sup> Examen critique de l'histoire de la géographie du Nouveau Continent et des progrès de l'astronomie nautique dans le 15. et 16. siècles. Պարիզ 1835—1838.

<sup>5)</sup> D'Avezac.—Année véritable de la naissance de Christophe Colomb. Bulletin de la société de géographie, VI շարք, հատոր VI 1872.

<sup>6)</sup> Ջենովա կամ Գենուա այժմ իտալական թագաւորութեան ծովեզրեայ քաղաքներից մէկն է. մի ժամանակ նա իւր շրջականերով հանրապետութիւն էր կազմում:

Ծննդեան տարւոյ մասին վէճը աւելի մեծ է. ժամանակակիցներինց մէկի ասելով նա պէտք է ծնած լինի 1436-ին, ըստ ոմանց 1446-ին և կամ 1456-ին: Ռուզէն, բոլոր աղբիւրները լաւ քննելուց յետոյ, վճռում է խնդիրը 1446 թւականի օգոսին, որը և մենք պէտք է ընդունենք որպէս ամենալաւ ապացուցւածը:

Խառնուելով Կոլումբոսը երկար չը կացաւ. այդտեղ նա կրթւեց որպէս ծովագնաց և դիմեց այն երկրին, որը նորա հեռուն թռչող զաղափարների համար աւելի հրապույց կարող էր ներկայացնել, այն է Պորտուգալեան թագաւորութիւնը: Այդտեղ նա ամուսնացաւ, ենթադրաբար 1478-ին, մի երկրացի աղջկայ հետ, որը նոյնպէս իտալական ծագումից էր, և որից ունեցաւ երկու որդի, Ղիեզօ (վախճ. 1526) և Ֆերնանդօ (վախճ. 1539), որոնք իրանց հօր պատմութեան մէջ մի յայտնի դեր են կատարում: Հաստատ է որ ամուսնանալուց յետոյ նա մի քանի ծովային ճամբորդութիւններ արաւ դէպի Աֆրիկա և դէպի Անգլիա. այդպիսով նա դառաւ այն համարձակ և ամեն հողմերին դիմացող նաւավարը, որպիսին մենք նորան յետոյ պէտք է ճանաչենք: Բայց նա պէտք է որ միշտ ծովի վրայ եղած չը լինի, որովհետև նոյն այդ տարիներում նա շատ կարդացել էր և բազմաթիւ տեղեկութիւններ էր սեպհականել, որ նա չէր կարող ձեռք բերել շարունակ նաւային անհանգիստ կեանք վարելով:

Շատ զանազան էին այն ուսումնասիրութիւնները, որոնց մէջ պակասաւոր գիտական կրթութիւն ունեցող երիտասարդը խորասուզւեց. և չը պէտք է զարմանալ որ նա կարողացած չէ ձեռք բերած բոլոր գիտելիքները կարգաւորել, մշակել և նոցա վերայ տիրապետել: Որպէս իւր բոլոր ժամանակակիցների, նոյնպէս և նորա մէջ շատ զօրեղ էր հաւատը դէպի հեղինակութիւնը, թերևս նորա մէջ այդ հաւատը աւելի ևս ուժեղ էր, որովհետև նորա ամբողջ էութեան մէջ նկատելի էր յակումը դէպի միստիկականութիւնը և արկածաւորը: Նորա որդին նկատում է թէ բնական հիմունքները, հեղինակների խօսքերը և նաւորդական նշանները իւր հօր վճռի համար՝ մի նոր աշխարհ որոնել՝ ծանրակշիռ են եղել: Յունական և հռոմայական հեղինակներից, եկեղեցու հայրերից, սխոլաստիկներից և աշխարհական աշխարհագրագետներից և դոցանից ոչ պակաս նոյն

խակ Ասուածաշնչից իւր նպատակների համար քաղածքներ է արել. և բնորոշ է ոչ միայն Կոլումբոսի այլ և նորա ժամանակի ամբողջ ուղղութեան համար, որ նա խտրութիւն չէր դնում քաղած աղբիւրների մէջ, այլ որպէս երևում է, զէպի ամենը նա հաւասար հաւատով էր վերաբերում:

Բայց որքան էլ պակասաւոր լինէր նորա մտածողութեան սխտեմը, սակայն անկասկած է որ նա համոզւած կուսակից էր այն վարդապետութեան, որը ուսուցանում էր թէ երկիրը գնդակի ձև ունի: Փակտը այն է որ 15-րդ դարի երկրորդ կիսում լուսաւորւածներից ոչ դք չէր հերքում երկրի և մանաւանդ ովկիանոսի մակերևոյթի մշտական կորութիւնը. բայց նոյն իսկ խելօքները այդ լուսաւորւածներից չէին հասկացել թէօրիպէս հաստատւած իրողութիւնից այս եզրակացութիւնը դուրս բերել, թէ ուրեմն կարելի է երկրի շուրջը պտըտել: Բայց այդ նկատմամբ Կոլումբոսը պարզ էր մտածում: Նորա համար անկասկած էր որ զէպի արեմուտք նաւարկելով, պէտք է մարդ հասնի Եւրոպայից, Ասիայից և Աֆրիկայից բազկացած ցամաք երկրների կոմպլէքսի արևելեան ափերը և որ վերադարձը աւելի դժւար չը պէտք է լինի քան զնալը: Այդպիսի պարզ ըմբռնումն ունէր Կոլումբոսը մի այնպիսի ժամանակ, երբ կոյր երկրի վերայ ճամբորդելը նմանեցնում էին լեռան վերայ վեր բարձրանալուն ու վայր իջնելուն:

Սենեկա՛ի «Մեղէա»-ի այն յայտնի սողը, թէ մի հեռատես ծովագնաց «նոր», Թուլէ (Իսլանդիա) կղզուց հեռու գտնւող, աշխարհներ կը գտնի, Կոլումբոսի աչքում որոշ իմաստ ստացաւ և օգնեց որ նորա մտածողութիւնները որոշ կերպարանք ստանան:

Զը մոռանանք որ գլխաւոր խնդիրը անչայտ երկիրներ բացելու մէջ չէր, այլ Ասիայի արևելեան ափերը հասնելը՝ զնալով հակառակ ուղղութեամբ, ովկիանոսի վրայով: Կարելի էր կարծել թէ մի այդպիսի պլան իրագործելը կարող էր սարսափեցնել նոյն իսկ երկրագնդի վերայ աւելի պարզ գաղափար կազմած Կոլումբոսին, քանի որ ահագին է տարածութիւնը Եւրոպայի արևմտեան և Ասիայի արևելեան ափերի միջև, որ պէտք էր ջրով անցնել: Բայց այստեղ անդիտութիւնը օգտակար ծառայութիւն է արել, որովհետև այն ժամանակ չը գիտէին ծովի բռնած տարածութեան չափն: Այդ ժա նմանակաջ գրեթէ բոլոր

գիտնականները ընդհանրապէս այս հայեացքն ունէին թէ երկրիս վերայ ցամաքը շատ աւելի է քան ջուրը. հետեւապէս այն տարածութիւնը, որ, ինչպէս մենք այժմ դիտենք, բռնում է Ատլանտեան ովկիանոսը, այդ տարածութիւնը, ասում ենք մենք, այն ժամանակը պէտք է իսկականից շատ աւելի փոքր թւար: Այդ հայեացքի օգտին էր խօսում նաև Ասուածաշնչի մի տեղը, Եսայի չորրորդ գիրքը, որի համաձայն ջուրը ծածկում է երկրի միայն մի եօթներորդ մասը: Կորա վերայ հիմնւելով եկեղեցական հայր կարգինալ D'Ailly իւր «Աշխարհքի պատկեր» վերնագրով ընդհանրապէս յարգւած գրքում յայտնել էր իրան ընդդէմ Պտոլոմէոսի, որը պնդում է եղել թէ երկրիս հինգ վեցերորդը ջուր է և որ ուրեմն միայն մի վեցերորդը բնականօրէն է մարդկանցով <sup>7)</sup>:

Իայց մինչ այժմ չը յիշատակեցինք մի մարդու անուն, որը այս ամենում ամենամեծ նշանակութիւնն է ունեցած: Կոլումբոսը, իւր ծրագիրը կազմելիս, պէտք է ամենից շատ հիմնւած լինի Պտոլո (Պոլոս) Տոսկանեցիի վերայ (ծնւած 1397, վախճ. 1482 թ.): Տոսկանեցիին, որը բժիշկ էր և մաթեմատիկոս Ֆլորենցում (Իտալիա), ամենահմուտ դասաւորն էր վերը շոշափած խնդիրներում: Նա առաջինն եղաւ որ հնուց Պտոլոմէոսի և Սարաբոնի հաղորդածները համեմատեց աւելի նոր ճանապարհորդների՝ Մարկո Պոլոի և Նիկկոլո դէ Կոնտիի հաղորդածների հետ և վստահութիւն ունեցաւ նոր քարտէզ պատրաստել արևելեան Ասիայի համար: Թէև սխալ, բայց զորանից դուրս էր գալիս իբր թէ Արևելեան Ասիայի ափերը շատ հեռու են գնում ծովի մէջ, վերջանալով ծովի շատ հեռու գնացող մի ինչ որ առասպելական Յիպանգու երկրով: Այս ենթադրութեան վերայ հիմնւած մի նոր աշխարհագրական քարտէզ Տոսկանեցիին ներկայացրեց 1474-ին պորտուգալական թագաւոր Ալֆոնսո V-ին, յորդորելով նորան, որ Հնդկաստանը հասնելու նպատակով կազմւած արշաւախումբը արեւմուքով (Ատլանտեան ծովով) գնաց: Այդ առաջարկութիւնը իսկ է չընդունւեց, բայց Կոլումբոսի համար դա ունեցաւ ահագին նշանակութիւն: Նա ձեռաց

<sup>7)</sup> Այժմ չպահնի է, որ ջուրը բռնում է մօտաւորապէս երկու երրորդը, իսկ ցամաքը՝ մի երրորդը երկրագնդի:

գրագրութիւն սկսեց տոսկանական զիտնականի հետ և իւր ամբողջ ազիտատորական ոյժը բանեցրեց իւր խորհրդատուի հիմնական միաբը իրագործելու համար, որով նա ներկայանում է իբր իրագործող գիտնական Տոսկանելլիի մտքերի:

Կործը գլուխ բերելու համար զեռ հարկաւոր էր Պորտուգալիայի նոր թագաւոր Իոայօ II-ին գործի համար գրաւել: Գուցէ բանը գլուխ գար, եթէ միայն Կոլումբոսի բնաւորութեան մէջ չը լինէր մի ոչ համակրելի զիծ: Կոլումբոսը, որը իւր ծրագրի իրագործումից շատ մեծ հետևանքներ էր սպասում, պահանջում էր նաև չափազանց մեծ զին, զեռ աւելի էլ մեծ զին, քան ինչ յետոյ Իսպանիայի թագաւորից պահանջեց և մեծ մասամբ ստացաւ: Այդ սակարկութիւնը այն հետևանքն ունեցաւ, որ նա պէտք է Պորտուգալիայի հողը թողնէր և իբր փախստական հարևան Իսպանիան փախչէր: Զը նայած որ Իոայօ II նորան ներում չնորհեց և յորդորեց վերադառնալ, բայց Կոլումբոսը այդ միջոցին այնքան մեծ հովանաւորութիւն գտաւ Իսպանիայի մեծերի մօտ, որ այդ երկրում մնաց:

Իսպանիայում Կոլումբոսը այլ կերպ գործեց: Պորտուգալիան ամենից առաջ առևտրական պետութիւն էր. նորա համար նոր երկիրներ թափանցելու նոր կողմնիաներ ձեռք բերել էր նշանակում, հետևապէս և առևտրական նոր շուկաներ վաստակել էր նշանակում: Այդ ժամանակ Իսպանիայում երկու միապետներ կային՝ Ֆերնանդոն, Առագոնեան թագաւորը և Իզաբելլը՝ Կաստիլիայի թագուհին, որոնք երկուքն էլ պատերազմի մէջ էին Պիրենէյեան թերակղզու հարաւային պրովինցը պինդ բռնած մահմեդական մաւրերի հետ:

Արդ, հէնց կրօնական կողմն էր, որով միայն կարելի էր շարժել այդ ժամանակեայ միջնադարեան ռոմանտիկ ասպետականութեան ոգով տոգորւած իսպանացիներին և թագաւորներին: Կոլումբոսը առաջադրեց իսպանական միապետներին և մեծերին թէ ինչ մեծ վաստակ կ'ունենան նոքա, եթէ քրիստոնեայ դարձնեն օտար ժողովուրդները և թէ ինչպէս սոցա հարստութիւններով կարելի է աւելի մեծ ծաւալով մղել պատերազմը անհաւատների դէմ:

Եւ պէտք է ասած որ բարեպաշտութիւնը աշխարհային արկածախնդրութեան հետ այնքան լաւ իւր մէջ միացրած մի մարդու համար, որպիսին էր Կոլումբոսը, այդ իսպանական տեսակէտը

աւելի էր սրտին խօսում, քան պորտուգալական վաճառականական հայեացքը:

Սկզբում, սակայն, նաև Իսպանիայում Կոլումբը այնպիսի դժարութիւնների հանդիպեց, որ լինէր մէկ ուրիշը՝ վհատուած կը հեռանար և կը թողնէր իւր պլանը: Կաստիլիայի թագուհին, իսկ է, բարեհաճ աչքով նայեց զործին և մինչև անգամ Կոլումբոսին մի փոքրիկ կենսաթոշակ նշանակեց, բայց զործը յանձնեց քննելու էքսպէրտ մարդկանց Սալամանկա համալսարանական քաղաքում, և այդ յանձնաժողովում Կոլումբը պէտք է իւր դատը պաշտպանէր: Այդ այն է որ յայտնի է «Սալամանկայի վիճաբանութիւն» (դիսպուտ) հռչակուած անունով: Բայց յանձնաժողովի մէջ նշանաւոր ոչ մէկը չը կար մաթեմատիքական դիտութիւնների մէջ, ինչպիսին մէկն էր մի ժամանակ տիեզերագէտ Ալֆոնսո XII թագաւորը: Կոլումբին քննադատողները այնքան արեցին, որ Իզաբէլլան վստահութիւն չունեցաւ զործին ընթացք տալու, և Կոլումբը իւր որդու հետ գնաց ծովափեայ Պալոս նաւահանգիստը՝ Ֆրանսիա տեղափոխելու համար:

Բայց այդ միջոցին բազմը շուռ տուց: Պալոս քաղաքը դառաւ որրանը նորա փառքի: Ճանապարհին դէպի Պալոս, ուր նա դնում էր Սեւիլլա քաղաքից, նա հիւրասիրեց Ռաբիդա վանքի կողմից, որի վանահայրը իւր պաշտօնակիցների մեծամասնութիւնից աւելի բարձր մարդ էր: Նորա աչքին շատ ընկաւ օտարականի անսովոր արտաքինը և քայլուածքը և խօսեց հետը, հեռաբլբլեց ու կանչել տուց մօտակայ Պալոսից բժիշկ Գարցիա Հերնանդեցին, որին նա ճանաչում էր իբր տիեզերագիտութեան մէջ հմուտ մէկը: Վանահայրը և բժիշկը համաձայնեցին, որ այսպիսի մի հիւրին չը պէտք է թողնել որ նա Իսպանիային մէջք դարձնի: Վանահայրը խնդրեց նորան մնալ վանքում և պատահած դէպքի մասին տեղեկացրեց թագուհուն, որի շրջապատի մէջ զլում էին համարձակ մարդու կոչուտը: Բարեբաղդաբար լուր ստացեց Քրենադա քաղաքի անկումի մասին, որը մարերի վերջին պատարարանն էր Իսպանիայում: Իսպանիայի հողը ամբիշտ ազատեց մահմեդականների իշխանութիւնից:

Կոլումբի հետ սկսեցին բանակցութիւնները. և քիչ էր մնում

որ այս անգամ էլ բանը փշանար Կոլումբի չափազանց մեծ պահանջների պատճառով: Բայց նրան հովանաւորող պետական զանձարանի կառավարիչ Լուիս դէ Սանտան դէլլը դժւարութիւնները յարթեց և 17 ապրիլի 1492 թւականի կապուց այն պետական դաշնը, որով Կոլումբի ցանկութիւնները մեծ մասով կատարւեցին:

Այդ դաշնով թագուհին մասնակից էր անում Գոն Կոլոնին (Կոլումբոսին) իւր իշխանական իրաւունքներից ոչ փոքր մասին և ձեռք բերելիք գանձերը նորա, Կոլումբոսի, տրամադրութեան ներքոյ էր դրւում:

Նաւերի և նաւատորմների համար ծախքը նստեց պետական գանձարանին այնքան արծաթ, որքան մեր 10,000 արծաթ ռուբլին: Մեզինից չորս հարիւր տարի առաջ այդ գումարը ի հարկէ շատ աւելի մեծ զին ունէր քան այժմ ունի:

Նաւատորմիդը բազկացած էր երեք նաւերից 120 հոգով: Կոլումբին ստորադրեալ հրամանատարներից յետագայում չայտնի եղան Մարտին Ալոնզո և Ֆրանցիսկո Մարտին եղբայրները Պինցոն ազգանունով:

Օգոստոսի 3-ին 1492 թ. նաւախումբը շարժւեց Պալոսից, ուղղւեց դէպի Կանարեան կղզիները, ուր հարկ եղաւ մի առժամանակ կանգ առնել: Ազատ ժամերից օգուելով Կոլումբը, իւր հետևորդների սիրտը ամրացնելու համար, մեզ արդէն չայտնի ապացոյցներն էր բերում յաջողութեան համար, ի միջի այլոց այս էլ էր բերում, որ Ատլանտեան ովկեանոսում կղզիներ լինելը իբր նշաններն թէ դէնը ցամաք երկիր կայ: Եւ Գոմերա ու Ֆերրօ կղզիների բնակիչները մինչև անգամ հանգստացնում էին ճամբորդներին թէ իբր երբեմն իրանց կղզիներից հեռու ցամաք երկիր է երևում: Այդ ի հարկէ միայն մի սիրալիր ստախոսութիւն էր:

Միայն սեպտեմբերի 6-ին նոքա թողին Կանարեան ափերը և մտան բաց ծովի մէջ: Այդ ուղևորութիւնը իւր բոլոր արկածներով շատ չայտնի է գիտական և ժողովրդական գրւածների միջոցով. և մենք զորա վերայ երկար կանգ չենք առնիլ: Յայտնի է, որ ծովապետը, Կոլումբը, կրկնակի յիշատակարան էր պահում, որոնցից մէկը պարունակում էր տարածութեան իւր կարծիքով իսկական չափսերը արձանագրելու, մինչդեռ միւսը նշանակւած էր իւր հետևորդ-

ների համար, ուր նա նոյն տարածութիւնները դիտմամբ աւելի փոքր չափերով էր նշանակում: Յայտնի է, որ փոքրիկ դէպքեր, ինչպէս ծովի թռչունների երեւալը կամ ծովի բոցներ որսալը և այլն, առիթ էին տալիս վստահութիւնը և յոյսը կենդանացնելու. յայտնի է նաև որ Կոլումբի և նորա ստորագրեալ առաջնորդների միջև միութիւնը կատարեալ չէր այն բանի նկատմամբ, թէ ինչ ուղղութեամբ պէտք էր նաւարկել. յայտնի է նաև որ Կոլումբը միայն ահաճութեամբ զիջեց Պինցոնի խորհրդին՝ մինչ այժմեայ բռնած ուղղութիւնից քիչ դէպ հարաւ բռնել, որի շնորհիւ միայն փոխանակ Հիւսիսային Ամերիկայի ցամաքը հասնելու, նոքա աւելի դէպ հարաւ գտնուող կղզիները հասան:

Վերջապէս հոկտեմբերի 12-ին, մի ուրբաթ օր, հիացմամբ տեսան նոքա իրանց աչքի առաջ մի կղզու յարթ ափը: Կոլումբոսը պնդում էր թէ գիշերը այդ կղզու վերայ այրուող ձրագը նշմարել էր, հետևապէս պահանջում էր որ նոր աշխարհի գիւտը այդ խօսքի ամենանեղ ըմբռնումով անգամ իրան վերագրւի:

Նոր գտած կղզին պատկանում է Բահամասեան կղզիների ընդարձակ խմբին: Հետագոտութիւնները այն մասին թէ այդ կղզիներից որը ամենից առաջ տեսնեց խպանցիներից և որի վերայ առաջին անգամ նոքա ոտք կոխեցին,—դեռ վերջացած չեն. ամենամեծ հաւանականութիւնը այսպէս կոչւած Վատլինգս-կղզու կողմն է. բնիկները նորան անւանում էին Գուանահանի, Կոլումբոսը նորան անւանեց Սան Սալւադոր: Մեծ հանդէսով նա բռնեց Խպանիայի թաղի համար: Առաջին անգամն էր որ եւրոպացիք ծանօթութիւն էին անում ամերիկական ցեղի մարդկանց հետ, որի ներկայացուցիչները նորեկներին բարեկամօրէն հանդիպեցին, առանց զգալու. թէ ինչ անասելի բաներ պէտք է կրէին իրանց նւաճողների կողմից, երբէք չը կարողանալով յագեցնել սոցա ծարաւը դէպի ոսկին:

Ոսկի գտան շատ քիչ քանակութեամբ. այդ և հարևան կղզիների բնակիչները բնութեան զաւակներ էին: Սկսեցին որոնել մի ինչ որ առասպելական Յիպանգու. իբր թէ քաղաքակրթւած երկիրը, որը նորեկների հասկացողութեամբ պէտք է գտնւէր Չինաստանի մօտ, խորն ընկած ովկիանոսի մէջ: Ախար կարծում էին թէ Ասիայի ափերն են հասել, դեռ չը գիտէին որ մի նոր մեծ ցամաքի

մօտերքում էին՝ Նրջելով հարևան կղզիները՝ գտան Կուբա կղզին, որը առանց այլ և այլութեան Կոլումբոսը ընդունեց Յիսպանգու կղզու տեղ: Ամեն տեղ ոսկին միայն փոքր զարդարանքների ձևով էին գտնում, երբէք մեծ քանակութեամբ: Խեղճ վայրենիներին դրականապէս չարարեցին, այնքան հարց ու փորձ էին անում ոսկու հանքերի մասին և թէ ուր է այս ու այն երկիրը, որ Կոլումբոսի կարծիքով և Տոսկանելիի քարտեզի համեմատ պէտք է որ գտնուէին Ասիայի արևելեան կողմերում:

Կուբայից յետոյ գտան Հաիտի, ուր, նաւերից մէկի խորտակման պատճառով, ստիպւած լինելով աւելի երկար կանգ աւնել՝ շանցերով պաշտպանւած բանակ զրեցին—առաջին անգամ նոր աշխարհում: Պինցոն եղբայրներից աւագը այդ միջոցին, առանց Կոլումբոսի թոյլութեան, ինքնագլուխ, նաւերից մէկով զնաց այլ կղզիներ և մուժը նշմարքներ գտաւ որ զէպի արևմուտք մի աւելի քաղաքակրթւած ազգ է բնակուում—թերևս մեքսիկական մի ցեղից:

Բայց նաւատորմիղի դրութիւնը այլ ևս թոյլ չը տեսց Կոլումբոսին աւելի հեռուները գնալ. պէտք էր ուրախ լինել եթէ ողջ առողջ հայրենիք վերադառնան: 1493 թ. փետր. 14—15-ի գիշերը մի փոթորիկ այնպիսի վտանգ սպառնաց, որ Կոլումբոսը, յոյս չունենալով ազատելու, իւր ծանապարհորդութեան մասին մի զեկուցումը, լաւ տեղ դրած՝ ալիքներին յանձնեց, որ զալիք սերունդները իմանան իւր կատարած սխրագործութիւնների մասին: Սակայն կարողացան ընդդիմադրել և շուտով երևացին հորիզոնի վերայ Ազորեան կղզիները, որ Պորտուգալիային էին պատկանում: Կաշնի զօրութեամբ Կոլումբոսին արգելւած էր պորտուգալական երկիրները մանել, բայց նաւերի դրութիւնը այնպէս էր, որ չէր կարելի պորտուգալական նաւահանգիստը չը մանել: Պորտուգալական իշխանութիւնը սառն ընդունելութիւն արաւ. բայց կատարւած հերոսութիւնը շուտով այլ տրամադրութիւն առաջացրին ժողովրդի մէջ, և Պորտուգալիայի թագաւորը, մոռացութեան տալով անցեալը, բարեհաճութիւն ցոյց տեսց Կոլումբոսին աուդիենց նշանակելով և ուղեկիցներ նշանակեց նորան Կաստիլիայի սահմանը հասցնելու: Բայց Կոլումբոսը ուզեց իսպանական հողը նորից այն տեղում կոխել, ուրտեղից նա դուրս էր եկել: 1493 թ. ապրիլին 15-ն մարտի

Կոլումբոսը իւր Nina նաւի վերայ ոգևորութեամբ ընդունեց Պալոսի նաւահանգստում: Զարմանալին այն է որ նոյն օրը տեղ հասաւ նաև Պինցոնը «Պինտա» նաւի վերայ, այն Պինցոնը, որից Կոլումբոսը հիմք ունէր վախենալու որպէս հակառակորդից: Բայց նա շուտով սորանից ազատեց, որովհետև Պինցոնը, որի վաստակը փոքր չէր Ամերիկայի զիւար անելու գործում, շուտով վախճանեց:

Փառաւոր հանդէսով Կոլումբոսը ուղևորեց Սեւիլլայի վերայով դէպի Բարցելոնա, ուր զանուում էր թագաւորական զոյգը այդ միջոցին և դէպի ուր մի ամենաողորմած ձեռագրի միջոցով հրաւիրել էին զալ փառքի ճառագայթների փայլով շողշողոյ ծովային հերոսին: Նորա մուտքը, որի մեծագոյն նւիրականութեանը ծառայում էին հեաները բերած կարմրամորթները և լաւ դասաւորած ոսկեայ զարդի դարնիտուրը, այդ փոթորկալից կեանքի ամենափառահեղ ըուպէն էր:

Յայտնի է ամենքին «Կոլումբոսի ձուի» պատմութիւնը: Իբր թէ նրանց, որոնք հեշտ բան էին համարում Ամերիկայի զիւար, առաջարկած լինի մի աւելի հեշտ բան անել՝ մի ձու գլխիվայր կանգնացնել: Կոլումբոսը իբր խնդիրը լուծած լինի, ի մեծ ամօթ միւսներին, ձուի ծայրը կճեպելով և այդպէս գետնի վերայ կանգնացնելով: Այդ պատմութիւնը, ըստ աւանդութեան պէտք է այդ միջոցին, Բարցելոնա եղած ժամանակ, կատարւած լինի: Բայց Վոլտէրի հետ նաև Ռուզէն ժխտում է դէպքի պատմական լինելը և չի շեցնում նման մի պատմութիւն որ պատահել է Ֆլորենցիայում ճարտարապետ Բրուներլլեչիի հետ:

Կոլումբոսի Բարցելոնա եղած ժամանակ պատրաստութիւններ տեսնեցան մի երկրորդ արշաւանքի համար: Բայց արդէն չայտնի էր որ Պորտուգալիան ծուռ աչքով է նայում Արեւմտքում արւած նւաճումների վերայ: Թշնամութիւնների դէմն առնելու համար պապ Ալեքսանդր Վ. հրատարակեց այն հուշակաւոր բուլլան Յ-ն մայիսի 1493 թ., որով երկրադունդը բաժանում էր Իսպանիայի և Պորտուգալիայի մէջ: Ազդոներից ոչ հեռու անցկացող մերիդիանով երկիրս բաժանեց իսպանական Արևելեան մասի ու պորտուգալիական Արևմտեան մասի: Բայց այդպիսի բաժանմունք, դեռ բացի այն որ մերիդեանն էլ սխալ էր գճւած, տևողական չէր և միայն չաջորդ

տարին երկու հարևան և մրցող պետութիւնների մէջ կապուած մի զաշնով որոշւեցին երկու կողմի երկրացին սեպհականութիւնները:

Կոլումբոսի երկրորդ արշաւանքը աւելի մեծ էր. 17 նաւերի վերայ 1500 հոգի կանգնեցրին: 25-ն սեպտ. 1493 թ. զուրս եկան Կաղիքսից, բռնելով ուղին քիչ աւելի դէպ հարաւ. վեց շաբաթը չը լրացած կանգնեցին կղզիների մի նոր խմբի առջև: Դա Փոքր Անտիլներն խումբն էր: Գոմինիկա, Գուադելուպ և արխեպելագոսի այլ մասերը տեսութեան առնւեցին և անուշներ ստացան: Այդտեղից Պուերտո Ռիկիօի վրայով գնացին Հաիտի, ուր Կոլումբոսը իւր առաջին կոլոնիան քանդուած գտաւ: Կոլումբոսը մարդիկ ուղարկելով Իսպանիայի թագաւորներին, ինքը ընկաւ նոր գիւտերի յետեւից, հետազօտեց Համիտիի, Իամայկայի և Կուբաի եղները և այն սխալ եղրակացութեանն եկաւ թէ Կուբան կղզի չէ այլ ծայրի մասը այն ասիական երկրի, որ որոնում էին: Դադարած նա վերադարձաւ Հաիտի, ուր նա իւր հիմնած Իզաբելլա կոչուած կոլոնիայի հրամանատարութիւնը յանձնեց իւր եղբօրը: Ինքը վերադարձաւ Իսպանիա յունիսի 1496 թւականին ներկայանալու համար իւր ողորմած թագուհուն, որ Բուրգոս էր եկած:

Թէև թագուհին իւր վստահութիւնը դէպ Կոլումբոսը պահպանեց, բայց ժողովրդի մէջ բացողի փառքը սկսեց թաւառել, որովհետև Կոլումբոսը աւելի մեծ բաներ էր խոստացել: Շատ ոսկի էին սպասում, որ չը գտան, իսկ աշխարհագրական գիւտերի համար մեծ հետաքրքրութիւն միայն քչերը ունէին:

Բայց և այնպէս թագուհին նորից վեց նաւ աւեց Կոլումբոսին որոնցով նա 1498-ին իւր երրորդ արշաւանքն սկսեց: Այս անգամ նա ուղիղ դէպ հարաւ-արեւմուտք գնաց և եկաւ հասաւ Տրինիդադ և օգոստոսի սկզբին՝ Օրինոկօի դելտան, որի ջրի մեծ քանակը զարմացրեց իսպանացիներին: Գորանով արեւց ամենշանաւոր գիւտը, որովհետև զորանով բացւեց Եւրոպայի համար ամերիկական ցամաքը: Աւելի ճիշդն ասած՝ կարող էր բացւել, որովհետև Կոլումբոսը ու չը կոխեց ցամաքի վերայ, այլ դնաց եզրներով: Ափերին տեսան գիւղեր, որոնց աները ձողերի վերայ էին կանգնեցրած. Վենետիկ քաղաքին նմանեցնելով՝ ամբողջ այդ երկիրը կոչեցին Վենեցուէլա:

Այդտեղից նա վերադարձաւ Հաիտի, ուր այս անգամ նորա

սիրաբ աւելի կոտորեց քան նախկին անգամ: Երկրի աւագ դատաւոր Ռոլդանը ապստամբել էր Կոլումբոսի եղբօր դէմ, որին ինքը չը պաշտպանեց իւր յատուկ ոյժով, այլ ապստամբի հետ բանակցութիւնների մէջ մտաւ և համաձայնեցրեց որ մի թաղաւորական կոմիսար ուղարկելի Իսպանիայից վէճը յարթելու համար: Ապաստած կոմիսարը սակայն դուրս եկաւ մի բիրա արկածախնդիր մարդ Բոբազիլլա անունով, որը հէնց տեղը համեւելուն պէս կանգնեց Ռոլդանի կողմը և ամեն տեսակ խոստումների միջոցով դրդեց Կոլումբոսի մարդկերանց՝ սորանից հեռանալ: Ինքը Կոլումբոսը, իւր որդին՝ Վիեգօ և եղբայրը Բարտոլոմէօ շղթաներով ձեռքակալեցին Իսպանիա ուղարկելու և դատի ենթարկելու համար, ուր և հասան նոյեմբերին 1500 թ.: Մեծ մարդու կեանքի արագիկական րոպէն հասել էր:

Ի հարկէ մայր-երկրում այդ չափով չէին հաւանում Ռոլդան և Բոբազիլլա անպիտանների վարմունքը, և աշխատեցին այդքան չարաչար անպատուածին մի յայտնի չափով բաւարարութիւն տալ: Բայց արտակարգ բաղդով նպաստած մարդու դէպի վեր սլացող միտքը այդ ժամանակից կոտորեց: Նա ինքը իսկոյն ազատեց և արքունիքում պատուով ընդունեց. Բոբազիլլան ընկաւ անողորմածութեան ներքոյ, իսկ Ռոլդանը բռնեց. բայց կոլոնիայի կառավարութիւնը մնաց նորանից խլած, և եթէ նրան նորից չորս նաւ յանձնեցին, որոնցով նա 9 մայիսի 1502 թ. իւր չորրորդ արշաւանքը սկսեց, բայց վստահութեան այդ ակտը հազիւ թէ կարող էր կատարելապէս բաւականութիւն տալ նորան հասցրած վիրաւորանքներին:

Կոլումբոսը իւր այս վերջին ուղևորութիւնով գնաց Մարաի-նիկի և Հաիտիի վրայով դէպի կենարոնական Ամերիկայի եզրը, ուր փոքրիկ նաւախումբը հասաւ յուլիսին 1502 թ.: Այտուղ նոքա հանդիպեցին Մայիա երկրի իսկ որ քաղաքակրթած մարդկանց: Եւ չը լինէին էլի այն կիրքը դէպի ոսկին և սխալ աշխարհազրական զաղափարները, Կոլումբոսը կը գտնէր Ացտէկների պետութիւնը (Մեքսիկա), որի սահմաններին այնքան մօտիկացել էր:

Բանը սա է, որ Կոլումբոսը դեռ էլի չէր հասկացել որ նա գտել է մի նոր ցամաք, ոչ ոքին յայտնի Ամերիկան: Եւ այժմ նա կարծում էր թէ հասել է հարաւարեւելեան Ասիայի Մալակկա թե-

րակղզին, որ հներին յայտնի էր «Ոսկէ Խերսոնէզ» անունով, հետեւելով արաբական ճանապարհորդական գրող Ալբիրունիին, որը կոչել էր յետին Հնդկաստանը ոսկեայ երկիր:

Կոլումբոսը, շարունակելով դէպի հարաւ գնալ, գտաւ Հոնդուրասի արևելեան հրանդանը, ապա Վերագուա և Դարիական ծոցը, առանց գտնելու այնքան ցանկացած ոսկէ երկիրը-Նորադոն. նա վերադարձաւ դէպի Իամայկա, որի ավերի մօտ նաւը խորտակեց, բայց մարդիկը ազատեցին Հաիտիից ուղարկեա՞ծ ազատող նախ միջոցով: Այնպէս որ երբ Կոլումբոսը նոյեմբերին 1502 թ.—վերջին անգամ—Իսպանիա վերադարձաւ, միայնակ եկաւ և այն էլ օտար նաւի վերայ:

Այդ չորրորդ ուղևորութիւնը աշխարհագրական տեսակէտից թերևս ամենանշանաւորն էր, որովհետև զորանով որոշեցին Կարաիբեան ծովի սահմանները: Բայց լոկ աշխարհագրական գիւտերի համար իսպանական իշխանները շատ հասկացողութիւն չունէին: Շուտով վախճանեց Կոլումբոսին հովանաւորող Իզաբելլա թագուհին, որով և վճռեց Կոլումբոսի ճակատագիրը: Ֆերնանդօ թագաւորը թէև արտաքին պատիւներ տալ չէր զլանում, բայց սառն էր դէպի նա: Սխալ է նաև իբր թէ Կոլումբոսը աղքատութեան մէջ մեռաւ. ընդհակառակը նա բաւականին մեծ կարողութիւն էր ձեռք բերել: Բայց նորա սիրտը վշտացած էր որ այլ ևս զործելու հնար չունի և որ չի կարող ինքը կառավարել իւր սիրած անդրովկիանեան կոլոնիան:

21-ն մայիսի 1506 թ. Քրիստոֆ Կոլումբոսը վախճանեց միայնակութեան մէջ Վալլադոլիդում: Նորա գիակը առաջ քաղաքում թաղեց, ապա տեղափոխեցին Սելիլլա, իսկ մեզնից մօտ մի դար առաջ, 1796 թ. Լասիանին մեծ հանդէսով տեղափոխեցին իւր վերջնական հանգստարանը՝ Հաւանայի մայր եկեղեցին:

Դիմենք այժմ մարդու իսկական արժէքի ղնահատութեանը: Ինչպիսի մարդ պէտք է երևակայենք մեզ Քրիստոֆ Կոլումբոսին իւր ոգեկան և մտաւոր կարողութիւնով, նորա ոգու ուղղութիւնով, ինչն է նորա արածներից զխտակցական և ինչը անգիտակցական,

ինչ անմիջական ծառայութիւններ է արել նա գիտութիւններին, — այս բոլորը մի-մի խնդիրներ են, որոնց նկատմամբ Կոլումբոսի մասին հարուստ գրականութիւնը միաբերան, իրար հետ համաձայն, վճիռներ չի տալիս, մանաւանդ ինչ վերաբերում է նորա անձնաւորութեանը: Կոլումբոսը մի շատ բարդ բնաւորութիւն է հանդիսանում, որին լաւ ճանաչելը գժարանում է իւր ապրած ժամանակի հեռաւորութեան պատճառով, քանի որ այն ժամանակեանից դէս բարք ու վարքերը, ժամանակի ոգին և գիտութիւնները արմատական փոփոխութիւններ են կրել, այնպէս որ հմտութեան հետ միացած մեծ թափանցողութիւն ու արդարամիտ քննադատական ոգի է պահանջւում մի այդքան բարդ բնաւորութիւն ըստ արժանւոյն զննաստեղծ համար:

Մանուկ սերունդը ճանաչում է Կոլումբոսին միայն իբր մի մեծ մարդ, նա նորան ճանաչում է նորա սխրագործութիւններով, որոնք միայն ողբորութիւն են ներշնչում: Այլ կերպ է վերաբերւում լուրջ գրականութիւնը, որը ուղեցել է Կոլումբոսին ամեն կողմից ըմբռնել: Ժողովրդական գրքոյկներում նկարագիրները միայն ողբորիչ են, նոյնն է մասամբ նաև ուղմանական ազգերի գիտական գրւածքներում, որ արդարացի էր գտնում նաև գերմանացի Հումբոլդտը: Գոցա հանդէպ կարելի է դնել շատ տարբեր կարծիքներ գերմանական մասնագէտների — Պեշէլի, Ռուդէի, մասամբ նաև Գելսիսի: Երկու հակառակ կարծիքների մէջ արդար միջուկը աշխատում է գտնել պրոֆ. Գիւնթէր իւր նոր լոյս տեսած և վերը արդէն յիշւած գրքոյկով, որ մեզ համար ուղեցոյց է ծառայում:

Կոլումբոսի արտաքինը չարզանք ներշնչող էր. չամենայն դէպս խտալացին կատարելապէս իւրացրել էր իսպանական գրանդեցցան և միանգամայն իսպանացի էր:

Ներքին կողմից աչքի է ընկնում նրա կրօնականութիւնը և հաւատում էր թէ Աստուած նորան իւր գործիքն է ընտրել քրիստոնէութիւնը այլ երկիրներ սարածելու համար:

Կոլումբոսը իւր ժամանակի զաւակն էր՝ բարեպաշտութեան հետ միացրած մեծ հակումով դէպի միստիկականութիւնը, անդամ անապաշտութիւնը:

Բացց իւր հպատակութիւնը դէպի եկեղեցու պաշտօնեաները

չափազանց հեռուն չէր դնում, ապացոյց «Սալամանկայի վիճաբանութիւնը», որի մասին յիշատակեցինք վերը:

Բարեպաշտութիւնը չէր խանդարում որ քրիստոնէական և ընդհանուր մարդկային բարոյականութեան դատաստանի առջև Կոլումբոսի գործքերից մի քանիսը մեղադրանքից ազատ չը մնան: Նա անսահման փառասիրութիւն ունէր և ձգտումն զէպիսմենաբարձրը ինչին միայն մարդս իբր երկրի հպատակ կարող է բաղձալ հասնելու: Բայց աւելի վատը նորա անասելի փողատիրութիւնն էր: Ազատ չէր նաև անդթութիւնից իւր կեանքի վերջին տարիներում:

Այս բոլորով հանդերձ Կոլումբոսը մի վերին աստիճանի նշանաւոր մարդ է հանդիսանում:

Տեսնենք թէ ինչպիսի ծովային ճամբորդ էր Կոլումբոսը և որքանով նա նպաստեց աշխարհագրական գիտութիւններին:

Որքան էլ անկատար լինէր Կոլումբոսի գործիքը (քաղաքանտ) իւր գտած երկիրների տեղը որոշելու համար, բայց Ռուզէի ստոր կարծիքը, թէ այդ կողմից Կոլումբոսը չի կարող համեմատուել մեծ ծովային ճամբորդների հետ, թւում է թէ անարդարացի է և իտալացի Հիւզէսը, ընդհակառակը, կարծում է թէ իւր ժամանակակիցների մէջ ժամանակի ու տեղի որոշելում նորանից դերազանց չի եղել:

Իբրև աշխարհագրագէտ (գէոգրաֆ) Կոլումբոսը միշտ մի մեծ և հիմնական սխալ պահպանեց, որի շնորհիւ նա վախճանեց դեռ ևս այն հաւատով թէ Ասիայի արևելեան ափերին է հասել և որ մօտ է եղել առասպելական Յիսպանգու երկրին: Բայց նա իւր ճանապարհորդութիւնը սկսեց շնորհիւ այն հաւատի, որ նա ունէր զէպիստականների քարտէզը. նա ընդունում էր երկրագունդը աւելի փոքր քան իսկապէս է, որովհետև զաղափար չունէր ոչ Ամերիկայի և ոչ Խաղաղ ովկիանոսի ու նոցա ահադին տարածութեան մասին: Բայց այդ հայեացքի էին ոչ միայն 15., այլ և 16 և 17-րդ դարերում: Միայն Կիկարդի երկրադնդի չափելը ճիշդ հեռեանքների բերեց, և Նիւտոնը միայն վերջինիս հիման վերայ հաստատուած գտաւ իւր գտած օրէնքը մարմինների ձգողութեան մասին, մինչդեռ քանի որ նա հաշիւներ էր անում այն թւերի հետ, որ նաև Կոլումբոսին յայտնի էին, անհամաձայնութիւն էր գտնում հիպոթէզի և թւերի

մէջ: Վասիօ Նունէց զը Բալբօա'ից առաջ, որը առաջին եւրոպացին էր սր Խաղաղ ովկիանոսի ջրերը աչքով տեսաւ, Կոլումբի աշխարհագրական հայեացքը ներելի էր, եթէ ոչ միակ կարելին:

Կոլումբոսի աշխարհագրական գիւտերը բազմաթիւ էին և կարևոր. Բահամա կղզիներից շատերը, չորս Մեծ Անտիլները և Փոքր Անտիլներից զիսաւորները, Հարաւային Ամերիկայի հիւսիսային եզրը Օրինոկոսի բերանից մինչև մօտ Մարակաիբի բուխտը (ճոց) և Միջին Ամերիկայի արևելեան եզրների կամ աւելի ճիշտը՝ Իւկատանի, Հոնդուրասի և Նիկարագնայի մի շատ նշանաւոր մասը:

Մեծապէս գնահատելի է այն որ Կոլումբոսը երկրի կոլոլ լինելու գիտակցութիւնից բղխող եզրակացութիւնները քաջօրէն և ճարպիկ կերպով պաշտպանել կարողացաւ Սալամանկայի եկեղեցական հայրերի անմիտ առարկութիւնների դէմ: Սակայն Կոլումբոսը յետագայում ինքը թոյլ տւեց մի անտեղի կասկած այդ մասին: Օրինոկո գետաբերանի առջև կանգնած, զարմացած այն ահագին ջրի մասսայի վերայ, որ ճղելով ովկիանոսն է մտնում, Կոլումբոսը կարծեց թէ այդտեղում երկիրը կոլոլ չէ, այլ իբր բարձրութիւն ունի: Նա այդ առիթով չիշեց Ասուածաշնչի պատմածը զրախտի մասին, որը իբր թէ մի հողեղէն բարձրութեան վերայ է կանդնած, ուստից երկրի չորս զլխաւոր ուղղութիւններով գետեր են բղխում: Հասկանալու համար Կոլումբոսի սխալը, պէտք է իմանալ որ միջին դարերի ամբողջ ընթացքում, ի բաց առած մի քանի պարզ գլուխներ, ինչպէս Գանտէ Ալիգիերի, կարծում էին թէ երկրի ցամաքային մասի կենտրոնը ուրիշ է, ջրինը ուրիշ, այդ հայեացքը համաձայնացնելով զրախտի մասին աւանդութեան հետ:

Չը պէտք է մոռանալ և հաստատ է որ Կոլումբոսը իւր տիեզերագիտական հայեացքներով կանգնած էր ոչ թէ իւր ժամանակից վեր, այլ այսպէս ասած իւր ժամանակի մէջ:

Բոլորովին անվիճելի են Կոլումբոսի վաստակները երկրային մագնիսիսմի համար: Թէև երկու հարիւր տարուց աւելի էր որ Ֆլաւիօ Ջիոջօ իտալացին եթէ ոչ հնարել գէթ զործածութեան համար կատարելագործել էր կոմպասը (կողմնացոյց), բայց ամենքը այն սխալ կարծիքի էին, թէ հորիզոնական լծակի ծայրը ուղիղ հիւսիս է ցոյց տալիս: Կոլումբոսը գտաւ եղած տարբերութիւնը և փոփոխա-

կանութիւնը ըստ տեղերի և որոշեց մի անվրէպ զիծ—որ այսօր զիանական տերմինով Isogeno Null կ'անւանէր: Դորա ապացոյցներ են որ Կոլումբօսը սուր և ճիշդ դիտողութիւն ունէր, որով նաև ճիշտ (էքզակա) զիտութիւնների պատմութեան մէջ յարգելի տեղ է բռնում: Իւր ճանապարհորդութիւնների ընթացքում նա երեք անգամ դէպք ունեցաւ նկատելու կատարեալ համաձայնութիւնը աստրոնոմիկական և մագնետիկական (կոմպասի) մերիդիանների, այնպէս որ հիւսիսային ուղղութիւնից շեղման զծի համար երեք կէտը նա գտել էր: Կոլումբօսը սակայն մագնետիկական ասեղի շեղումներին, որ նա ճիշտ էր զիտել, սխալ բացատրութիւններ էր տալիս, ուղեւով այդ երևոյթը կապել հիւսիսային աստղի դրութեան հետ:

Կոլումբօսը օժտած էր զօրեղ երևակայական ոյժով: Կոմպասի մագնիտի շեղումներից Ատլանտեան ովկիանոսում նա եզրակացրեց թէ այն կողմերում բնութիւնը բոլորովին ուրիշ է: Դիտողութիւնը ճիշդ էր, բացատրութիւնները սխալ, որովհետև ճշմարտութիւն կար այն բանում որ Պիրենէյեան թերակղզու կլիմայից, որ ցամաքային կլիմա էր, տարբեր է ովկեանոսի ծովային կլիման: Կոլումբօսը նաև առաջինը նկատեց և նկարագրեց Ատլանտեան ովկիանոսում մի զարմանալի երևոյթ, այն է՝ խոտի և յսպէս կոչւած տանգերի տարածութիւնները, որոնց միջով պէտք է անցնէին իսպանական նաւերը և որոնք պէտք է մեծ ահ պատճառած լինէին առաջին նաւորդներին: Միայն նորերս է յայտնւել որ դորա կազմում են այն բոյսերից, որոնք Հարաւային Ամերիկայի ավերից հոսանքներով բերւում են ովկիանոսի մէջ:

Մովային հոսանքները հին ժամանակներին և նաև միջին դարերին անյայտ էին: Երբ պորտուգալացիք Ալբրիկայի Գւինէեան ծոցը մտան, այդ հոսանքը նկատեցին և առաջին անգամ նկարագրեցին: Երկրորդ նկարագրութիւնը պատկանում է Կոլումբօսին, որը նոյն հոսանքը նկատեց իւր երրորդ ուղևորութեան միջոցին, երբ նա ուղղեց դէպի միջին ամերիկական կղզիների խումբը: Պա այն հոսանքն է որ Գոլթստրոմի հաւասարակշիւն է կազմում, որի առիթով Կոլումբօսը յետադաշտում նշանակութիւն ստացած այս խօսքերը արտասանեց թէ՛ լեւ հաստատ բան եմ համարում որ

Տոլպային ջրերը արևելքից դէպի արևմուտք են շարժուում, ինչպէս երկինքը»:

Նաև բիոլոգիական աշխարհագրութեան համար Կոլումբոսին պէտք է յարգել որպէս ճանապարհ յարթողներից մէկին: Հումբոլդտի վկայութեամբ Կոլումբոսի նկարագրութիւնները բուսական աշխարհից աչքի են ընկնում ոչ միայն էսթետիկական տեսակետից, այլ և ճշրութեան և սուր բնագիտական դիտողութիւնով: Կուբա կղզում նա զանազանում է ութ նոր տեսակ պալմաներ: Նորա դիագնոստիկական աչքը այնքան թափանցիկ է, որ, խօսելով բուսաբանութեան լեզուով՝ նա որոշակի կերպով բաժանում է Podocarpus-ի ցեղից Abietine-ների զերզաստունը: Նաև նորա համեմատութիւնները արուսիկական բոյսերի իւր հայրենիքի ենթա-տրոպիկական բոյսերի հետ չեն թողնում աւելին ցանկանալ որոշակութեան կողմից:

Կենդանիների հետ ծանօթութիւն անելու նա շատ առիթներ չունեցաւ. բայց այն էլ, ինչ նա նոցա մասին հաղորդում է, պարզ է և պատկերահան:

Վերջապէս Կոլումբոսից պէտք է<sup>99</sup> սկսէր մի բոլորովին նոր շրջան ազգագրութեան մէջ: Վայրենիների մասին նորա արած նկարագրութիւններից յետագայ ժամանակների բոլոր զրւածքների մէջ անցկացաւ Հնդիկ անունը, որ կոչում են ամբողջ Ամերիկայի բնիկ ժողովուրդներին: Յայտնի է, որ այդպէս անւանելը հիմնւած էր մի աշխարհագրական սխալի վերայ, որի պատճառով Կոլումբոսը Ամերիկան իւր կղզիներով ընդունեց Հնդկաստանի տեղ: Այդ սխալ անունը մնացել է սակայն մինչ օրս. բայց շիոթութեան տեղիք չը տալու համար Ամերիկայի այն կղզիների խումբը, որի մէջ են Կուբա, Հաիտի, Իամայկա և այլն, ընդունւած է անւանել Արեւմտեան Հնդկաստան, իսկ իսկական Հնդկաստանը, այն որ Ասիայումն է՝ կամ ուղղակի Հնդկաստան և կամ Արևելեան Հնդկաստան: Նաև ամերիկական բնիկներին, որ կարմրամորթ են, անւանում են ոչ թէ հնդկաստանցիք, այլ հնդիկներ (զերմաներէն Indianer, մինչդեռ Հնդկաստանցիներին անւանում են զերմանացիք՝ Indier):

Ահա Քրիստոսի Կոլումբոսը իւր հուժիւնով և գործքերով մեր առաջը կանգնած: Մենք նորան ճանաչեցինք իբրև մարդու, իբրև ծովագնացի և իբրև գիտութեան մարդու: Ահիոփեւք ուրեմն:

Ինչն էր Կոլումբոսի ամենամեծ գործը: Պատասխան՝ այն վըստահուլթիւնը, որ նա ունեցաւ ոչ միայն անյայտ ծովերով ճամբորդել, այլ, դուրս գալով ենթադրութիւնից երկրի կոլումբեան մասին, այն ենթադրութիւնից որ դեռ միայն գիտնականներն էին թոյլ տալիս բաց որը ընդհանուրին յայտնի չէր, նա վստահացաւ լով հաւատի ոյժով մինչ իւր ժամանակը չը փորձած և անյայտութեան մէջ ծածկւած ովկեանոսով Եւրոպայի արևմտքից դուրս գալ երկրիս արևելեան երկիրները հասնելու համար: Վստահնալ անյայտ ջրերի խորքերն ընկնել հակառակ հազարաւոր տարիներից ի վեր իշխող և հաստատուած հայեացքների երկրիս ձևի վերաբերմամբ, մանաւանդ որ իշխող կրօնական աշխարհը դէմ էր նոր հայեացքին և հիմնւելով միայն լուսաւորւած աշխարհագրագէտների անորոշ ենթադրութիւնների վերայ երկրիս կոլումբեան ունենալու մասին, — դա մենք համարում ենք ահագին քաջագործութիւն, որ սովորական խելքով և ոգով մի մարդ կատարել անկարող էր:

Երկրորդ կէտը սա է, թէ որքան մեծ վստահութիւն էր հարկաւոր այն զարհուրելի մեծ մինչ այն ժամանակ անյայտ տարածութիւնը անցնելու համար, որ իսկապէս կայ Եւրոպայի արևմտեան ափերի և Ասիայի արևելեան ափերի միջև: Արդ, այն ամենի հիման վերայ, որ մենք արդէն իմացանք, պէտք է խոստովանւել որ Կոլումբոսը չէր վստահանալ այդպիսի մի մեծ ճանապարհորդութիւն անելու, մանաւանդ ժամանակակաջ ոչ ճիշդ քաղաքանոսով, եթէ միայն նա մեծ հաւատ չունենար դէպի ծովանելլին և ուրիշները, որոնք այդ տարածութիւնը իսկականից շատ և շատ աւելի պակաս էին ընդունում: Բայց և այնպէս անյայտութիւնը և նախապաշարումը այնքան մեծ էր այն ժամանակներում կատարելիք ուղևորութեան վերաբերմամբ, և այնքան մեծ էր իսկապէս կատարած ուղևորութիւնը, որ Կոլումբոսը անկասկած մեծ ծովագնացների մէջ պէտք է տեղ բռնի:

Իբրև աշխարհագրագէտ և գիտական ոյժ Կոլումբոսը անկասկած է որ այն մեծ տեղը չի կարող բռնել, ինչպիսին արժանի

կը լինէր որ բռնէր մի նոր ցամաք գտնող մարդ, որովհետև գիտական հրապոթէզներն վերայ հիմնուած մի ենթադրական մեծ ցամաքի յետեւից չէր ընկել Կոլումբոսը: Պարզ է որ Ամերիկայի գիւտը ինքը պատահական էր և ոչ գիտակցական: Թէև ի հարկէ արդարութիւն չէր նոր գտած աշխարհը անւանել ոչ Կոլումբոսի, այլ յետովայ հետազօտող Ամերիգօ Վեսպուչիի անունով: Գորա վերայ աւելանում է և այն հանգամանքը, որ Կոլումբոսը չորս անգամ ուղևորութիւն կատարելուց յետոյ անգամ և մինչ իւր կեանքի վերջին շունչը չիմացաւ թէ նոր ցամաք, նոր աշխարհ է գտել: Բայց թէ որքան դժար էր գտածի ինչ լինելը ճանաչել, այդ պարզում է նրանից, որ ոչ միայն Կոլումբոսը, այլ և ոչ ոք նորա բազմութիւն ուղևորներէից և ոչ էլ մէկ ուրիշը նորանից յետոյ նոր երկիրները գնացածներէից չէին կարողացել իսկութիւնը ճանաչել: Գտած երկիրներն խորքերը մտնելու համար հարկաւոր էր աւելի մեծ աշխարհագրական հետաքրքրութիւն, քան թէ այն ժամանակ կար: Այդ ժամանակաւ հետաքրքրութիւնը ուղղուած էր աւելի դէպ ոսկու հանքերը, քան թէ դէպի զուտ աշխարհագրական գիւտերը:

Կոլումբոսը բաւականաչափ գիտական կրթութիւն ունէր որ կարողանար իւր դիտաւորութեան հետ կապ ունեցող դրական ազդերէրները ճանաչել և նոցա շահագործել իւր դիտաւորութեան օգտին, գտնէ այն չափով որ կարողանար իւր հակառակորդներն ընդդիմախօսութիւնները ջրել: Իսկական գիտնական չէր նա, և չէր էլ յաւակնում լինել:

Կոլումբոսը այսպիսով ներկայանում է մեր աչքում որպէս գործի մարդ, մի անընկճելի ազիտացիոնական բնութիւն, որով նա չիչեցնում է ազգերի կրօնական կեանքը յեղաշրջող մարդկանց, որոնց մէջ կամքի ոյժը վերջին ծայր զարգացած է, ինչպէս օրինակ մի Լուիսէր:

Այս համեմատութիւնը Լուիսէրի հետ, որ մենք առաջ ենք բերում, զարմանալի կերպով անում են Կոլումբոսի մասին իրար հետ շատ անհամաձայն հեղինակներ, ինչպէս Ռուզէն, Նոյնպէս և Գիւնթէրը: Իսկ Կոլումբոսի իբրև գործի մարդու մասին Նոյնպէս յայտնի և արդէն այս յօդուածում մի անգամ չիշլած Գելիխը 1) ուղղակի բացականչում է «Բայց գործը, կատարած գործը պէտք է Կոլումբոսին թողնել»:

1) Gelcich, Columbus als Nautiker und als Seemann, էջ 287.

# ՀԻՆ ՈՒ ՆՈՐ ԱԹԷՆՔ

ԿԱՄ

## ՄԻԵՐԱՎՆԵՐԻՑ ՈԳԻ ԱՌԱԾ ՄԻ ՆՈՐ ԿԵԱՆՔ

ՅՈՎՀԱՆՆԵՍ ՏԷՐ-ՄԻՐԱՔԵԱՆԻ

Ջատկական տօները մօտենում էին և ես կարօտակէզ սրտով սպասում էի ըղձալի Աթէնքի տեսութիւնը, այս պանծալի քաղաքի և նրա չրջակայքի տեսութիւնը, որոնք իմ պատանեկական հասակի ամենասիրելի երազների կենտրոնն էին և զեւր Աջն, աչն երջանիկ օրերից արդէն պատկառելի քսան տարիներ են անցել, երբ մեր բանաստեղծ սիրելի ուսուցիչ Աղաջեանցը մեզ նկարագրում էր աչն սքանչելի տիտաններն ու նրանց զարմանահրաշ քաջագործութիւնները, բայց և աչնպէս ես դեռ շատ բանէի զիշում: Թէև լետոյ ես օտար դպրոցում նորից կրկնեցի նոյնը, սակայն աչնտեղ ոչ աչն հասակը և ոչ աչն հմուտ պատմիչն <sup>1)</sup> ունեցալ, որ աչնպէս գիտէր խօսել մանուկների սրտի հետ, որպէս Հոմերոսը երբեմն մանկական հասակում գտնւած ժողովրդների հետ: Միւս ընկերներս ու ես թէև արդէն 10—13 տարեկան էինք, սակայն ամենաչն պարզսրտութիւնով հաւատում էինք այդ ամենին և ոգևորւում էինք նրանցով:

Եւ երբ ես մի կողմից մանկական և միւս կողմից երիտասարդական սիրելի իղձերով զեղուն սրտով անհամբերութիւնով սպասում էի այդ օրին, քսանի նա մօտենում էր, աչնքան խառնում էր եղանակը, աչնքան ալէկոծում ու խռովւում էր ծովը: Ուրեմն այս անգամ ևս ինչպէս իմ երազ-

<sup>1)</sup> Մի զեղեցիկ զուգադիպութիւն էր աչն, որ հէնց նոյն օրերում իմ այդ սիրելի ուսուցիչն արդէն ալեխառն մօրուքով՝ պաշտելի Հալրիկի տեսութիւնից լետոյ, իբր Աթէնքի ականատես, այժմ ոգևորում էր իմ երիտասարդական սիրտը, երբ Ջմիրուհիայի վրայով հայրենիք էր վերադառնում:

ներից շատերը պիտի աներևութանալին, մտածում էի ես սրտնեղութիւնով ու տարակուսանքով: Բայց ահա արձակուրդ, ահա և մի սքանչելի օր: Ուրքան գեղածիժադ, որքան հրապուրիչ էր այսօր այն ծովը, որ իբրև մի զիւրազգաց ու քնքուչ սիրտ՝ այնպէս կարեկից ու մասնակից է մալր բնութեան հրասքանչ կեանքի այս կամ այն ուրախ ու տխուր երևութիւններին, որոնք իրան ըմբռնելի են:

Մինչդեռ ես այսպիսի զգացմունքներով սոգորած չուզեմալ սանդուղքից բարձրանում էի, սպասում էի մանաւանդ լոյներից մի մեծ քանակութիւն ուղեկիցներին, սակալն մեծ եղաւ, ի հարկէ, իմ վարմանքը, երբ նախկին երևելի խօնարի ժամանակակից զաւակներից միայն մի երկու պարզ ընտանիքներ տեսալ, որոնք իրանց ազգականներին էին այցելութեան գնում: Ես լսելէի, որ այս առթիւ շատ մարդ է գնում, բայց միայն եւրոպացի ճանապարհորդներ տեսալ: Ահա նաև այս անգամ ես համուզեցի, որ այս կողմերի լոյներն աւելի եւրոպական կեանքի արտաքին երևութիւնն ըմբռնելով՝ դեռ շատ հեռու են նրա իրականութիւնից:

Գեռ Զմիւռնիայի ծոցից չելած՝ մութը կոխեց, այնպէս որ ես սլլևս չը տեսալ այս անգամ Քիրոս և Պտարա կղզիները. միայն առաւօտեան երևաց Էդէչեան ծովի մեծ կղզիներից մէկը՝ Լօլբօան (Նւրէա) և սրա հանդէպ՝ փոքրիկ Անգրոսը: Աւելի հեռուն աջ կողմից արդէն երևում էր մշուշի մէջ հռչակաւոր Ատտիկեան թերակղզին, իսկ ձախ կողմից նրա փոքրիկ զրացիներից Յիա կղզին: Մենք անցնելով Կոնստանդուպոլսու շրջանից՝ արդէն Լօլբեայի ծոցն էինք մտնում, որի հարաւում Էգեան համաճումն կղզին, իսկ հիւսիսում հռչակաւոր Սալամիսն էր, որ բարձրանում էր մեր առաջ, Վերջինս այնքան մօտ է (4 հազարամետր) Աթէնքի Պիրէա նաւահանգստին, որ հեռուից բոլորովին անբաժան է երևում նրանից: Սալամիոն, ինչպէս լայնի է, ի հնումն առանձին պետութիւն էր, որի Տելամոն և Ալաքս թագաւորներն ամենաերեւելիներն են: Նա Սոլոնի և Եւրիպիդէսի հայրենիքն էր և պատմութեան մէջ անմուսնաւի է նրա անունը, որովհետև այստեղ էր որ մեծ հայրենասէր Թէմիստոկլէսը, պատմական ամենազին հանգրից մէկը, 480 թ. Քր. առ. կործանեց գոռ Քսէրքսէսի ահաւոր նաւատորմիցը, այն Քսէրքսէսի, որ Հէլլէսպոնոսի վերաջ կամուրջ անցկացրեց, ապա Աթէնք հասնելով՝ ալրեց և ապա լաղթելով մի նաւակով փախուտ տեց 300,000 զինուոր երեսի վրայ ձգելով: Աջմ Սալամիսի բաւականին բարձր լեռների վրայ երևում են մի քանի փոքրիկ քաղաքներ ու գիւղեր:

Բայց դեռ այս կղզին չը հասած՝ չուզեմալ զէպի աջ է շեղում ու մտնում է Պիրէայի, Աթէնքի հին պահապան հրեշտակի և մատակարարի, փոքրիկ ու խոր ծոցը, որը փարոսների մօտ այնքան նեղ է, որ հազիւ թէ երկու մեծ չուզեմաւեր միաժամանակ անցնելու թող տար: Եւ ահա հետզհետէ պարզում է մեր առաջ նաև Աթէնքը, սակալն նա ծովափից հեռու

և պատմական եօթը բլուրների ստորոտներում հիմա զետեղուած լինելով մեզ ցոյց է տալիս համարեա միաջն իւր փառքերի փառք Ակրոպոլիսը, աջն միջնաբերդը, որ աւելի աստուածների բնակավայր՝ քան պատերազմական հանդիսավայր էր եղել: Այս նաւահանդիստը քաղաքից թէև 8 հազարամետր հեռու էր գտնուում, սակայն երկու ահաւոր պարիսպներով միացած էր նրա հետ և որոնց հետքերը տակաւին լաւ տեսնուում են: Այս պարիսպներից մէկը շինել էր թէմփոտոկէսը, իսկ միւրը՝ Պեթիկէսը: Նրբ լեզանդըը գրաւեց Աթէնքը, խորտակեց նրա այս պատուարները, վետոց նրանք մասամբ վերաշինեցին Ահոնի ձեռքով և նորից հիմնադրուակ եղան Սելլալի հրամանով: Այժմ Պիրէլան մի պատկառելի արւարձան է մօտ 10,000 բնակիչներով: Նրա առաջ շարունակ կանգնած են բազմաթիւ չոզենաւեր, առազաստաւոր նաւեր, հելլենական և լաճախ օտար մարտանաւեր: Նրա մէջ գործում են բաւականին քանակութեամբ գործարաններ, նա մի բանուկ ու կենսալիի նաւահանդիստ է, որ մալրաքաղաքից իւրաքանչիւր 20 րոպէն մի անգամ երկաթուղալին կառքերի երկար շարքեր է ընդունում ու նոյնքան վերադարձնում: Աղեղնաձև ու լաջն ծովափն իւր երկկողմանի սալապատակներովն հէնց առաջին վարկենից դեղեցիկ տպաւորութիւն է գործում նորեկի վրայ: Մենք իջնում ենք մաքսատուն, ուր ամենեկին անցաթղթի անուն չը սալով, հարեանցի խուզարկում են մեր իրեղեններն և մեզ իսկոյն ազատութիւն տալիս: Մի քանի քալ վոխելով հասանք ասպուղին (տրամուռ ձիաքարչ երկաթուղի) և երբ կառք նստեցինք, մի խղճուկ բեռնակիր ձեռք մեկնելով մի քանի լեպտա ուզեց: Մենք որ նրան ամենեկին չը ծառայեցրինք, տարօրինակ համարեցինք նրա պահանջը. իմ աւտորիացի ուղեկիցը խոժոռաղէմ նալւածքով մերժեց նրան և ասաց՝ Ահա այս արեւելքում պատահում են այսպիսի բաներ: Ես էլ սկսեցի մտածել, որ ահա սկսում են այն կողոպտումները, որոնց մասին այնքան լսելէի, սակայն դեռ Աթէնքի երկաթուղալին կալարանում ես չըջապատողներին տեսնելով՝ դարձաւ իմ ուղեկցին արտապաշտելով այն միտքը, թէ այս ցոյցներն ամենեկին իրանց Պոլսի և Խզմիրի ազգակիցներին չեն նմանում, որ աթէնացոց երեսից կարծես մի տեսակ աղնուութիւն է կաթում: ձիչտ է, չարեց նա, ես էլ առաջին անգամ նոյն տպաւորութիւնն ստացաւ և ապա երկար տարիներ այդ երկու երկրներում շարունակ առևտրական գործեր ունենալով՝ աւելի ու աւելի համոզեցի: Այս լսելով մի աննկարագրելի ուրախութիւն զգաց իմ սիրտը, որ ցանկանում, այո, փափաքում էր այս պատկառելի վարկերում մի աղնիւ ժողովուրդ տեսնել: Արդեօք ուրախակցութեան և վշտակցութեան զգացմունքներն էին, որ այդ վարկենին միմեանց հետ մրցելով իշխել էին ուղում իմ սրտի վրայ, թէ մի ետական ցանկութիւն՝ իմ սպասելի դեղեցիկ տպաւորութիւնների ամբողջացման համար: Թէ այս և թէ այն մարդկալին էր... Անցնելով գործարանների, ձեթատանների, ալպետանների և արտերի միջից՝ մենք շուտով քաղաք հասանք, որի կալարանի

առաջ սպասում էին ասորւոցու կառքերից զատ նաև բազմաթիւ հանրա-  
կառքեր ու կառքեր: Դէպի հիւրանոցը տանող փողոցը թէև միւսների պէս  
ընդարձակ, սակայն նրանց չափ էլ փոշոտ էր: Այս գողորիկ մալրաքաղաքի  
ամենագլխաւոր պահապանութիւնը փոշին է, որ վերաւի անտանելի է, թէև երկու-  
կողմերից փողոցներն ունեն սալապատակներ: Քաղաքի հարստութեան մի  
նշանաւոր մասը ծախսուում է հասարակական և մասնաւոր հոգակապ շի-  
նութիւնների վրայ և այսպիսով այլ ևս միջոց չէ մնում փողոցները քարե-  
լու, որ միշտ ապագայի խնդիր է մնում և թերևս շատ երկար, շնորհիւ  
Յունաստանի անտեսական շարածուն ծանր վիճակին:

Բայց սակայն նախ քան նոր Աթէնքի և նրա նորագոյն կեանքի  
մասին խօսելու՝ հարկ եմ զգում նախ հնից սկսել, որի վիշտակարանները  
տեսնելու իմ գլխաւոր նպատակն էր, ուստի և ես կարծում եմ, որ իմ  
նկարագրութիւնների աչք բաժինը մասնաւորապէս գրաւելու է իմ ընթեր-  
ցողների հետաքրքրութիւնը: Այս քաղաքը ժողովրդների քաղաքակրթա-  
կան-սպասական կեանքում բոլորովին մի լսելու կ զիրք է լ յ յ յ յ  
անցեալով առանձին նշանակութիւն է ունեցել արեւելեան ժողովրդներից  
նաև մասնաւորապէս մեր Հայկադեանի համար, թէև շնորհիւ քրիստոնէա-  
կան բուռն հոտանքին՝ այդ սերտ շարքերութիւններից շատ կցկաւար վի-  
շատակութիւններ են մնացել: Մեր ազգն ի հնուց վերաւի շատ առնչու-  
թիւններ պէտք է ունեցած լինէր աստիկացիների հետ. թէ մինը և թէ  
միւրը ուսումնասէր, թէ մէկը և թէ միւրը նւիրած աւելի քաղաքակրթա-  
կան խաղաղ գործին՝ քան ասպատակութեան կամ աշխարհակալութեան:  
Եւ ահա մենք քանի աւելի ենք հետադասութեան նիւթեր ձեռք բերում  
մեր նախնիքների կեանքից, այնքան ևս առաւել սերտ կապեր ենք տես-  
նում այս երկու երկրների կրօնական և փիլիսոփայական հայեցածքների,  
գրականութեան, զեղարւեստի, արհեստի, սովորութիւնների, աւանդու-  
թիւնների և այլ բազմապիսի երեւթիների մէջ: Բայց ինչ մինչդեռ հին-  
գերորդ դարում փալլում է հազ գրականութիւնը, ոսկէ դար պանծալի աս-  
տիճանին հասնելով՝ այնտեղ Յունաստանը իւր աստուածների հետ քրիս-  
տոնէական դարում կորցնում է և իւր այն չքնաղ զիրքը աւար դառնալով  
չորսող դարու վերջերում Ալարիխի վէստգութիւնն և 520 թ. Յուստինիա-  
նոսի հրամանով զրկում նաև իւր զպրօցիներից: Թէև մենք ոչ հապազէտ և  
ոչ պատմաբան ենք, սակայն թող ներքի նաև մեզ իրքև մի հարցասէրի  
կարծել, որ մի աջնպիսի ընտիր կլասիկական լեզուն, մի այնպիսի կիրթ  
ճաշակ և միտք անհնարին էր սենեմալ մեր հինգերորդ դարու մատենադր-  
ներին, եթէ նրանց նախահայրերը դարեր, շատ դարեր առաջ նախապատ-  
րատած չը լինէին այդ արդաւանդ հողը: Ներկայ դարու աջնպիսի նպատ-  
տաւոր հանգամանքներում մենք ականատես ենք այն իրողութեանը, թէ  
ինչպէս լամբ քաղելով է մշակւում մի լեզու: Նույն չը կարծել, որ մենք նույն  
իսկ հեղինական ոսկէ դարում, այսինքն չորրորդ դարում Քր. առաջ ունե-

ցած լինելնք սաանողներ Աթէնքում և նրա ճառագայթներով լուսաւոր-  
ւող այլ տնական քաղաքներում: Մեր հապագէտներին մի քանիսն ան-  
տեսակէտը զրարաւոր հնութեան մասին անկատկածելի է:

Ուրեմն սկսենք հին Աթէնքից և չը բաւականանք միայն մնացած  
լիշատակարանների աւթով այս կամ այն տեղեկութիւնները սալով, այլ  
վեր առնենք այս հիանալի քաղաքի պատմական կեանքի շրջաններից  
ամենանշանաւոր երևոյթները, որոնք պիտի ծառայեն իբրև լուսաբանու-  
թիւն մեր առածնելին: Եւ քանի որ մենք ձեռք առանք այս նիւթը, մեր  
հարցասէր ընթերցողին որքան և իցէ բաւականութիւն պատճառելու հա-  
մար, չը խնայեցինք մի քանի աւելի ժամեր՝ այս նիւթիւր ֆրանսիական՝  
աշխարհիս մեծագոյն նոր հանրապետարանից քաղելու <sup>1)</sup>: Եւ ահա ինչ  
գեղեցիկ խօսքերով է սկսում այս լողածի առաջին մասի կազմող Ժ. Ա. Հիլը՝

«Չկալ հին պատմութեան մէջ մի աւելի վեհ, մի աւելի լուսաւոր  
անուն՝ քան Աթէնքը: Այս անունը մի ամենապալուսն քաղաքակրթու-  
թեան լիշատակն է արթնացնում, որ երբ և իցէ տեղի է ունեցել: Նա  
ամբողջում է ան, ինչ որ մարդկութիւնն արտադրել է ամենակատարեալը  
գրականութեան, գեղարուեստի, փիլիսոփայութեան և քաղաքականութեան  
մէջ: Նա ոչ միայն իղէլալական իմաստութեան արտապատուութիւնն է, որ  
ընդունակ է մարդկային բարւոքման տեսութեան (թէօրիա) և մտազնու-  
թեան շրջանում. նա մեզ ներկաւացնում է իրականութիւն ստացած ամե-  
նագեղեցիկ երազների տեսարանը, մարդկային տենչանքների և ձիրքերի  
ներդաշնակ հաւասարակշուութիւնը, մարտական քաջութիւն և հպրենա-  
սիրական անձնուրացութիւն՝ նւիրած բարձրագոյն իմացականութեան,  
ընկերական բոլոր ուժերի ներդաշնակութիւն՝ բանականութեան և մտա-  
տիպարի (իղէալի) տիրապետութեան համար: Երեսուրութեան այս աղ-  
բիւրից, դրւած արեւելքի տանձանաղլսում, որից նա իւր ցոլքերն էր  
ստացել, տարածւեց բարբարոս արեմուտքի մէջ հին քաղաքակրթութեան  
բոլոր պաշտօնութիւնը: Ժամանակակից ողին նրան է պարտական իւր  
ամենաթանկագին վաստակները, չկալ մարդկային հանճարի մի հատիկ  
չպտնութիւն, որ Աթէնքում չունեցած լինէր իւր ներածութիւնը (initiation)  
և ամենալաճախ՝ իւր նախատիպարը:

Ա. Ա. թէնք իւր ծագումից մինչև Պիզիստրատի դնելը:  
Աթէնք, Աֆրիկայի մալրաքաղաքը գտնւում է սպառաժուտ բլուրներով

<sup>1)</sup> Մորա միայն Ա տառով սկսող բառերը Հալիպոլեան երկուհատոր  
բառարաններից կրկնակի սոււար գրքեր են կազմում. դեռ Բ տառն է,  
ունի 400 աշխատակիցների, և երբ լրանալ ինչպէս երևում է, բարձր  
պէտք է լինի ոչ միայն գերմ. Բրոքհաուս հանրապետարանից, այլ և  
Մալերինից, որ երբ վերջերս աւարտեց աշխարհիս ամենհարուստ գիտա-  
կան շտեմարանի անունը վաստակեց:

ընդհատուած դաշտավայրի մէջ: Այս բարձր մասերում աչս վտիտ և քար-  
քարուտ հողը, իսկ ստորոտներում ճահիճներով զբաւեացած՝ ամենևին չար-  
մար չէր երևում մի բազմամարդ քաղաք անուցանելու և նրա բարդաւա-  
ճութեանը նպատակելու: Թէև առասպելաբանութիւնը հողագործութեան  
սկզբնաւարտութիւնն Աթէնքին և վերագրում, սակայն հացահատիկներն ընդ-  
հանրապէս լաւ չէին հասնում պատեղ, միայն գարին էր որ հասնում էր  
մի քանի պտուղների հետ: Բայց հողի աչս պակասութիւնը փոխարինում  
էր կլիմայի առաւելութիւններով՝ օդի բացաւիկ պարզութիւնով: Ամբողջ  
Յունաստանի մէջ, ցողերի առատութիւնը, որ շարունակուում էր նոյն իսկ  
ամառալին ամենատաք ժամանակներում, ծովի սիւրբերի զովարարութիւնը,  
մինչդեռ լեռները հիւսիսում և արեւելքում պատասպարում էին խիստ և  
վատառողջ հողմերից, որքան որ նպատատար էին բուսերի մշակման, նոյն-  
քան էլ մարդկանց ֆիզիքական և բարոյական առողջութեան: Հողը, որ  
միմիայն չնորհիւ աշխատութեան էր արտադրում, զէպի գործուեցութիւն  
էր զբաւում. ծովը օգնում էր քաղաքի կեանքին և որովհետեւ անհնարին էր  
երկրագործական արտադրութիւններն արտահանել, որոնք հաղիւ բաւա-  
կանութիւն էին տալիս ներքին պէտքերին, արտահանութեան առետուրը  
կարող էր միայն մշակուած նիւթերին վերաբերել: Այստեղից արեւտոնների  
զարգացումը, որոնք զարգարում էին կեանքը, ճաշակաւոր և ճարպիկ կաւա-  
գործութիւն: Պէնտէլիքի ընտիր մարմարիտները մատակարարում էին ճար-  
տարապետութեան նիւթը, իսկ Լորիումի արծաթի հանքերը՝ տուրեսաւի  
զիւրացուցիչ զրամները:

Այս անունը, որ քաղաքը պատմութեան մէջ կրում է, միայն իրան  
լատուկ չէր, և զանազանելու համար ասում էին Ատտիկէյի Աթէնք: Յի-  
րաւի ի հնումն իննը համանուն քաղաքներ կալին: Բոլոր աչս քաղաք-  
ները առանց բացառութեան իրանց անուններն ստացել են Աթէնայից<sup>1)</sup>:  
Նրբ Աթէնքում պելաղգներն էին բնակում, նա սկզբները կէկրոպիա էր  
կոչում, կէկրոպի անունից, թագաւորներից առաջինի, որոնց մասին  
առասպելական պատմութիւնը վիշատակներ է պահպանել: Նրբ գորիացի-  
ներն արչաւեցին զէպի Պելոպոնէս, չօնիական ցեղին վերաբերեալ ժող-  
վուրդներն աչստեղից դուրս մղելով՝ ապաստանեցած կղախան լեռների  
մէջ, որտեղից նրանք չը չարագեցին Պէղիաս դաշտավայրն իջնելու, որ  
զէպի Աթէնք էր տանում: Առասպելաբանութիւնը պահպանել է նաև մի  
ալլ գաղթականութեան վիշատակ, որ միևնույն ժամանակ արթնացիներին  
ու էլօղէսի բնակիչներից միմեանց զէմ հանեց, աչս կռիւները վերջացան  
նրանով, որ երկու կողմերն հաշուելով մի դաշնակցութիւն կազմեցին ու

<sup>1)</sup> Տարբերութեան համար աչս քաղաքի անունի վերջն աւելացնում  
էին չոքնականի մասնիկն, ինչպէս հայերս էլ՝ ք տաւր:

աչափսով միացրին դանազան փոքրիկ ցեղերը, նրանք համախմբուած են Աթէնասի երկրպագութեան միութեան մէջ և հիմնուած Աթէնք քաղաքը: Այս միութեան պատիւը վերաբերուած են Թեղէսիին, որ աչափսով պէտք է համարել աթէնական տէրութեան իսկական հիմնադիրը: Նրա թագաւորութեան ժամանակ ասուածները չըջանը, որոնց երկրպագութիւնը ներկայացնում է քաղաքական և ընկերական կեանքի զանազան երեւութիւնները և որն սկսուած է պէլազգիան Արամազդով, ստացաւ Ապոլոնը, բոլոր լոնիացիների աղբալին ասուածը: Նա ինքը Թէղէսը, թշնամանեց Հերակլեան կրօնը, որի արկածներին նա մասնակից էր եղել, սահմանեց Աֆրոդիտայի և Պէլլոսի (? Խմբ.) պաշտամունքը: Աթէնքում միաջն մի կրակատուն մնաց աչտուհետ, Ակրոպոլիսի հիւսիսային կողմը՝ ուր գալիս էին ասիացի լոնիական դաղթականները սուրբ կրակ տանելու: Այս երջանիկ հետեանքները ի վիշտակ իւրաքանչիւր տարի կատարուած էին միութեան տօնը՝ մի քանի օր Պանաթէնեան տօներից սուաջ, որոնց հիմնադրութիւնը նոյնպէս Թէղէսին են վերագրուած: Նախելով այս կիսապատմական ու առասպելախառն տեղեկութիւններին, Ակրոպոլիս մինչև պատմական ժամանակները մնացել էր կրօնական կենտրոն. աչտեղ էր բարձրանում էլլէխտէնի աչն սրբարանը, որի մասին խօսում է Իլիադը, աչն սրբարանը, որ ներառած էր Աթէնաս Պալլասին, աչինքն՝ քաղաքի պաշտպանին: Նա աչտեղ մեծարուած էր Պոսիդոնի հետ միասին, որ ծովալին լոնիացիների նախամեծար ասուածն էր, Թեղէսի իղէալական հայրը: Ապա աչ բլրի վրաչ նաև ալլ սրբարաններ շինեցին, իսկ նրա շուրջը հետզհետէ զանազան դաղթականութիւններով շէնցաւ, քաղաքը մեծացաւ, զանազան մասերի բաժանուեց, որոնց մէջ ամենահերեկին էր միջնաբերդի արևմտ. կողմը՝ մինչև Իլիսոս գետակը: Այս քաղաքաբաժինը անուանուեց Քիդաթէնէոն, աչինքն՝ վեհ և հարազատ անդամ թերի մնացած՝ միաջն Ադրիանի ժամանակ լրացաւ: Ակրոպոլիսից և Քիդաթէնէոնից գէպի արևելք՝ Յաւէրթահարսերի, Պնիքս և Մուսաների բլուրների մէջ զետեղուած էր մի ալլ նշանաւոր քաղաքամաս Մելլոս, որի մէջ ամենանշանաւորն էր Թէղէսի տաճարը, որ անձեռնմխելի ապաստանարան էր վախտական դերիների, անբաղձների և տառապեալների համար: Մելլոսում բարձրանում է նաև Արէսի Արէոպագ լեւը, ուր Աթէնասը վերջ տալով փոխվրէժի ոովորութեանը, հիմնեց զթառաստութիւնով չափաւորած դատաւարութիւնը: Այս բացողեալ դատարանն ապառաժի մէջ շինուած տտեանով և տասնութեց աստիճաններով տակաւին ցուց է տալիս իւր հետքերը: Արէոպագիսի հանդէպ՝ արևելքում գտնուած է վերջուլիշալ Պնիքս բլուրը, ուր թագաւորութեան ժամանակներից ժողովուրդը հրաւիրուած էր ժողովի՝ հասարակական խնդիրների մասին խորհրդակցելու համար:

Այս և միւս քաղաքաբաժինները, միասին թւով տասը, ունէին Երեք տեսակ բնակիչներ. Եւպատրիաներ կամ ազնւականներ, Գէտմորներ կամ մշակներ և Գէմիւրներ կամ արհեստաւորներ:

բ. Աթէնք Պիլիստորատի գներից մինչև մեղական պատերազմն և բը: Պիլիստորատ, տիրանալով Աթէնքին՝ փոխարէն իւր բռնապետութեան աշխատեց իւր Հիպպիաս և Հիպպարք որդիների հետ մեծ մղում տալ հասարակական շինութիւններին՝ քաղաքի գեղեցկութեան և ընդարձակման համար: Հիպպարքի գործերից աչտեղ վիշնք նւիրական ճանապարհի վրայ, որ դէպի Էլզոլես գնում, Հիպպարքի կառուցած հասարակական զիննաղիւնը, ձեւարանը, որ կրմունը զարդարեց և Պլատոնը լուսաւորեց:

Հիպպարքի սպանութիւնն և Հիպպիոսի արտաքսումը ամենևին չընդհատեցին Աթէնքի գեղարեւոտական կերպարանափոխութիւնը: 500 թւականին Ակրոպոլիսի հարաւ արևելեան գառիվարում շինեց առաջին քարէ թէատրոնը, Գինիոսի թէատրոնն, աջապէս անւանւած Լէնէնի գրայիութեան պատճառով որ հաստատում էր այն առանձին խնամակալութիւնը որով աստուած մեծարում էր բեմական խաղերը: Իկարիսից և Մեդարակեց Աթէնք եկած այս խաղերն իրանց ծագումով Գիօնիսեանների (Քաքոսեան տոնախմբութիւնների) տարրերից մէկն էին կազմում, ինչպէս հագներդութիւնները (ռասողիա) Պանաթէնեան երգերի մի տարրը: Թէատրոնը, որ չետոջ գեղեցկացաւ, իւր ծագումով մի շատ հասարակ շինութիւն էր, հանդիսականների աստիճանները կտրւած էին ապառաժի մէջ. բեմն ու երաժշտարանն էին, որոնք խկապէս որոշ շէնք ունէին:

Մեղական (պարսկական և. դար Քր. առաջ) պտտերազմները ծանրադոն ճգնաժամն էին, որոնց շնորհով աթէնական քաղաքակրթութիւնը կարող էր կործանել, որոնցից նա հակառակ մարդկային կանխատեսութեան՝ դուրս եկաւ մեծացած, զօրացած, աշխարհը զարմացնելով ամենասքանչելի պտուղների բարդաւաճումով: Մարաթոնումն էր այն, Աթէնքի հիւսիսում՝ իւր քաղաքական կեանքի անմիջական շրջանում, որ աթենացի Միլթիապէսը կոտորեց Գարիոսի զինւորներին. Սալամինումն էր, Ակրոպոլիսի աչքի առաջ, նոյն իսկ նաւահանգստում, որ եւ էր գալիս Աթէնքի առետուրը, ուր աթենացի թէմիստոկլէսը Քսէրքսէսի նաւատորմիկն մի աջնալիսի հարւած տուց, որից նա ալ ևս չուզէր: Թէրմոպեղեան կիրճի անցնելուց չետոջ Աթէնքին էր, որին Քսէրքսէսն ամենաստափկ հարւած տուց, նա այնտեղ զոյում էր Յունաստանի հողին, տոկունութեան բարոյական կեանքով: Մինչդեռ թէմիստոկլէսը ծովի վրայ վճռական ճակատամարտը տալու համար մարդաբնակութեան մեծամասնութիւնը Արէզէն ու Սալամին փոխադրեց, մի քանի չամառներ, պատգամախօսի ասածին բառացի մեկնութիւն տալով՝ փակեցին Ակրոպոլիսի սրտերի մէջ, որ արևելեան և հիւսիս-արևելեան կողմերից պաշտպանւած էր

միաձն պարտէզներով և ձիթաստաններով: Անկասկածելի է, որ պաշարումը Պիղիստրասաների դարդարած քաղաքը ակերակների բեկոյներ դարձրեց: Բայց անկասկած թիւնը փրկած էր և ազգային զգացմունքը վերին աստիճանի գրողւած բոլորովին անսպասելի չաղթութիւններով՝ պատրաստականութիւն էր ընծալում ամեն տեսակ զոհաբերութեան: Քաղաքն և իւր շէնքերը բարձրացան մոխրի միջից աչնպէս, ինչպէս Աթէնացիների հռչակը վտանգներից՝ զեղեցկացած և մեծացած: Պատերազմից լետոյ ըստ Քսէնոֆոնի՝ քաղաքն ունէր 10,000 տուն և ամենահաւանական հաշիւները հասցնում են ազատ և գերի բնակիչների թիւը մինչև 120,000, չը նշւած պիւրեացիներն ու արւարձանների բնակիչները: Եթէ հաւատ ընծալենք թուկիդիտէսին՝ Աթէնքի շրջափակը համարեա 43 ստադ, աչւինքն՝ համարեա 8 հազարամետր էր եղել:

Գ. Աթէնքը Մեղական պատերազմներից մինչև Աղէքսանդր: Հասկանալի է, որ Աթէնքի հրկիզութեան չաջորդ օրը և աչն հոգսերը, որոնք նրա ապահովութիւնը Յէմիստոկլէսին ներչնչում էին, քաղաքը ամենեւին չը մտածած լինէր չքեղապարզ ու բազմասես շինութիւններ կառուցանելու մասին և շարունակելու Պիղիստրատիոյների աւանդութիւնները: Ճարտարապետական բնաւորութիւն սննեցող միաձն Արաթմիտ Արիստոբուլէի տաճարն էր՝ Մելլիտ քաղաքաբաժնում, որ նրան են վերագրում: Բայց աչն, ինչ որ նա չը կարողացաւ անել, ձեռնարկեց Արմոնը, որ զեղեցկացման գործում Պիղիստրատների շարունակութիւնն է կազմում, իսկ Պերիկլէսին՝ նախորդը: Միւս կողմից աչս մեծ քաղաքացու գործունէութիւնը միանում է Աթէնքի գրադիտական ու գեղարւեստական ամենագեղեցիկ շրջանի հետ: Ողբերգութիւնը Էսթիլի և Սոփոկլէսի շնորհիւ, կատակերգութիւնը Արատինուսի միջոցով, որին գերազանցեց Արիստոֆանը զարգանում էին նուչն ժամանակները՝ կաւագործութեան, պատկերահանութեան ու քանդակագործութեան հետ: Աղաթարիւսը նկարչութիւնը բեմական խաղերին ծառայեցրեց: Պոլիգնոտը, Արմոնի անձնական բարեկամը, իրան նւիրեց տաճարներն ու հասարակական շինութիւնները պատմական և առասպելական նկարներով զարդարելու գործին: Աթէնական քանդակագործութիւնը, ազատելով խիստ ձեւերից և նւիրական դիւքերից՝ մրցում էր իւր արտաչափութիւնով և բազմապիտուութիւնով Միկիոնի, Արգոսի և Լպլինալի հռչակաւոր շիւղաների հետ... Աւելացնենք աչս զանազան գործերի վերաչ ձեւաբանի գեղեցկացումը արտաքին Աէրամեք թաղում և բարեկեցիկ քաղաքացիների քաղաքաբաժնինը, մի մրցութիւն միևնոյն ժամանակ թէ հալրենասիրական և թէ գեղարւեստական, աչնպէս որ քաղաքը, հրաշքով տւերումից ազատելով՝ արժանի եղաւ որքան իւր սներով, նոչնքան էլ իւր շէնքերով իւր քաղաքական, պատերազմական և քաղաքակրթիչ գերին:

Երեւում էր, որ Արմոնը չափազանց նւիրւած էր Աթէնքի վերաշինութեան՝ ի վիշտակ իւր հօր և ջօզուտ իւր ընտանիքի: Քաղաքագէտ, վարիչ

և զօրավար Պէրիկլէսը ի նկատի ունէր միայն Աթէնքի բարձրագոյն շահերը: Նրա միջոցով է որ քաղաքի բարոյական մեծութիւնն ու նիւթական պաշտօնութիւնը հասան լիակատար բարդաւածման: «Ամեն ինչ միասին պատահեց, արևտտագէտները հանձարը, պետական անձերը մէջ լուս ու շուք, հասարակական գանձի հարստութեան անսպասելի աղբիւրներ, խաղաղութիւն ներքը, դիւետրական փառք դուրսը (Beulé, l'Acropole): Պէրիկլէսը վերաշինեց Պարթէնոնը, դորիական ոճով կառուցած այս տաճարը, որին ձեռնարկեց Պիլիստրատ և պարսիկների ձեռքով աւարտուելուց առաջ քաղաքուէց. նա Պարթէնոնին միացրեց Պրոպիլէզը որի սպիտակ մարմարներից շինած սիւնաղարդ սրահը (portique) աղամանդի նման պրակում էր միջնաբերդը. ապա նա վերաշինեց Էրէսթէոնը, Աթէնաս Պալլասի հին սրբարանը: Թէ ինչ աստիճանի մեծածախս էին այս շէնքերը, կարելի է դատել միայն Նախագաւթիները դիտենալով, որ 10 միլ. ֆրանք արժեց. Աթէնաս Պալլասի արձանի ոտիէ մասը բիւզն 3 միլիօն նստեց: Ամենից առաջ լրացաւ Պարթէնոնը, Նախագաւթիքը 436-ին սկսելով՝ վերջացաւ հինգ տարի փետոյ: Դէլոսի տաճարի զաշնակիցների ընդհանրական գանձարանն էր, որ օդնութեան հասաւ: Պէրիկլէսը համարում էր այս մեծագործութիւններն իբրև հանրավարական սիլլոնքների ամենաբարձրագոյն և ամենախմաստուն գործադրութիւն: Նրանց միջոցով նա տարածում էր առատութիւն ամեն բանի և այս առատութիւնը պտուղ էր խելացի աշխատութեան, որ մարդաբանական բոլոր գործոն անգամները շարժման մէջ էր դնում. այդ առատութիւնը բղխում էր զաշնակիցների նիւթական կարողութիւնից, որի փոխարէն Աթէնքը երաշխաւորում էր այդ պետութիւնների ապահովութիւնը և սրանով՝ բարդաւածութիւնը: Կիմոն ունէր Պոլիգնոտին, Պէրեկլէս՝ Ծիդիասին և նրա հետ հռչակաւոր քանդակագործներին, պատկերահանների և ճարտարապետներին մի ամբողջ լէգէոն: Ակրոպոլիսից դուրս Պէրիկլէսը կառուց, թերևս իւր ծախքով Օդէոնը կամ ծածուկ թէատրոնը՝ երաժշտական ներկայացումների և քնարերգական երկերի արտասանութեան համար: Ոչ հեռու սպտեղից գտնուում էր Տրէպիէզ (Նուտտանի) քաղաքաբաժինը, այսպէս անանուած այն վիչատակարանների պատճառով, որոնց շնորհով հանդիսածունքը չաւերժացնում էին իրանց բնական չաթթութիւնների վիչատակը: Պէրիկլէսան օրերից Պանաթէնեան տօնախմբութիւնները տևում էին ամբողջ վեց օր, երբ տեղի էին ունենում խաղերի բոլոր տեսակները՝ ներկայացումներ և կրթութիւններ, ուր Աթէնացիների արևտտագիտական ճաշակը, ձեակերտական կրթվը, գրագիտական ձեռքերը աւելի էին գտնում երևան դալու: Այն հանդտեան ժամանակամիջոցներին, որ Պէլոպոնէսեան պատերազմները թուլ էին տալիս, դեռ այս կողմից էր որ քաղաքը շարունակում էր զարգարել: Լիլուրգսան աւարտեց Դիոնիսոսի մեծ թէատրոնը, նրան զարգարեց ողբերգակ բանաստեղծների արձաններով և նրանց երկերը հասարակական հեղինակութեան երաշխա-

ւորութեան տակ գրեց: Ազդէլի արւարձանը, որ գտնուում էր Կլիստարի միւս կողմը, Հելլիոնի ստորոտում մի ընդացարան ստացաւ մարմնամարզական խաղերի համար. Լեկէոնի և Կիւնոզարդի մարմնամարզարանները վերաշինւեցին կամ ընդարձակեցին: Հասարակ մասնաւոր անձեր իրանց հաշով հասարակական շինութիւններ էին կառուցանում: Պլատոնը ձեռնարանում շինել տւեց մուսաների տաճարը Լիվելլատը՝ մի փոքրիկ մարմարոնեալ սրբարան Ակրոպոլիսի հիւսիս արեւելքում Տրէպիէդի ծալքում, սրբարան որ լալտնի է Գէմոսթէնէսի Լապտեր անուն տակ և այլն:

դ. Աթէնքը Ազէքսանդրից մինչև Պաւղանիոսի ճանապարհորդութիւնը (160 թ. Քր. վտու): Եթէ Պիլիստրատիդների գահակալութիւնից մինչև Քէրոնեան ճակատամարտն անցած երկու դարերը Աթէնքի համար մի փառահեղ ծաւալման (expansion) շրջան եղաւ՝ շնորհիւ իւր սեփական աղբիւրների, մակեդոնական սիրապետութեան ժամանակները, որին հետեց հռովմէականը, ներկայացնում են հետաքրքրաշարժ տեսարան մի քաղաքի, ակնածութիւն ներշնչող իւր տէրերին, և լիացած նրանց բարեգործութիւններով և պահած նիւթական շքեղութեան մէջ, ինչպէս մի թանկագին առարկայ, որի տէրերը ջանացին նորա արժէքը խնամով պահել: Ազէքսանդրի համբաւը, որ բաժանեց նրա կայսերութեան ժառանգորդների մէջ, միայն պատերազմական փառքից շառաջացաւ, նրան մասնակից եղաւ մի մեծ բաժին աչն մտաւոր ու բարոյական պերճութեան, որի համար հելլենականութիւնը պարտական էր մասնաւորապէս Աթէնքին: Նոյնպէս այս քաղաքը հետզհետէ սկսեց համարւել գեղարւեստի և գրականութեան մարաքաղաք, ուսուցիչ հին աշխարհի մտաւոր կեանքի:

Առաջի բերան Հռովմէացիները քիչ զժաւորութիւն կրեցին իրանց բարբարոսութեան ու անպգութեան բնազդումները զսպելու, երբ Կարթագէնի աւերելուց վտուո՛ւ նրանք նւաճեցին Ասիան, Մակեդոնեան և Յունաստանը: Կորինթոսը, Ամբրակիան և նոյն իսկ Աթէնքը պաշարւելով ու զրաւելով Սուլլայի ձեռքով վնասեցին: Բայց կրօնական զգացմունքն ու պետական իմաստութիւնը աւելի մարդասէր (human) վարմունքներ ներշնչեցին. շատ չանցած՝ հելլենական քաղաքների գեղարւեստական և գրական շուքը չաղթողի աչքերը շլացնելով, սա էլ իւր կողմից չաղթեց և բաւականացաւ իւր հալոնիքը տանել գեղեցիկ իրերի ճաշակի և մտաւոր զբաղմունքների հետ մի բոլորովին առանձին համակրութիւն ղէպի Յուները, որոնք այդ բաներում գերազանցում էին: Պաւղանիոս նկատում է, որ Աթէնքի աւարառութիւնը և մի քանի հնութիւնների աւերումը, որոնց համար Սուլլան ջանցաւոր եղաւ, մի բացառութիւն էին. ամօթալի հիւանդութիւնը, որից նա մեռաւ, համարւեց աչն աստուածների պատուհասը, որոնց տաճարները նա պղծեց: Հանրապետութեան վերջին ժամանակները հռովմէական երիտասարդութիւնը ղէպի Աթէնք էր ճանապարհորդում թէ ուսանելու և թէ միեւնոյն ժամանակ աւելի լաւ դառնա-

լու: Բայց Աթէնքի ամենամեծ բարերարն էր Ազրիանոս կաւորը, որ աջնտեղ ապրելիս էր եղել, տակուսին իբրև մասնաւոր անձ: Նա ընդունեց անւաճաղիր Արխոնտի տիադոսը և մեծաքանակ դումարներ նւիրեց Ոլլիմպէոսի աւարտման համար: Մի ամբողջ քաղաքաբաժին, որ Ազրիանոսազրիս անունն ստացաւ, բարձացաւ տաճարի հիւսիս-արևելեան կողմում Ազրէլեան ընթացարանի և Գեօմէյա քաղաքաբաժնի մէջ: Նա շինեց նաև մի տաճար Նւիրւած Հերալին և համահեղինեան Արամազդին, մի Պանթէոն և մի գլինազիօն՝ զարդարած Լիբլեան մարմարոնեալ հարկը սիւներով, մի հնութիւն որի տեղն այսօր անորոշ է մնացած: Մինչև Բրիլէստուսից խմբու ջուր բերող ջրմուղներն սկսելով այս կաւորի ձեւքով՝ վերջացան Անտոնիոս Երջանկի օրով:

Ե. Աթէնքը Պաւլոսի ոսի ճանապարհորդութիւնն ից մինչև նորագոյն ժամանակները: Երբ Պէլոպոնէսեան պատերազմից վետոյ Աթէնքն՝ իւր քաղաքական և ռազմագիտական անկումից վետոյ՝ միխթարւում էր իւր անցեալի վիշատակով, իւր հնութիւններն ու վիշատակարանները, իւր առասպելաբանութիւններն ու պատմութիւնը զրի առնեցին մատենագրները մի առանձին դասի շնորհով, որոնց անւանեցին Ատթիդօ գրաֆներ: Այն մեծաքանակ երկերից, որոնք ներշնչւած էին նոյնպէս հարուստ նիւթերով, միայն հատուածներն են մնում: Աշխարհագէտ Սարարոնը՝ օգոստոսի ժամանակներում խօսում է մի երկրի մասին որ նա նկարագրում է, աւելի իբրև փրիստիալ՝ քան հնախոյզ. նաև Աթէնքի մասին նա մեզ շատ աննշան բան է ռտուցել: Ինչ վերաբերում է Պլուտարքոսին, որի «կեանքերը» (Vies)<sup>1)</sup> աթէնական թէատրոնի համար աւելի նիւթեր են պարունակում՝ քան մի այլ քաղաքի մասին, նա հնութիւնները նկարագրում է միայն հակիրճ ու պատահական եղանակով: Քաղաքի մասին ամենաճիշտ և մանրամասն տեղեկութիւններ տւող հեղինակը Պաւլանիոս Պէրիէգէտն է: Նրա ալցելութիւնն Աթէնքին տեղի ունեցաւ 160 Քր. է., երբ նա իւր տեղագրութիւնն սկսեց և այս նկարագրութիւնների վերայ է որ կարող է Աթէնքի ամեն տեղագրական ռտումնասիրութիւն հիմնել: Նա թանկագին է ինքնըստ ինքեան և աջն ժամանակի պատճառով, երբ կազմեց, թանկագին նաև նրա համար, որ վետոյ լուսթիւնը համարեա լիապէս տիրում է ու թէ՛ Աթէնքի և թէ՛ ամբողջ հին աշխարի համար Պ. դարուց սկսելով մօտենում են նիւթական աւերման, բարոյական նախաւնջի, զեղարւեստական ու դրական անկման ժամանակները: Պաւլանիոսն Աթէնքը տեսաւ նրա ամբողջ կատարելութեան շքեղութեան մէջ, հսկայական գործերի հետեւալ օրը, որոնցով Ազրիանոսը արտապաշտեց զէպի քաղաքն ունեցած իւր գորովը, աջն վաչրկենին, երբ Հերովդէս Ատտիկոսը կառուցանում էր իւր թէատ-

<sup>1)</sup> Յունատասնի և Հռովմի երեւելի անձնաւորութիւնների համեմատական կեանքը:

րոնք: Վերջապէս նրանք (Վոտտանդինուպոլսի կայսրները) հին հեթանոսական սրբաօսանները քրիստոնէական եկեղեցիներ դարձրին, նրանց միջից արտաքսելով ալն աստածութիւնները, որոնք իղէալացրած էին նախնի մեծ արւեստապէտների միջոցով: Սուրբ Գէորգը Թէղէոսի տեղը բռնեց, Եղիան՝ Հելլոսի, սուրբ Սոփիան, ապինքն՝ Աստածալին իմաստութիւնը կամ Անարատ կոյրը՝ Աթէնասինը, սուրբ Միքայէլը՝ Հէրակլէսինը: Արտֆնետե նոր պաշտամունքը շինութեան չարմարութիւններէր պահանջում, բիւզանդական անճաշակ արւեստը զերազատեց գեղեցիկ դարերի սճերից, նա խանդարեց շինութիւնների ներսի գծերի կատարելութիւնը և դաղափարի միութիւնը: Այսպէս վարեցին նաև քանդակագործութեան գլուխ գործոց հետ, մի գործողութիւն, որ ժամանակով Վալդուլալին նրա խենթ ունալնամտութիւնն էր փափաք ազդել, վերցնում էին նրանցից գլուխը և ալն հեթանոսական առանձնաչատկութիւնները՝ նրանց տեղը սրբերի կերպարանքներ և քրիստոնէական խորհրդանշաններ դնելու համար: Սա բարբարոսութեան սկզբնաւորութիւնն էր, առաջին միջնադէպն ալն պսլքարի, որ քրիստոնէական ոգին պէտք է մղէր հեթանոսութեան դէմ:

393 թ. Ալարիսը Վէստգոթերի հետ նախագահեց բացալալտ արչաւանքներին և աւերումներին: Առասպելը պատմում է սակալն, որ նա համեմատաբար չափաւոր վարմունք ունեցաւ և ալս վերագրում է ալն կրօնական սպաւորութեան, որ նրա վերալ գործեց Ակրոպոլիսի հակալական Պոլիաս Պրոմախոսը: Գէնդէրիսը կէս դար լետոլ բաւականացաւ միալն Ատտիկեան ծովազրներն աւարի աւնելով: Աթէնքը խոլս տւեց աղէալից շնորհով իւր տակալին անասան պարլապներին: Յուստինիանոսի մի հրովարտակը գոցել աւեց Աթէնքի վարժարանները (529 թ.), որոնց վրալ նալում էին իրրև հեթանոսութեան ամենալերլին պատւարների վրալ, ալս պատճառով զիշերը հետղհետէ թանձրանում է քաղաքի ճակատագրի վրալ: Համարեա կօթը դար շարունակ նա անհետացած է երևում պատմութիւնից: Ամբողջ գրականական կեանքը պանդխտեց դէպի Վոտտանդինուպոլս և Թէսալոնիկէ: 1203 թւականից լետոլ, երբ խաչակիրները տիրացան ալս քաղաքներից առաջինին, Աթէնքը դառաւ մի դքսութեան մալրաքաղաք, որի սահմանների մէջ դանւում էր Ատտիկէ, Բէօսոլա, Ֆոկիալի և Եւբէալի մի մասը: Բուրգոնդացի աղնւատոնմի մէկը՝ Օթոն զը լա Բոլ՝ կոչեց Աթէնքի և Թէրալի դուքս: Ալս շրջանից մինչև անկախութեան պատերազմները (1830) Աթէնքի ճակատագիրն եղաւ՝ ալս ևս ոչերբէք Յոններին չը պատկանել: Տասներեքերորդ դարուց սկսեալ Ակրոպոլիսի պանձալի աւերակները շատ աղէտալի օրեր տեսան, մանաւանդ թնդանօթի գլուտի շնորհիւ և որ դարմանալին է մի իտալական ժողովրդի կողմից հասցրած վնասներն ամենից շատ եղան:

Սակեալ ժՁ. դարու վերջերից արևմուտքի ուսումնականների միտքը սաստիկ զբաղւած էր Աթէնքի հնութիւններով և ալն մասերով, որ կա-

րելի էր քաղել հնութեան պատմութեան համար: Մարտին Կրաուզ կամ Կրաուզուս, ուսուցչապետ Տիւբինգէնի <sup>1)</sup> համալսարանի աջ խնդրի համար թղթակցութիւն բացեց Արեւելքի գիտնականներին, Նէպոլեոնի Թէոլորոս Յեզոմալի և Ակարճանցի Սիմէօն Կաւիզիլաչի հետ, որոնք նրան մի քանի տեղեկութիւններ ուղարկեցին: 1621 թ. Կէզաւս, Ֆրանսուսի դեսպանը Պոլսոս, աչկիւն քաղաքն ու Նիարագրեց նրա հազադիւտ բաները: Շուաղէլ Գուֆֆիեր կոմսը, Պոլսի դեսպանը, Նորից բերեց Պարթէնոնի ֆրիզներից (վառդ) մի բեկոր (միայն մի հատիկը և արդէն վաղուց պրծած): Լորդ Էլզէն խրախուսելով այս օրինակից Անգլիա սարաւ Ակրոպոլիսից բռնի սրկելով քանդակների ամբողջ նաւաբեռեր, որոնք լետոզ դնեց կառավարութիւնը Բրիտանեան թանգարանի համար: Այս եղաւ սրբապղծութիւնների երկար շարքի վերջաւորութիւնը. սկսեալ այն ժամանակից, երբ Յունաստանն իւր տէրը դարձաւ, հաջածութիւնով պաշտպանում է Աթէնքի փառաւոր անցեալի մնացորդները. գիտնականները, որոնց պեղում և հետազոտում են այդ հնութիւնները տեղն ու տեղը, այս գործերը Նւիրում են հազադիւտ ձեռնհասութեան հետ, սէր, խորին չարդանք այն քաղաքին, որ նրանց աչքում ամբողջում է լուսնական քաղաքակրթութեան ամբողջ փառքն ու շուքը»:

Ահա այս խօսքերով կնքում է վերոյիշեալ հեղինակն Աթէնքի տեղագրականի վերաբերեալ լողածը, որի մի երրորդ մասը մենք հաղիւ կարողացանք այստեղ քաղածօրէն մէջ բերել՝ բոլորովին զանց առնելով այս լողածի զուտ պատմական մասը նոյն ծաւալով: Մենք այն կարծիքին էինք, որ այս նախապատրաստական տեղեկութիւնները կարեւոր էին Աթէնք մտնելուց առաջ թէ՛ նրանցով երբեմն զբաղածներին և թէ՛ նամանաւանդ անտեղեկներին, որովհետեւ ամեն մի ուղևոր որ կամենում է ըմբռնել այս չքնաղ քաղաքի անցեալ ու ներկալ երևութները, շատ աննշան բան շահած պիտի լինէր, եթէ լանպատրաստից սուք դնէր նրա դռնից ներս: Մենք արդ պիտի տեսնենք, թէ ինչպէս ժամանակակից Աթէնքի իւրաքանչիւր երևութ, եղիւ է նա կրօնական, բարոյական, մտաւոր գեղարեւոտական՝ իւր անցեալի հարստատ գուտօրն է ներկայանում, թէն նա երկար ու ձիգ դարերում այս կամ այն ներքին կամ արտաքին կերպարանափոխութեան ենթարկւած լինելով՝ մեզ միշտ իւր իսկական արտապատկութիւնով չը ներկայանալ:

(Նր շարունակութիւն)

<sup>1)</sup> Կ. Կրամանկաուս:

## ՀԱՅ ԲՈՇԱՆԵՐ <sup>1)</sup>

ԳՐԻԳՈՐ ՎԱՆՑԵԱՆԻ

(Շարունակութիւն և վերջ)

V

Վերերը դրած այր և կին բոշայի առանձնակի նկարագրութիւնից կարծեմ ընթերցողը քիչ թէ շատ գաղափար կազմեց նոցա փոխադարձ չարաբերութեան մասին, որ խիստ բնորոշ կերպով արտայայտուում է այն խոստովանով, որ տալիս է ամուսնանալու ժամանակ հարսնացուն իւր փեսացունին. երբ մօտենում է պսակի ժամը, ինչպէս պատմում են, փեսացուն մոնում և պահում է թոնրում, իսկ հարսը մօտենալով նորան մի քանի անգամ համոզողական ոճով խնդրում է դուրս գալ թաքստեան տեղից. «Դուս էիօ, տոտիկներիդի մեռնիմ, դճու էիօ, մուրամ, կուրամ՝ քեզի կը պահեմ»: (Դուրս եկ, տոներիդ մեռնեմ, ես մուրամ, կուրամ՝ քեզ կը պահեմ): Այդ խոստումը ստանալով իւր նշանածից, փեսան դուրս է դալիս և գնում պսակելու: Քանի որ աղջիկ է, բոշան ազատ է, չի շրջում ապրուստ ժողովելու, ապրում է հօր տանը, կատարելով միայն ընտանեկան թեթեւ գործեր. նրա երեսը բաց է, քողով չի ծածկած, նա ազատ է, խօսելը և մարդկանց երևալը նորան չեն արգելում: Բայց երբ նա նշանեց, մանաւանդ երբ նորա շրթունքը հնչեց չիշեալ անխուսափելի խոստումը, որով նա դառնում է մի նոր տան անդամ, որով

<sup>1)</sup> Տես «Մուրճ» № 7—8:

այդ տան կարիքներն ու հոգսերը հոգացողն ու մատակարարողն է դառնում, զրկում է այն ազատ, անկախ գրութիւնից, որ վաչելում էր իւր հօր տանը: Նա իրաւունք չունի իւր փեսայի տան մեծերի հետ խօսելու մի աւժամանակ, պէտք է երեսը քողով ծածկէ մինչև որ սկսի իւր շրջակայութիւնը, մինչև որ ձեռքն է առնում աստանդական մահակը: Սկզբներում ի հարկէ նա լինում է ամաչկոտ և անհամարձակ, այդ պատճառով նորան առաջնորդում է իբրև մենտոր մի փորձառու և հասակաւոր կին. իսկ հեռո՛հեռէ վարժելով իւր պարապմունքի մէջ, դառնում է իւր տան պահպանողը: Յըութեան վերջին ամիսներին սովորաբար բոշա-կանայք դադարում են շրջելուց և տանն են մնում. թէև սակաւ չի պատահում, որ նոքա ծանապարհին կամ հեռու օտարութեան մէջ ծնելով, վերադարձին իրանց վաստակի հետ մի զաւակ էլ պարզև են բերում իրանց ամուսիններին:

Բոշա-կինը իւր այդ գրութեամբ, իբրև ընտանիքի առաջաւոր ոյժ, իբրև նորա խոշոր հոգսերի հոգացող, հասկանալի է, թանկ էլ պիտի գնահատուի: Ամէն մի բոշա-փեսացու պարտաւոր է մի պատկառելի դրամագլուխ վճարել իւր հարսնացուի ծնողաց: Այդ դրամագլուխը, որ «հատէմասի» (համաձայնութիւն, այո ասել) է կոչւում, Սխալքալաքի բոշաների որոշմամբ 115 թուբլի է ներկայումս: Առաջ դա աւելի շատ է եղել, բայց անցեալ տարուց բոշա համայնքը կարգադրել է դորանից աւելի երբէք ոչ պահանջել, ոչ էլ վճարել: Այդ համեմատաբար մեծ զուժարը նոքա առանձին դժւարութեամբ չեն վճարում. գէթ Սխալքալաքի բոշաները համեմատելով նոյն տեղի հայ գիւղացիների հետ, որոնց մօտ նոյնպէս այդ սովորութիւնը կայ, նոցանից շատ աւելի և որ զլխաւորն է, շատ էլ գիւրութեամբ են վճարում: Այդ և ուրիշ մի քանի հանգամանքներ ցոյց են տալիս, որ բոշաները խեղճ, համարեն աղքատ ապրելով, աշխատածը յետ են պցում «նեղ օրուս համար», թէև նոքա աշխատում են ամէն կերպ ցոյց տալ, թէ նոքա ամէն բանի կարօտ յետնեալ աղքատներ են. — Մի զոտ բոշայական յատկութիւն, որ ի հարկէ ոչոքի չը պիտի զարմացնէ:

Այդքան փոզ ստանալով աղջկայ ծնողները խիստ աղքատիկ օժիտ են տալիս իրանց աղջկան. մի դիմացկուն և ընտիր մահակ,

մի մեծ կաշեաց տոպրակ, իւր հագի շորերը, երբեմն նաև մի զոյգ նոր, հասարակ կտորից կարած շոր, անա բոշայ ազջկայ իւր հօր ասնից տարած օժիտը, որոնք և նորա ամենասիրածեշտ իրերն են:

Բոշաների հարսանիքը թէև զուրկ է արտաքին շքեղութիւնից, բայց շատ հետաքրքրելի է իւր օտարտոի ծիսակատարութիւններով: Առատ օղին, որ բոշաների ամենասիրելի խմիչքն է, միջոց է տալիս բոշային անչափ արբելու և ուրախանալու: Այդ առանց այն էլ մշտագւարձ ժողովուրդը անձնատուր եղած ոգելից խմիչքի ազդեցութեան, գոռում, գոչում, երգում, պարում, սրախօսում, զւարճանում է անընդհատ: Հարսանիքին մասնակցում են առանց բացառութեան բոլոր բոշաները. հարեան, բարեկամ, կամ ազգական փնտռող չը կայ. հասակաւոր, մեծ, փոքր, երեխայ, կին, աղջիկ և հարս, բոլորը անխտիր մասնակցում են այդտեղ: Ինչպէս ուրախութիւնը, նոյնպէս էլ վիշտը բոլորի համար է, ընդհանուր է. բոշան ինչպէս զիտէ ուրախանալ իւր ընկերոջ հետ, նոյնպէս էլ զիտէ վշտակցել նորան: Ասցը կամ խնդումը, վիշտը կամ բերկրանքը, բոշաների մէջ անհատից անցնում է ընդհանուրին և փոխապարձ:

Այտք է նկատել, որ բոշաները իրանց որդոց ամուսնացնում են շատ մատաղահաս. սովորաբար 15 — 17 տարեկան տղան և 12 — 15 տարեկան աղջիկը արդէն հասուն և ամուսնութեան համապատասխան են համարւում: Այդ վաղահաս ամուսնութիւնը պէտք է մեծ մասամբ վերագրել բոշաների վերին աստիճանի բարեբարոյ կեանքին, որ զերազանցում է բոլոր հարեան ազգերից: Յիշելու արժանի է այն աչքի ընկնող երևոյթը, որ բոշաները իրանց հայ անւանելով <sup>1)</sup> յաճախելով հայոց եկեղեցի, սերտ կրօնական կապերով կապած լինելով հայոց հետ, միշտ խորշում են հայի հետ ամուսնանալուց, թէև վերջինս էլ պակաս չի խորշում և արհամարհում առաջինին: Ինչպէս տեղեկացանք իրանց բոշաներից, Ախալքալաք գաղթելու օրից, այսինքն 1828-ից մինչև այսօր միայն մի անգամ է տեղի ունեցել

<sup>1)</sup> Եթէ բոշային հարցնելու լինինք թէ նա ինչ ազգութեան է պատկանում, նա առանց տատանելու կը պատասխանի — հայ, բոշայրոյն հային նա անւանում է «կալաբա», իսկ իրան՝ «զոմ» — այստեղ ահա նա կարծես անգլիալիցարտը վիշտով իւր օտար ծագումը և անունը:

այդպիսի մի ամուսնութիւն հայ աղջկայ և բոշայ տղամարդու մէջ, չը նայելով որ բոշաներին խիստ զրկող պատճառներ կան այդպիսի խառն ամուսնութեան զիմելու: Բոշաները վերին աստիճանի սակաւաթիւ և սերտ համայնական կապերով ապրող ժողովուրդ են. զբականապէս կարելի է ասել, որ նոցա մէջ կանայք աւելի քիչ են, քան տղամարդիկ և որովհետև նոքա զբացի հայերի կամ այլ ազգութիւնների հետ չեն ամուսնանում, ուստի ստիպւած են մօտիկ արիւնակից ազգականների հետ իննամէանալու, որը պէտք է ասած հակառակ եկեղեցու օրինաց պահանջներին՝ նոքա միշտ կարողանում են զիւրութեամբ ծածկել, և ամուսնութիւնը զլուս բերել շնորհիւ այն հանգամանքի, որ հայ քահանաները ի մօտոջ չեն ճանաչում նոցա, ուստի և յաճախ խաբւելով պատկում են արիւնակից ազգականներին: Չը նայելով որ մեր ձեռքում չունենք բուն սատիստիկական տեղեկութիւններ, բայց մեր քաղած տեղեկութիւններից կարելի է եզրակացնել, որ բոշաների ամելութիւնը աւելի ցեա է հայերից, որը անսարակոյս պէտք է վերագրել նոցա վարած ողորմելի ապրուստին և զուցէ արիւնակից ամուսնութիւններին:

## VI

Ինչ կասէք մի այնպիսի ժողովրդի համար, որ թէև ազէտ, թէև սակաւաթիւ, թէև բաժան-բաժան եղած և ցրւած այս ու այն կողմը, թէև զուրկ ինքնուրոյն անկախ զբութիւնից, զուրկ այնպիսի անհրաժեշտ տնտեսական պայմաններից, առանց որոնց ոչնչանում, կորչում է իւրաքանչիւր անհաս և ժողովուրդ իրանից թւով շատ և կուլտուրայով բարձր ժողովրդի մէջ, չը նայելով այդ ամենասաննպաստ պայմաններին՝ բոշան կարծես մի իմաստուն ժողովրդի գիտակցութեամբ շարունակում է իւր գոյութեան խուլ և սոկուն կռիւր: Մի պատառաբոյժ մնկի նման նա նստած մի ծառի բնին, հանգիստ ապրում է նորա հաշուով առանց թուլութեան կամ հիւանդութեան նշաններ երևացնելու:

Թէև կիսակիրթ ազգերի մէջ քիչ չեն մարդիկ, որոնց մէջ չափազանց վառ է ազատասիրութեան ողին, բայց դա պայմանաւորուած է բնակած երկրի կամ լեռների ներկայացրած բնական յարմարու-

Թիւններով, կամ ամբողջ ցեղի սերտ և անբաժան միութեամբ, որոնցից եթէ զրկեն, անմիջապէս կ'ընճեն, մինչդեռ՝ զոցա համեմատութեամբ աւելի զարմանալի, առաւել օտարոտի է բոշայի ազատասիրութիւնը, որը ոչ ոք չի կարող նորանից խլել. նա իւր ազատութիւնը ոչ թէ անմատչելի լեռների բնական ամրութիւնների մէջ է որոնում, ոչ թէ յանդուգն արշաւանքներով կամ հերոսական քաջութեամբ է պահպանում իւր ազատութիւնը, որը նորա համար ամեն բանից թանկ է, այլ այնպէս, կարծես ամեն տեղ, ամեն երկրում նա ազատ է, որ բղտում է բոշայի ամբողջ հութիւնից, նորա հասարակական կազմակերպութիւնից, և որ զլսաւորն է, նորա կենցաղավարութեան և ապրուստի տարապայման բնաւորութիւնից:

Բոշան ապրում է ինքը իւր մէջ. չափազանց կղզիացած է նորա դրութիւնը շրջապատող ազգերի նկատմամբ, նա համարեա բոլորովին կտրւած է արտաքին աշխարհից. մի օր նա կ'երևայ սորա կամ նորա առջև, կը խնդրէ, կը պահանջէ իւր հացը, իւր ապրուստը: Այս է նորա ունեցած շփումը դրսի աշխարհի հետ, ուրիշ շատ հազւագիւտ զէպքերում նա զործ կարող է ունենալ օտար հասարակութեան հետ: Եթէ նորան խանգարող չը լինի, նա զուցէ մոռանայ էլ թէ իրանից զատ ազգ, կամ ժողովուրդ գոյութիւն ունի. նա նոցա գոյութիւնը ճանաչում է նոցանից ստացած փրշրանքներով, ուրիշ կերպ նա չի տեսնում, չի թափանցում իւր շուրջը ապրող հարևան ազգերի կեանքը և չի թողնում, որ իւր հասարակութեանը չը պատկանող միօտար անհատի հետաքրքիր աչքերը դիտեն իւր ներքին մի օրինակ կեանքի մանրամասնութիւնները: Երեխայի թեթևամտութեան և զւարճասիրութեան հետ, նա ունի իւր համայնքի կեանքին վերաբերող խիստ ծածկամտութիւն ու զաղտնապահութիւն. Օտարի ներկայութեամբ նա գործ է ածում իրան միայն հասկանալի մի լեզու, որ իւր պատերի լեզւի մնացորդն է: Հրէայի տոկունութեան հետ, նա ունի չինացու ծածկապահութիւն, ուստի ամեն հնարաւոր միջոց նա ձեռ կ'առնէ ծածկելու, վարագուրելու իւր թէ հասարակական կազմակերպութիւնը և թէ ընտանեկան կեանքը. այդ պատճառով բոշային ամեն ոք ծանօթ լինելով, համարեան ոչոք չի ճանաչում իսկապէս:

Բողաները իրանց բոլոր գործերը կարգադրում և վերջացնում են իրանք իրանք, առանց օտարի միջնորդութեան. դեռ ոչ մի դատաւորի ականջին բողայի գանդատ չի հասել, ոչ մի դատարան բողան յօժարակամ չի այցելել, ոչ մի դատարանի սեմից բողայի ոտը չի անցկացել, ոչ մի աքսորավայր բողաքսորականի երես չի տեսել, դեռ ոչ մի բողայ չի մեղադրւած քրէական յանցանքի մէջ: Ահա բողայի ամենավեհ, ամենակատարեալ կողմերը, որոնք կարող են նախանձ յարուցանել նոյն իսկ նոցանից շատ ակելի քաղաքակիրթ ազգերի մէջ: Այդ յատկութիւններին պէտք է մեծ մասամբ վերագրել բողաների ինքնագոյ կացութիւնը: Օտար հասարակութեանը ոչ մի հանգամանքում մազաչափ վնաս չի տալիս բողան. չի գողանում, չի թալանում, չի կռում նորա հետ: Առիւ պատահում է իրանց բողաների մէջ, որը հայհոյանքից և տուր ու դմբոցից զէնը չի անցնում: Բողան զէնք չունի և որովհետև մեր գիտեցածներէն դեռ ոչ մինը մեղադրւած չէ սպանութեան և առհասարակ քրէական յանցանքի մէջ, ուստի չենք վստահանում ասելու՝ թէ բողան ընդունակ է արդեօք որ և է խոշոր յանցանք գործելու կամ սպանելու: Որովհետև նա հասարակութեան խաղաղութիւնը երբէք խանգարած չէ, ուստի նա ոչոքի, նաև կառավարութեան ուշադրութիւնը զրաւած չէ իւր վերայ: Նա, եթէ չը յիշենք դժւար հարկառութիւնը, կառավարութեանը ոչ մի հոգս չի պատճառում իւր հանգիստ և խաղաղ նիստ ու կացով:

Ի հարկէ չի կարելի երևակայել մի ժողովուրդ, որ որ և է ներքին նոյն իսկ թեթև խռովութիւններ չունենար, որոնց դադարացնելու, և խռովութիւնը վերացնելու համար անհրաժեշտ պիտի լինեն կամ օրէնք և կամ հեղինակասոր ազդեցիկ անձնաւորութիւններ: Այսպէս էլ բողաները թէև փոքրիկ, բայց իբրև մի ինքնուրոյն և նեղ համայնական կապերով ապրող նահապետական ժողովուրդ, իւր թէ արտաքին և թէ ներքին գործերը կառավարող ներկայացուցիչ ունի որ կոչւում է աթոռակալ:

## V II

Աթուակալին ընտրում են իրանք-բոշաները, ծեր և պատկառելի անձերից առաւել արժանաւորին՝ և մի պահպանելով հաստատում է նորան հայ քահանան: Աթուակալը բոշա-համայնքի մէջ մեծ պատիւ է վայելուհ. բոլոր հասարակական գործերի հողացողը, քննողը և կարգադրողը աթուակալն է. մասնաւոր վէճերը, կռիւները մանաւանդ ծեծը, որ խիստ սովորական է իրանք-բոշաների մէջ, դատում և վերջացնում է նոյն աթուակալը. այդ է պատճառը, որ բոշաները հաճարեան չեն դիմում պաշտօնական դատարանը իրանց վէճերը քննելու համար: Հարսանիքի և այլ հասարակական հանդէսների ժամանակ նա քահանայից յետոյ երկրորդ տեղն է բռնում: Նոյն իսկ շատ մասնաւոր, զուտ ընտանեկան բնաւորութիւն կրող գործեր ևս, երբ հասարակութեան այս կամ այն անդամի համար հարկաւոր է մարմնաւոր կամ հողեր իշխանութեան դիմել, առաջ է անցնում աթուակալը. վկայել թէ նշանւող աղջիկն ու տղան ազգականներ չեն, նշանադրութիւն կամ հարսանիք զուլի բերել, պսակի հրաման կամ թոյլատուութիւն ստանալ և այլ զանազան մեծ և փոքր գործեր կատարել բոլոր ժողովրդի կողմից, ահա այս է նորա պաշտօնը: Հասկանալի է, որ այդ բոլոր գործերը նա կատարում է առանց որ և է վարձատրութեան, այլ ճրի: Այդ բոլորի փոխարէն, ինչպէս ասացինք, նա վայելում է մեծ յարգանք և պատիւ. նրա խօսքը բոլոր հասարակութիւնից պատգամի տեղ է ընդունւում. և եթէ աթուակալը մի քիչ խելացի և ազդեցիկ մարդ է, իսկական իշխանի դեր է կատարում նոցա մէջ:

Ինչպէս տեսնում է ընթերցողը, «աթուակալ»-ը մի տեսակ ընտրողական ցեղապետի նշանակութիւն ունի, որ հարկաւ, նոցա հնազոյն առաջնորդ — ցեղապետների նսեմ մնացորդն է, ինչպէս շէշլը քրդերի մէջ:

Առաջ, քանի որ բոշաները քրիստոնէաց չէին, դուք է այժմս իսկ մեզ անձանթ բոշա ցեղերի աթուակալին քահանան ի հարկէ չէր կարող հաստատել: Դա առաջացել է քրիստոնէութիւն ընդունած օրից: Այս հանդամանքը մեզ առիթ է տալիս մասնանիշ անելու բոշաների բարեպաշտութիւնը առհասարակ և այն նշանակութիւնը

որ նոքա տալիս են հայ հողերականներին, նոցա միջոցով հաստատել տալով իրանց աթոռակալին: Հողերականներին նոքա շատ չարգում և պատուում են և նոցա վերաբերմամբ համեմատաբար առատաձեւն են: Տղամարդիանցից առաւել բարեպաշտ և ժամասէր են բոշա-կանայք:

Զը նայելով այդ հանդամանքին՝ հասկանալի է, մասամբ հողերականութեան անուշադրութիւնից, մասամբ իրանց բոշաների անհետաքրքրութիւնից և ազիտութիւնից նոցա կրօնական հասկացողութիւնները չափազանց սահմանափակ և վայր ի վերոյ են: Բոշան միայն գիտէ «Իստուս-Քրիստոսի» անունը, առանց սակայն մի որոշ հասկացողութեան կամ դադափարի որ արտայայտում է այդ անունը, գիտէ նոյնպէս անորոշ «Մարիկ, Մայր-Ասուածածնի» անունը, գիտէ «հայ-քրիստոնի» պէս խոսչ հանել երեսը և մի քանի բառեր «հայր-մերից»...

Ահա այս է նորա կրօնական հասկացողութիւնների ամբողջ պաշարը: Սորանից դորս նա ոչ իւր կրօնի, ոչ իւր եկեղեցու և նորա առանձնացատկութիւնների և ոչ էլ նորա դաւանաբանական տարբերութիւնների մասին որ և է հասկացողութիւն կամ գաղափար ունի: Մի հարցման միայն նա կը պատասխանի զիւրութեամբ, կարծես ուզելով հասկացնել, թէ քո բոլոր հարցերիդ պատասխանը որոնի՞ր այդ բառի պարունակութեան մէջ՝ «ես հայեմ», և այդ բառով, այդ լակոնական պատասխանով նա հասկանում է իւր կրօնը, իւր դաւանութիւնը, իւր եկեղեցին, այլ և իւր ազգութիւնը ամբողջապէս: Կարծում ենք, որ բոշաները միշտ հաւատարիմ կը մնան իրանց կրօնին, եթէ աչքի առաջ ունենալու լինենք բոշայի բարեպաշտութիւնը և իւրաքանչիւր նորութիւնից խորշիլը: Հետաքրքրելի է իմանալ թէ Տաճկա-Հայաստանում բողոքական և կաթոլիկ միսիօնարները բոշաներին էլ քարոզում են և ինչքան յաջողութիւն են գտնում նոցա քարոզելում:

Դիւրին է եզրակացնել, որ բոշան իւր կրօնական աղքատիկ հասկացողութիւնների պակասը պիտի լրացնէր սնտախապաշտութիւնով և նախապաշարմունքով, որ շատ յատուկ է զարգացման ստորաստիճանի վերայ կանգնած Վժուլամիտ և տգէտ ժողովրդներին: Բայց իրօք այդպէս չէ: Հետաքրքրական է այն խնդիրը, թէ ինչ պատ-

մական նպատառիժ պայմաններ թելադրել են բոշաներին քրիստոնէութիւն ընդունելու: Արովհետեւ բոշան անընդունակ է էսպէս ըմբռնելու քրիստոնէութիւնը, ուստի անհաւանական է ենթադրել, թէ քրիստոնէութիւնը նորանից վերացրել է սնտոխապաշտութիւնը. որը չի կարողացել վերացնել քաղաքակրթութիւնով բոշայից շատ աւելի բարձր հայ ազգի միջից:

Այսպէս թէ այնպէս իրողութիւնն այն է, որ բոշան աւելի քիչ նախապաշարմունք ունի, աւելի սակաւ սնտոխապաշտ է, քան հայը և գուցէ ունեցածն էլ ըստ մեծի մասին նա ընդունել է քրիստոնէութեան հետ հայից:

Մի աչքի ընկնող երևոյթ էլ այն է, որ բոշաները ուխտ գնալ չը գիտեն համարեա. մինչդեռ թուրք, քուրդ, նոյն իսկ եզիդ կարելի է տեսնել հայոց այս կամ այն սրբավայրին ուխտ գնացած, բոշաները այդպիսի տեղեր շատ սակաւ է պատահում որ չամախեն:

Սակայն ինչպէս կրօնական հասկացողութիւնների պաշարը, նոյնպէս և զանազան նախապաշարմունքների սակաւութիւնը և ուխտագնացութեան բացակայութիւնը մեզ չը պիտի զարմացնեն. բոշան բարդութիւն չի սիրում, նորա միտքը զանազան բարդ կրօնական և փիլիսոփայական, նոյնպէս և ցնորամիտ նախապաշարմունքներ ըմբռնելու անընդունակ է. նա միանգամայն աւելորդ է համարում իւր միտքը ծանրաբեռնել այդպիսի աւելորդութիւններով. բոշայի մտաւոր կեանքի հիմնաւոր թելը՝ պարզութիւնն է, թեթեւ, զիւրըմբռնելի, սակաւ մտաւոր ճիգ պահանջող գաղափարներ, որոնք դիւրութեամբ պահուում են յիշողութեան մէջ: Մենք այսպէս ենք բացատրում այդ երևոյթները:

### VIII

Բոշաների նիստ ու կացը անմաքուր, պարզ և հասարակ է: Բոշայի խրճիթը, որ նոյն իսկ անւանի հարուստների մէջ կատարեալ աղքատութեան կերպարանք է կրում, իւր տիրոջ անընչասիրութեան, անփառամոլութեան ճշգրիտ պատկերն է: Նորա խրճիթը մանկով, որ սովորաբար բաղկացած է բակից, գոմից և տանից, որտեղ քնում և ճաշում են ըստ մեծի մասին, նոյնպէս և օդայից, որ գոմի մի մասն է ծակ տախտակներով միայն նրանից բաժանւած,

որ այնտեղից ստանայ իւր տաքութիւնը, այդ խրճիթում կը տեսնէք մի թոնիր, որ ձմեռը գործ է ածուում իբրև վառարան և քուրս ու մի քանի կաւեայ ամսներ—«թղուղներ» և «կճուճներ», մի անկիւնում դարսած հնոտիք և կապերտների կտորտանք, որ անկողնի և նստաշորի տեղեն ծառայում, և մի փայտեայ «սարք» <sup>1)</sup>։

Տան միւս անկիւնը, զոմ կոչւածը, կապած է լինում բոշայի անբաժան ընկերը, հլու աւանակը, որը նորա թափառաշրջիկ երթեկութեան ընկերն ու նորա թեթև հարստութեան տեղից տեղ փոխադրողն է։ Վերևը մենք յիշեցինք թէ էջը ի՞նչ արժէք և պատիւ ունի բոշաների աչքում։ Ի դէպ, այստեղ դնում ենք մի անեկդոտի բնաւորութիւն կրող պատմութիւն, որ ցոյց է տալիս թէ բոշաները ի՞նչ տեղ են յատկացնում իրանց միակ սիրելի կենդանուն։ Բոշաները խնդիրով զխնում են Վարապետ սրբազանին և նիւթական, կենդանի օրինակով հասկացնելու համար նորա հզօրութիւնը և իրանց անզօրութիւնը, բերում են հետեւեալ համեմատութիւնը. «Հոգևոր տէր, տուն օր կաս, իտի մե, պօղ-էշն ես. մենք օր կանք, քու պոչիտ սկի ձանձերն ենք։ Ուզենաս սխմես ստակեցնես կը, ուզենաս բաց թողնես, մեղի կ'ազատես կը»։

Եւ շատ հասկանալի է այդ յարգանքի պատճառները որ նոքա տածում են դէպի անասունը։ Ինչպէս որ առանց եզների երկրագործ չի կարող լինել, ինչպէս որ առանց մղրախի քուրպը մի խղճալի արարած է, այնպէս էլ բոշան առանց իշի մի անզէն զինւորի է նման։ Ամենաաղքատ բոշան էլ մի հատ էջ պիտի ունենայ, իսկ քիչ թէ շատ աչքի ընկնողը մի քանիսն է ունենում։ Ոմանք, որոնք արդէն քիչ թէ շատ հատատաբնակ են դարձել, սկսել են ձիեր ևս պահել. սովորաբար էգ ձի են պահում, որոնց խառնելով էշերի հետ, թանգ գնահատող ընտիր ջորիներ են առաջացնում։ Բոշաների պարսպմունքների թւում մենք մոռացանք յիշելու, որ էջ, ձի և ջորի ձանաչելու, նոցա հիւանդութիւնները բժշկելու և կռտելու մէջ բոշաները խիստ հուշակաւ և հմուտ վարպետներ են։

<sup>1)</sup> Սարք կոչուում է այն գործիքը, որի վրայ մաղ են գործում։ Դա մի փայտեայ քառակուսի է չար և նման այն գործիքին, որի վրայ օրիորդաց ուսումնարաններում ասեղնագործում են—«քարկեա» կոչւածը։

Բողաները հագնում են այն ժողովրդի հագուստը, որի մէջ ապրում են և խիստ ճկունութիւն են ցոյց տալիս ընդունելու այն ժողովրդի հագուստը և լեզուն, որի հետ ամենամերձ յարաբերութիւն ունին:

Նորա խօսում են մեր դաւառական բարբառներով. թէև անսխալ, բայց մի առանձին արտասանութիւնով և շեշտով, որ անմիջապէս ծանօթ մարդու ականջին է զիպչում: Յթէ որ և է գաղանի բան է ուզում խօսել բոշան իւր ընկերոջ հետ, նա գործ է ածում բոշայերէն լեզու, որ նոցա հին, մայրենի լեզուի մնացորդն է: Այդ լեզուն արդէն զործածութիւնից զուրս է եկել և համարեան մոռացութեան աստիճանին է հասել, այնպէս որ երիտասարդներից ոմանք համարեան չը գիտեն այդ լեզուն: Նորա բառերի մեծագոյն մասը մոռացել է արդէն և մնացել է միայն ամենազործածական մասը, որի պակասը բոշաները լրացնում են հայ և թուրք բառերով: Հէնց մնացածն էլ այնքան խախտու է, որ, ինչպէս կը նկատէ ընթերցողը ներքեւը զրաժ օրինակից, նրա բայերը կորցրել են իրանց խոնարհման ինքնուրոյն ձևը և խոնարհում են հայոց բայերի պէս:

Ահն, ստորև գնում ենք երեք տուն բոշայերէն «խաղ», որոնցից մինը ուստա Հանէսի և միւսը հռչակաւոր ուստա Վանօ-ի ասածներիցն է (երկուսն էլ բոշա-երգիչ-աշուղներ են):

## I

Հանէս օղլին պակրեց լոմ եմ ուշաւեցէք տլարիս:  
 — Հանէսի որդին ասաց՝ բոշա եմ խօսացէք անունս  
 Ակմը կայէն, չտար կայէն, աթ մը կայէն ակ կայէն  
 մէկ ժամանակ, չորս ժամանակ, հինգ ժամանակ, մէկ (ամեն) ժամանակ  
 Լոմ մը վեսաց Փենար, սաւը սընքէր պակրածս  
 բոշա մի նստած լինէր աչտեղ՝ հիմնովին հասկանար ասածս  
 Ակ մը կայէն, չտուր կայէն և այլն <sup>1)</sup>,  
 մէկ ժամանակ, չորս ժամանակ և այլն:  
 Վեսողները կամ նա ջան է, աթաւէս լէ դմրաւիս  
 Նստողները բան չը գիտեն, ձեռքէս առնեն սագս

<sup>1)</sup> Այս ստղը ամեն նոր սողից փնտր կրկնում է:

Հեւաւ կը կամաւտիք փանեցէք սիս աւես ջէ խլաւիս  
աջնակս բաներ ասացէք՝ զլխիցս եղնէ միաքս:  
Ակ մը կացէն և այլն:

## II

Ուստայ, աւեմ դու դայիդ կեամբ ևս պաշտաս  
—վարպետ, դամ մտոյ, ինչ ունիս հետս  
Սամլի կարեմ ճարիս, բանթեմ կու դաստաս աս  
չինում եմ մաղս, կարում եմ տասը-ասար  
Պհու որով նայեմ նաբարիս պաշտաս  
չաս մեծ հեմ (որ) ընկնես հետս  
Լորեցիբ իսս, մանուս ևս մանուս:  
գտար թէ որ <sup>2)</sup> մարդ ևս մարդ:

Ուստայ Վանսն պակրեց տերաւեն թաճլիս  
վարպետ Վանսն ասաց իրանից երդ (խաղ)  
Կամ նա ջան ևս իսս նոն պէս ևս մանլիս  
բան չը գլտես եթէ չը մտնես հանդէս  
Սղաւնոց կանեմ կու սնանես կու գիս  
չներոց կ'անեմ (կր) ճանաչես կը ինձ  
Լորեցիբ իսս մանուս ևս, մանուս:  
գտար թէ որ՝ մարդ ևս, մարդ:

<sup>2)</sup> Ազգինք՝ թէ որ գտար հանելուկը

## Գ Ր Ա Ւ Յ Ս Ո Ւ Թ Ի Ի Ն

ՍՊԵՆՍԵՐ, Հերբերտ.—«ԿԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ մտաւոր, բարոյական և ֆիզիկական»: Թարգմանեց Մկրտիչ Ղազարեանց: Հրատ. Թիֆլիսի Հրատ. Ընկ. № 52: Թիֆլիս տպ. Ռոտինեանցի, 1892 թ.: Աւթա-  
ճալ, 442 էջ, տառ № 12. գինն 1 ռուբլի:

Այս հատորը մանկավարժութեան ձեռնարկ է, ինչպէս վերնադիրը կարող է շատերին կարծել տալ: Սամի հաւաքածու է այն չորս յօդածներն, որ իրարից բաւականի հեռու ժամանակամիջոցներում հրատարակել է հեղինակը անգլիական այլ և այլ ամսագրերում: Առաջին յօդածը, որ կազմում է ներկայ հատորի առաջին գլուխը, լոյս տեսաւ 1859 թւականին լոնտոնի Westminster Review ամսագրի լույսի համարում. գրքի երկրորդ գլուխը տպւած էր դեռ աւելի էլ առաջ մայիսին 1854 թ. North British Review-ի իսկ երկու վերջինները Quarterley Review ամսագրում ապրիլին 1858 և ապրիլին 1859 թ.: Այդպէս ցիր ու ցան արւած յօդածները հեղինակը հաւաքեց միայն 1861 թւականին, որ և առանձին հատորով լոյս ընծայեց:

Չը նալած այդ հանդամանքին, այդ յօդածները բովանդակում են

այսպէս ասած դաստիարակութեան ֆիլոսոֆալութեան մի էություն. առաջնորդող միտքը այդ ամբողջ հատորում այնքան մի է, զազափարնների ընթացքը այնքան չաջորդական է, որ բաւական է եղել ցրւած կտորները ի մի հաւաքել որ կարդացելու և ուսումնասիրելու խիստպէս արժանի մի գիրք կազմել:

Սպենսերը, սակայն, չի սպառում ամբողջ առարկան. դաստիարակութեան մասին մի լրակատար գիրք այս հատորից շատ աւելի մեծ կըլինէր. այս ինքնըստինքեան փոքրիկ հատորում պէտք է կարծէր թէ հեղինակը հազիւ կը կարողանար միայն շոշափել խնդիրը. բայց գրքի ընթերցումը այնքան զօրեղ հետք է թողնում ողու մէջ, որ ընթերցողը շուտով նկատում է որ խնդրի ուսումնասիրութեան մէջ արդէն շատ խորն է մտել:

Նշանաւորը սա է որ լակական մտածողին չատուկ մի ուժով Սպենս-

սերը գիտէ ուրիշի մտքերը արթնացնել: Նորա այս գիրքը մէկն է միտքը չուզող այն ուսումնասիրութիւններից, որոնք, առանց ծանրաբեռնելու ուղեղը և կամ քնացնելու հասարակ ճշմարտութիւնների անդորրութեան մէջ, ընդհակառակը զրդում են, անհանդուտացնում և ստիպում որ ուղեղը գործի ու որոնի: Անկասկած է որ զաւակների հայրը կամ դատարարը այս գիրքը կար դառուց լետոյ կը դառնայ աւելի ընդունակ մտածելու, աւելի տրամադիր մտածելու ու խոկալու, աւելի գիտակ իւր կոչման մեծութեանը, բայց, անկասկած է և այն որ զրքի հէնց այդ նոյն արժանաւորութիւնների պատճառով՝ նորա ընթերցող դատարարը կամ զաւակների ծնողը աւելի անվտոան է դառնում, թերևս և դառնում է աւելի քիչ գոհ իրանից:

Սպենսերը զբաղեցնում է դատարարութեան վերաբերեալ բազմակողմանի խնդիրներով և անում է շատ զխտողութիւններ: Ընթերցողներից շատերը արած կը լինեն նոյն զխտողութիւնները երեխաների վերայ առանց նոյա բացատրել կարողանալու: Բայց շատ անգամ Սպենսերի մի խօսքը բաւական է լինում նոյա բացատրելու, այն աստիճան հեղինակը գիտէ արմատից բռնել, ամեն մի երևութի նշանակութիւնը ընդհանրութեան տեսակէտից որոշել և այն աստիճան ուշաւական է հեղինակի լեզուն որ շատ անգամ մի բնորոշ խօսք ամբողջ նախադասութիւնների տեղին է բունտան: Սպենսերի ոճը շատ անգամ սուր

է, երբեմն անգամ պարադոքսական, լումարով համեմած: Գաստիարակները, որոնց համար չէ եղիլ գրած այդ գիրքը սկզբնապէս, կը հասկանան հեղինակի միտքը և աւելի էլ կը սիրեն որ իրանց զիմաց կը տեսնեն ոչ թէ մի ուսուցիչ, այլ մի հասուն մարդ, որից կը սովորեն գործադրել իրանց քննադատական սգին, թէև հալած կը լինեն աքսիոնների տեղ ընդունել շատ բան, ինչ ֆիլոսոֆալի մտքում անպայման պնդումն չէ այլ միայն մտածել տալու գիտողութիւն:

Այս բոլորից վտոյ զարմանալու չէ, որ գպրոցական գրադարանների համար կազմած գրացուցակում Ֆրանսիայի հանրական կրթութեան մինիստրութեան մէջ կազմած լանճնաժողովը տասնեակից աւելի տարի առաջ գրել է նաև այս գիրքը, այսպիսի կարծիք չալսնելով՝ «qu'aucun ouvrage ne mériterait mieux que celui-ci d'être signalé à l'attention des instituteurs» (ոչ մի գիրք սորանից աւելի չէ արժանի ուսուցիչների ուշադրութեանը ներկայացնելու համար): Զարմանալու չէ նաև որ այս գիրքը թարգմանութեամբ է տրոհէն շատ ուրիշ լեզուներով թէ ամբողջապէս և թէ մասնաւոր կրճատումներով՝ ժողովրդական և աժանագին հրատարակութիւնների ձեով: Եւ նոյն իսկ հայերէն լեզուով, դեռ ևս տասնեակ տարի առաջ, լոյս տեսաւ մի համառօտած թարգմանութիւն պ. Փիլիպպոս Վարդանեանցի ձեռքով «Վարժարան» ամսագրի մէջ:

Հրատարակչական ընկերութիւնը

անկասկած լաւ ընտրութիւն է արել լոյս ընծայելով Սպենսերի աչս դիրքը, որ թարգմանել է պ. Մկրտիչ Ղազարեանցը: Ընտրութիւնը իհարկէ դժար չէր անել մի գրքի նկատմամբ, որը աչս.քան մեծահռչակ հեղինակի գրչից է բղխում և որը գնահատել է ամբողջ լուսաւոր աշխարհը: Բայց արդար է և աչս ասելը, որ այդ գրքի հրատարակութեան մէջ չկայ նշույլ անդամ խմբագրական գործունէութեան, որ շատ կարևոր ենք համարում օտարների արտագրութիւնները մեր հասարակութեանը կարելիին չափ մատչելի դարձնելու համար: Մենք բաւական չենք համարում, որ ամենքից վկայւած մի լաւ գիրք թարգմանելի առանց ուշադրութիւն դարձնելու թէ որքան մօտ է թարգմանութիւնը բնագրին, առանց թէկուզ կարճ նկատողութեան նեղինակի և թարգմանւած գրքի մասին, առանց ծանօթութիւնների ընթերցողներին դժար հասկանալի տեղերի նկատմամբ և ալն և ալն:

Մեր առաջին նկատողութիւնը վերաբերում է լեզւի ոչ բաւականաչափ ճշդութեան:

Որքան էլ ցանկալի է և գովելի ձգտումը պարզ ոճով գրել, բայց այդչք պէտք է կատարել ի հաշիւ մտքի ճշդութեան: Ներկայ թարգմանութիւնը զաւակցաբար ներկայացնում է նմուշներ աղպիսի անճշդութիւնների: Միայն իբրև օրինակ, ևս առաջ կը բերեմ մի տեղ, որ առանձին կարեւորութիւն ունի չատկապէս Մպենսերի մէջ գրքում: Այսպէս օրինակ, Սպենսերը չալսնի է ի միջի ալ-

լոյց նաև գիտութիւնների սեպհական կլասիֆիկացիայով: Այդ կլասիֆիկացիայի մէջ առանձին տեղ են բռնում աչս գիտութիւնները, որ նա միասին անւանում է արտարակուկոնկրետ գիտութիւններ (պ. Ղազարեանցը թարգմանել է կիտավերացական-կիսաշօշափելի գիտութիւններ, որ թէև ճիշտ չէ, բայց չեմ վիճում այդ մասին): Սպենսերը աղգ գիտութիւնների մէջ դնում է մեխանիկան, ֆիզիկան և քիմիան, որոնք բունում են մէջ տեղը մէկ կողմից վերացական գիտութիւնների (զօքա են մաթեմատիկական գիտութիւնները), միւս կողմից կոնկրետ գիտութիւնների (զօքա են աստղաբաշխութիւնը, երկրաբանութիւնը, կենսաբանութիւնը և սոցիոլոգիան): Այդ կիտավերացական-կիսաշօշափելի գիտութիւններն էլ Սպենսերը բաժանում է երկու սերիայի՝ (մեխանիկական գիտութիւնների և մոլեկուլալին գիտութիւնների, վերջիններիս մէջ գնելով ֆիզիկան և քիմիան: Դէհ, այդ իմաստալուց լետու կարդալով էջ 49, ընթերցողը կը շփոթւի լեզւի անճշդութիւնից:

«Արտավերացական, կիսաշօշափելի (մենք աստրակէտ չէինք դնիլ այդ երկու բառերի մէջ, ալ ընդհակառակը զծիկով կը կապէինք նոցա, իբրև մէկը միւսին լրացնող խօսքեր, այսպէս՝ կիտավերացական-կիսաշօշափելի) գիտութիւնների հիմնական ուժերով (պէտք է լինի՝ մեխանիկական ուժերով, քանի որ զօքանից առաջ խօսուած էր մեխանիկայի մասին և քանի որ մեխանիկական ուժերը աւելի հիմ-

Ն ա կ ա ն չ են քան օրինակ քրմիա-  
 կան ութերը) զբաղւող ճիւղերից անց-  
 նելով աչն ճիւղին, որտեղ քննուում են  
 մասնական ութերը (այդպիսի տեր-  
 մին մեր լեզուում դեռ ես հաստատուած  
 և չափոնի չը լինելով, պէտք էր գոնէ  
 փակագծում դնել մ ո լ ե կ ու լ ա չ ի ն  
 խօսքը) մենք մանոււմ ենք գ ի տ ու-  
 թ ե ա ն երկրորդ՝ ընդարձակ բաժինը  
 (ոչ թէ գիտութեան, այլ գ ի տ ու-  
 թ ի շ ն ն եր ի կը գրէր Սպենսերը,  
 քանի որ կիսավերացական-կիսաջօշա-  
 փելի գիտութիւնը մէկը չէ, այլ ինչ-  
 պէս վերը տեսանք, այդպիսի գիտու-  
 թիւններ շատերն են վիշտում Սպեն-  
 սերի կլասիֆիկացիայի մէջ. բայց  
 այդ տեղում Սպենսերը խօսում է ոչ  
 թէ գիտութիւնների, այլ գ ո թ ա-  
 դ ու լ թ ի շ ն ն եր ի—applications—  
 ն որ և ընդարձակ շարքի մա-  
 սին): Գիտութեան (կրկին ոչ թէ գի-  
 տութեան, այլ գ ի տ ու թ ի շ ն ն եր ի)  
 այս երկու խմբերի շնորհիւ» և այլն:

Մեր երկրորդ նկատողութիւնը  
 վերաբերում է ծանօթութիւնների  
 պակասութեան: Սպենսերի այս  
 գրքում կան բազմաթիւ չա-  
 տուկ անուններ, նաև հեղինակների  
 անուններ, որոնց գրածների հետ  
 կապ ունեն Սպենսերի ասածները:  
 Այդ անուններից շատերը հաջ նոյն  
 իսկ ինտելիգենտ ընթերցողների  
 համար հէնց աչնպէս էլ կը մնան  
 դատարկ անուններ, որովհետև հրա-  
 տարակիչները կամ թարգմանիչը  
 նեղութիւն չեն քաշել ծանօթու-  
 թիւնների միջոցով դէթ կարճ կեր-  
 պով նոցա հետ ծանօթացնել մեր  
 ընթերցողներին, որ աչնքան նպա-  
 տակալարմար կը լինէր մի ժողովը:

Ղական հրատարակութեան համար:  
 Ութեր են, մեր ընթերցողների մեծա-  
 մասնութեան համար Հիւլօ-Միլլեր,  
 Լիւլիս (և ոչ Լիւիս), Ֆարադէյ Մարտէլ,  
 Ուալդ, պրոֆ. զը Մորգան, Կոնաբ,  
 Ֆելենբերգ, Հորացիոս Մանն, Պիլանտ,  
 Ժան Պօլ Ռիխտեր, Շելլի, Լոկէյ,  
 Կլինգսլէյ, Կոմբ, Ֆորբս, Քետլէ և ու.  
 րիշներ: Գոցանից ամեն մէկի մասին  
 մի փոքրիկ ծանօթութիւն դնելը թէ  
 դժւար չէ և թէ ամենքին օգտակար  
 կը լինէր: Գորա համար կարելի էր  
 օգտուել հէնց օրինակ՝ Ֆրանսերէն  
 ժողովրդական հրատարակութիւնից:

Երրորդ նկատողութիւն: Յատուկ  
 անուններից շատերը սխալ ձևով  
 են գրած: Դատեցէք. Գոսպորաը  
 դառել է Հոսպորա (էջ 47), Հեոքսլի  
 դառել է Գեկսլի, Աւելյոնը՝ Էւել-  
 րոն (161) Կրիւդէ՝ Կրասուդէ (էջ 165):  
 Տօբլերը՝ Տաբլեր, Բուսը՝ Բուսսու  
 (նոյն տեղ), Նիդերերը—Նիդերիդ  
 (նոյն էջ 165), Կլինգսլէյը՝ Կլինգալէյ  
 (342), Քետլէ՝ն—Կիտլէ (էջ 384):  
 Եւ այդ ոչ թէ մի մի տեղ, այլ  
 ամեն տեղ ուր նոյն այդ անունները  
 կրկնուում են:

Չորրորդ կարգի նկատողութիւնը  
 վերաբերում է թիւրիմացութիւնից  
 առաջացած սխալներին և կամ բաց  
 թողած խօսքերին: Մենք աւելորդ  
 ենք համարում մի առ մի թւել բո-  
 լորը. բայց մի քանի օրինակներ ա-  
 ուաջ կը բերենք մեր ասածի միտքը  
 պարզելու համար: Էջ 142 մինք կար-  
 դում ենք հաւերէն թարգմանութեան  
 մէջ՝ «Անգլիական տարրական  
 ուսումնարաններից մէկի համարու-  
 տութեան մէջ...», մինչդեռ Սպեն-  
 սերը խօսում է Լոնդոնի արւարձան-

ներից մինում գտնուող Battersea կոչւած ուսումնարանի մասին, որը ոչ թէ տարրական դպրոց է, այլ տարրական ուսումնարանների համար ուսուցիչներ պատրաստող մի դպրոց է:

Մի այլ օրինակ, ուր շատերը միայն ոճի խնդիր կը տեսնէին, բայց ուր մենք մի միջանկեալ նախադասութեան պակասութեան շնորհիւ հաշիւէն թարգմանութեան մէջ՝ Սպենսերի միտքը մասամբ զոհուած ենք տեսնում: Յայտնի է որ մարդկութիւնը երկար դարեր շարունակ, մինչ Դարւիւնի ժամանակը, ընդունում էր Արիստոտելի հետ և կամ սորան հետեւելով թէ իբր բնութիւնը զիտակցաբար այս ու այն կարգ ու կանոնն է սահմանել. այսպիսով բնութեան ամեն բանի մէջ տեսնում էին նախախնամութեան մատը: Հին մետաֆիզիկան այսպէս էր բացատրում և այդ ոգով էր ուսումնասիրում երևութիւնների վերջնական պատճառները. այդ վարդապետութիւնը չայտնի է գիտութեան մէջ տեղէ ուղտի ա նունով, որի հետևողները չէ ի հարկէ դեռ Դարւիւնից էլ առաջ իբր էտլիւցիոնիստ չայտնի Սպենսերը: Արդ հաշիւէն թարգմանութեան մէջ էջ 37 գտնում ենք այսպիսի մի ֆրագ՝ «Այսպիսով, թէև ընդ ընդ տեղ է առողջութիւնը պահպանելու միջոց, բայց...»: Սպենսերի աշխարհագրութեանը ծանօթ մարդուն այդ ֆրագը շատ խորթ կը թւի հէնց առաջին անգամից և իրօք համեմատելուց մենք գտնում ենք որ Սպենսերը ասում է՝ Այսպիսով, թէև խօ-

սելով տեղեկութիւնը լիակաւ չէ, բնութիւնը մեզ արթուն պահպաններ է տեղ մեր առողջութեան համար...» Ի նկատի ունենալով Սպենսերի գիրքը Ֆիլոսոֆացական սիստեմների մէջ, ընդգծած միջանկեալ նախադասութիւնը չը պէտք էր դէն գցել:

Նւ կամ ինչու թարգմանութիւնից դէն գցել այնպիսի խօսքեր, որոնք, ճիշդ է, անհրաժեշտ չեն միտքը հասկանալու համար, բայց մեծ գրական արժէք ունեն, ու նոցա փոխարինել չոր ու ցամաք դատողական խօսքերով: Մի օրինակ: Չարլս Գիլկենսի հոչակաւոր ռոմանը Օլիւէր Տելիստ ծանօթ է ամենքին: Այս սիրտ չուզող պատմութեան հերոս փոքրիկ Օլիւէրը իւր ընկերների հետ միասին զիշերօթիկ է մի գործարանում, ուր բոլորովին անբաւարար սնունդ է սրում: Քաղցից դրդուած այդ փոքրիկ անբաղձները վճռում են պահանջել որ իրանց կերակրի բաժինները աւելացնեն, և այդ պահանջը անելու համար փոքրիկները իրար մէջ վիճակ են գցում ու վիճակը ընկնում է Օլիւէրին: Oliver asking for more, այսինքն «Օլիւէրը նորից ուտել է պահանջում» անպիւրէնում մի սովորական դարձած է դառել: Այժմ, Սպենսերը, էջ 353 հաշիւէն թարգմանութեան, խօսելով երեխաների ճաշակի նշանակութեան մասին և պիտելով որ առանց այլ և այլութեան չը պէտք է մերժել երեխաներին, ասում է՝ Երբ «Օլիւէրը նորից ուտել է պահանջում», ինչ պատճառ կը բերի մալըր կամ դատարարակուհին Ոչ պատասխանելու համար:

Մինչդեռ հազերէն թարգմանութեան մէջ ցամաք կերպով ասւած է՝ «Երեւան մի բան կերել է և զարձեալ ուզում է: Մալը կամ դաստիարակուհին պատասխանում են՝ Հարկաւոր չէ»:—Համաձայն եմ որ այստեղ միտքը չի գոհւած, բայց ինչ հարկ կար զոհել գրական արժէք ունեցող մի դարձւած, որը մեծ տպաւորութիւն է գործում ընթերցողի վերայ, որին կարելի էր գծի տակ ծանօթացնել այդ դարձածի նշանակութիւնը:

Մի քանի մանր նկատողութիւններ ևս ինչու ամեն տեղ գրքում մաթեմատիկան տպւած է մաթեմատիկա: Ռսերէնում թ տառի պակասութեան պատճառով մենք ինչու տուժենք: Էջ 45 խօսւում է ինչ որ Բրիտանական կամրջի մասին. մինչդեռ 1850 թ-ին Ստեֆենսոնի շինած հրօշակաւոր կամուրջը, որ միացնում է Էնդլեզի կղզին Ուէլսի երկրի ակի հետ, կոչւում է Բրիտանիա կամուրջ (Britannia bridge). ածականով գործածական չէ: Էջ 52 խօսւում է նաև «քարացած նիւթերից» օգուտ ստանալու մասին. այն, կոպրոլիթները (coprolithes) քարացած նիւթեր են, բայց աւելորդ չէր լինիլ ասել որ նոքա քարացած աղբեր են, որոնք արժէք ունեն իրանց մէջ պարունակւած կրալին ֆոսֆատի պատճառով. ամեն քարացած նիւթ ուրեմն դեռ կոպրոլիթ չէ: Էջ 59 խօսւում է «ոլբերի վարաբերութեան և հաւասարակշռութեան օրէնքի» մասին. դա պէտք է լինի թարգմանութիւնը «ոլբերի կորրեկցիայի և թարգմանութեան օրէնք» խօսքի. բայց

էքւիւալենց կարծում ենք որ հաւասարակշռութիւն թարգմանել չի կարելի. էքւիւալենցը մէկը միւսին համապատասխանող և ոչ թէ հաւասարակշռող ոլբն է, եթէ հաւասարակշռութիւն բառի մտքով հասկանալու լինենք: Օրինակ. ինչպէս կարելի է տաքութեան շոգո՞ւ) և կամ մեխանիկական աշխատանքի տեղ զինամիկական-էլեքտրական մեքենալ բանեցնել: Այդ կարելի է միայն եթէ չիչւած ոլբերի տեղ նոցա ոլբին համապատասխան մի այլ ոլբ էլեքտրականութիւն բանեցնենք: Այդ դէպքում էլեքտրականութիւնը կը լինի էքւիւալենտը, այսինքն տեղը բունոգը մի այլ ոլբի: Կարծում ենք զոհէ որ հաւասարակշռութիւն խօսքը բառիս գործածական մտքով էքւիւալենտ խօսքի իմաստը չի չարտոնում և որ չամենայն դէպս մեր լեզւում դեռ չը հաստատւած տերմիններ գործածելիս պէտք է եւրոպական տերմինները փակագծում դնել:

Մի այլ տեղ էջ 437 խօսւում է բնազդական հակումների հաւասարակշռութեան մասին, մինչդեռ այդտեղ հաւասարակշռութեան մասին խօսք չի կարող լինել, այլ պէտք է լինէր՝ բնազդական հակումների ուղղութիւն:

Էջ 141 դուրս է պցւած Սպենսերի կրկնած մի ընորոշ դարձւած: Սպենսերը բառերից վախեցողը չէ և նա չի քաշւում խիստ խօսքերից. այլ պատճառով մի երկու տեղ նա իւր գրքում կրկնում է ամերիկական ֆիլոսոֆալ Էմերսոնի լատին խօսքը մարդու մասին, ասելով թէ կեանք

քում չաջողութիւն գտնելու առաջին պայմանն է մարդու համար լինել ինչպէս ասել են «մի լաւ կենդանի»: Ինչ մի աշխարհի վերաւորիչ բան կա՞յ աշխարհ, որ հարկ է համարել հեղինակի ոճը ցամաքացնել և թարգմանել այդ կտորը այսպէս՝ մարդիկ աշխարհ սկսում են համոզուել որ կեանքի մէջ չաջողութիւն ունենալու համար անհրաժեշտ է առողջութիւն: Չէ թէ Սպենսերը ոճի ուժով ուզեցել է մի արդէն չապսի ճշմարտութիւն զօրեղ կերպով արտապատել մտքերի վերայ ազդելու համար:

Եջ 350 աւելորդ էր լինիլ ծանօթութեան մէջ դնել թէ Կոմբի առողջապահութեան մասին գիրքը հայերէն կա՞յ թարգմանած:

Եջ 441 Սպենսերը գործ է ածում Ֆիզիկական բարուականութիւն դեռ ոչոքից գործ չածած խօսքը, ասելով՝ Քիչ մարդիկ կան հասկացող որ աշխարհքումս կա՞յ մի բան որ կարելի էր անւանել Ֆիզիկական բարուականութիւն: Մինչդեռ թարգմանութեան մէջ կտրուկ ասւած է՝ «Բոտ երևութիւն շատ քչերը գիտեն որ կա՞յ Ֆիզիքական բարուականութիւն»:

Որովհետև առհասարակ թարգմանութիւնը բաւականի ազատ կերպով է կատարւած, հետեապէս բնագրից

չեղումներ շատ կան, որոնց մի առ մի ամենը թելը անհնարին կը լինէր: Այդ նրանից է որ, ինչպէս երևում է, այս թարգմանութիւնը ուսերէն թարգմանութիւնիցն է կատարւած. և, ի հարկէ, հակական դարձած սովորութեան համաձայն՝ աւելորդ է համարել ազգարարել այդ մասին: Մենք առհասարակ խորհուրդ ենք տալիս զգուշանալ ուսա թարգմանութիւններից օգուելուց և այսպիսի դէպքերում դիմել գերմաներէնի կամ ֆրանսերէնի օգնութեան: Աւագուում ենք դէպքից չորդորելու այն երիտասարդներին, որոնք որպէս թարգմանիչներ որ և է ապագայ են խոստանում, որ նոքա ձգտեն եւրոպական լեզուներից գտնէ ֆրանսերէնը և գերմաներէնը լաւ սովորել: Աւագ. Մկրտիչ Ղազարեանը, ինչպէս մեզ թւում է, գատուով թէ այն թարգմանութիւնից, որ նա արել էր Գոգոլից («Մործ» 1892 № 5) և թէ գատուով նոյն իսկ այս նոր թարգմանութիւնից Սպենսերի գրքի, իբր թարգմանիչ ապագայ խոստացողներիցն է, չնայած բազմաթիւ նկատողութիւնների որ մենք առաջ բերեցինք այստեղ և կամկարող էինք անել. պէտք է միայն աւելի խիտ դիտելով նախ վարժութիւն թարգմանելու համար և եւրոպական լեզուների գիտութիւն:

Ա. Ա.

ՓԱՓԱՋԵԱՆ, Վ. — «Արդար դատաստան»: Մի պատկեր, «Պատկերներ թիւրքահայոց կեանքից» զրւածքից: Վ. Փափազեանի, հատոր ա. Մոսկա, 1891 թ. 327 երես, գինն է 1 ռ. 50 կոպէկ:

Կեանքից վեր առած պատկերի արժանաւորութիւնը գոյութիւն ունեցող կեանքի և նրա սուերի խոր մթութեան մէջ թաղած եղծումների<sup>1)</sup> ճշմարիտ նկարագրութիւնից է կախած: Տիպերը և արկածները սրքան ուէակական են, աչքան խիստ սպաւորութիւն են թողնում ընթերցողի վերայ, որն ինքն իրան և շուրջը կենդանի գոյներով տեսնելով աչք հալելու մէջ՝ լրջմտաբար սկսում է մտածել տիրող դրութեան մասին:

Որքան հեռանում է պատկերը իրական կեանքից, աչքան թուանում է նրա սպաւորութիւնը:

Պատկերների մէջ մենք ուսումնասիրում ենք ժողովրդի ժամանակակից կեանքը. առասպելացիներով նկարագրութիւնը՝ առասպելացիում ենք և գոյութիւն ունեցող կեանքը (պատմութիւնը):

Պատկերի գեղարեստական բաժինը որքան որ ազատ լինի, պատմական, աշխարհագրական, քաղաքական, տեղական կեանքի նկարագրական մասը պէտք է որ խկութեամբ դուրս բերւի: Ընչպէս թուրքերին պարսկի շոր չի կարելի հագցնել, աչքան էլ պարսկին չի կարելի

թուրքերի եղանակով երգել տալ:

Նամանուանդ մեզ՝ Ռուսահայերիս, որ աչքան կարօտ ենք ծանօթութեան թուրքահայերի առօրեայ կեանքի հետ, անհրաժեշտ է ունենալ աչք ժողովրդի կեանքից ճշգրիտ պատկերներ, որ լուսաբանեն մեզ նորա դրութիւնը:

Տաճկաստանը ճանաչելու կարիքը մասամբ լրացնելու համար վերջին տարիներս կովկասում և Ռուսաստանում սպաւորւեցան զանազան գրքովիներ, որոնց մէջ մեծ թիւ են կազմում պ. Վ. Փափազեանի պատկերները որոնցից մի քանիսը նախապէս առանձին առանձին սպաւորւեցան՝ թէ՛ պարբերական թերթերում և թէ՛ գրքովիներով: Որպէս բնիկ թուրքահալ (Վանեցի), ժողովրդի ամեն դասակարգի մէջ մտածեղած և աչք երկրում բաւական ճանապարհորդութիւններ կատարած, պէտք էր, որ պ. Փափազեանը մեզ տար աչքպիսի պատկերներ, որոնք մեզ ճշտութեամբ ծանօթացնէին իրական կեանքի հետ:

Յայտնի բան է, որ թուրքիայի վարչական բոլոր գործերի մասին հետաքրքրում է և զինանական աշխարհը: Շատ եւրոպացի ճանապարհորդներ մտել են Օսմանեան բոլոր կալածները և շարունակում են խուզարկել ու քննել: Թուրքիայի ոչ միայն դատավարութիւններն ու դա

<sup>1)</sup> Ընչու միայն «եղծումների» և ոչ կեանքի հանգամանքների և մարդկանց շարաբերութիւնների առհասարակ:

Խմբ.

տաստանագրքերն են թարգմանուում, ալլ եւրոպացի ճանապարհորդները քննում են և՛ ժողովրդի աւօրեալ կեանքը, և՛ պաշտօնեաների նիստ ու կացը, և՛ հարտահարութիւնները, մի խօսքով աչն ամենը, ինչով որ հետաքրքրուում ենք և՛ մննք: Այս էլ չապտնի է, որ ճանապարհորդների մեծագոյն մասը, որպէս թիւրքասէրներ և թիւրքերից առաջնորդած մարդիկ, աւելի հակամշտ են նրանց պաշտպանելու, նրանց բարձրացնելու: Իսկ թէ համեմատական քննութիւնները սրբան կարող են մար գցել աշապիտի անձիշտ և առասպելացրած պատկերների վարկը, ասելու կարիք չկա:

Իւր պատկերներով պ. Փափաղեանը ման է գալիս ամբողջ ճածկահաչքը և վերջին երկու «Սև կղզի» և «Արդար դատաստան» պատկերներով գնում է Սուլթանի և Շահի մալքաքաղաքները:

«Սև կղզու» մասին ասելիք չունեմ, որովհետև Պարսկաստան անձամբ ման եկած, քննած չեմ և ունեցած տեղեկութիւններս էլ շատ աննշան եմ համարում:

Աչն, ինչ ինձ ստիպեց այս նկատողութիւնը գրելու, այդ՝ պ. Փափաղեանի կ. Պոլսում կատարել տւած «Արդար դատաստան» է:

Եթէ կ. Պոլսում ապրող մի հայ կամ օտարական վեր առնէ, կարգաչ այդ «Արդար դատաստան»-ը՝ չը գիտեմ ինչ գաղափար պիտի կազմէ պ. Փափաղեանի և մեր կովկասցիներիս վերաբ: Իմ խօսքը ոչ թէ պ. Փափաղեանի պատկերների մասին է առհասարակ, այլ միմիայն «Արդար դատաստանի մասին, որի

նկարագրական մասը իրականութիւնից չեղում է և նոյն իսկ սուեր է գցում նորա միւս պատկերների վերաբ, որոնք, արդար է խոստովանելը՝ իրական կեանքին բաւական մօտ են:

Որպէսզի այդ սխալը օտարները մեզ ցոյց չտան, որոշեցի իրականութեան հետ ծանօթացնել «Մուրճ»-ին թերցողներին:—

«Արդար դատաստանի»-ի առաջին տողը սխալում է. «կ. Պոլսու Աղլի էլի (արդարութեան) Ատեանը ամսույ 25-ին, ժամը 10-ին հրամաչում է ձեզ ներկայացանալ իւր դատարանը և վկայել Ա... Ֆ...եանի գո՞րծի մասին...» (էջ 259): Հէնց այդ առաջին տողի՝ առաջին երեք բառերը սխալ են. «կ. Պոլսու Աղլի էլի ատեան» չկա. Ա. հ. քեամը - Աղլի էլի (արդարութեան դատարան) մէկ է Օսմանեան պետութեան մէջ և երբէք չի գրուում «կ. Պոլսի Աղլի էլի», ինչպէս չեն ասում С. Петербургскій Правительствующій Сенатъ, այլ-ուղղակի Правительствующій Сенатъ: Ա. հ. քեամը - Աղլի էլի երբէք խնդրատու, պատասխանատու կամ վկայ չի հրաւիրում: Եթէ հեղինակը իրաւաբանական տարրական հմտութիւն ունենար, կ'իմանար՝ որ այդ դատարանում, որ կազմում է Հուգուգի (քաղաքացիական), Թիջարէթի (աւետարական), Ջինալէթի (քրէական), Թէմիզների (վճռալինջ, касационный) ատեանների բոլոր անդամների խառն ժողովից, ուր քննուում են միմիայն արտակարգ դատաստանական գործերը, — այդ խմայողը իրան աչն տեղ

վիպայ հրաւիրւած չէր ներկայացնիլ, այն էլ ժամը 10-ին, (մեր ժամով գալիս է երեկոյեան ժամ 4—5-ին), երբ Կ. Պոլսի բոլոր վարչական ատեանները վազուած են լինում:

Բայց զարմանալին այն է, որ Սուլթան Ազիզի գահակալելուց վետոյ մինչև օրս՝ եւրոպացիներին կուրացնելու համար Կ. Պոլսի դատարաններում թիւրքերը արտաքուստ այնքան մանրամասն ձեւական օրինապահութիւններ են անում, որ չափազանցնում և ծիծաղելի ծաղրակեղութեան են հասցնում ամեն դործ. այն ինչ պ. Փափազեանը ուզում է մեզ հաւատացնել, որ պոլիցիականներն են իրան ներկայացրել հրաւիրաթերթը (ПОВѢСТЯ) «Կ. Պոլսի Ազիզի ատեանը» գնալու: Ամբողջ աշխարհ գիտէ, որ դատարաններն աւանձին համազգեստով ծառաներ ունին, ոչ նման պոլիցիականների շորերին. դոքա են միայն չանձնում դատաստանական բոլոր թղթերը իրանց հասցէին. (կարգացէք թուրքերի օրէնքները և թերթեցէք այն բոլոր դատաւարութիւնները, որոնք արտատպւել են եւրոպական թերթերում: Ֆակտը անհերքելի է): Նւ հրաւիրաթերթը իրան հասցնում են երեկայական պոլիցիականները հէնց այն օրը, երբ պիտի քննւէր այդ գործը: Ախար նմանը ուրիշ անգամ չը պատահած բան է: Գեո. ալս հերիք չէ, նա (269 երես) վկաների և դատ ունեցողների մի ահազին խումբ սուլարիներով<sup>1)</sup> պո-

լիցիալից դատարան է բերում, որոնց խփոն «դափու ալթի» դրան ետն են գցում: Զարմանալի է, որ այդքան շուտ-շուտ են շինում «դափու ալթի»-ները և քանդում այդ դատարանի նրբանցքներում: առաջ չկար, վետոյ էլ չկար, երեւի դրանք շինւել են հէնց միայն հեղինակի համար: «...Կէս ժամից վետոյ Ազիզի էլի դատարանը մատուցաւ մի մեծ շէնքէ Ալա-Սոֆիա մզկիլի մօտ... (259 երես). Չեմ հասկանում. Ազիզին Բարձրագոյն Գրան մեծ շինութեան մէջն է, որտեղ է և ինքը Ազիզի Նաղըր (արդարութեան մինիստր). Խնչպէս դուք ահազին շինութիւնը մի վերստ հեռու՝ Ալա-Սոֆիայի կողմն էք տեղափոխում: Թիւրիմացութիւնը չառաջացել է նրանից, որ հեղինակը դատարանները խառնում է «Ազիզի» հետ: Ալա-Սոֆիայի մօտ «Ազիզի դատարան» չկայ, այնտեղ Բիդայէթն է, (ոչ թէ հաշտարար, ինչպէս անւանում է պ. հեղինակը, թուրքերը հաշտարար դատարաններ չունին, ալ-հասանդական—Окружный судъ), Իսթինաֆ (Палата) և Թէմիզը (касап. департ.), այն էլ երեք մասի բաժանւած. քաղաքացիական (Չուղուզ), վաճառական (Թիջարէթ) և քրէական (Չինայէթ) և բոլոր դատաստանական ատեանները Կ. Պոլսի:

Բայց զարմանում եմ մանաւանդ դատարանների նկարագրութեան վերաջ: Նա հինգ տարի շարունակ մտել եմ այդ դատարանները և երբէք չեմ տեսել ոտները բութիկ, կուրծքերը բաց և ֆէսերը ծոծրակի վրա՝ դրած էֆէնտիններ, վսեմաշուք է բ.

<sup>1)</sup> Հեծեկազոր:

վեր... Չրամանը ձեռքերին նրբանց-  
քով արտաքնոց դնալիս (260 երես).  
աչն ինչ շատ լաւ լինում է, որ այդ  
էփենտիները արշինը երկու լիւրանոց  
ընտիր չուխալից կտիկ սերտովները  
հազին, ձիւնի նման սպիտակ օսլա-  
լած չապիկներով քնքոչ ձեռնայնե-  
րը ձեռքերը, բարալիկ ձեռնափայ-  
տերը շարժելով մոեւեղել են, որոնց  
կաշառքի ոսկիներով լքցւած զրպան-  
ները միշտ դատարկել են եւրոպացի  
դերձակները և մոզալի մոզազինա-  
տէրերը:

Այս, վան, Մուշ, կրղրում՝ հա-  
մաձայն ևմ ձեզ հետ, կան գրագիր-  
ներ, որոնք «ծալապատիկ նստած  
ծնկի վերաջ գրում են մինչև օրս  
պաշտօնական բոլոր թղթերը». բայց  
Կ. Պոլսի դատարանների քննիչներին  
(СЛѢДОВАТЕЛЕ) մի ծնկների վրա գիր  
գրել տաք, աչն էլ չորսին մի այլ-  
քան ահուելի կեղտոտ սենեակ բերե-  
լով՝ քննութիւն ու մասխարութիւն  
մի անել տաք, թող գրասեղանների  
վրա նստեն ալաֆրանկա՝ Յիշկէք,  
որ այդ քննիչների մօտ անդազար  
մտնում են դատախազները, դատա-  
բանների նախապահները և օտարաէ-  
րութիւնների կոնսուլների թարդ  
մանները: Թուրքերը աչնքան վիմար  
չեն, որ Կ. Պոլսում՝ գեսապանների  
քթի տակ այդ աստիճան անկարգ  
պահեն իրանց ատեանները:

Եթէ հեղինակը այդ ահազին նոր  
(1865 թ. շինւած) շինութեան մէջ  
մտած լինէր, որ չորս անգամ աւելի  
մեծ է Թիֆլիսի նահանգական և պա-  
լատի դատարանի շինութիւնից, լու-  
տամուսների մթութեան մասին գան-  
գաս չէր անիլ, բայց երևակալու-

թիւնը շատ անգամ սխալում է:  
Քննութիւններ կատարելիս իբր թէ  
ուտում խմում են, եթէ այդ ասէլք  
պարտիկների համար կարելի է հա-  
ւատալի. որովհետեւ տեսել ևմ, որ  
Մուհարէմի հանդէսների գիշերները  
նրանք մղկիթում նարկիլէ են քա-  
չում, չէրքէթներ էլ են խմում:

Անկարելի է Մտամբուլ տեսնել և  
աչնտեղի թրքուհիներին Ֆարաջալից  
հանել և չարաֆների (սաւանի) մէջ  
փաթաթել և այդ սաւանի ծալրով  
էլ ստիպել մարդուց երեսը ծածկել  
(262 երես), կամ բանալ (263 երես)  
և կամ «թէմէնէ» անել (264  
երես): Ինչ կարիք կա Կ. Պոլսի  
թրքուհիների երեսը բանալ (265  
երես), քանի որ նրանք պարտիու-  
հիներին նման ամբողջ քօղով չեն  
ծածկում և նրանց ունքերը, աչ-  
քերը, աչտերը, քիթը բոլորովն բայ  
են. «րուբէնտ»? (երեկ երեսի ծած-  
կոց) չունին. եաշմազն էլ վուալից  
թանձր չէ:

Բայց զարմանալի և հակասական  
են հեղինակի բոլոր նկարագրու-  
թիւնները. նա լանցաւորներին Բի-  
ղալէթ է տանում, աչսինքն ճոր  
օրէնքով կառավարող դատարան,  
որի մէջ նախագահը՝ զանազան կրօնի  
անդամներով՝ օրէնքների անուսով  
վճիւններ է կապցնում. և այդ ան-  
դամներին (մտցնում է փոքրիկ սե-  
նեակներ լալայելու, աղօթելու, ծխե-  
լու, ուտելու, խմելու) և լանկարծ  
Շէլս-իւլ-Նալամի դռնից մի դալի  
(կրօնական դատաւոր) է մտցնում  
այդ դատարանները և նրա բերանով  
վճիւններ արձակում. և ինչպէս...—  
գրչի ծալըը շարժելով:

Իսկ պոլիցիայում պատահած կօշիկներ հանել տալու և զուլպայով աղբանոցը բանտարկելու սովորութեան մասին՝ ինքը հեղինակն անգամ կասկածում է, և զիւրահաւատ ընթերցողներին համոզելու համար՝ ծանօթութիւնով (էջ 279) ուղարկում է Կ. Պոլսի դատարանները վերաստուգելու, իբր ուլ չի հաւատում, թնոյ զնալ ստուգէ: Ուղիղ է, որ դատատանական ատեաններում սովորութիւն է՝ մոնոզիները վերարկուն, կրկնակօշիկները, ձեռնափալտն ու հովանոցը լանձնում են նրբանցքում դրահամար կարգադրած ծառաներին: որոնք ստացած առարկաների համար խսկոյն Ն՞ են տալիս և պատասխանատու են իրանց լանձնած իրեղէնների համար. բայց լուծած բան չէ կօշիկները հանել և զուլպայով մանածել:

276 երեսում նկարադրած է Բիդալէթի նախագահը, որը իբր թէ մի զապի է: Բայց չէ՞ որ զապիների Կ. Պոլսի դատարաններից արտաքսուելուց քսանհինգ տարի է անցել: Եւ չետոյ, ինչ կասեն Կ. Պոլսում ապրող եւրոպացի փաստաբանները և կնստուլներ թարգմանները, որոնք ամեն օր ներկայ են ալդ ատեաններում, երբ կարգան «արահի պատից տոպրակներով կախւած թղթերը, չատակի վրալի թղթի մանրուկը, պանըրի կտորները և եղեղի գրչի կտրած քները»: Միթէ ալդ բաները նրանք տեսնում և չեն լիջատակում իրանց ղեկուցումների մէջ: Դատատանական սրահի միւս մասում չատակի վերայ իբր թէ խալիներ են փռւած (էջ 279). մինչդեռ 70-ական

թւականներից շինւած էին թիկունքով նստարաններ, ետևի կողմիները առաջիններից ատիճանաբար բարձր. թէլ խմելու (էջ 277 երես) գործիքներ էլ կալին ալդտեղ թափթիւած, կոտրած, պատուած առարկաների մէջ. ուրեմն Կ. Պոլսի թուրքերն էլ սկսեցի չալ խմել...:

Պ. Փափաղեանը եթէ մօտից ծանօթ լինէր Կ. Պոլսում ապրող դատաւորների հետ, մտած լինէր նրանց սենքը, ներկայ լինէր նրանց դատավարութեանը, ալնպիսի հաչտաչքներ (279 երես) չէր զնիլ նա խաղահի բերանը (մինչև ալժմ զատի էր ասում): Ալդ խորամանկ և ծանրաչարժ արարածները ընդհանրապէս ալնքան համեստ և լուրջ զիւրք են բռնում դատավարութեան ընթացքում, որ դատապարտեալի արիւնը ծծել ջանկացած բոպէին անգամ պատրաստ են ժպտալու, հաճոյանալու իրաւագուրկ թշուալին և անմեղ ձեանալու: Ալդ բանը կարելի է նկատել 1891 թ. «Արաք»-ի համարում հրատարակւած դատաւարութեան պատմութեան մէջ ևս:

Արձաստելու համար մի վերջին նկատողութիւն էլ անենք և վերջացնենք «Արդար դատաստան»-ի դատաստանը:

Պ. Փափաղեանը ալնքան անծանօթ է իւր նկարադրած կեանքին՝ որ քաղաքացիական դատարանում (Բիդալէթի հուզուզ) եղած ժամանակ վարել է տալիս իւր երևակալական փաթթոցներով դատաւորին «իղկէմբէ-չորւանսի» քրէական գործը (279 երես) և ապա ալն տեղից դուրս գալով՝ ընթերցողներին էլ իւր հետ

տանում է քրէական դատարան (Բիդայէթի ջինայէթ), որտեղ նորից մի զապի եւ գտնում (այդ ատեաններում զապի չկալ, շէլի-իւլ-իսլամի դռանը փնտրեցէք զապիներին) և 5—6 կոկիկ հաղնւած անդամների հետ նտեցնում կաշու գործարանատիրոջ և բանւոր պարտիի գատը քննելու համար: Գուցէ հեղինակը կարծում է, որ ճակատ կտորելը փոքր լանցանք և թեւ գործարանի անիւի տակը թողնել տալը մեծ լանցանք է: Բայց քրէական լանցանքը քրէական է մտում, հետևապէս քաղաքացիական դատարան չի մտնի:

Պատկերի մէջ դուրս են բերւած Բոսֆորի Հիսար Բուրնիյ արւարձանում թիւրք, իսլամ գործարանատէր և պարսիկ էլ մեքենավար: Մեզ թւում է սակայն որ այդ բանը երևակայական է:

«Արդար գատատան» պատկերով, ինչպէս երևում է, հեղինակը աշխատել է մեղ ծանօթացնել կ. Պուսի դատարանների հետ. բայց այդ երևակայական պատկերով սուեր է գցել իւր միւս պատկերների վրա: որոնք, ինչպէս վերն էլ ասացինք, իրական կեանքին բաւական մօտ են: Ս. Ս.

## Նոր տնացւած գրքեր

1) ՍՊԵՆՍԵՐ, Հերբերտ:—«Գատտիարակութիւն մտաւոր, բարոյական և ֆիզիքական»: Թարգմ. Մկրտ. Ղազարեանց: Հրատ. Թիֆլիսի Հրատարակչ. Ընկ. Թիֆլիս, տպ. Ռոտինեանցի, 1892 թ., գինն է 1 ռուբլի:

2) ՇՄԻԳՏ, Ս. Ի.—«Մըռուան»: Թարգմ. ռուսերէնից Անուշ. Քալանթար: Հրատ. Թիֆլ. Հր. Ընկ., Թիֆլիս, տպար. Արօր Տ. Նազարեան. գինն է 20 կոպէկ:

3) ՍԷՅԼԱՆ, Ն.—«Խան Միրան» (աւանդական պատկեր Թահմազչահի վասպուրականի արշաւանքից): Հրատ. Թիֆլ. Հր. Ընկ. Թիֆլիս, տպ. Արօր Տ. Նազարեանի, 1892 թ., գինն է 20 կոպէկ:

4) ԳՈԳՈՒ, Ն.—«Տարաս Բուլբա»: Թարգմ. Մ. Աբեղեան: Հրատ. Թիֆլ. Հր. Ընկ. Թիֆլիս, տպ. Ռոտինեանցի, 1892 թ., գինն է 40 կոպ.:

5) ԱՂԱՅԵԱՆՅ, Ղ.—«Երկու քուր»: Երկրորդ տպագր. Հրատ. Թիֆ. Հր. Ընկ., Թիֆլիս, տպ. Շարածէ, 1892 թ., գինն է 25 կոպէկ:

6) ՇԻՐԱԿԵՅԻ.—«Մարօ», պատկեր իրական կեանքից: Բ. Ալեք. սանդրապուլ, տպ. Գ. Սանդեանցի, 1892 թ., գինն է 5 կոպէկ:

7) ՍԵՆԿԵՆԻՉ, Հ.—«Փարոսի վերադ», թարգմանութիւն ռուսերէնից: Մոսկւա, տպ. Մ. Բարխուդարեանցի, 1892 թ., գինն է 10 կոպէկ:

- 8) ՍԱՀԱԿԵԱՆՅ, Սահակ քահանա.—«Դասատետր կրօնի» Ա. տարի: Թիֆլ., տպ. Շարաձէի, 1892 թ., գինն է 15 կոպէկ:
- 9) ՍԱՀԱԿԵԱՆՅ, Սահակ քահանա.—«Դասատետր կրօնի» Բ. տարի: Թիֆլ., տպ. Շարաձէի, 1892 թ., գինն է 20 կոպէկ:
- 10) ՍԱՀԱԿԵԱՆՅ, Սահակ քահանա.—«Դասատետր կրօնի» Գ. տարի: Թիֆլ., տպ. Յ. Մարտիրոսեանցի, 1892 թ., գինն է 20 կոպէկ:
- 11) ՋԱՄԱԼԻ.—«Երգիչ Ջամալու քնարական երգերը»: Ալեքսանդրապոլ, տպ. Աբր. Մալխասեանցի: 1892 թ., գինն է 20 կոպէկ:
- 12) «ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ», հրատարակիչ Յովհաննէս Բարխուդարեանց: Գիրք Ա., Մոսկւա, 1892 թ.:
- 13) ՄԱԼԽԱՍԵԱՆՅ, Ստ.—«Իրաքառի համաձայնութիւնը»: Հրատ. Կենդր. Գրապաճառանոցի: Թիֆլիս, տպ. Յ. Մարտիրոսեանցի, 1892 թ., գինն է 50 կոպէկ:
- 14) ЕРИЦОВЪ, А. — „Исторія холерныхъ эпидемій въ Закавказьи“. Եւ դորա հետ կից՝ „Чума въ Закавказьи“. Тифлисъ, 1892 г. գինն է?
- 15) ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ.—«Իրախոր ընտանիք»: 2-րդ տպագրութիւն: Հրատ. Թիֆլիսի Հ. Հրատ. Ընկ., տպ. Մ. Ռոտինեանցի, 1892 թ., գինն է 60 կոպէկ:
- 16) ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ.—«Սիրաք և Սամուէլ»: Բարի հօր կրթական դասեր: Ինչէր հայոց հարց և զարգացեալ որդւոց: 3-րդ տպագրութիւն: Հր. Թիֆ. Հ. Հրատ. Ընկ. Թիֆլիս, տպարան Մ. Ռոտինեանցի, 1892 թ., գինն է 50 կոպէկ:
- 17) TER-MIKELIAN, Arschak, Dr.—„Die armenische Kirche in ihren Beziehungen zur byzantinischen“ (von IV. bis zum XIII. Jahrhundert). Leipzig, Gustav Fock, 1892 թ., գինն է 2 մարկ:
- 18) ՔԱՄԱԼԵԱՆՅ, Ս.—«Հեքիաթներ»: Թիֆլիս, տպ. Յ. Մարտիրոսեանցի, 1892 թ., գինն է 30 կոպէկ:

## ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԹԵՄԱԿԱՆ ԴՊՐԱՆՈՑՆԵՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՐԵՖՈՐՄ

Մեր թեմական դպրոցները հայկական միակ միջնակարգ և էջմիածնի ձեմարանից դուրս միակ բարձր դպրոցներն են, զոցանից է գլխավորապէս կախած նաև ծխական ուսումնարանների ուսումնական վիճակը, քանի որ նոքա են տալիս այդ ուսումնարանների համար ուսուցիչների գլխավոր կոնտինգենտը: Գլխավորապէս այդ դրպրանոցներից են սպասուում աւելի բարձր կրթութեան ձգտող հայ սաներ, քահանայացիներ և մեր բարձր հոգևորականութեան ապագայ անդամներ: Այդ հանգամանքը պարտաւորացնում է մեզ լուրջ ուշադրութիւն դարձնել թեմական դպրանոցների վերայ, որը մենք գտնում ենք ոչ բարեկարգ վիճակի մէջ, և առաջարկել միջոցներ յառաջդիմութեանը խոչնդոտ հանդիսացող հանգամանքների առաջն առնելու համար: Կորա համար իբր տիպար այդ ուսումնարանների մենք ընտրում ենք Ներսիսեան դպրանոցը, որը միևնոջն ժամանակ նիւթեր կը տայ մեզ դպրանոցների ընդհանուր վիճակի հետ ծանօթանալու համար:

Ներսիսեան Հոգևոր Դպրանոցը Կովկասեան Հայերի ամենանշանաւոր հիմնարկութիւններից մէկն է: Նա ամենահինն է հայոց դպրոցների մէջ, առաջիններիցն է Կովկասում հիմնւած որ և է ազգի դպրոցների շարքում, քանի որ նա մօտ եօթանասուն տարւայ գոյութիւն ունի: Նա նաև ամենահարուստն է բոլոր հայ ուսումնարաններից բայց և բազդատմամբ միջնակարգ պետական դրպրոցների հետ, որ գոյութիւն ունեն թէ Կովկասում առհասարակ և թէ մասնաւորապէս Թիֆլիսում, նա ամենահարուստներից մէկն է, քանի որ Ներսիսեան Դպրանոցի տարեկան եկամուտը իւր շար-

ժական և անշարժ կալածանքերից՝ որպէս և այլ մշտական հասոյթներից շուրջ 50 հազար ուրբլի է, որը համապատասխանում է, հնգական տոկոսով շահեցրած՝ մի միլիոն ուրբլու մեծ գումարին:

Այդ ամենից յետոյ Ներսիսեան Գարանոցը ունի յատուկ դրամադրութիւն, որի տոկոսները ներում են մշտապէս մի որպէզիբ ունենալ Եւրոպայի համալսարաններից մէկն ու մէկում, տարեկան շուրջ 800 ուրբլու ծախքով:

Այս բոլորը միասին վերցրած՝ Ներսիսեան գարանոցը դարձնում են մի նշանաւոր հաստատութիւն ամբողջ Կովկասում չը նայած որ նա մի միջնակարգ գարոց է:

Գարոցին այդ նիւթական հաստատութիւնը տալու համար հարկաւոր է եղել մեծ խելքով, հեռատես ու ազդանւէր մի եկեղեցական իշխանի կաջն և ոյժը, որպիսին կարող էր ցոյց տալ Ներսէսը իւր երկարատե առաջնորդութեան ժամանակ դարիս առաջին կիսում, և իւր կաթողիկոսութեան երկար տարիներում, ապա մի շարք նիւթապէս կարող անձերի եռանդը հայկական ազգային ուղղութեամբ և կրթած հասարակութեան անդամներից մի շարք մարդկանց անշահատէր ծառայութիւնը, յանձին գարոցի հոգաբարձուների, բղխած ժողովրդի ընտրութիւններից:

Բայց չը նայած իւր համեմատապէս մեծ հնութեան, նիւթական ապահովութեան, երկարամեայ գործունէութեան, ձեռք բերած փորձերին, չը նայած այն ընդհանուր ուշադրութեան, որի պակասութեան վերայ չի կարող զանդատել այդ նշանաւոր հայկական գարոցը, չը նայած այդ ամենին, ստում ենք մենք, այդ գարոցը մինչև այժմ շարունակում է հանելուկ լինել բոլոր նոցա համար, որոնք երբ և իցէ իրանց հարց են աւել նորա հետևած նպատակի, տւած արդիւնքների, գարոցում իշխող կարգ ու կանոնների և մշակած աւանդութիւնների մասին:

Ներսիսեան գարոցը, հէնց շնորհիւ նիւթական ապահովութեանը իւր տւած արդիւնքների անհամապատասխան լինելուն՝ միշտ մի հարցականի առաջ կանդնած է եղել հասարակութեան աչքում: Ամենքը զգում են որ ալի յալոյց են գործում. զգում են ամենքը, որ նորա զիրքը անորոշ է և ինչ որ լաւ չի կապում ժամանակի պահանջների հետ:

Հասարակաց կարծիքը այդ կողմից մէկ է. Ներսիսեան դպրոցը չի աալիս ոչ լաւ զարգացած և ոչ էլ լաւ դաստիարակւած աշակերտներ. նա ընդհանրապէս չի զրաւում հայ ընտանիքները դէպ իրան. իւր ունեցած համբաւով նա չի կարողացել մրցել Թիֆլիսում գոյութիւն ունեցող միջնակարգ դպրոցների հետ. քիչ-շատ ունևոր ընտանիքները միշտ խորշել են այդ դպրոցից և իրանց զաւակները այդ դպրոցը չեն յանձնել, շատ սակաւ բացառութիւններով:

Իսկ մի գրութիւն է, որ պէտք է մտածելու տեղիք տայ սկսած բարձրագոյն հոգևոր իշխանութիւնից մինչև ամեն մի հայ քաղաքացին: Պէտք է լրջօրէն ձգտել հայ դպրոցի անուը բարձրացնելու, քննելով և հեռացնելով այն պատճառները, որոնք խոչնդոտ են հանդիսացել դպրոցի կանոնաւոր շառաջադիմութեանը:

Այժմ, երբ մենք մի նոր կաթողիկոսի զալստեան առջևն ենք, մեր հոգսերից մէկը պէտք է լինի ի միջի այլոց մեր հայկական միջնակարգ դպրոցների գրութիւնը քննութեան առնել և այդ գրութիւնը բարւոքելուն նպաստել: Իսկ այդ միջնակարգերից կարևորագոյնը Ներսիսեան հոգևոր Գպարանոցն է, որի գրութիւնը, որպէս ասացինք, լուրջ մտածողութեան տեղիք է տալիս:

Ներսիսեան Գպարանոցի գրութիւնը քննելիս, պէտք է ի նկատի ունենալ դպրոցական այլ և այլ խնդիրներ. դպրոցի նպատակը, դպրոցի ուսումնական կառավարութիւնը, դպրոցի անտեսական կառավարութիւնը, դպրոցի ուսուցիչների խնդիրը, ուսման ծրագիրը:

Իսկապէս այդ բոլորը այն խնդիրներն են, որոնք կազմում են Ներսիսեան Ազգային Հոգևոր Գպարանցի կանոնադրութեան բովանդակութիւնը: Ուզենալ վերաքննել այդ խնդիրները նշանակում է ուզենալ Գպարանոցի կանոնադրութեան վերաքննութիւնը, հետևապէս և փոփոխումը: Եւ մենք կարծում ենք որ ժամանակը հասած է կանոնադրութեանը վերափոխման ենթարկելու համար, որովհետև մեզ թւում է թէ նա իւր մի քանի մասերում իւր ժամանակը այսպէս ասած՝ ապրած պրծած է: Ներկայ կանոնադրութիւնով, որ գոյութիւն աւնի 1861 թւականից դէս և որը հետևապէս 30 տարին գործել է, դպրոցի կառավարութիւնը շարունակել առանց որ է փոփոխութեան, մեզ թւում է դատապարտել դպրոցը յետադիմութեան և յամենայն դէպս անշարժութեան:

Այն ժամանակ, երբ տրւեց Ռպրանոցի այժմ զօրութիւն ունեցող կանոնադրութիւնը, դա լրումն էր վաղուց տածած բաղձանքների ժամանակի ամենայառաջդիմական մասի համար. 30 տարի առաջ ստանալով այժմեայ կանոնադրութիւնը՝ մեծապէս ուրախ էին որ Ռպրանոցը վերջապէս ունեցաւ մի որքան և իցէ տանելի կանոնադրութիւն առհասարակ. իսկ այդ ցնծութիւնը հիմնւած էր այն հանգամանքի վերայ, որ մինչ այդ ժամանակ, ուրեմն հիմնւած օրից 38 տարի շարունակ դպրոցը գործում էր բոլորովին անճրագիր, չունէր կանոնաւոր վարչութիւն և որ և է հաստատուած կարգ ու կանոն: Անորոշութեան տեղը բռնեց որոշ դրութիւն և որոշ սկզբունք. իսկ դպրոցի կառավարչական սկզբունքը էր ժողովրդի կամ սորաներկայացուցիչների և հոգևոր բարձր իշխանութեան մասնակցութիւնը որոշւած սահմաններում, մի սկզբունք, որ գործադրւում էր նաև 1861 թւականից առաջ, բայց որը չէր նւիրագործւած որ և է հաստատ կանոնով, և որը միևնոյն ժամանակ չէր գործադրւում այն մաքրութեամբ, ինչպէս այդ տրամադրում էր 1861 թւականի կանոնադրութիւնը: Առաջւայ անորոշութեան և իրարանցումի տեղը բռնեց այն որոշ դրութիւնը, որ կարող է ապահովել միայն դպրոցական սահմանադրութիւնով:

Հետևապէս պէտք է շնորհապարտ լինել իւր ժամանակակազ գործիչներին, որ նրանց յաջողեց ներսիսեան դպրանոցը որոշ կարգ ու կանոնի տակ զցել. յառաջդիմական քայլը այդ կողմից անկասկած է, անուրանալի:

Բայց միայն կոյր պէտք է լինել չը տեսնելու համար, որ ժամանակը իւր գործն է կատարել հասունացնելով այնպիսի պահանջներ, որոնք աղաղակող են դառել և լուծման են սպասում:

Վերը մենք պնդեցինք, որ ներսիսեան Ռպրանոցը, կատարելապէս ապահով վիճակի մէջ գտնւելով հանդերձ, ոչ մի հրապուրանք չի ներկայացնում ներկայ սերունդների համար և որ ովքեր միայն հնարաւորութիւն ունեն իրանց զաւակներին արքունական դպրոցներն են տալիս: Ես գիտեմ որ այդ հոսանքի ամենազօրաւոր պատճառներից մէկը և զուցէ հէնց ամենազօրաւորը այն արտօնութիւններն են, որ կապւած են արքունական դպրոցներում աւարտելու հանգամանքի հետ. բայց ես պնդում եմ որ դորանից բոլորովին

անկախ Ներսիսեան Գպրանոցը իւր կոչման բարձրութեան վերայ չի կանգնած, չունենալով հաստատուն և լաւ կարգ ու կանոններ ուսումնական և ներքին բարեկարգութեան տեսակէտից:

Նախկին ժամանակներից 1861 թւականից դէս դրութիւնը նրանով է լաւացել, որ մի որոշ կանոնադրութեամբ գպրոցը գիտէ թէ ով է նորա տէրը. լաւացել է նաև մանաւանդ այն պատճառով, որ նոյն կանոնադրութեամբ նա աւելի անկախ է դառել հոգեւորականների անմիջական միջամտութիւնից, գպրոցի անմիջական կառավարութիւնը յանձնելով ժողովրդից ընտրածների, որոնք յամենայն դէպս աւելի մեծ գրաւականներ են ներկայացնում դործի լաւ ղեկավարութեան համար, քան հոգեւորական դասն է ներկայացնում թէ առաջ և թէ այժմ: Այդ կարծիքն ունէին թէ աշխարհականները և թէ հոգեւորականները 30 տարի առաջ, և այդ կարծիքը անփոփոխ է մնացել մինչ այժմ և կը մնայ նաև առ միշտ: Այ մի կասկած չի կարող լինել որ աշխարհական դասի մէջ անհամեմատ աւելի շատ են լուսամիտ և յառաջդիմութեան զարկերակ ունեցող մարդիկ քան թէ հոգեւորական շատ կողմերով շատ աւելի նեղ դասակարգի մէջ. և, ընդհանուր առմամբ, ուր կայ յառաջդիմական հոսանք, ժողովուրդը գիտէ իւր ներկայացիչները ընտրել համեմատաբար նաև լուսաւոր մարդկանց միջից:

Որոշութիւնը մէկ կողմից, առաջաւոր աշխարհականներին ասպարէզ դուրս կանչելը և նրան ամենամօտ իշխանութիւն յանձնելը միւս կողմից յառաջացրին այն, որ Ներսիսեան գպրանոցը նախկին ժամանակների հետ համեմատած աւելի բարձր է կանգնած, թէ նիւթապէս և թէ տւած ուսումի ծաւալով: Ժամանակի յառաջդիմութիւնը, որ արտայայտուել է ի միջի այլոց բարձր ուսում ստացածների քանակութիւնով, հաղորդուել է նաև մեր միջնակարգ հայոց գպրոցներին և դեռ ամենից առաջ Ներսիսեան գպրանոցին, որի հոգաբարձուների և ուսուցիչների մէջ բարձր ուսում ստացածները աւելի մեծ թիւ են կազմում, քան 60-ական թւականների սկզբներում այդ կարող էր լինել: Երեքդասեան գպրոցը ինչպիսին էր Ներսիսեան գպրոցը 30 տարի առաջ, այժմ 6-դասարանեան գպրոց է դառել մեծ մասամբ բարձրագոյն ուսում ստացած ուսուցիչներով և միջնակարգ գպրոցների նման ծրագրով:

Բայց այն յառաջդիմութիւնը, որ կատարել է ներկայ կանոնադրութիւնով, արդէն վաղուց կանգ է առել, այն վիճակը, որի մէջ գտնուում է Ներսիսեան դպրանոցը, այդ նոյն վիճակի մէջ է ահա արդէն տասնեակ տարիներ և այն ներքին պակասութիւնները, որոնք նկատուել են և որոնց մասին ամենքը գանգատուել են՝ մնում են նոյնը առանց որ յաջորչ տարիները կարողացած լինեն ուղղել նոցա. և ոչ մի երաշխաւորութիւն էլ չկայ թէ այսուհետև այդ պակասութիւնները կը վերացեն:

Բանը սա է որ ընտրւած հոգաբարձուները, որքան էլ հասարակութեան ակնասուոր անդամները լինեն, բայց դպրոցական մարդիկ չեն. վճռողական ձայն ունենալով դպրանոցի ամեն կարգի խնդիրներում՝ հոգաբարձուները կարող են լինել մարդիկ, որոնք դպրոցի հետ սերտ կապ չունեն ոչ իրանց ուսումով և ոչ էլ իրանց հակումներով և ոչ իսկ իրանց պարապմունքներով: Հոգաբարձութիւնը այս վերջին 30 տարիներում, ի բաց առած դասաւանդելի առարկաների ծրագիրը, գրեթէ լիակատար տէրն է եղած դպրանոցում. սեսուչ, ուսուցիչներ, սոճիկներ և վարձատրութիւններ, գրադարան, Ֆիզիքական կաբինետ, աշխարհագրական և պատմական քարտէշներ ու պատկերներ, գրականական վարժութիւնների ղեկավարներ, դասերի բաժանումը ուսուցիչների մէջ, դպրոցական զբօսանքներ, քննութիւնների վերահսկողութիւն, մանկավարժական ժողովների կարծիքների գնահատութիւն, — մի խօսքով, ի բաց առած ծրագիրը, ամեն ինչ այնպիսի հոգաբարձուների բարի կամքիցն է կախւած, որոնք իրանք ոչ մի պատասխանատուութիւն չունեն ոչ գիտութեան առաջ, ոչ էլ որ և է բարձր, իրանցից աւելի կոմպետենտ վարչութեան առաջ:

Ուսումնական-դպրոցական տեսակէտից մենք ի հարկէ չենք կարող Վաթողիկոսին և Սինոդը համարել աւելի ձեռնհաս իշխանութիւն. բայց թէ Ներսիսեան և թէ մեր միւս դպրանոցների հոգաբարձութիւններից զուրս կանոնադրութիւնը ձանաչում է միայն Վաթողիկոսին և Սինոդին, որովհետև եթէ հոգաբարձութիւնից վեր կայ մի իշխանութիւն կանոնադրութիւնով որոշւած մի քանի հանդամանքների համար՝ զոքա Վաթողիկոսն են կամ Սինոդը: Բայց Սինոդը մի այնպիսի կոլլեգիա է, որը ուսումնարանական պահանջների

հետ ոչինչ ընդհանուր չունի, հետևապէս նա չի կարող լրացնել այն պակասութիւնները, որ նկատուում են այժմեայ հոգաբարձութիւնների մէջ, բացի երբ հարկաւոր է վճռել անձնական զանգատներ, իսկ կաթողիկոսը առանց մի յատուկ դպրոցական օրդանի վերահասու չի կարող լինել:

Այսպիսով ահա կարող ենք վստահ կերպով ասել՝ մեր միջնակարգ դպրոցները ուսումնական վարչութիւն չունեն: Այժմեայ հոգաբարձութիւնները մենք չենք կարող, այո մեզք է անգամ՝ ուսումնական վարչութիւն համարել:

Այդ ողբալի հանդամանքը իրան իմացնել է տալիս ամեն քայլափոխում: Աջնտեղ ուր մանկավարժական տեսակէտը պէտք է դերակշիռ դերը խաղայ, մենք տեսնում ենք այդ տեսակէտը հեռացրած մինչ ամենավերջին պլանը: Թւել մի առ մի բոլորը, ինչ դատապարտելի է դպրոցական տեսակէտից, անհնարին է, քանի որ, կրկնում ենք, ամեն քայլափոխում հոգաբարձութիւնների անձեռնհասութիւնը իրան զգացնել է տալիս: Բայց միայն իբրև լուսաբանութիւն, որպէս իլլիւստրացիա, մենք առաջ կը բերենք հէնց միայն մի երկու հանգամանքներ, որոնք ցոյց կը տան թէ ինչ վերաբերմունք ունեն հոգաբարձութիւնները պէպի դասատուները և դասաւանդելիք աւարկանները: Ինչ կարելի է պահանջել մի դպրոցից հէնց օրինակ հայոց լեզուի նկատմամբ, երբ հակառակ ամեն առողջ դատողութեան՝ գրեթէ տարի չէ անցնում որ հայերէն լեզուի դասատուները չը փոխեն: Ես չեմ կարծում թէ մեր ընթերցողները գաղափար ունենան այն այլանդակութիւնների մասին, որոնց իսկական պատկերը կարող է նկարել մեր ընթերցողների աչքի առջև միայն երբնոցա առաջը իսկական եղելութիւններ դնենք: Եսկ այդ չի կարելի անել առանց հրապարակ հանելու այնպիսի հանգամանքներ, որոնք միանգամայն ներքին դպրոցական գործեր են համարուում և որոնց մասին տեղեկութիւն ունենալը կարող է յաջողել միայն բարձր դասասանների աշակերտների մտաւոր վիճակով հետաքրքրւողներին:

Ներսիսեան դպրանոցի այն աշակերտները, որոնք իրանց ուսման ընթացքը աւարտեցին 1888 թւականին, սկսած 2-րդ դասասանից մինչ 6-րդ վերջին դասատուներ հետեւեալ ուսուցիչներն են ունեցել հայերէն լեզուից.

2-րդ դասատնում՝ պ. Տէր-Յարու թիւնեանց:

3-րդ դասատնում՝ պ. Կստանեանց.

4-րդ դասատնում՝ Բարդուղիմէոս վարդապետ, որին տարւայ  
կէսին փոխարինել է պ. Ասիլեանց:

5-րդ դասատնում՝ պ. Ասիլեանց:

6-րդ դասատնում՝ պ. Քարամեան:

Աւրեմն 5 տարում խեղճ աշակերտները ունեցել են 5 ուսուցիչ՝ նոյն աւարկալից, հինգ ուսուցիչ, որոնք շատ տարբեր ուսուցնական ցենդի մարդիկ լինելով և հետևողներ չը լինելով մի բարձրագոյն դպրոցի որոշ ուղղութեան և մեթոդի, իրար չաջորդելով չէին կարող նաև իրար գործը շարունակել:

Այդպէս է եղել հայերէնի դասատուութեան վիճակը: Տեսնենք ինչ է եղել վիճակը հայոց պատմութեան. նոյն աշակերտների ուսուցիչները եղել են

2-րդ դասատնում՝ այժմ հանգ. Շիշմանեան:

3-րդ » ուսուցիչ չը կար:

4-րդ » պ. Չիլինգարեան:

5-րդ » (այժմ քհն.) Բէկնազարեան:

6-րդ » պ. Ասիլեան:

Այո, շատերը կարող են լսած լինել դպրոցական բարբարոսութիւնների մասին, բայց հազիւ թէ շատերը զիտեանան թէ ինչպիսի բարբարոսութիւններ կարող են կառարել մեր առաջին և ամենից մեծանուն հայ միջնակարգ դպրոցում:

Ուսուցիչների այսքան յաճախ փոփոխութիւնը պատահական չէ. նա հետևանք է մի արմատական պակասութեան, որ սերտ կապ ունի այժմեայ հոգաբարձութիւնների անսահման իրաւունքների հետ, որքանով որ վերջիններս ուսումնական մասի ամենամօտաւոր տէրերն են: Այդքան յաճախ փոփոխութիւնները ցոյց են տալիս թէ դէպի որ կողմն է ուղղած լինում անպատասխանատու և կոչումով ոչ-դպրոցական գործիչներից բաղկացած հոգաբարձութիւնների գործունէութիւնը, միևնոյնն է թէ նոցա ընտրողով է եղել՝ ժողովուրդը թէ իշխանութիւնը:

Ուսուցիչների յաճախ փոփոխութիւնը չէ միայն որ դասաւարտելի է այս դէպքում, այլ այն է կարևորը, որ այդ տես-

դայն փոփոխականութեան մէջ դեր չի կատարել հոգսը դպրոցական շահերի մասին և հէնց այդ է պատճառը, որ այն ուսուցիչները, որոնք նոյն իսկ տասնեակ տարիներով անփոփոխ վարել են իրանց պաշտօնները, ոչինչով չեն կարող պարծենալ մանկավարժական ընդունակութիւնների ու վաստակների կողմից: Անկարելի է որ այն հոգաբարձուները, որոնք զոհում են դպրոցական շահերը մէկ կողմից այնքան փոփոխելով ուսուցիչներին, միւս կողմից երկար տարիներով պահեն միւս ուսուցիչներին՝ դպրոցական շահերը սպառապանելու համար: Մենք հակաժ ենք մտածելու, և հասարակաց կարծիքն էլ մեզ կ'արգարացնի, որ երկու դէպքերումն էլ հոգաբարձութիւններին ղեկավարողը դպրոցական գործի խորը հասկացողութիւնը չէ:

Եւ ինչ միջոց կարող են ունենալ հոգաբարձուները ուսուցիչների արժանիքը չափելու համար. իրանք, որ կոչումով դպրոցական մարդիկ չեն և ոչ էլ գրական վաստակներով կարողացել են ապացուցել դպրոցական գործի մէջ ունեցած հմտութիւնը, այդ մարդիկ, որոնց զլիսաւոր գործը դպրոցը չէ, այլ ուրիշ, դպրոցի հետ ոչ մի կապ չունեցող զբաղմունքներ, այդ մարդիկ, որոնք դպրոցի տէրերը լինելով՝ ժամանակ էլ չունեն հետամուտ լինելու դասաւանդութեան և դպրոցի կարգ ու կանոններին, զոքա իրանց զիտեցածը կարող են հիմնել միմիայն իրանց ընտրած տեսչի զեկուզումների վերայ: Արդ, տեսուչները Ներսիսեան դպրանոցում այնքան յաճախ են փոփոխւել, որ կարծես հոգաբարձութիւնները մոքում զրել են աշխարհք զարմացներ:

Եւ տեսէք թէ ինչպէս:

Նոյն այն աշակերտները, որոնց ուսումնական վիճակի հետ աշխատեցինք ծանօթացնել, թւելով նոցա ունեցած ուսուցիչների անուները մի երկու առարկաներից, զոքա ունեցել են տեսուչներ՝

1881/1882 թ. պ. Պետրոս Սիմոնեանցին,

1882,3 թ. պ. Պօղոս Ղամբարեանցին (ժամանակաւոր):

• 1883/4 » պ. Սող. Եղիազարեանցին:

1884/5 » պ. Արշ. Նահապետեանցին (այժմ՝ արեղայ):

1885/6 » կրկին Սող. Եղիազարեանցին:

1886/7 » կրկին Արշակ Նահապետեանցին:

1887/8 » հայր Ս. Բէզնաղարեանցին:

Մենք դեռ չենք հաշուում այն որ, ամեն անգամ տեսուչ փոխ-  
ւելիս, տեսչի պաշտօնակատարն է ժամանակաւորապէս կառավարել:  
Համաձայնեցէք որ դա կառավարութիւն չէ: Բայց ինչ և է,  
մեր ասածը սա է, որ գործերին անտեղեակ հոգաբարձուները իրանց  
խմացածը պէտք է հիմնեն տեսուչների ղեկուցումների վերայ. բայց  
ինչ ղեկուցումներ կարող են կազմել այնպիսի տեսուչների ձեռքով,  
որոնք իրանք վաղաջ օրի համար ապահով չեն և որոնք առաջարկու-  
թիւններ են անում այն հոգաբարձութիւններին, որոնք իրանց գործը  
սկսելու են նոր տեսուչ ընտրելով. և վերջապէս ուսուցչական և տեսչա-  
կան շարունակ դուրս ու ներս գալուց առաջացած բաբելոնական խառ-  
նաշփոթութեան միջից ինչ խելացի ղեկուցումներ կարող են դուրս գալ:

Ինչպէս որ ուսուցիչների համար էլ նկատեցինք, նոյնը կը նկա-  
տենք և տեսուչների համար, այն է որ քանի որ հոգաբարձութիւն-  
ները ուսումնական վարչութեան կատարեալ տէրը կը մնան, գործին  
շատ քիչ կ'օգնի եթէ տեսուչները թէկուզ երկար տարիներ իրանց  
պաշտօններում մնան: Շատ օգնեց գործին արդեօք, որ դպրանոցի վեր-  
ջին տեսուչը, պ. Յ. Սպենդերեանը երեք տարով պայման կապեց և  
երեք տարի մնաց իւր պաշտօնում: Գրաւոր պայմանները քիչ կ'օգ-  
նեն բուն գործին, քանի որ գրաւոր պայմանով ապահովում է  
միայն տեսչի իւր կոչման մէջ մնալը և ոտճիկը, բայց դորանով չի  
ապահովում հոգաբարձուների և տեսչի փոխադարձ հաւատը և  
դորանով անկոչ հոգաբարձուն աւելի իմաստուն չի դառնում, և ան-  
պատրաստ տեսուչը զրաւ որ պայմաններով չի ձեռք բերում նոր տա-  
ղանդներ:

Բացի այդ բոլորից մեր այժմեայ հանդամանքներում թէ ուսու-  
ցիչները և թէ տեսուչները իրանց գործունէութեան մէջ մնում են  
առանց մի կոմպետենտ վարչութեան վերահսկողութեան, առանց  
կոնտրոլի, առանց հրահանգների:

Վերջին ամիսներս Ներսիսեան Դպրանոցի հոգաբարձութեան  
և Էջմիածնի Սինոդի միջև ծագեց մի հակառակութիւն դպրանոցի  
տեսչին արձակելու առիթով: Իբր թէ Սինոդը հրամանագրած լինի  
հոգաբարձութեան թէ տեսուչը պէտք է նաև ապագայում շարու-  
նակի իւր պաշտօնը, հակառակ հոգաբարձութեան վճռի: Տեղական

Թերթերը այլ և այլ ոչ բոլորովին պարզ լուրեր հաղորդեցին այդ մասին. սկսեցին խօսել հոգաբարձական և Սինոդի իրաւունքների մասին. այդ խօսակցութիւնները դադարած չեն մինչ օրս, քանի որ խնդիրը մինչ օրս էլ իւր լուծումը ստացած չէ: Մեզ քանիցս հարցեր են տրւած մեր ընթերցողներից, թէ ինչու «Մուրճ»-ը իրաւունքների այդ խնդրի մասին ոչինչ չի խօսում: Պատճառը այն է, որ այդ վէճը մենք վերին աստիճանի ամուլ ենք համարում, եթէ միայն իսկապէս վէճ կայ. բայց մենք ցաւում ենք որ հասարակութիւնը այդ վէճերով կարող է հետաքրքրուել, բայց չը տեսնել որ մեր միջնակարգ դպրոցների կառավարութիւնը հիմնական ընթերցումի է կարօտ: Ներկայ յօդւածով մենք մի քանի հանդամանքներ պարզելով աշխատեցինք ցոյց աւել որ անկարելի է մեր հոգեւոր դպրանոցները ցայժմեայ ձևով կառավարել. ապացուցեցինք լիազօր և անպատասխանատու հոգաբարձութիւնների անձեռնհասութիւնը ժամանակիս պահանջներին համեմատ դպրանոցների միակ ղեկավար հանդիսանալ, և ապացուցած ենք համարում որ մեր դպրանոցները կարօտ են մի ուսումնական դպրոցական ղեկավարութեան:

Բայց ինչպէս պէտք է այդ գործը կազմակերպել, չը զոհելով այն սկզբունքները, որոնք թէ թանկ են ժողովրդին և թէ զլիաւոր զրաւականն են մեր դպրոցների յաւաճդիմութեան, այն է որ ցայժմեայ նման ժողովրդի մասնակցութիւնը մնայ անխախտ, բայց միևնոյն ժամանակ ունենանք աւելի պատասխանատու և կոչւած օրգան դպրանոցների ուսումնական վերահսկողութեան համար:

Այդ հետևանքին հասնելու համար պէտք է ամուր պահպանել ընտրողական սկզբունքը, ինչպէս եղել է մինչ այժմ բայց մեր բոլոր թեմական դպրանոցների համար ստեղծել մի ուսումնական հոգաբարձութիւն, որի անդամները թւով ղեցուք վեց հոգի և վեց տարով կընտրուեն թեմական դպրանոցների բոլոր հոգաբարձութիւնների միջոցով, եղած բոլոր հոգաբարձուների ձայների առաւելութեամբ, և կը հաստատուեն վեհափառ Աթոզիկոսից: Ուսումնական հոգաբարձութեան անդամները կը ստանան ուժիկ և կը լինեն որոշ ցենզ ունեցող մարդիկ:

Մենք համարում ենք այդ ձևով ընտրւած ուսումնական հոգաբարձութիւնը իբրև յաջորդական և բնական զարգացումն այն

սկզբունքների, որ դրևած են մեր թեմական դպրանոցների կանոնադրութիւնների հիմքում:

Ինչ դեր ունի սակայն կատարելու ուսումնական հոգաբարձութիւնը թէ դպրանոցների և թէ ծխական դպրոցների վերաբերմամբ, և ինչ յարաբերութիւններ պէտք է ունենան թեմական դպրանոցների հոգաբարձութիւնները և ուսումնական հոգաբարձութիւնը իրար հետ, և այս վերջինը բարձրագոյն հոգեւոր իշխանութեան հետ,—այդ խնդիրները կը կազմեն առանձին ուսումնասիրութեան առարկայ, որին և կը զիմենք մի այլ անգամ:

#### Ա. ԱՐԱՍԻԱՆԵԱՆՑ:

## ԱՄՍԻԱՅ ՔՐՈՆԻԿ

Ռ. Պատկանեանի մահը և թաղումը:—Բժշկական մասնախումբ:—Հաս ու  
չհասի խնդիրը:

Ռահայէլ Պատկանեանի մահը անսպասելի էր, չը նայած որ նորա սկարութեան մասին հաստատ լուրեր կային: Նորա մահը ոչ միայն գրականութիւնից խլեց մի շատ տաղանդաւոր և խոշոր գրողի, այլ և հասարակութիւնից խլեց մի ինքնուրոյն մտածող և զգացող անդամի: Պատկանեանի նշանաւոր լինելը իբրև գրականութեան մարդու վկայած է ամենքից, թէև քննական ուսումնասիրութեան դեռ ևս շատ կարօտ է: Իսկ Պատկանեանին իբրև սոսկ մարդու ճանաչելու համար հասարակութիւնը թերևս երկար ժամանակ կարօտի մի կենսագրութեան, որը հոգեբանօրէն կը բացատրի այն բոլոր բարդ և արտաքուստ գոնէ վերին աստիճանի հակասական երևոյթները, որ բղիւնել են այդ նշանաւոր մարդու հոգուց և մտքից: Որովհետև Պատկանեանը սարգ բնաւորութիւններից չէր, այլ վերին աստիճանի բարդ բնաւորութիւն էր: Նա իմացաւ ամենանեղ տեղական, զուտ նոր-նախիջևանական այսպէս ասած ֆիլիստորական հայրենասիրութիւնը միացնել ամենալայն ազգային հայրենասիրութեան հետ, բարբառական գրականութեան մէջ վարպետութիւնը միացնել ոչ միայն ազգային այլ և համազգային՝ արևելեան հայ գրականութիւնը արևմտեանի հետ միացնող՝ մի ինքնաստեղծ և միևնոյն ժամանակ բնական ու ամենքին մատչելի բաց և սիրելի ուժեղ լեզուի կորովի հետ. կեանքի ամենամանր հաշիւներին հետամուտ մարդու հեռաքրքրութիւնը իմացաւ միացնել լայն սրտի զեղումների և մտքի բարձր թռիչքների հետ. մի մարդ որ վհատած սրտից սիրտ աւող երգեր երգելու կարողութիւն ունեցաւ: Սև որքան բարդ էր նորա նասուրան, նորա բնութիւնը, այնքան էլ բազմատեսակ էին նորա գրական արտապրութիւնները և նորա իբր մարդու արտացոլութիւնները: Այսպէս լինելով զարմանալի չէ որ Պատկա-

նեանը շատ և շատ տարբեր տպաւորութիւններ է թողել իւր ժամանակակիցներէ, անձնական ծանօթներէ և հեռաւոր ընթերցողներէ վերայ, մի առեղծւած, որի լուծողը կը լինի միայն հողերան կենսագրողը:

Մտորե առաջ ենք բերում Ռաֆայէլ Պատկանեանի մահւան և թաղման վերաբերեալ կարեորագոյն հանդամանքները:

Վերջին երկու տարիներս Պատկանեանը սկսել էր մաշել թորախտի հիւանդութիւնից: Ներկազ տարւազ գարնանը դադարեց ալ ևս չաճախել Նոր-Նախիջեանի արհեստաւորաց դպրոցը, որի տեսուչն էր նա հիմնւած օրից: Մալխի վերջերին Վարչաւալի հարկազպի պրոֆեսոր պ. Վ. թու մասը, ուղեորելով դէպի Կիսլովորդսկի, առաջարկեց Նոր-Նախիջեանում հիւանդ բանաստեղծին իւր հետ գնալ աջնտեղ, ուր և խնամում էր նորան մինչ օգոստոսի 15-ը: Բայց անմիաթար վիճակի մէջ նա վերադարձաւ իւր հայրենիք Նոր-Նախիջեան, ուր հիւանդին դարմանում էին տեղական հաշիվները՝ Իս. Ալաճալեան և Ա. Քեչեկեան:

Օգոստոսի 22-ին երեկոյեան ժամ 7 ին վախճանեաց Ռաֆայէլ Պատկանեանը: Իսկոյն կազմեց քաղաքադուլս պ. Բալաբանեանի առաջարկութեամբ մի մասնաժողով, որի առաջին գործն եղաւ հեռագիրներ ուղարկել ալ և ալ կարեոր անդեր, ի միջի ալոց՝ Լճմիածին՝ Տէր Տեղակալին, Թիֆլիս՝ բոլոր խմբագրութիւններին, Պոլիս՝ Ս. Պատրիարքին և ալն: Մասնաժողովը վճռեց հանգուցեալի մարմինը ամբողջել ս. Խաչ վանքի գաւթում, Միքայէլ Նալբանդեանի շիրմի մօտ, որի համար և խաղոն թուրութիւն ստացեց Տէր Տեղակալից:

Կիւրակի, երեկոյեան ժամ 6-ին հողեհանդիստ կատարելուց լետոյ կարգադրիչ մասնաժողովը, պ. Գր. Չալխուչեանի առաջարկութեամբ, հանել տեց բանաստեղծի դիմակը, թէն գէմքի գծագրութիւնը չը ճանաչելու չափ փոխւած էր հիւանդութիւնից, մանաւանդ որ վերջին ժամանակներս հիւանդը մօրուք էր թողել: Քաղաքի եօթ եկեղեցիները ալք օրը տխուր զօղանջիւնով սգում էին նշանաւոր բանաստեղծի մահը:

Հանգուցեալը թաղեց օգոստոսի 24-ին: Գաղաղի մէջ հանգչած զիրքում հանեց լուսանկարը՝ դագաղը անից դուրս բերելուց առաջ: Գաղաղը ամբողջապէս ծածկւած էր մի քանի տասնեակ չքեղ պսակներով, որ դրած էին բաղմաթիւ ընկերութիւնների, դպրոցների, խմբագրութիւնների և բարեկամների կողմից: Գաղաղը նախ տարեց ս. Լուսաւորիչ մարեկեղեցին, ապա, ալդտեղ պատարաղը վերջանալուց լետոյ, տարեց ս. Խաչ վանքը, որ քաղաքից 7 վերստ հեռու է: Մինչ քաղաքի սահմանը դագաղը տանում էր ժողովուրդը, իսկ ապա՝ դիակառքը: Ս. Խաչ վանքի դռան առաջ կարդացին դամբանականներ՝ պ. Չալխուչեանը, որը հանգու-

ցեալը մօտ բարեկամն էր, Ա. Բողղանեանը, Կրպեւը (ռսերէն), Վ. Զուբարը և Մ. Բերբերեանը: Ապա քաղաքալուս պ. Բալաբանեան կարգաց 20-ի չափ հեռադիրնէր ալ և ալ տեղերից ստացւած, ի միջի ալլոց պ. Վ. Սունդուկեանից: Սաղումից վետոյ կարդացեց մի ոտանաւոր ևս: Պր. Բալաբանեանը ազտեղ և եթ հանդանակութեամբ հաւարեց 1025 ռուբլի ցօղուա բանատեղծի ընտանիքի:

Ռաֆայէլ Պատկանեանը, իբրև բանատեղծ յայտնի Գամառ-Քաթիլայ, իբր՝ վիպագրող՝ Ախտամերկեան և Միքայէլ Վաչեչեան, իբրև երգիծաբան՝ Սիւլիւկ ծածկանուններով, ծնւեց 1830 թւականին, նոյեմբերի 8-ին, հետևապէս նա վախճանեց մօտ 62 տարեկան հասակում, զուրս եկած լինելով զրական ասպարէզ սկսած 21 տարեկան հասակից չիսնական թւականների սկզբում:

Պատկանեանի մահը բոլորովին բնականապէս և իրարից անկախ կերպով յառաջացրեց այս խնդիրը թէ որտեղ պէտք է ամփոփել նորա մարմինը: «Մուրճ»-ը շատ բնական գտաւ որ նշանաւոր բանատեղծի մարմինը ամփոփելի հայութեան սրտին աւելի մօտ տեղում, մանաւանդ Էջմիածնի մօտերքում: Եւ պրոֆ. պ. Սալաթեանի հաղորդածին համեմատ՝ հանդուցեալի ցանկութիւնը եղած է Էջմիածնի գաւթում թաղել: Եւ ես կարծում եմ որ ժամանակով պէտք է յաջողացնել թէ Նալբանդեանի և թէ Պատկանեանի աճիւնները տեղափոխել դէպի Հայաստանի հողը:

Խոլերայի համաճարակը մի նոր զործունէութեան հրաւիրեց Աովկասի Հայոց Բարեգործական Ընկերութիւնը: Այդ ընկերութիւնը ուղարկեց Երևանի նահանգը՝ մի բժշկական մասնախումբ վարակած տեղերում ժողովրդին օգնութեան հասնելով՝ թէ արտահանելով, թէ բժշկելով և թէ նիւթապէս օգնելով:

Գործի կազմակերպութեան հետ մեր ընթերցողները կը ծանօթանան բժ. Բազրատ Նաւասարդեանցի «Մուրճ»-ի խմբագրութեանը հասցրած հետևեալ գրութիւնից, որ առաջ ենք բերում ամբողջապէս.

Օգոստոսի 26-ին Հայոց Բարեգործական Ընկերութեան խորհուրդը իւր արտաքոյ կարգի նիստում վճռեց կազմել մի առողջապահական մասնախումբ իւր կանոնադրութեան § 2, Էկէտի հիման վերայ և ուղարկել

Նրան Երևանեան նահանգը օգնութեան հասնելու ժողովրդին ներկայ թշառութեան — խոլերալի ժամանակ:

Մասնախումբը կազմելու և նրան կարևոր նիւթերը մատակարարելու համար խորհուրդը որոշեց զործ դնել 1200 ր., որը այս վերջին օրերս հասցրեց 1500 րուրու:

Մասնախումբը կազմելը և նրա ամեն կարիքը հոգալը խորհուրդը բարեհաճեց լանձնարարել ինձ, իբրև ընկերութեան պաշտօնակալ անձի և բժշկի:

Անպտեմբերի 4-ին Կաջուկեց ճանապարհ դնել բժշկական-առողջապահական մասնախումբը, որը կազմում էին հետևեալ անձինք. ա) բժիշկ Արիստոյմ Հալապետեան, որ ինքը երևանցի է և հրաւիրեցինք այս պաշտօնը ստանձնել — Բագուկից, ուր խոլերալի ժամանակ աչնուղ սանիտարական բժիշկ էր: բ) Պետրբուրգի կալսերական բժշկական ճեմարանի ուսանող Արտաշէս Շխեսանց. գ) Տիխիսու տոհմական պաաւաւոր քաղաքացի Արշակ Տէր-Գրիգորեանց: Երկուսն ևս խոլերալի ամբողջ ժամանակամիջոցին Տիխիսի կենդրոնական զեզինֆեկցիալի իջևանումն էին գործում, որոնցից վերջինը նոցն իսկ ձրիաբար: դ) Աւաղ Ֆելդշեր Միքայէլ Լեուխնեկո:

Մասնախմբի բոլոր ծախքերը Բարեգործական ընկերութիւնն է հոգալու, բացի բժշկինը, որին ուժիկից զուրս միայն ճանապարհածախք պէտք է տրւի: Բժիշկը ամսական ստանալու է 300 ր., բժշկական ուսանողը 100 ր. և ֆելդշերը 60 ր.: Արշակ Տէր-Գրիգորեանցը հրաժարեց վարձատրութիւնից:

Քաջ գիտենալով բոլոր գժարութիւնները, որոնք սպասում են առողջապահական մասնախմբին նորա ժողովրդի մէջ շրջելու և առողջապահական գաղափարներ տարածելու ժամանակ, մեր սոխաղակական պարտքն ենք համարում ի զիմաց Բարեգործական Ընկերութեան բերել մասնախմբի չարդելի անդամներին ոչ միայն մեր շնորհակալութիւնը և գովեստը, այլ և զարմանքը, որ նոքա չը զլացան ուրախութեամբ լանձն առնել ալդպիսի մի ծանր պաշտօն կամ չնչին վարձով և կամ բոլորովին անվարձ:

Մասնախմբին բժշկական հրահանգ է տւած ուսումնասիրել Երևանեան նահանգի և Ղարսի երկրի առողջապահական դրութիւնը աչն տեղերում, ուր խոլերան գլխաւորապէս բուժն է դրել, բժշկել հիւանդներին և նիւթական, ըստ չափու կարողութեան, օժանդակութիւն անել չքաւոր հիւանդներին կամ նոցա զերդաստաններին:

Մասնախմբին չատկապէս լանձնարորած է և ալժմ էլ չպտնում ենք, որ աչն քաղաքներում, ուր կան Ընկերութեան Տեղական Վարչութիւններ, ինչպէս են Երևան, Վաղարշապատ, Նախիջևան, Ալեքսադրապոլ, Նոր-Բալաղիղ և այլն, ցանկացող բանիմաց անձինք վաղօրօք կարող են զիմել ալ Վարչութիւններին և առողջապահական մասնախմբեր կազմել, որպէս զի խորհրդից ուղարկած մասնախումբը վիշեալ քաղաքները մանեւուց կա-

րողանալ նոցա օգնութիւնը և իւր ուժը բազմապատկել և նոցա գործու-  
նէութեանը մի որոշ ուղղութիւն սալ:

Արարի տեղական առողջապահական մասնախմբերը կարող են հե-  
տամուտ լինել իրանց գործին և ապագայում, քանի որ վարակիչ հիւան-  
դութիւնը սպառնում է ձմերել մեր երկրում:

Բարեխնամ կառավարութեան օգնութիւններով արդէն բաւականին  
օժանդակած է մեր երկիրը, բայց այլ չի արգելում ժողովրդին աջակից  
լինել կառավարութեանը: Ուտի՛ եթէ ժողովուրդը ցանկանար աջալիսի  
մի անօրէնութիւն, որն աչսօր արած է Բարեգործական Ընկերութիւնը  
Նրաննեան նահանգի և Ղարսի երկրի վերաբերմամբ, անօրինել և այլ  
նահանգների վարակած զիւղերի համար, պէտք է նա Ընկերութեանը  
նիւթապէս օժանդակէ:

Հաւատարմատար խորհրդի, Նախագահ ընդհ. ժողովի՝

Բժշկ. Բ. Նասասարգեան:

Ձի կարելի Հայոց Բարեգործական Ընկերութեան այս նոր ձեռ-  
նարկութեանը համակրութիւն չը չայտնել: Յաւելով որ չենք կարող  
բժշկական մասնախմբի նամակները հրատարակել, որ հասցրած են  
«Մուրճ»-ի խմբագրութեանը բժ. պ. Նասասարգեանի կողմից, ես  
օգտուում եմ զէպքից հետեւեալ նկատողութիւնը անելու համար:  
Ժողովրդական բժշկականութեան և մանաւանդ առողջապահութեան  
գործը մէկն է ամենակարևոր կուլտուրական գործերից, որ ունենք  
կատարելու առհասարակ: Ես չեմ կարծում թէ ժողովրդական  
գրքոյկները առողջապահութեան և բժշկականութեան մասին կա-  
րողանան հասնել իրանց նպատակին, եթէ միայն մեզանում չը կազմա-  
կերպի առողջապահական գործը: Ի նկատի առնելով մեծ անբա-  
ւարարութիւնը գաւառական և նահանգական բժիշկների կողմից  
ուած օգնութեան, պէտք է որ հասարակութիւնը ինքը լրացնէ  
եղած պակասը, կազմակերպելով բժշկական խմբեր ժողովրդի հա-  
մար ոչ միայն խոլերայի էպիդեմիայի ժամանակ, այլ կուլ-  
տու համար մեր երկրում սովորական վարակիչ հիւանդութիւնների  
զէմ, որոնք անզգալի կերպով անչափ աւելի մեծ զոհեր են տանում  
մանաւանդ երեխաների միջից: Հայոց Բարեգործական ընկերու-  
թեանն է պատկանում սկիզբ դնել մի այդպիսի կազմակերպութեան,  
մշտապէս պահելով մի բժշկական-առողջապահական խումբ, որի  
գործը կը լինէր շարունակ շրջել գիւղէ գիւղ, ոչ միայն էպիդեմիա-

ների, այլ և սովորական ժամանակները: Այն, ինչ կարող են կատարել ժողովրդի մէջ կենդանի և զործին նւիրւած հասկացող մարդիկ, երբէք ապա՞ զիրը չի կարող անել. և վերջինս կարող է բեղմնաւոր լինել միայն աւաջինների շնորհիւ:

Ս. Էջմիածնի Սինոդի նորերումն արած մի վճիռը ամուսնական բազմութիւն դէպքերի առիժով կուլած է ընդհանուր նշանակութիւն ստանալու: Իրողութիւնը սա է, որ խնամէական 5-րդ աստիճանի պատկների վերաբերմամբ կոնսիստորեաների կողմից Սինոդին տւած 81 յայտարարութիւնների առիժով Սինոդը ձայների բազմութեամբ վճռեց յայտարարութիւններում չիշւած 81 անձերին թոյլ տալ ամուսնանալ իրանց նշանածների հետ խնամէական հինգերորդ աստիճանում:

Յայտնի է որ աիրող կարծիքը սա է թէ մեր եկեղեցական օրէնքներով խնամէութեան 5-րդ աստիճանով ամուսնութիւնները չհաս են, հեռեւապէս անթոյլատրելի: Բայց Սինոդը իւր պատճառաբանութեան մէջ ապացուցանում է որ այդ հին օրէնքը արդէն շատ անգամ խախտել է. Գէորգ IV կաթողիկոսը 1879, 1880 և 1881 թւականների ընթացքում 5 աստիճանի խնամէութեան պատկներ թոյլ է տւել 62 դէպքերում, նորա մահից յետոյ՝ 68 անգամ, Մակար կաթողիկոսի ժամանակ 95 անգամ, իսկ նրա մահից յետոյ՝ 1891 թւին 24 անգամ: Սինոդից թոյլ տւած ընդհանուր պատկների թիւը 5-րդ խնամէութեան աստիճանով Գէորգ IV և Մակար կաթողիկոսների և նոցա մահից յետոյ դահի պարապորդութեան ժամանակ՝ է 249: Սինոդը զոնում է որ «այդ թոյլաւութիւնը ժողովրդի մէջ օրինակ դառնալով, այժմ անհնարին է մերժել այդ աստիճանի պատկները, որից մեծապէս վնաս է հասնում եկեղեցուն ըստ բարոյականին»:

Մենք կը նկատենք այդ առիժով որ ոչ թէ այդ թոյլաւութիւններն են սովորութիւն դարձրել 5-րդ աստիճանի խնամէական պատկներ կապելու ձգտումը, այլ ընդհակառակը ժողովրդական զգացմունքը անբնական չհամարելով այդպիսի պատկներ, այնքան ջանախ դէպքերի տեղիք է տւել, որ ստիպել է հողև որ իշխանութեանը ջանուն մարդ-

կութեան շեղել հնաւանդ և, ինչպէս պրակտիկան ցոյց է տալիս, նաև հնացած օրէնքներից: Այդպիսի դէպքերում ժողովրդի զգացմունքը ամենաճիշդ ուղեցոյցն է օրէնսդրութեան. եթէ ժողովրդական զգացմունքը ոչինչ չի դանում այդպիսի պատկերի դէմ, իսկ միևս կողմից գիտութիւնը և պատմութիւնը ոչ մի դրական ապացոյցներ չեն բերում նոցա վնասակարութեան մասին, — ամենախելացին ժողովրդական զգացմունքին հետևելն է:

Լ Ո Ւ Ս Ի Ն Ի:

### † ՌԱՓԱՅՅԵԼ ՊԱՏԿԱՆԵԱՆ

Ռուսահայոց մտաւոր վերածնութեան հիմնադիրներից և աշխատակիցներից մէկն էլ նրնջեց իւր ընկերների հետ—Խ. Աբովյանի, Ս. Նազարեանի, Մ. Նալբանդեանի, Ռաֆիի հետ. չափտեսականութիւն չեց և Գամառ-Քաթիպան, որ 40 տարի ձեռքից չը ձգեց գրիչն ու քնարը, կըրթելու և հրահանգելու իւր ազգը, որին սիրում էր բուռն սիրով, իւր հոգու բոլոր ուժով:

Պատկանելով այն ընդունակ և հանճարաւոր Պատկանեան գերդաստանին, որ արդէն աւել էր ազգին Սերովբէ վարժապետին ձերունի Գարբիէլ քահանային, պրոֆէսոր Քերովբէ Պատկանեանին՝ Ռափայէլ Պատկանեանն էլ փոքր հասակից ինքն իրան նւիրեց ազգի կրթութեան դործին և զեռուանող ժամանակ, 50-ական թւականների սկզբին՝ հնչեցրեց իւր քնարը, և հէնց այդ կանուխ ժամանակից նա որոչեց այն շաւիղը, որով պիտի ընթանար իւր ամբողջ կեանքում: Իւր նախընծալ մի երգում «հեռացել եմ իմ մալրենի աշխարհից» նա ասում է՝

«Արդէի թողնել այտեղ մի արձան,  
Որ դարէ դար սընար ամուր անկործան:  
Նա երգեցի երգ ոլորուն ու անուշ,  
Իմ քընարի ձայնն էր մեղմիկ ու քընքուշ:  
Միթէ այնքան անգութ կը լինի լեռա գետ,  
Որ անունըս անգամ կանէ նա անհետ»:

Այս քանի մի տողը բաւական են բնորոշելու Ռ. Պատկանեանի կորովի կամքն և հաստատամտութիւնը. զեռ. հազիւ 20 տարեկան՝ նա միտքը դնում է «ոլորուն և անուշ» երգերով կանգնել իրան անկործան արձան, որ դարէ ի դար մնար, որպէսզի իւր անունը և չիշատակը չը կորչեն: Այս նպատակը գրեց իրան պատանի Ռափայէլը և 40 տարի անընդհատ, առանց

չեղևելու հետեց նորան: Նորա քնարի եղբերգական և մեղամարտ ձախը հետզհետէ համարձակեցաւ և դարձաւ պատգամախօս փող, որ հնչում էր բոլոր հապառնակ աշխարհներում և սրտընդոտ սթափեցնում էր նիրհող ժողովուրդը: Նորա բնածին տաղանդն հետզհետէ դարգացաւ և եղական դարձաւ, իբրև հաշ բանաստեղծի, և ալսօր, նախելով Ռ. Պատկանեանի 40-ամեայ գրական գործունէութեան վրայ՝ համարձակ կարող կենք ասել, թէ նա մեծ բանաստեղծ էր, և առաջին բանաստեղծը Ռուսահայոցս մէջ:

Ռ. Պատկանեանի տաղանդն եղական է, ասացի: Գեղարեստագէտի ամենամեծ զաղումիքը, ամենաբարձր կատարելութիւնը միշտ երևում է նորա գրած քների մէջ, որչափ էլ սոքա մանր լինէին: Նա զիտէ զգացմունքին տալ լարմար բառեր, աչնպէս որ բառերը ճիշտ թարգման լինէին իւր զգացման և աչն չափով ազդէին ընթերցողի վերայ, որ չափով որ զգացել էր ինքը հեղինակը գրելիս: Աւելորդաբանութիւն, չափազանցութիւն գոյնների մէջ՝ զուք կրբէք չէք նկատի նորա գրած քներում, նոքա բնական են, պարզ, թեթև, աչնքան բնական, որ զուք կարծում էք տեսնել և շօշափել նկարագրածը, աչնքան պարզ, որ ձեր կրակազութեան մէջ մարմնանում է նկարագրած ոգին, միտքը: Առավուռն երևակաութիւն, ճիշտ ըմբռնողութիւն, խոր ազատութիւն և լեզուի հարուստ պաշար, որից նա հեղինակաբար առնում էր բոլոր պէտք եղած նիւթերը՝ իւր գեղարեստական շէնքը շինելու համար,— ահա Գ. Քաթիպալի հոգու լստկանիչները: Բարձրագոյն ուսումնալարերում, ուր շատ ընդարձակ է մտածելու և տեսողութեան հորիզոնը՝ նա իրան իւրացրեց լուսամիտ գաղափարներ, աւագ հաշեցակէտ ստեղծեց և վերադառնալով իւր ազգակիցների մօտ՝ աչն լուսամիտ բարձր գաղափարներն սխտեց արծարծել ժողովրդի մէջ երբեմն գողտրիկ երգերով, երբեմն սուր երգիծաբանութիւններով: Ծնորձիւ բարձր կրթութեան՝ նա շատ լաւ ըմբռնեց ժամանակի ոգին, աչքի պէտքերն ու իրձերը, նման մի մարդու որ կանգնած լինելով բարձր լերան գագաթին՝ արդէն տեսնում է հեռու արևելքում արշալոյսը բացւելիս, մինչդեռ ձորում բնակող ամբոխի համար երկնքում միայն թանձր խաւար է տիրում:

Արպիտի բարձրութիւնից, ճիշտ գուշակելով ապագան՝ նա հնչեցնում էր իւր լարերը, ոգևորում լսողներին, զարթեցնում թմրածներին, լոյս ազդում լուսահատներին, կեանք ներշնչում մեռածներին:

Ապառազինւած գիտութեամբ, ներշնչւած բուռն հպրեմասիրութեամբ, առատ օժտւած աստուածային հրով՝ Վամառ Քաթիպան քառասուն տարի ազլի մտաւոր և բարոյական անդատմանի անխոնջ մշակը դարձաւ: Իբրև շատ նուրբ ծանրաչափ՝ նա նախազգում էր ժողովրդի ցաւերն ու պէտքերը, և նոյս դարման հալթալթում իւր ազդու գողտրիկ

երգերով: Վեռ աչն ժամանակ, երբ մեղանից շատերը դեռ չէին ծնել, երբ խոր խաւար էր տիրում հալոց մտաւոր և բարոյական հորիզոնի վրայ, երբ նախընթաց երկար մթութեան դարերը, արշաւանքները, բռնութիւնները ճնշել էին հալի ոգին, արմատացրել էին ստրկութիւն կեղծաւորութիւն, արծաթասիրութիւն, երբ մեծ էր համարուած արտաքին ճոխութիւն ունեցողը, երբ սարսափելի հալածանքների էր ենթարկուած ազատ մտածող և ազատ խօսող անփորձ պատանին, երբ եղած դրութեան դէմ ձախ բարձրացնողը վտանգաւոր սրբապիղծ էր համարուած—չ'ստուական թակահնները սկզբին, մտքի գերութեան տարիները—Ռափ. Պատկանեան առաջին անգամ հնչեցրեց իւր «տրտուն և անուշ երգերը», որոնք իրանց թարմ մտքերով, կենդանի նկարագրութեամբ, անուշ, հասկանալի, հնչուն բառերով գրաւեցին ու գիւթեցին ամենին. ինչպէս վառած ծարաւի գետինը ծծում է անզգաբար երկնատեղ կաթիլները՝ նույն ծարաւով կլանում էր աչն ժամանակի թարմ սերունդը Վամ. Քաթիպալի սիրուն տողերը, տողերի նետ մտքերը, այդ մտքերը սեփականում էր իրան—աչն աստիճան նոքա գիւրամարս, համոզիչ էին—և այդ նոր սերունդը նոր մտքերով էր տողորում, լուսամիտ, աղատական, աչնիւ, գեղեցիկ մտքերով:

Երկու գլխաւոր մասերից է բաղկանում Վամ. Քաթիպալի բանաստեղծական գործունէութիւնը. քանդող և ստեղծող: Առաջին մասում նա հարւածում է ազգի պակասութիւնները, տապալում է զարաւոր նախապաշարունակներն և սխալ հալեացքները, և աչս մասում որչափ զարմանալի է նրա տաղանդը, ճիշտ, մարդավայել գաղտփարն աչն խաւար ժամանակում, որից նա ամրոցը գլխով բարձր էր կանգնած՝ գուցէ աւելի զարմանալի լինի նրա համարձակութիւնը, անաչառութիւնը, վտահալութիւնը. Նա անխնայ, անվախ հարւածում է կեղծ ազգասիրութիւնը, կեղծ կրօնաւորութիւնը, կեղծ, արտաքուստ կրթութիւնը, շռալ և անպիտան աղաչական կեանքը, բռնի ամուսնութիւնը, հեռն և նախանձը, ազահութիւն ու արծաթասիրութիւնը, ազգատեցութիւն և անտարբերութիւնը գէպի ազգի պիտոյքները: Այս պակասութիւնների դէմ, որոնք տիրապետում էին հալոց մտքերին ու սրտերին աչն ժամանակ՝ նա ուղղեց իւր հօր երգերը («Ռ՞ի է հալը»), «Յուպը ձեռին»), «Տեղը եկա»), «Շուշան շուտով»), «Շլինքը արեաւ»), «Ղուսադէմին աղբւրի մօտ»), «Ռե-Մրու»), «Մեկնից շատ առաջ»), «Ռ՞նչ ես ջարդում»), «Ռեռ չի գրած առաջ գու լու միաք արտ»), «Ամիրաչ»), «Հալերուս թուքը»), «Հալերուս բաղձանքը» և այլն): Հարւածելով աչս պակասութիւնները, որոնք բռն էին դրել մեծամեծների, ազաների և հօրների մէջ՝ նա հէնց դորանով ցուց էր տալիս և ուղիղ ճանապարհը գէպի առաքիներն և վաղելուչը: Մեկ դիւրին է թվել նորա գրածները, նրա հարւածած պակասութիւնները. բայց սրբափ դժւար էր աչն խաւար ժամանակ իրագործել այդ ամենը. տգիտութեան, եսամոլութեան, աղաչու-

Քեան դուռը ամբարտակի դէմ կուել զրշով, չը վախենալ հալածանքից, չընկրկել խաւարի անհուն ուժի առաջ: «Եթէ մի գիւղում բոլորը կուր են՝ դու էլ քո աչքերը հանիր» ստում է ժողովրդական առածը. հաջ ժողովրդի դաւանանքն է եղել համակերպել չըջապատող հանգամանքներին. և հասարակ մահկանացուն համակերպում էր և համակերպում է հանգամանքներին: Միաչն արծւէթուչ մաքերն են, աղատ ուղիները, որ խորտակում են այդ հանգամանքների կաշկանդող շղթան և դուրս են թռչում և աշխատում են իրանց վետեկց քաշել հանել ուրիշներին ևս այդ կուրութեան աշխարհից: Այսպիսի սակաւաթիւ ընտրեալներին էր պատկանում և մեր հանգուցեալ մեծ բանաստեղծը: Նա ոչ միաչն իւր աչքերը կամու չը կուրացրեց, խոռնկ չը ծխեց հզօրների առաջ, չը քաջակերեց նոցա պակասութիւնները՝ այլ աշխատեց ուրիշ կուրերի աչքերն ևս բանալ, երեսուր տալ կեղծաւորների և արատաւորների պակասութիւնները:

Նորա քնարի ստեղծագործական մասը գրեթէ ամբողջապէս նւիրւած է հաջ ազգայնութեան, ազգի ինքնաճանաչութիւնը զարթեցնելու, տոյսեր արծարծելու, ոգևորելու:

Այս մասում Գ. Քաթիպալի տաղանդի բոլոր մեծութիւնը արտաբայւում է և համոտում վսեմ կատարելութեան: Բոլոր նրա մտաւոր ըզուճակութիւններին աչտեղ խառնել է և բուռն հայրենասիրութիւն, որ դորանում է նորա ամեն մի տողից, որ գրաւում և գերում է կարգացողին, երբեմն արտասուք հասցնելով նորա աչքերից, երբեմն աւուճի արիւտթիւն ներշնչելով, բաց միշտ սիրեցնելով հայրենիքը, բոլոր նորա վշտերով և ցաւերով: Այս մասում նորա գրուիւ-գործոցը «Մալր Արաքսի»-ն համարում է մի հրաշակերտ առհասարակ բանաստեղծական գրականութեան մէջ:

Ռ. Պատկանեան բացի բանաստեղծութիւնից ունեցել է և ուրիշ տեսակ գրականական գործունէութիւն՝ վիպասանական, երգիծարանական և Սիւլիւկ կեղծանուններով: Եթէ վիպասանական գրած քները (Նս նշանած էի, Չախու և այլն) արտաբայւում են նոյն հանճարը, ժողովրդի կեանքի հմուտ գիտութիւն և կենդանի ճիշտ պատկերը՝ սակայն չենք կարող նոյնն ասել և երգիծարանական գրած քների մասին, որոնք զրպարտագրութեան պամֆլետի աւելի նմանութիւն ունեն, և որոնք հեղինակից սուաջ մեռան:

Անք սակայն չարգում և պաշտում ենք Ռ. Պատկանեանի վիշատակը իբրև ազգային մեծ բանաստեղծի, որ մեր բարոյական կրթութեան, ինքնաճանաչութեան, ինչպէս և գրականութեան վերաջ անջնջելի և մեծ ազդեցութիւն ունեցաւ: Չարիզանցութիւն արած չեմ լինի, եթէ ասեմ, թէ այժմեան դործող բոլոր սերունդը Գամառ Քաթիպալի աշակերտն է եղել աւելի կամ նւաղ չափով: Գեւ փոքր հասակներումս, ուսումնարանի նստարանի վերաջ, մենք զմալրամբ սովորել ենք նորա երգերը և ոգևորութեամբ կրկնել. նոքա ազնւացրել են մեր սրտերը, ոգևորել են ազգային

սիրով, կրթել են մեր զգացմունքները: Այդ բարի սերմերն ընկնելով մանկական զգալուն սրտի փափուկ հողի վերայ՝ աճել ու ծաղկել են և սրտաբերել, արդիւնաւորել և եթէ մինք ճիշտ չափեր ունենալինք որոշելու քանակութիւնը այդ ազդեցութեան, որ Գ. Քաթ. ունեցել է մեր վերայ՝ անշուշտ բաւական մեծ պէտք է լինէր նա ամեն մէկիս մէջ, և անհուն կը լինէր՝ բոլոր հաջ սերունդին մէջ, որ սփռւած է աշխարհի չորս կողմերը:

Սակայն բարոյական ուժն է, որ անասնական շրջանից մեղ մարդ է դարձնում, ազգային զգացմունքն է, որ մարդկային ցեղի խմբերը կապում է միմեանց հետ իբրև համազգակիցներ, իբրև ազգային միութիւն և Գ. Ք.-ի ազդեցութիւնը մեզ բարոյապէս կրթելում, մեզ ազգային լինքնաճանաչութիւն պարզեցում՝ շատ մեծ է: Եթէ, մի բանաստեղծի խօսքով՝ մարդը «թագաւոր է և ստրուկ, որդն է և Աստուած»՝ եթէ մտաւոր և բարոյական կրթութիւնը մեզ ստրուկի և որդնի դրութիւնից մեծացնում և բարձրացնում են մինչև թագաւորականութիւն և աստուածանմանութիւն՝ այս անդնահատելի փոխակերպութիւնը մեր սերնդի մէջ մասամբ Գ. Քաթիպայի դործն և արդիւնքն է: Նա մի մարդ չը ստեղծեց, նա ամբողջ մի սերունդ կրթեց, ազնւացրեց, և դեռ քանի սերունդներ ճորան պէտք է աշակերտեն անմիջապէս և աշխատանքի սերունդի միջնորդութեամբ:

Այն հուրը, որ նա վառեց իւր հայրենասիրական երգերով՝ արծարծեց ամեն կողմ, հրդեհեց բոլոր հաջ սրտերը. և ո՞վ կարող է ասել, թէ նա կը հանգչի առանց հետեանքի...

Գրականութեան մէջ ևս Գ. Ք. ին է վերաբերում աշխատանքի վրական լեզուի անդրանիկ մշակ և հիմնադիրներից մէկը լինելու պատիւը: Գեռ չէր սկսել «Հիւսիսափայլը»՝ որ դուրս եկան Գ. Ք.-ի բանաստեղծութիւնները, որոնք իրանց սահուն գոգոտրիկ լեզուով սիրելի դարձան ընթերցողին: Աշխարհաբարը այն ժամանակ դեռ տատանող վիճակի մէջ էր գտնուում, ինչպէս հազիւ ոտք ելած մի երեխայ: Գրաբարեանների ստուար բանակը պատրաստ էր չարձակելու և խանձարուրին մէջ խեղդելու այլ ճորածին բազմ վտանգաւոր ախտեանին: Եւ ահա Գ. Ք. իւր տաղանդաւոր և գեղեցիկ բանաստեղծութիւններով ահագին զարկ է տալիս այդ լեզուի առաջադիմութեան և ոչ թէ՛ խօսքով, այլ գործով չազիմանակ է տանում: Այդ երգերը աչնուհետև սիրելի են դառնում բոլոր հասակի հայերին, փոքրերից սկսած մինչև երիտասարդներն ու ծերերը: Նոցա օրինակով ուրիշ շատերն սկսում են գրել, հետեւելով իրանց մեծ ուսուցչի շաւղին. այս 40 տարեաց ընթացքում երեցած և երեցող բանաստեղծներից և ոչ մէկը զերծ չէ մնացել Գ. Ք.-ի բարերար և հրահանգիչ ազդեցութիւնից: Նա ուստահալոց քնարական լեզուն ստեղծեց և ազգային բանաստեղծութեան հիմնադիրն եղաւ:

Այս բազմատեսակ անդնահատելի ծառայութիւնները, որ Ռ. Պատ-

կանեան մատուցել է ազդին և դրականութեան՝ անմահացնում են նորա անունը և նրան դասում ընտիր հպակազուհեների Պանթեոնի մէջ: Այն արձանը, որ եռանդուն պատանին կուգէր կանգնեցնել, սրպէս զի լուրանունն և չիշատակը աշխարհից չը ջնջեն՝ այն, նա կանդնեց, այնպիսի արձան, որ, հռովմայեցի երեւելի բանաստեղծի խօսքերը կրկնելով՝ «պղնձից աւելի մնալուն է և աւելի բարձր քան բուրգերի երկնադիտակ հասակը. արձան, որ չեն կարող կործանել ոչ մաշող անձրեւը և ոչ խստաշունչ հողմերը, ոչ անթիւ անհամար տարիների շարքը և ոչ ժամանակի ընթացքը»:

## ՍՏ. ՄԱԼԽԱՍԵԱՆ

## ՄԱՐԴԱԲԱՆՈՒԹԵԱՆ ՄԻՋԱԶԳ. ՀԱՄԱԺՈՂՈՎԸ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ

Օգոստոսի 1-ին Մոսկվայի համալսարանում հանդիսաւոր կերպով բացեց միջազգային համաժողովներից առաջինը—նախապատմական հնագիտութեան և մարդաբանութեան համաժողովը (Международный Конгресс доисторической археологии и антропологии).<sup>1)</sup>

Խօլէրայի պատճառով, օտարազգի գիտնականների թիւը այդ համաժողովում, որ վերջացաւ օգոստոսի 8-ին, շատ քիչ էր (15—20 հոգի): Ահնուամենայնիւ եւրոպական գիտութիւնը ունէր Մոսկւայի համաժողովում մի քանի խոշոր ներկայացուցիչներ, ինչպէս օրինակ Ռուդոլֆ Ֆիրխտով, Է. Շանտր, Վոլման, Սերջի և այլն, որոնցից Ֆիրխտովը ինչպէս չափոնի է վաբելում է համաշխարհային հուշակ իբրև բազմակողմանի գիտնական և առաջնակարգ հասարակական գործիչ:

Ֆիրխտովը իւր նոր գիտնական գաղաարներով համարեա լեզափոխութիւն է դցել բժշկական գիտութիւնների մէջ: Նա առաջնակարգ բժիշկ է, երեկի անատոմ, ֆիզիօլոգ, մարդարան, ազգագրագէտ և հնագէտ: Բացի այդ՝ նա Գերմանիայի ազգային ժողովում ազատամիտ կուսակցութեան ամենատաղանդաւոր ու ամենանուանդուն անդամներից մէկն է: 1848 թվի շարժումների ժամանակ ամենագործունեալ լեզափոխականներից մէկը Ֆիրխտովն էր: Յեղափոխութիւնը անջաջող եւր ունեցաւ և Ֆիրխտովը Պրուսիայից փախաւ Բաւարիա, ուր Վիլհելմուրգի համալսարանը նրան առաջարկեց պաթոլոգիական անատոմիայի ամբիոն: 1856 թ. Ֆիրխտովը հնարաւորութիւն ստացաւ վերադառնալ Բերլին և նորից դասախօսութիւններ կարդալ ահնութիւ համալսարանում, ուր նա պրոֆեսսոր էր նշանակած 1848 թվի շարժումներից առաջ (1847 թ.): Այդ ժամանակից մինչև այժմ Բերլինի համալսարանի ուսանողները միշտ բախտ են ունեցել լսել մեծ

<sup>1)</sup> Այս 11-րդ մարդաբանական համաժողովն է: Տասերորդ համաժողովը կապացաւ Պարիզում վերջին համաշխարհային ցուցահանդէսի ժամանակ (1889 թ.), ինններորդը Լիսսաբոնում 1880 թ., իսկ առաջինը Նեշատելում 1866 թ.:

ընագէտի դասախօսութիւնները: Այս տարի Ֆիրխովին Բերլինի համալսարանական խորհուրդը ընտրել է համալսարանի վերատեսուչ (ռեկտոր) և, թէև պալատական շրջանները դէմ էին՝ Ռէլիստագում ազատամիտ կուսակցութեան գաղափարները համար մարտնչող գիտնականի ընտրութեանը, չորս կաշ, որ Վլիչեմ կապորը հնարաւոր չի համարիլ չը հաստատել համալսարանական խորհրդի ընտրութիւնը<sup>1)</sup>: Անցեալ տարի ամբողջ քաղաքակիրթ աշխարհը տօնում էր դարիս այդ ամենամեծ զաւակներից մէկի եօթանասնամեակ չորեքեանը (Ֆիրխովը ծնւել է 1821 թ.): Հին և նոր աշխարհում ինչքան որ լուսաւոր գրուիւններ կալին՝ բոլորն էլ ալբ օրը խորին պատկառանքով խոնարհուում էին հանճարաւոր չորեքեարի առջև, ինչքան որ կենսակից սրտեր կալին՝ բոլորն էլ բարախում էին չուղած ալն սքանչելի բարոյական տեսարանից, որ ներկայացնում է այդ վեհ ծերունին:

Տասնիններորդ դարը առհասարակ սկեպտիկականութեան, չուեստութեան դար է համարում: Ֆիրխովի պէս մարդիկ, որոնց հոգին խեղքի, սրտի ու կամքի՝ զարմանալի ներդաշնակ դարգացումն է ներկայացնում, ամենապիւրճախօս հերքումն են այդ անհիմն կարծիքի: Ալն դարը, որ ծնեցրել է Պլադաստրներ ու Ֆիրխովներ, իրէալական ժամանակների արշաւույսի սկիզբն միալն կարող է լինել:

Էրնեստ Շանտրը անձանօթ չէ կողկասցիներին: Նա երկու անգամ ճանապարհորդել է մեր երկրում: Իւր առաջին ճանապարհորդութեան ժամանակ (1879 թ.) արած մարդաբանական հետազոտութիւնների հետևանքները նա սպել է՝ «Recherches anthropologiques dans le Caucase» վերնագիրը կրող մեծածաւալ գրքում: Երկրորդ անգամ պ. Շանտրը ճանապարհորդել է Անդրկովկասում 1890 թ.: Ալդ ուղևորութեան ժամանակ նրան ուղեկցել է իւր ամուսինը, որ Ֆրանսիա վերադառնալուց վտոջ հրատարակել է իրանց ճանապարհորդութեան նկարագրութիւնը (տիկ. Շանտրի ալդ գրած քը թարգմանօրէն սպելց «ХУДОЖНИКЪ» թերթում): Պ. Շանտրը ալժմ մարդաբանութեան պրոֆեսոր է Վիօնի համալսարանում, իսկ առաջ Ֆրանսիայի գիւղատնտեսական ճեմարաններից մէկում երկրաբանութեան դասախօսութիւններ էր կարդում: Նրա մասնագիտութիւնը ալժմ համարում է կողկասի կամ աւելի Անդրկովկասի ուսումնասիրութիւնը մարդաբանական և հնագիտական կողմից:

Մոսկուալի մարդաբանութեան ու նախապատմական հնագիտութեան համաժողովի 8 նիստերում (համաժողովը փակւեց օգոստոսի 8-ին) բաւական ղեկուցումներ կարդացւեցին, բայց ալ բոլոր ղեկուցումները հետաքրքրւեցնել «Մուրճ»-ի ընթերցողներին չեն կարող, ուստի ես կը խօսեմ նրանցից միալն մի քանիսի մասին:

<sup>1)</sup> Արդէն հատուաւած է:

Մանօթ. Խմբ.:

Բնդհանուր հետաքրքրութիւն է ներկայացնում Ֆիրխովի ճառը «Նախապատմական հնագիտութեան և մարդաբանութեան միջազգային համաժողովի գիտնական խնդիրները մէջ կատարած փոփոխութիւնները մասին», որ նա կարդաց համաժողովի հանդիսաւոր բացման օրը, իսկ մասնաւոր հարցերի նւիրած զեկուցումներից հաջընթերցողների համար հետաքրքիր կարող են լինել է. Շանտրի կարդայած զեկուցումները:

Միջազգային նախապատմական համաժողովը, ասաց Ֆիրխովը, սկիզբն առաւ այն ժամանակ երբ զանազան նշանաւոր գիւտեր եղան մարդաբանութեան մէջ և երբ վերջապէս Գարլինի թէօրիան հիմն ի վեր լեղաշրջեցին բնագիտական աւանդութիւնները: Շատ բնական է որ սկզբում համաժողովը զբաղւում էր լայն խնդիրներով. «Նա պէտք է ուսումնասիրէր եւրոպական բոլոր երկրները, որպէս զի կարողանար հաւաքել մարդու նախապատմական հետքերը, որպէսզի գրաւէր բոլորի ուշադրութիւնը մարդկային քաղաքակրթութեան ծագման ու շաւիղների վրայ և, որ ամենակարևորն է, որպէս զի բանար մարդու ծագման ու նախնական օրորանի խորհրդաւոր գաղտնիքը սքողող վարագույրը: Այն ժամանակ զարթեցրած հարցերից շատերը այժմ վերջնականօրէն վճուած են. մենք գիտենք օրինակ, որ մարդս գոյութիւն է ունեցել չորրորդական շրջանում, <sup>1)</sup> որ նա երկար դարեր

<sup>1)</sup> Երկրիս երեսին և ծովերի ջրերում զանազան ժամանակներում եղած օրգանական արարածների մնացորդները պահպանւել են երկրի կեղևում: Երկրաբանների հետազոտութիւնները ցուց են տալիս, որ երկրիս կեղևի զանազան շերտերի հանածոները (вскопаемые) շատ խիստ կերպով տարբերում են իրարից, որից պէտք է եզրակացնել թէ տարբեր ժամանակներում օրգանական արարածների տարբեր տեսակներ են գոյութիւն ունեցել: Երկրի կեղևը իւր բազմազարեան պատմութիւնն ունի: Նրա վիթխարի էջերում երկրաբանները կարգում են այն փոփոխութիւնները, որոնք հարիւրաւոր դարերի ընթացքում կատարւել են, չաջորդաբար կերպարանափոխելով երկրի մակերևութը և նրա վրայ տիրող օրգանական կեանքի պատկերը: Գուրս գալով անկենդան, մեռած վիճակից, երկիրս չաջորդաբար անցել է մի քանի շրջանների միջով: Գարխո նշանաւոր բնագէտ Լ. Ազարասիսը այսպէս է բաժանում ու ստորաբաժանում այդ շրջանները. — Նախնական էպոխա կամ ձկնեքի դար, որ ստորաբաժանւում է սիլուրեան և դետրեան շրջանների, երրորդական էպոխա կամ սոդոլենների դար, որ ստորաբաժանւում է քարածխային, պերմեան, տրիասեան, իւրեան և կաւճային շրջանների, երրորդական էպոխա կամ կաթնասունների դար, որ ստորաբաժանւում է էօցենեան, միօցենեան ու պլիօցենեան շրջանների. և չորրորդական էպոխա (четвертичная эпоха, époque quaternaire) կամ նորագոյն դար, որին պատկանում է մարդս և որի սկզբնաւորութեան ժամանակից մինչև այժմ, թէև նրա տեղութիւնը հարիւր հազար տարիներով է հաշւում, փոփոխութիւն չի եղել երկրի ընդհանուր ձևակերպութեան մէջ և ոչ մի կարևոր փոխաշրջումն անդի չի ունեցել օրգանական արարածների կեանքում: Ծան. լօղածագրի:

եղել է ոգորմելի ու անօդնական վիճակի մէջ, երբ քարերը, փայտը և անասունների եղջիւրներն ու ոսկորներն էին կազմում նրա զէնքն ու միակ դործիքները»...

Բայց շատ ուրիշ հարցեր, ի միջի ալոց, մարդուս ծագման և մարդկային հոււուութեան օրօրանին վերաբերեալ հարցերը շատ քիչ են մօտեցել իրանց լուծմանը:

Մարդաբանական գիտութեան մէջ շատ նշանաւոր փոփոխութիւններ են կատարուել: Այլ փոփոխութիւնները չէին կարող չ'ազդել այն հարցերի վրայ, որոնցով զբաղուում է մարդաբանական համաժողովը:

Գիտնականները այժմ հնարաւոր չեն համարում ընդունել թէ մարդս արդէն ապրելիս է եղել երրորդական էպոխայում և բոլորովին անհաւանական են համարում, որ մարդկալին ցեղը այդ դարումն է սկիզբն առել: Մարդուս կապիլի կամ մի ուրիշ անասունի հետ կապող սրկաս օղակը գտնելու բոլոր փորձերը մինչև այժմ ի զուր են անցել: Մի ժամանակ Վարլֆոգտը և նրան հետևելով շատերը պնդում էին թէ փոքրագլուխ մարդիկ (микрочофалъ) ատաւիզմի շնորհիւ չառաջացած կապիկանման կենդանիներ են. բայց այժմ գիտնականները զէմ են այդ կարծիքին, որովհետև բոլորն էլ համազուտ են, որ փոքրագլխութիւնը ալլասեոտութեան արտաբանական (патологический) արդիւնք է և ոչ թէ նախնիքանմանութեան հետեանք: Այժմ անհիմն է համարում նոյնպէս և այն կարծիքը (որ դեռ գոլութիւն ունէր սրանից մի քանի տարի առաջ), թէ մեր ժամանակակից մարդկային ցեղերի մէջ կան աչնպիտները, որոնք իբր թէ դեռ ևս մնացել են մարմնակազմութեան նախնական ստոր աստիճանի վրայ: Սակայն ամենամանրակրկիտ հետազոտութիւնները այժմ ապացուցել են, որ այդ ցեղերը նոյնպիսի կազմածք ունեն ինչպէս և մենք, իսկ նրանցից մի քանիսը մեզնից էլ բարձր են իրանց կազմածքով: Օրինակ՝ Էսքիմոսների գլուխները կատարեալ ախպին են պատկանում: Մի քանի ցեղեր օրինակ Յէլլոն կողու վեղերը, միկրոցեֆալների գլխի չափ գլուխ ունեն: Գրա համար շատերը նրանց էլ փոքրագլուխ են անւանում, բայց այդ բոլորովին անհիմն է, որովհետև նրանց գլուխը բացի ծաւալի փոքրութիւնից ոչինչ նմանութիւն չ'ունի միկրոցեֆալների գլխին: Աւելի գլուխը բոլորովին կանոնաւոր է, և չ'ունի միկրոցեֆալ գլուխներին չատուկ բնորոշ տարականոնութիւններից և ոչ մէկը: Այդ տեսակ գլուխները աւելի ճիշտ կը լինի անւանել պաճաճալին:

«Միայն մի ցեղ էր մնում մինչև վերջին օրերս խաւարում, այն է Մակլակեան թերակղզու հիւսիսային մասի Օրանդ-Սիմանգները և Օրանդ-Սեկալները: Միակ ճանապարհորդը, որ թափանցել էր նրանց բնակած լեւնային երկիրները անվեհեր ուս ճանապարհորդ Միկլուս Մակլայն էր և նա սիմանգների ցեղի մի քանի առանձին անհատների վրայ ստու-

դեւ էք, որ նրանք կարճահասակ են և գեղմնածև մազեր ունեն։ Մենք մի նոր դիտնական արշաւանք ուղարկեցինք այդ երկիրը մասնաւորապէս Օրանդ Սեկաիների ցեղի մարդաբանական հետազոտութեան համար և ես նորերս ստացաւ աշնտեղից առաջին գանգը և մի քանի փունջ մազ։ Յիրաւի այդ ցեղը թուխ, գեղմնահեր ցեղ է, որի բրախիցեֆալ (կարճագանգ) գլուխը շատ փոքր ներքին ծաւալ ունի, բայց նա որ և է անասնական (bestial) զարկացման ճոզն խկ ամենաչնչին նշան չի ներկայացնում»։

«Ու հարկէ մենք չենք մոռանալ, որ մարդու կազմածքը էպպէս անասնալին կազմածք է և որ ժամանակ առ ժամանակ երեան եկող թերմորֆալին (անասնատեսակ) շտեղծութիւնները կարելի է նախնիքանմանութեան (ատաւիզմի) հետեանք համարել։ Բայց մենք աւելի համոզեցուցիչ ապացոյցներ կը պահանջենք որպէս զի կարողանանք ենթադրել թէ մարդու ու մի որ և է որոշեալ անատուճի մէջ մօտիկ սղգակցութիւն կայ»։

Մարդաբանները հաշեացրներ ի մէջ կատարւած այդ փոփոխութիւնները առանց հետեանքի չը մնացին Միջազգային նախապատմական համաժողովի համար։ Արտաբոսնեան համաժողովում քննուող հարցերի մէջ առաջին տեղն էր բռնում երրորդական էպոխալի մարդու խնդիրը, բայց այդ համաժողովից լետու գիտնականները մի քիչ հանդուստացան, ձեռք քաշեցին նախամարդը (պրօանթրոպոս) գտնելու ցնորամիտ փորձերից և սկսեցին հետազօտել իրօք գոյութիւն ունեցող առարկաները։ Իսկ այդ աչն հետեանքն ունեցաւ, որ մարդու նախապատմական վիճակով զբաղւողները սկսեցին հետզհետէ աւելի ու աւելի կարեւորութիւն տալ հնագիտութեանը։

«Իրօք գոյութիւն ունեցող առարկաների մէջ թեով գերակշռում են հնագիտական գիւտերը, մինչդեռ հնամարդաբանութեան (պալէօանթրոպոլոգիա) առարկաները այն ստորձան հաղւապիւտ են և մեծ մասամբ աշնքան կատկածելի, որ դեռ մինչև այժմ չորրորդական էպոխալի մարդու ամենահին ցեղի նկարագրութիւնը կազմելու խնդիրը զիտութեան ուժից վեր է»։

Աչքի առաջ ունենալով այդ բոլորը, Ֆիրխովը ճառի վերջում չորրորդ էր հետեւել նախորդ համաժողովների անդամների թողած աւանդութեանը և առանձին ուշադրութիւն դարձնել նախապատմական հնագիտութեան վրայ։ «Աչնպիսի հարցեր, վերջացրեց խօսքը մեծ ընադէտը, ինչպէս անագապղնձի (բրոնզի) գիւտի ու նրա սուկտուրի ճանապարհների հարցը՝ մեզ համար մեծ խնդիրներ կը լինեն»։

Սրբ որ Ֆիրխովը վերջացրեց իւր ճառը, դահլիճը թնդաց աղմկալից ծափահարութիւններից։ Ֆիրխովի նման դիւթական անձնաւորութիւնը միայն կարող էր այդ աստիճան ոգևորեցնել զրեթէ բացառապէս հնագիտներից ու մարդաբաններից կազմած այդ ծանրաբերու լսարանը։

Համաժողովի նիստերում է. Շանարը երկու րեֆերատ կարդաց, —

Ա ս ի ա չ ի ա զ գ ե ռ ի ա ն լ ա ն ա ց ա ն կ ի վ ե ղ ա ն ո Ր ո զ մ ա ն ծ Ր ա զ ի Ր  
 («Projet de réforme dans la nomenclature des peuples d'Asie») և  
 Մ ա ղ ա չ ա փ ա կ ա ն տ ե ս ու թ ի լ ը Ա ն զ ղ ո վ կ ա ս ի մ ա ս ի ն  
 («Aperçu anthropométrique sur les peuples de la Transcaucasie»):

Պ. Շանտրը ունկնդիրները ուշադրութիւնը դարձրեց այն հանգա-  
 մանքի վրայ, որ մինչև այժմ չկայ մի հաստատ և պիտանական հիմունքների  
 վրայ կազմած ցեղաբանական անւանացանկ: Այսած Բիւֆֆոնից մինչև  
 մեր օրերը ազգերի բաղմաթիւ դասակարգութիւններ ու անւանացանկեր  
 են առաջարկուել, որոնք երբեմն մորֆոլոգիական <sup>1)</sup> առանձնաչափու-  
 թիւնների վրայ են հիմնւած եղել, երբեմն ընկերաբանական (социологи-  
 ческий) կամ լեզւաբանական, բայց մարդաբանական գիտութիւնների վեր-  
 ջին ժամանակներս սեղի ունեցած նշանաւոր զարգացման չնորհիւ այժմ  
 ակներև է դարձել, որ այդ նշանները, առանձին-առանձին առած, չ'ու-  
 նեն այն չափութիւնները և մանաւանդ այն ճշտութիւնը, որ պահանջում  
 են բնական գիտութիւնները:

Պր. Շանտրի կարծիքով ազգերի դասակարգութեան մէջ գլխաւոր  
 դեր պէտք է խաղան մորֆոլոգիական նշանները, իսկ միւս առանձնա-  
 չափութիւններին նա երկրորդական, օժանդակիչ նշանակութիւն է տա-  
 լիս: Նթէ մարդաչափական հետազոտութիւնները ցոյց տան, որ տարբեր  
 անուաններ կրող ժողովուրդների մէջ մորֆոլոգիական մերձաւորութիւն կայ,  
 նրանց պէտք է մի ցեղ համարել: Նթէ լեզւաբանական առանձնաչափու-  
 թիւնների ուսումնասիրութիւնը հաստատի այդ եզրակացութիւնը, այդ՝  
 աւելի լրիւ ապացուցւած կը լինի: Բայց եթէ, մորֆոլոգիական նշանները  
 իրաւունք չեն տալիս մեզ ազգակցութիւն ենթադրել մի լեզուով խօսող  
 մի քանի ազգերի մէջ, մենք չենք կարող նրանց ցեղալին մի լամբի պատ-  
 կանող համարել:

«Մի լեզու կարող է, ասում է պ. Շանտրը, տարածւել մի ցեղից  
 միւս ցեղ, ինչպէս օրինակ Աղբրէջանի թուրքերէնը, որ ձգտում է աւելի  
 ու աւելի տարածւել ամբողջ արեւմտեան Ասիայում և մասնաւորապէս Հա-  
 չաստանում (?), բայց հայերի կարծազանդութիւնը (բրախիցեֆալիա) ան-  
 կասկած երբէք չի կարողանալ տարածւել այն՝ թուրքական ծագումն ու-  
 նեցող ժողովրդի մէջ, որ նրանց հաղորդում է այդ լեզուն»:

Քանի որ ազգերի մինչև այժմ ընդունւած անուանները հիմնւած են  
 մեծ մասամբ ալեպիսի առանձնաչափութիւնների վրայ, որոնք ցեղաբա-  
 նական տեսակէտից չեն կարող բնորոշ համարուել պ. Շանտրը առաջար-  
 կում է մարդաբաններին ու հնագէտներին միացեալ ուժերով մի նոր ստուգ

<sup>1)</sup> Մորֆոլոգին զբաղւում է օրգանների զննարկման ժամանակ  
 նրանց մէջ սեղի ունեցող փոփոխութիւններով:

ցեղաբանական անւանացանկ կազմել, որի պակասութիւնը զգալի է մանաւանդ Ասիայի ազգերի նկատմամբ:

«Սա արդէն ղէպք ունեցել եմ խօսելու Ասիկասի մի քանի ազգերի ցեղական անունների ու բաժանմունքների ղէմ և մտադիր էի նորից դանալ այդ հարցին մի նոր աշխատութեան մէջ, երբ որ ծանուցեց Մուկաչում գումարելիք համաժողովը»:

Մասնաւորելով իւր խօսքը Ասիական Ռուսաստանի վրայ, պ. Շանտրը աշխատեց ապացուցանել, որ շատ ցեղալին անուններ բոլորովին սխալ կերպով են գործածուած:

Յալոնի է, որ սպիտակամորթ, արիական ցեղը Ասիկասեան է անւանուում: Ֆրանսիացի գիտնականը սաստիկ հակառակ է դրան: Այն մարդկանց, որոնք սկզբում աղպէս են անւանել արիական ազգերին, թւելիս է եղել, թէ նմանութիւն կազ Ասիկասի բնակիչներին և արիական ազգերի մեծ մասի կերպարանքի մէջ: «Այդ նմանութիւնից եզրակացրել են, թէ արիական ընտանիքը կազմող բոլոր ցեղերը, որոնք տարբեր են իրարից թէ իրանց ծագումով, թէ առանձնապատկութիւններով, Ասիկասեան ծագումն ունեն»:

«Ապացուցւած է, շարունակում է պ. Շանտրը, որ աշխարհիս զանազան կողմերում ապրող և Ասիկասեան կողմը ցեղերից ոչ մէկը ոչ մի ժամանակ չի իջել Պոնտո-Ասպեան լեռներից Պատմութիւնից չալոնի չէ ոչ մի ազգ, որ թողած լինէր Ասիկասը ու գնացած սիւսած մերձակազ դաշտավայրերում կամ հեռաւոր երկիրներում: Գիցաբանութիւնը աղպիսի պատմութիւնները ընդհակառակը ցոյց են տալիս, որ Ասիկասին օտար բազմաթիւ ժողովուրդներ եկել են զանազան շրջաններում ու բնակութիւն հաստատել աշխտեղ: Ամեն ինչ ալն է ապացուցանում, որ ներկայումս ալզ գեղեցիկ երկրում ապրող ազգերը պէտք է նկատեն իբրև աննշան մնացորդներ Նախապատմական ազգերի, որոնք միննուն ցեղին են պատկանելիս եղել և որոնք պէտք է որ ամեն տեղ անհետացած լինեն բացի Ասիկասից: Այդ երկիրը չի եղել նոնպէս և անցքի տեղ որ և է զաղթող ժողովրդի համար, ալ աւելի ապաստարան մերձակազ հարթութիւնների բնակիչների համար: Պէտք է աւելցնել և ալն, որ ալզ ազգերին, նրանց մորֆոլոգիական ու լեզուաբանական օտարացեղութեան (hétérogénéité) պատճառով, ոչ մի ղէպքում չի կարելի կցել ոչ մի ցեղալին մեծ ընտանիքի և որ նրանք պէտք է մի առանձին խումբ կազմեն ալլոֆիլ (allophyle) ազգերի մեծ ճիւղի մէջ, որին չարմար կը լինի Ասիկասեան անունը տալ: Ուրեմն ոչ մի ժողովուրդ չը պէտք է ալզ անունը կրի բացի ալն ժողովուրդներից, որոնք բնակում են Ասիկասեան մեծ լեռնաշղթայի սարերում և որոնք ոչ մի ուրիշ տեղ ազգութիւն չեն կազմում: Աերջապէս

կովկասցիները տարբերում են իրանց աչն զրացիներից, որոնց ես սպորադիք եմ անւանել, ինչպէս՝ օրինակի համար որոշեալ թուրք կամ մոնղոլ սեմական կամ արիական ընտանիքները, նրանով, որ նրանք այդ վերջինների նման (որոնց նրանք կովկասին օտար են համարում) որոշ ծագումն չ'ունենա):

Անցնելով թուրքերին պ. Շանտրը աչն միտքն չալոնեց, որ նրանք մոնղոլ չեն, ինչպէս առհասարակ կարծւում է: Ռուսները և ֆրանսիացիք թուրքերին թաթար են անւանում, պ. Շանտրը այդ սխալ է համարում: «Եթէ մարդ կազան քաղաքի բնակչից հարցնի, ասում է պ. Շանտրը, թէ արդեօք թաթար է նա, նա կը պատասխանի թէ՛ ոչ և իւր լեզուն կ'անւանի թուրքերէն և ոչ թէ թաթարերէն (turki et non tatar)»:

«Ես զեռ չեմ ուսումնասիրել, շտրունակում է ընթերեհտը, ոչ կազանի թուրքերին, ոչ էլ Ղրիմի, ուստի և չեմ կարող այստեղ նրանց մասին խօսել. բայց գալով Անդրկովկասում տարածւած Աղբրբէջանցի թուրքերին, ես կարծում եմ որ կարող եմ պնդել, թէ նրանք մոնղոլ չեն: Ամեն բանից երևում է, որ նրանք ծագումով թիւրքոման են և գաղթել են Աղբրբէջան՝ Արգոսն խանի օրով: Արգոսից նրանք վետոյ անցել են Հալաստան, ուր նրանք բաժանւել են զանազան տոհմերի, որոնք խառնւել են թեմուրեանների (Timouride) դարի՝ բոլոր պատերազմներին: Նրանց պատմութիւնը գրի է առնւել նոյնքան ինամքով որքան նոյն շրջանում իշխող ժողովրդներինը: Յալոնի է, որ Նաղիր-չահի մահից վետոյ թուրքերը Փանախան անունով մի թիւրքոմանի առաջնորդութեամբ եկան Խորասանից և տիրեցին Ղարաբաղին ու մերձակալ գաւառին: Փանախանը երկար ժամանակ միահեծան իշխանութիւն էր վարում ամբողջ այդ երկրում: Նա է հիմնել Փանաբաղ ամրոցը, այժմեան Շուշի քաղաքը: Թիւրքմանները, ասում են հին մատենագիրները, ի միջի ալլսց Թոմաս Մեծփեցին, մոնղոլների միակ անեղ հակառակորդներն էին... Նոյն Մեծփեցու նկարագրելովը թիւրքմանների պետերը երկրի ամենամեծ մասին տիրել էին չնորհիւ իրանց զէնքի ուժին և իրանց արագաչարժութեան»:

«Ինչպէս և իցէ, վերջացնում է պ. Շանտրը իւր խօսքը թուրքերի մասին, Անդրկովկասի թուրքերը, որոնց աւելի ճիշտ կը լինի անւանել Աղբրբէջանցի՝ աչն երկրի անունով, որից նրանք եկել են Հալաստան, շատ տարբերում են կազանի ու Ղրիմի թուրքերից: Նրանք իրար մինչև անգամ ամենեին նման չեն և միմեանցից աչնքան տարբեր ազգերի համար թաթար անունը պահել կը նշանակի չաւերժացնել սխալների մի աղբիւր... Ընդհանրապէս վերցրած կարելի է ասել որ Աղբրբէջանցիք սաստիկ արիակաճացրած կամ աւելի ճիշտ ասած իրանացրած են (les Aderbeïdjanis se sont fortement aryanisés ou plutôt éranisés)»:

Բացի այդ նկատողութիւններից պ. Շանտրը մի քանի հարց է առաջարկում համաժողովին: Ահա այդ հարցերից մի քանիսը:

Պէտք է արդեօք վերացնել թէ պահպանել թիւրքմէն անունը, որ չաճախ դործ է ածուած իբրև հոմանիշ թիւրքոմանի, և եթէ պահպանել, ինչ դէպքերուս:

Այսորի կողող Քաղզէացիք կարող են արդեօք նկատուել իբրև Քուրդերի մի ցեղ և չամնապն դէպս չը պէտք է արդեօք անւանել նրանց իրանց հին՝ Ասորի անունով:

Պէտք է արդեօք թողնել Քարթլեկեան կամ վրացոյ խմբում Աջարներին ու լազերին և եթէ պէտք է, արդեօք նրանք չը պէտք է մի առանձին անուն կրող ջոկ խումբ կազմեն:

Արդեօք ուտիացիներին չը պէտք է աւելի մօտիկ համարել հալերին քան լեզգիներին:

Այլ հարցերից կարելի է գաղափար կազմել թէ ինչ բովանդակութիւն պէտք է ունենար այն գիրքը, որ ինչպէս վերևը տեսանք, մտաղիլ է եղել սպել պ. Շանտրը համաժողովի ծանուցումն իմանալուց առաջ, և որ, պէտք է չուսալ, կը տպի նա մօտիկ սպազալում:

Չեկուցման վերջում պ. Շանտրը առաջարկեց համաժողովին մարդաբաններից, լեզուագէտներից, հնագէտներից ու պատմաբաններից ընտրել մի առանձին լանձնախումբ՝ կից համաժողովի մշտական մասնաժողովին, որը կատարելապէս վերաքննէր ասիական ազգերի անւանացանկը զիտութեան պահանջների համաձայն: Այլ առաջարկութիւնը ընդունեց և լանձնախումբի անդամ ընտրուցին Ռ. Ֆիրխովը, ինքը Շանտրը, Միլլեր, Յագարելի և ուրիշները:

Իւր երկրորդ զեկուցումով պ. Շանտրը ծանօթացրեց համաժողովի անդամներին Անդրկովկասեան ազգերի վրայ իւր արած մարդաչափական հետազոտութիւնների հետևանքների հետ:

Պ. Շանտրը եկել է այն եզրակացութեանը, որ լեռնաբնակ հրէաները, ալտորիներն ու լեզգիները ուլտար-բրախիցեֆալ են (այսինքն գանդերը շատ լաջն են ու կարճ՝ չափելով ճակատից դէպի ծործորակը), հալերը կարճագանգ են, Ալբրբէնջանցի թուրքերը, քուրդերն Աջէմ-պարսիկները դուլիսոցեֆալ են (այսինքն գանդերը երկար են ու նեղ), բացի այդ՝ հալերը, թուրքերը, քուրդերն ու լեզգիները բարձրահասակ են, պարսիկներն ու հրէաները՝ միջահասակ, իսկ ալտորիները՝ կարճահասակ: Պ. Շանտրը ենթադրում է, որ ազգակցութիւն կա հալերի, հրէաների ու ալտորիների մէջ:

Այստեղ աւելորդ չի լինել աւելցնել, որ վերջերսուս Ռւմ քաղաքում կազացած գերմանացի մարդաբանների համաժողովում Բերլինի ցեղաբանական թանգարանի աստիտանտ Ֆելիքս Լուչանը հրէական ցեղի մարդաբանական բնաւորութեան մասին կարդացած զեկուցման մէջ, «Русскія Вѣдомости» լրագրի թղթակցի ասելով, այն միւտքն է չալանել, թէ «մեր ժամանակակից հրէաները արգինք են սերտ խառնուրդի հնդկա գերմա-

հայցիները, սեմականների և այն ալ սրողական խմբի, որին վերագրում են հայերին... Ալժմեան հրեաների գանդերի կարծութիւնը կարող է չառաջացած լինել, Լուչանի ասելով, հայերի հետ խառնուկուց, բացի այդ՝ հայերի քթերն էլ այն ձևն ունեն, որ այժմ հրեական են անւանում և որ ամենին սեմական ծագումն չունին: Թղթակիցը աւելացնում է, թէ Ֆելիքս Լուչանի ասածները պաշտպանում էր և Ռ. Վիրխովը:

Հայերի մասին համաժողովի նիստերում խօսք ընկաւ և պրոֆ. Բոգդանովի զեկուցման առիթով ծագած վրձարանութիւններ ժամանակ: Ռուս պրոֆեսսորը 25 տարի հիւանդօտելով ներքին Ռուսաստանի հին գերեզմանները տեսել է որ նախապատմական ժամանակին վերաբերող գանդերը գոլիւխոցեֆալ են աչնալէս ինչպէս Արմենտեան Արտոպալի գերեզմաններում գտնւածները: Գրանից նա եզրակացրել է որ ուսանին ու արեմտեան եւրոպացիք սերում են միննուին երկարագանդ ցեղից, որ ընակելիս է եղել մի ժամանակ ամբողջ Արտոպալում բացի եւրոպական Ռուսաստանի հիւսիսային ու արեւելեան մասից և Իսպանիայից, ուր տիրելիս է եղել կարճագանդութիւնը: Այս երկուքը, որ այժմեան ուսանների մեծ մասը բրախիցեֆալ են, պ. Բոգդանովը բացատրում է մասամբ քաղաքակրթութեան ազդեցութեամբ, որ գանդերը կարճացնելու տենդենցիա ունի, մասամբ էլ ի բնէ բրախիցեֆալ ցեղերի հետ խառնուկուցը: Բաղելի համալսարանի պրոֆ. Ալմանը աւարկեց պ. Բոգդանովին, որ Արտոպալում միշտ եղել են թէ երկարագանդ, թէ կարճագանդ մարդիկ և ասել թէ ըստ եւրոպացիք գոլիւխոցեֆալ են եղել՝ անհիմն է: Վիրխովը աւարկելով չպոնեց այն միտքը, որ անկարելի է միմիայն մարդաբանակոն նշաններով որոշել միմեանցից զանազան ցեղեր, պէտք է անպատճառ դիմել պատմութեան օգնութեան, և բացի այդ, ցեղերը իրարից որոշելու համար մարդաբանական նշանները հիմք ընդունելիս էլ չի կարելի բաւականա՞նալ միմիայն գանդի երկարութեան չափով, այլ պէտք է ի նկատի առնել և ուրիշ նշաններ, հասակը, մաղերի գոյնը և այլն: Այդ ապացուցանելու համար Վիրխովը մէջ բերեց այն փաստը որ բրախիցեֆալները մեծամասնութիւն են կազմում Արմիաստում ու Փոքր Ասիայում (ուր կարճագանդութեան կեւրոնը Հայաստանն է), Բաղիւսեան թերակղզում, Զւիցերիայում, հարաւային Գերմանիայում և Ֆրանսիայում: Խօսելով հայերի կարճագանդութեան մասին Վիրխովը դիմեց Շանտրին, ասելով որ նա անձամբ գանդաչափական հետազոտութիւններ է արել Հայաստանում: Պ. Շանտրը պատասխանեց Վիրխովին որ վրասի այժմ հայերի սոււար մեծամասնութիւնը կարճագանդ է, բացի հին գերեզմաններում գտնւած գանդերը գոլիւխոցեֆալային են և որքան աւելի հին են գերեզմանները այնքան աւելի նշանաւոր է երկարագանդութեան գերակշռութիւնը:

Մտկալի համաժողովը, վերջացնելով իւր զբաղմունքները վճեց հետեւեալ անգամ գումարել Պոլսում, իսկ այն զէպրում, և յէ տաճրի կաւաւարութիւնը դէմ լինի այլ բանին, Աթէնքում:

Տ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

## ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ ՌՈՒՍԱՍՏԱՆԻՑ

Համառուսական հրդեհական ցուցահանդէսը Պետերբուրգում: Ռուսց երկաթուղիների նոր տարիֆը: Միջազգային երկաթուղային համաժողով Պետերբուրգում: Ռ. Ֆիրխով Պետերբուրգում և նրա ճառերը: Քաղաքային ինքնավարութեան օրէնքի մէջ փոփոխութիւններ: Նոր զրքեր ստերէն լեզուով:

Մայիս 23 ին Պետերբուրգում բացւած համառուսական հրդեհական (пожарная) ցուցահանդէսը մի տեսակ նորութիւն էր Ռուսաստանի համար: Ցուցահանդէսը զբոս է եկել շնորհիւ Կալսերական Ռուս Տեխնիկական Ընկերութեան և նախաձեռնութիւնը պատկանում է կոմս Ա. Գ. Լուովին:

Ստարեկրացիք անձագանք էին տուել այդ ցուցահանդիսին չը նաչած որ իրանք մասնակից չէին մրցանակաբաշխութեան (hors concours, БЕЖ КОНКУРСА):

Ներքին գործերի մինիստրութիւնից չպսնած տեղեկութիւններից երևաց, որ Ռուսաստանում հրդէհի դէպքեր եղել են 1860—տասը հազարից քիչ աւելի և որ 1889 թ. այդ թիւը հասել էր 53.000 դէպքի:

Հրդէհների դէպքերի աչա թւից 91,6% ընկնում է գաւառների վրա և միմիայն 8,4% (այսինքն 4.352 դէպք) քաղաքներին է հասնում:

Միջին հաշուով տարեկան մլասը բոլոր նահանգների համար ընդունւում է մօտ 79 միլ. ռուբլի:

\*  
\* \*

Մալիս ամսից սկսած Ռուսաստանի երկաթուղիների գնացքը արագացւած է շնորհիւ ճանապարհների հազորղակցութեան մինիստրութեան կարգադրութիւններին: Այժմ պատժիր գնացքը սնում է մի ժամում մօտ 30 վերտ, փոստայինը 36 վերտ, իսկ արագը—46 վերտ:

Յուլիսի 15-ից սկսած Նաև Անդրկովկասում հրատարակւեց ցուցակը

1) Маршрутъ—գնալի ճանապարհ, ճանապարհի ուղղութիւնը:

Շրջապտուտ մարչրուտների <sup>1)</sup> թւով 113՝ սովորական գներից 40% էժանացրած:

Շրջապտուտ մարչրուտները նորութիւններ են Ռուսաստանի համար: Շրջապտուտ մարչրուտի տոմսակը ունի 45 օրից 90 օր տեղութեան արժէք:

Թիֆլիսից Ռուսաստան գնալու և Թիֆլիս վերադառնալու համար կարելի է ընտրել 113 մարչրուտներից ամենապարմարը՝ նալած թէ ով ինչ քաղաքներ է կամենում ալցելել:

Թէ ալ և թէ վետադաջ նորամուծութիւնները արւած են պ. Պերլի ղեկուցման համեմատ—որին չանձնւած էր ուսումնասիրել ալ կարևոր ինչիբը մանաւանդ Ռուսաստանի համար, ուր տարածութիւնները միանգամայն անւելի են: Համեմատութիւններ անելով եւրոպական երկաթուղիների հետ, պ. Պերլը իւր ղեկուցման մէջ գրի էր առել ալն իրողութիւնը՝ որ ուսուական երկաթուղիների վերցրած վճարը, թէ պասսաժիրների համար և թէ ապրանքի համար շատ աւելի բարձր է քան եւրոպայի երկաթուղիները:

Պասսաժիրների գնացքում վերցնւում է 1 կիլոմետր տարածութեան համար ոսկի կոպէկ

	I կարգում	II կարգում	III կարգում
Ռուսաստանում . . . .	3,52	2,73	1,34
Աւստրիայում <sup>1)</sup> . . . .	1,86	1,24	0,62
Դանեմարկայում . . . .		1,86	1,16
Դերմանիայում . . . .		1,86	1,24

Երկրորդ կարգի գները համեմատաբար երրորդի հետ—շատ են բարձր, իսկ եթէ ի նկատի առնենք որ II կարգի տոմսակներից պետական տուրք է վերցնւում 25% գնի արժէքից, իսկ III կարգից միմիայն 15%—հասկանալի կը լինի թէ ինչու ճանապարհորդների մեծամասնութիւնը անցնում է II կարգից երրորդը: Վիճակագրական թւերը գալիս են հաստատելու ալ կարծիքը:

1890 թ. ճանապարհորդները բաժանւում էին ալ կարգով. 100 մարդու ընկնում էր III կարգում 88,7, II-ում 7,2 և I-ում 1,4:

Համեմատութեան համար դնենք այստեղ 1883 թւականի աղիւսակը, որից կերեալ որ անհամեմատ թանդութիւնը ստիպել է I և II կարգի ճանապարհորդներին ալ կառքերից անցնել III կարգը: 1883 թ. ալսպէս էին բաժանւում ճանապարհորդները. 100 մարդու վերալ՝ III-ում—86,1, II-ում—9 և I-ում—2, ասել է թէ 8 տարւալ ընթացքում I կարգի պասսաժիրները պակասել են 30%, II կարգինը 25%: Պետական տուրքը

<sup>1)</sup> Ընթերցողը կը նկատի, որ Աւստրիայի պետական երկաթուղիների I, II, III կարգերի գները վերաբերում են իւրա իւր 3: 2: 1:

երկաթուղիների տոմսակներից օրէնքի ոչ թ է ստացել 1881 թւականից:

Այլքի առաջ ունենալով հունգարական սխտեմի աճն գոտիաւոր տարիֆը (ПОЯСЕНІЯ ТАРИФЫ) բարեկաջող արդիւնքները՝ պ. Պերլի ս.առջարկութեամբ այդ սխտեմը գործադրելու է նաև Ռուսաստանում: Այդ սխտեմը հետեւեալն է. վերստի զինը պակասացնում է աչնքան շատ որքան որ մեծացնում է անցնող տարածութիւնը. և այս սկզբունքի համեմատ կարճ տարածութիւնների ամեն մի վերստը աւելի թանկ է վճարելու քան երկար տարածութեան ամեն մի վերստը: 600 վերստի համար պ. Պերլը նախագծել է ամեն մի վերստի համար՝

I կարգում վերցնել 2,20, երկրորդում 1,55 և երրորդում—0,95: Այսպիսով եղած գները պակասեցնում է I կարգի համար 26%, II կարգում 31% և III կարգում 22%:

Եթէ այստեղ գնելու լինենք նաև մի քանի ուրիշ թւեր եւրոպական երկաթուղիների վերաբերեալ աւելի ևս պարզ կը լինի աղաղակող անհրաժեշտութիւնը պակասեցնելու Ռուսաստանի երկաթուղային վճարները պատասխրական տոմսակների համար:

Միջազգային վիճակագրական ժողովի հաշիւներից երևում է որ անգլիացու միջին եկամուտը հասնում է տարեկան մօտ 300 ուղըլու, ֆրանսիացուներ մօտ 220 ու., գերմանացուներ 180 ու.: Ինչ ասել կուզի որ ուսինը շատ և շատ պակաս պէտք է հաշւել, մինչդեռ հին երկաթուղային տոմսակների գների համաձայն նա շատ աւելի էր պարտաւորւած վճարելու իւր անձի՝ տեղից տեղ փոխադրութեան համար:

Վիճակագրական թւերը՝ պերճօրէն սպասուցանում են այս կէտը: 1883 թւին մի գերմանացի միջին թւով արած էր երկաթուղով 30 կիլոմետր, ֆրանսիացին 34, աւստրիացին 47, իտալացին 48 և ուսար 107: Ասել է թէ Ռուսաստանի ճանապարհորդը ստիպւած լինելով աւելի երկար տարածութիւններ անելու, նաև ստիպւած էր կրկնակի վճարել ամեն մի վերստին:

Եթէ անցնելու լինենք պատասխրների թւին՝ կը տեսնենք որ Ռուսաստանի ճանապարհորդների քանակութիւնը մի ծաղրալի թիւ է ներկայացնում համեմատութեամբ Եւրոպայի պատասխրների թւի հետ: 1883 թւին անգլիական երկաթուղիները տեղափոխել են, 734 միլիոն պատասխր, գերմանականները 233 միլիոն, զուտ աւստրիականները 47 միլ., ֆրանսիականները 205 միլ., բելգիականները 53 միլ., իտալականները 34 միլ., իսկ ուսականները միմիայն 38 միլիոն: Բնակիչների թւի համեմատ մի բնակիչի համում է:

Անգլիացում . . . . .	21	պատասխր
Գերմանիացում . . . . .	5,3	»
Ֆրանսիացում . . . . .	5,4	»

Բեղիբալում . . . . .	8,7	»
Աւատրիալում. . . . .	2,2	»
Իտալիալում . . . . .	1,2	»
Ռուսաստանում. . . . .	0,4	»

Ուրիշ խօսքերով ամեն մի անդլիացի տարէնը ճանապարհորդում է 21 անգամ, իսկ ռուս հպատակը հինգ տարում ճանապարհորդում է երկու անգամ: Գալով Անդրկովկասին՝ պէտք է նկատած որ III կարգի զները աւելի ևս ազադակող են, աչն է վերստը 2,17 կոպէկ. աչնպէս որ երրորդ կառքով Բաքւից Բաթում գնալը կրկնակի թանգ է քան աչն կառքով անցնել Ֆրանսիայի մի ծալրից դէպի միւր:

\*  
\* \*

Օգոստոս ամսին տեղի ունեցաւ Պետերբուրգում Միջազգային երկաթուղային համաժողով—որը ունեցաւ մի քանի նիստեր մասնակցութեամբ զանազան եւրոպական պետութիւնների կողմից ուղարկած պատգամաւորները: Ի թիւս այլ զեկուցումների ուշադրութեան արժանի է վիշտակելու շէլլցարական պատգամաւորի, պ. Գալսերի զեկուցումը, որով նա պաշտպանում է պասաժիր գնացքների սակազնի պակասցնելը ու վերադարձի տոմսերի գործածութեան մէջ մոցնելը: 1888 թ. ալդպիսի վերադարձի (գնալ ու գալ) տոմսերից օգտել են Շւեյցարիալում ճանապարհորդների ընդհանուր գումարից 70% (մօտ 19<sup>1</sup>/<sub>2</sub> միլ. ճանապարհորդներից 13<sup>1</sup>/<sub>2</sub> միլ.): Ապա նա պաշտպանում էր Հոնդարիալում՝ Բարոշի նախաձեռնութեամբ մոցրած գոտիաւոր սխտեմը—մի սխտեմ, որը մեծ օգուտներ տւեց երկաթուղիներին և մեծ չարմարութիւններ հասարակութեանը:

Ռուսաց պատգամաւոր պ. Պերլը—խօսեց այդ սխտեմի անշարմարութեան դէմ Ռուսաստանում ընդունելու համար բաւց պաշտպանեց նոյն սխտեմի սկզբունքը—որով զիցուք, կրկնակի հեռաւորութիւնը, կրկնակի սակազնից պակաս է գնահատուում և գնալու տարածութեան շատ աւելի լինելը շատ աւելի արժան է գնահատուում քան փոքրիկ տարածութիւնները:

Մի ուրիշ կարևոր խնդիր որ համաժողովի ուշադրութիւնն էր գրաւել, էր երկաթուղային ծառայողների ապահովացնելու խնդիրը: Հոմաժողովը բարոյական պարտաւորութիւն համարեց երկաթուղիների կողմից—ապահովել իբանց ծառայողներին:

\*  
\* \*

Մոսկւաչի միջազգային մարդաբանական համաժողովի զբաղմունքներն աւարտումից <sup>1)</sup> գիտնական պրոֆեսոր Ռուդոլֆ Ֆիրխովը մեկնեց զէպի Պետերբուրգ ուր ի պատիւ նրա տեղի ունեցած վաճաղան խնջուքներ և հայկերութենէ թէ բժիշկներէ կողմից և թէ քաղաքի կողմից: Այս վերջինիս տւած նախաճաշիկին—որ տեղի ունեցաւ քաղաքաչիի գործիչներուց մինի—Ռատովով—Ռափուի ամարանոցում—Ռուդոլֆ Ֆիրխովը պատասխանելով իւր կենաց բաժակին—ասաց որ ամենից շատ իրան ախորժեղի են քաղաքի կողմից իրան արած ընդունելութիւնները և բարեմաղթութիւնները:

Ես ինքս, ասաց նա ի թիւս աչոյց, ծառայել և ծառայում եմ Բերլին քաղաքի ինքնավարութեան գործին և աչոյ ծառայութիւնը համախորին—ամենաախորժեղին է բոլոր ծառայութիւններուց. «Աչոտեղ մարդս նման է պետական ծառայողի, չի ընկնում զէս ու զէն ու ոչ էլ քաղաքական դաճաղան կուսակցութիւնների ազդեցութեան ենթարկուած:

Ներկայ եղած շատ պրոֆեսորների կենացները խմելուց վետոյ պրոֆ. Ֆիրխովը նկատեց աչն որ այստարաւ Ռուսաստան գալով—նա կամեցաւ իւր շնորհակալութիւնը չափենել աչն բարեմաղթութիւնների փոխարէն որ իւր անցեալ տարւալ չորեկեանի առիթով նա ստացել էր ռուս բժիշկների կողմից:

Ի պատիւ Ռ. Ֆիրխովի տւած ճաշերի—աչքի է ընկնում վերջին հաւաքական ճաշը օգոստոս 17—նախադասութեամբ լուսաւորութեան միջնադար կոմս Ի. Գ. Գելիանովի ներկայութեամբ պալատական բժիշկ Հիրշի, կուլըրինի, Սուբբատինի, Ռաուլֆուսի, Բոտկինի, Ռեմմերտի, բժշկական Զինւորական Ակադեմիայի պրոֆ. Խվանովսկին—աւագագոյն Ֆիրխովի աշակերտներից և աչն... Կենացների ժամանակ արտասանած ճառերում մտածանուն գիտնական հիւրը ասաց ի թիւս աչոյց. «Գործունէութեան սկզբի օրերից—ես մօտ եմ բժիշկներին: Նրանք մօտ են սրտիս և թանց—ինչ ազգութեան էլ որ պատկանէին: Ինձ մօտ ուսել են շատ ռուսներ, բազմ իմ գիտական հետազոտութիւններին համար—ամենաընդարձակ հիւրասիրութիւն և նիւթի ահազին քանակութիւն գտել են և գտնում են Ռուսաստանում նաև գերմանացիք: Այս փոխադարձ փոխանակութիւնը ներկայումս աչն. քան: արագ է կատարւում չանուն չաջողութեան և գիտութեան բարգաւաճման— որ գումար անելիս մարդ չի խմանում թէ ով ում աւելին պարտ մնաց: Ես ուրախ եմ աչոյ բանին: Ռուս երկրասարդութիւնը գալիս էր և գալիս է մեզ մօտ գիտութիւն որսնելու և մենք տալիս էինք մեր կարողութեան չափ: Մեզ բերում էին նոքա թարմ, կենդանի հոգիներ, սրտալի ու անկեղծ ձգտումն ու հակումն զէպի գիտութիւն և աչոյ

<sup>1)</sup> Տես «Մուրճ»-ի սոյն համարում «Մարդաբան» • միջազգ. համաժողովը»:

Թարութիւնը ու անկեղծութիւնը մեզ ևս թարմ էին դարձնում: Ես երջանիկ եմ որ կարողացաւ կենսաբանութիւնը (БИОЛОГИЯ) հաստատ հիմքերի վերա դնել, կենսաբանութիւնը—իբրև հիմք բժշկականութեան, և ես չանհունս ուրախ եմ տեսնելով կանգուն շարքեր աշակերտներու:

Ամենից շատ ինձ ուրախացնում է նրանց մէջ նրանց սրտալի և մանաւանդ անկողմնապահ վերաբերումները զէպլի զխտութիւնը: Կենաց եմ առաջարկում ռուս բժշկական գիտութեան ծաղկմանը, նրա ապացուցած և վկայած առաջադիմութեանը և ռուս ու գերմանական գիտութիւնների պաշինքին»:

Յարգելի պրոֆեսորը մի ուրիշ բաժակի առիթով իւր կարծիքները լայնեց երկաստարգութեան մասին:

«Նրխասարգ սերունդը բարձր է պահում գիտութեան դրօշակը և մանաւանդ բժշկական գիտութեանը ու մասնաւորապէս—բժշկիւնը»:

ձաշկերովը անցաւ շատ ուրախ, վերջում խմբով երգեց սուսնողական «Gaudeamus»-ը: Երգեցողութեանը կառավարում էր Հանս Ֆիրխովը—որը նույնպէս պրոֆեսոր է:

\*  
\* \*

Քաղաքալին ինքնավարութեան մասին հրատարակեցին նոր օրէնքներ: Համեմատութեամբ հնի հետ—նոր օրէնքը քչացնում է ձաչնաւորների թիւը սահմանափակելով փողաւորների շրջանով, խոշորացնում գոյքի (ИМУЩЕСТВЕННЫЙ) ցենզը <sup>1)</sup>, քաղաքալիսի, սրա օդնականի, ուսարալալի անդամների ծառայութիւնը համարում է տէրունական, ուստի սոքա ենթարկում են ներքին գործերի մինխտարութեան խորհրդի պատի վճիռներին, որոնք վաւերացրած պիտի լինին մինխտրի վճռով: Նույն վիչեալ քաղաքալին ծառայողները ենթարկում են նկատողութիւններին, լանդլիմանութիւններին, կամ գրկում պաշտօններից քաղաքալին գործերի ատեանով (присутствие по гор. дѣламъ), գումալի ժողովներին բացակա ձաչնաւորները ենթարկում են տուգանքի, ձաչնաւորների երկրորդ անգամ չը ժողովելուց վետոյ գումալի հերթական հարցերը թողնում են Նահանգապետի հաղեցողութեան և ընդ սին սրան իրաւունք է սրւում կամ անձամբ հաստատելու ալլ օրակարգերը, կամ ներքին գործերի մինխտարութեան հաստատութեանը չանձնելու և կամ քաղաքալին գործերի ատեարին: Միենույն ժամանակ նահանգապետների իրաւունք է սրւում վերաստուգութեան ենթարկել ուսաւանները և սրանց ստորապրիալ օրգանները՝ արգելելով գումալի աչնպիտի վճիռների գործադրութիւնը, որոնք կամ

<sup>1)</sup> Цензъ—տուչ կարգութիւն կամ եկամտաի պարման:

տէրութեան օրէնքների հակառակ են վաւերացրել և կամ, ըստ նախանգապետի, այդ վճիռները ընդդէմ են տէրունական ընդհանուր շահերին և պիտոյքներին և «ախներև կերպով» ընդդէմ են տեղական ազգաբնակչութեան շահերին:

Պարզ է որ ցանկութիւն է եղել («միացնել») տեղական իշխանութիւնները և նույն իսկ կապել և մտցնել զեմտուտների և քաղաքային գործադրող օրգանները ընդհանուր վարչութեան շրջանի հետ:

Չի կարելի չը համարձակել այս առիթով ուսու մամուլի մի մասի արտապաշտած մտքերի հետ:

Սա իրաւացի կերպով նկատում է, որ այդ միացումը չի ստեղծում նոր օրէնքով, քանի որ ամբարշտած է միմիայն կախումը բարձր շրջաններից, առանց զօրեղացնելու քաղաքային ինքնավարութեան այն անմիջական միջոցները, որոնցով սոքա հնարաւորութիւն ունենալին անկախ կերպով փոզովելու իրանց սուրքերը:

Նոր ձևակերպած սուղանքները չիչեցնում են դատատնային պատիժները և զրեթէ աւելորդ են թէկուզ այն պատճառով, որ բացակայ եղած ձաջնաւորը կարող է մի անօգտակար ձաջնաւոր լինել հերթական խնդիրներում:

Անտեղի պէտք է համարել նաև նախանգապետների հսկողութիւնը հասարակութեան ձեռքով ընտրւած անձնաւորութիւնների վրայ—մեզը հասարակութեանը պիտի լինի՝ եթէ նա չիմացաւ չարմար և արժանաւոր մարդիկ ընտրել և վերջապէս տեղական հասարակութիւններին աւելի քաջ չաչտնի պիտի լինեն իրանց շահերը, քան դրսի մարդկանց: Կժւար թէ արգելքը ձաջնաւորների թւի մէջ եղած լինի՝ որ մի քանի հասարակութիւնների քաղաքային գործերը այն չաջող ընթացքը ստացած լինէին. փոխանակ առհասարակ քչացնելու նրանց թիւը՝ պէտք էր նոր ուժեր մտցնել նրանց մէջ և ոչ թէ սահմանափակել դրամատիրական ներկայացուցիչներով: Երաւ է, փողատերները՝ վաճառականները և կալւածատէրերն են գլխաւորապէս քաղաքային սուրքերի մեծ մասի վճարողները, բայց դա նշան և ապացոյց չէ որ և քաղաքային վիճակը սոցա կամքին և կամաւականութեան պիտի չանձնւած լինի: Անհրաժեշտ էր քչացնել դրամական ցենզը չօգուտ կրթական ցենզի:

Նոր օրէնքի համաձայն ոչ քրիստոնեայ ձաջնաւորների թիւը չը պիտի լինի աւելի քան 1/3 ձաջնաւորների ընդհանուր թւից: Եթէ այս կէտը այն հանդամանքի դէմ է որ մի քանի ազգութիւններ (հրէաներ) մի չաչտնի քաղաքում աւելի պակաս թւով լինելով ուրիշ քրիստոնեայ ազգաբնակչութեան թւից՝ երբեմն կարողանում են իրանց ձեռքը գցել քաղաքային գործի ղեկավարութիւնը,—ապա անիրաւացի է այն դէպքերի համար՝ երբ քաղաքի ազգաբնակչութիւնը մեծ մասամբ կազմւած է հէնց ոչ քրիստոնեաներից:

\*  
\* \*

Նոր լուս տեսած ուսերէն ինքնուրոյն կամ թարգմանութեամբ  
գրքերից արձանագրենք նշանաւորները:

1) Հերբերտ Սպենսերի Փիլիսոփայութիւնը կարճառօտ, Հովարդ  
Վոլլինսի, հրատարակութիւն Ֆ. Պաւլենկովի: Գինը 2 ռուբլի:

2) Ուշագրութեան հոգեբանութիւնը Շ. Ռիրօ, հրատ. Պաւլենկովի,  
գինն է 40 կոպէկ:

3) Նշանաւոր մարդկանց կենսագրութիւնը: Հրատ. Պաւլենկովի:

Պր. Պաւլենկովը մինչև օրս հրատարակած կը լինի 90—100 կենսա-  
գրութիւններ («նշանաւոր մարդկանց»), որոնց թւումն են թէ զիտնական-  
ներ, թէ երաժիշտներ, թէ բանաստեղծներ, թէ հրապարակախօսներ և այլն  
և այլն: Ամեն մի տետրակը արժէ 25 կոպէկ:

4) Ընդհանուր պատմութիւն. Վեբերի թարգմանութիւնն Նեվեղոմ-  
սկո՝ հատոր XV. մաս առաջին, գինը 5 ռուբլի:

5) Գոյնաւոր լուսանկարչութիւն—գինը 40 կոպէկ: Այս գրքովը  
խօսում է պրոֆեսոր Լիպպմանի արած գիւտի մասին—մի գիւտ որը մեծ  
ապագայ է խոստանում, քանի որ հնարաւորութիւն է տալիս լուսանկար-  
չական ձևով ընդօրինակել սպեկտրի բոլոր գոյները:

6) Չեռնարկ կազմելու և ինսամելու գիւղական ուսումնարանների  
կից ազդիները՝ Վ. Ալեքսանդրովի, գինը 30 կոպէկ:

7) Մեղուն և լիթթակը—թարգմանութիւնն Վանգստրոտից, գինը  
2 ռուբլի 50 կոպէկ:

8) Очерки Гоголевского периода русской литературы. գինը 2 ռ.:  
Այս վերնագրով նոր լուս տեսած գիրքը պարունակում է «Մով-  
րեմեննիկ» ուսումնասիրի մէջ 1855—1856 թ. տպւած Ն. Գ. Չեռնը-  
չև սկոն հռչակաւոր ջողածները՝ «արդիւնք են խորին չարգանքին և հա-  
մակրութեան դէպի այն ինչ որ ազնիւ, ճշմարիտ և օգտակար էր ուս  
գրականութեան և քննադատութեան մէջ»:

9) Փիլիսոփայութեան պատմութիւնը Ջ. Լիււչիսի,  
անդլիերէնից թարգմանութիւնն, գինը 3 ռուբլի:

10) Բենեդիկտ Սպինոզայի էտիկա՝ն. թարգմանութիւն  
լատիներէնից խմբագրութեամբ պրոֆ. Մոդեստովի, գինն է 2 ռուբլի:

11) Հանձար և խելագարութիւնն Լոբբոզ՝ի, գինը 1 ռ.  
թարգմ. տիկ. Տետիչինովսկի:

12) Պետերբուրգի վիճակագրութիւնը 15 դեկտեմբերի,  
1890 թ. կատարած—որից ի թիւա ալոց երևում է որ այդ օրը ուս  
մարաքաղաքը ունէր 954.400 բնակիչ, որոնցից է12,718 այլ մարդ և  
441.682 կինարմատ:

13) Վորոնես ժնահանգի չիշատակատետրը առ 1892 թ. հրատարակ. Վոր. շահանգ վիճակագր. լանձնաժողովի: Ամբողջ շահանգի տուրքերի մուտք հաշուում է 5 միլ. ո., ապառիկ է մնացել ց1891 թ.  $1\frac{1}{2}$  միլ. ո., իսկ Նիժևվիցի գաւառի ապառիկը հաւասար է նրա տարեկան վճարի  $97\%$ :

14) Կուրանի ժողովածուն — որից երևում է որ բնակիչների թիւը համուում էր 1890 թ. —  $1\frac{1}{2}$  միլ.: հոգու: Ծնունդները եղել են շատ առատ՝ 69 հազարի ծնունդ, մահացութիւնը 43 հազար:

15) Գերմանա-ռուսական — Տեխնիկական բաւարան Աորերվաի, տեւրակ I. գինը 50 կ., բոլոր տետրակների թիւը լինելու է 50: Մասնակցում են կաղմելում մասնագետներ:

16) Բերանմէլի ոտանաւորների լրակատար թարգմանութիւնը Տխորժեակի ամուսինների մասնակցութեամբ. հրատարակում է տետրակներով թիֆլիսում: Տետրակի գինը 25 կոպէկ:

## ՄԻ ՄԱՏԵՆԱԳԻՏԱԿԱՆ ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆ

«Արարատ» ամսագրի օգոստոսի տետրակում «Ազգային» բաժնում տպւած է պ. Արշակ Տէր-Միքէլեանի մի լողածը «Աստղկալ պատմութեան «կորած» գլուխները» վերնագրով, եր. 743—754, որտեղ պ. լողածագիրն ի միջի սպող հաղորդում է, թէ «Աստղկալ վերջին հրատարակողը հետամուտ էր եղել՝ ալզ պատմութեան երկրորդ գրքի Ե. և Զ. գլուխները ձեռք բերելու Վենետիկից, սակայն նորան պատասխանել են հռոմէական հաշրերն, որ իւրեանց օրինակում ևս պակասում են դոքա»: Անուշետե չալտնում է, թէ ինքը Պարիզի ազգային մատենադարանում դտել է այդ պակասած գլուխները, որոնք արտագրւած են եղել Վենետիկի Մխիթարեանց վանքի ձեռագրից 1855 թւին և ուղարկւած են եղել Գիւլտրիէ գիւնանկանին: Սորանից չեսող պ. Տէր-Միքէլեանը հրատարակում է այդ երկու գլուխները, իբրև նոր, անծանօթ:

Աստղիկի հրատարակութիւն՝ մեզ չալտնի են միայն երկու հատ, առաջինը Կարապետ վ. Շահնազարեանինը (Պարիզ, 1859 թ.) և երկրորդը՝ մերը (Ս. Պետերբուրգ, 1885 թ.): Թարգմանութիւն՝ Նոյնպէս երկու հատ գիտենք. առաջինը ռուսերէն, հանգուցեալ Մ. Էմինի ձեռքով (Մոսկւա, 1864 թ.) և երկրորդը Ֆրանսերէն (կիսատ), հանգուցեալ Գիւլտրիէի ձեռքով (Պարիզ, 1883 թ.): Իսկ թէ ով է պ. Տէր-Միքէլեանի չիշած «վերջին հրատարակողը», որին մերժած լինեն վենետիկցիք վերույշեալ գլուխները՝ չը գիտենք:

Բայց ինչիրը դորա մէջ չէ: Կ. վ. Շահնազարեանի հրատարակութեան մէջ պակասում են Աստղիկի պատմութեան երկրորդ գրքից՝ չորրորդ գլխի մի մասը (երեք երես), և հինգերորդ ու վեցերորդ գլուխներն ամբողջապէս: Մ. Էմինի և Ս. Գիւլտրիէի թարգմանութիւնների մէջ պակասում է չորրորդ գլխի վերջում մի փոքր հատւած (մի երես), իսկ հինգերորդ և վեցերորդ գլուխները թարգմանւած կան, Մ. Էմին մինչև իսկ Նոցա քնապիրը զետեղել է իւր թարգմանութեան 22-րդ չաւելւածում (եր. 323—329), առնելով այն Բրոսսէ ձեմարանականի օրինակից. իսկ Գիւլտրիէն այդ «կորած» գլուխները թարգմանել է Վենետիկի Մխիթարեան-

ների ձեռագրից: Գալով մեր հրատարակութեան՝ ակտիւ ամուլջապէս սպազրւած են թէ չորրորդ գլխի վերջին մասը և թէ հինգերորդ ու վեցերորդ գլուխները լրակատար (եր. 132—145): Այս կտորները սպազրւելիս՝ մենք բազդատութեան համար ձեռքի տակ ունեցել ենք չորս ձեռագիրներ. 1) Պր. Կ. Եղեանի մօտ գտնւածը, 2) Հ. Կիւրեղ վարդապետ Սրապեանի ձեռքով Կարապետ արքեպիսկոպոսի ձեռագրից արտասպաճը, 3) Մ. Էմինի սպազրւածը Բրտսէի օրինակից և 4) մի փոքր հատւած Չ. Գլխի, որ մեր խնդրով արտագրեց և մեզ ուղարկեց Վենետիկից Հ. Գարեղին վ. Զարբանալեան:

Այսպէս ուրեմն պ. Ա. Միքէլեանի հրատարակած երկու «կորած» գլուխները վաղուց չափոնի, սպազրւած և թարգմանւած են:

ՍՏ. ՄԱԼԻԱՆԵԱՆՅ:

## ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

ՀԵՆՐԻԿ ՍԵՆԿԵՒԻՉԻ «Առանց դաւանանքի» վէպի շարունակութիւնը ստացած չը լինելու պատճառով՝ չը կարողացանք հրատարակել այս անգամ:

† ՎԱԽՃԱՆԻՅԻՆ Ռուզուֆ Ֆոն Իհերինգ, հռչակաւոր գերմանացի իրաւագէտը. Էրնեստ Ռընան, տիեզերահռչակ ֆրանսիացի գրողը, հեղինակը Իարալէլացոց ազգի պատմութեան, Քրիստոնէութեան սկզբնաւորութեան պատմութեան և այլն, և Տենեիսոն՝ Անգլիացի ժամանակակից ամենանշանաւոր բանաստեղծը:

ՊՐՈՑ. Պ. Գ. ՇՌՈՒՄՅՐ մեզ գրած մի նամակով հաղորդում է, որ Լոնդոնում գումարած արեւելագէտները 9-րդ կոնգրեսի արիւական բաժնի նիստում առ 7 սեպտեմբ. (նոր տոմար) նա կարգաց մի ղեկուցում հակական ուսմունքների չառաջդրմութեան մասին, որը վերջացրեց առաջարկութիւնով՝ որ Կոնգրեսը հաւանութիւն տաչ կազմելու մի Միջազգային Ընկերութիւն հակական ուսմունքները չառաջացնելու համար (Société Internationale pour l'avancement des Etudes arméniennes), նման այն ընկերութիւններին, որոնք նոր ժամանակներումս հիմնւեցին Անգլիայում և Ֆրանսիայում լոնական ուսմունքների համար: Արիական բաժնի նախագահ պրոֆ. պ. Cowel-ի՝ Եկատողութիւններից և պրոֆ. պ. Մինաս Չերազի պաշտպանութիւնից լետոյ՝ Կոնգրեսը ընդունեց պ. Շրումֆի առաջարկը:

ՊՐՈՑ. Պ. Գ. Ի. ԽԱԼԱԹԵԱՆԻ գրածքի առիթով, տպւած «Մուրճ» № 6, «Արձագանք» օրաթերթի մէջ №№ 102 և 103 լոյս տեսաւ պ. Խ. Յովհաննիսեանի կողմից մի ընդդիմախօսութիւն, ուր լողածագիրը պնդում է իբր թէ պ. Խալաթեանը իւր լողածը չարմարացրել է պ. Ստ. Մալխասեանի լողածին, որ տպւած էր «Մուրճ» № 5: Բայց «Մուրճ»-ի խմբագրութեան կողմից նոյն № 6-ում չաւտարարւած էր որ պ. Խալաթեանի լողածը ստացւած էր լոյս տեսնելուց աւելի քան մի ամիս առաջ, մալխի վերջերքին,

երբ պ. Մալխասեանի լօղածը դեռ լսւք չէր տեսել: Այդպիսի լալտարարութիւնից չետնոյ, եթէ աւելին չասենք՝ տարօրինակ են թւում այն առասպելները որ պատմում է պ. Խ. Յովհան-Նիսեանը պ. Խալաթեանի լօղածի մասին:

**ՀԱՅ-ԲՈՇԱՆՆԵՐ «Մուրճ»-ի** այս համարում վերջացող լօղածի հեղինակ մեր աշխատակից պ. Գ. Վ. անցեանը գրում է մեզ՝ թէ այդ լօղ-  
ածը հանած է իւր մի աւելի ընդարձակ աշխատասիրութիւնից, որի պարունակութիւնն է բոշաների կեանքի աւելի մանրա-  
մասն ուսումնասիրութիւնը, բոշապէրէնի բառարանը, բոշապէ-  
րէն նախադասութիւններ և երգեր, բոշաների՝ անցեալը և մար-  
դաբանական տեղեկութիւններ բոշաների մասին:

**ՎՐԻՊԱԿՆՆԵՐ «Մուրճ» № 7—8.**

**Գ. Ա. Շրումֆի լօղածում՝**

- |         |        |                   |                    |
|---------|--------|-------------------|--------------------|
| էջ 1111 | տող 17 | տպւած է գերերում, | ուղիղն է դարերում: |
| » 1119  | » 13   | » propanda        | » propaganda       |
| » 1120  | » 14   | » որոնց իրանց     | » որոնք իրանց      |

**Ա. Արասխանեանցի լօղածում՝**

էջ 1148 տող 10—14 անգլիական մինիստրութիւնների ցուցակում սպը-  
դել են մի երկու անճշտութիւններ. ցուցակը պէտք է բարեփոխել  
այսպէս՝

1866—1868 մինիստրութիւն Գերբի և Գիզրաէլի (պահպանող.)

1868—1874 մինիստրութիւն Գլադստոնի (ազատամետ)

1874—1880 մինիստրութիւն լորդ Բիկոնսֆիլդի (պահպ.)

1880—1885 մինիստրութիւն Գլադստոնի (ազատ.)

1885 չունիս—1886 չունար մինիստ. Սալթբըրի (պահպ.)

1886 փետր.—1886 չունիս մին. Գլադստոնի (ազատ.)

1886—1892—մինիստրութիւն Սալթբըրի (պապահանողական):

**Շ-ի լօղածում (Քաղ. Տեսութիւն):**

- |         |             |                  |                    |
|---------|-------------|------------------|--------------------|
| էջ 1230 | տող 2       | տպւած է Վէյմուր, | պէտք է լինի Վէյմար |
|         | 14          | » զարգացմար      | » » զարգացման      |
|         | 19          | » ուր            | » » որ             |
|         | 8 (ներքեից) | 1758—65          | » » 1756—63.       |

**«Մուրճ» № 6 Երաժշտական քրոնիկում՝**

էջ 983 տող 6 տպւած է Տրաւիատա, ուղիղն է Տրովատոր:

---

Խմբագրէր՝ ԱԻԵՏԻՔ ԱՐԱՍԽԱՆԵԱՆԻՑ  
Հրատարակիչ՝ ՓԻՎԻՊՊՈՍ ՎԱՐԴԱԶԱՐԵԱՆՑ

---

## ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

### ԱՐՏԱՏՊԻԱԾ «ՄՈՒՐՃ» ԱՄՍԱԳՐԻՑ

	Բ. Կ.
«ՄՈՒՐՃ» ամսագիր, 1889 թ., երկու հատորով . . . . .	12 —
Նոյնը «Մուրճ»-ի այժմեայ բաժանորդների համար . . . . .	7 —
2. «ՄՈՒՐՃ» ամսագիր, 1890 թ. Լաիանի, երկու հատորով . . . . .	12 —
Նոյնը «Մուրճ»-ի այժմեայ բաժանորդների համար . . . . .	7 —
3. ՊՈՕՇԵԱՆՅ, ՊԵՐՃ.—«ՅԵՅԵՐ» (վէսյ) . . . . .	1 —
4. ՏԷՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆՅ, ԳՐԻԳՈՐ (ՂԳԼարցի)՝ «Մանուկների մարտողութ. գործարանների հիւանդութիւնները» . . . . .	— 05
5. ԱՏՐՊԵՏԵԱՆ, Ս.—«ԽԵԻ-ԿԱՐԱՊԵՏ», վէսյ հայ-կաթողիկեների կեանքից . . . . .	1 —
6. ԼԷՕ.—«ԿՈՐԱՇՆԵՐ» (վէսյ) . . . . .	— 50
7. Մ.-ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆՅ, Ս.—«ՀԱՅ ԳԻՒՂԱՅՈՒ ՍԵՒ ՕՐԸ» (Կեանքից պատկեր) . . . . .	— 40
8. ՍԱՐԳՍԵԱՆՅ, ԼԵՒՈՆ.—«ԱՅՅ ԹԻՒՐՔԱՅ-ՀԱՅԱՍՏԱՆԻՆ» . . . . .	— 60
9. ՊՈՕՇԵԱՆՅ, ՊԵՐՃ.—«ԲՂԴԷ», վէսյ . . . . .	1 20
10. ՓԱՓԱԶԵԱՆՅ, Վ.—«ԽԱԹ-ՍԱՐԱ» (հայ բոշան. կեանքից . . . . .	— 15
11. ՄԱՐԻՍԵԱՆ, աիկին Մ.—«ՀԵՂԻՆԷ» (մեծ վէսյ), ա. մասը . . . . .	— 50
12.       »               »               »               »               բ. մասը . . . . .	— 75
13. ՂԱՐԱԳԵՕԶԵԱՆՅ, Յ.—«ՍԵՒ-ԼԵՌՆՅԻՔ» (տոհմագ. պատկ.) . . . . .	— 15
14. ՆԱՄԱԼԵԱՆ, ԱԼԵՔՍԱՆԴՐ.—«ՀԱՐԵՒԱՆՆԵՐ» . . . . .	— 03
15.       »               »               «ՄԻՆԱՍԻ ԵԶԸ» . . . . .	— 03
16.       »               »               «ԵԶԻԴ ԱՂԶԻԿԸ» . . . . .	— 05
17.       »               »               «ԾԱՆՐ ՔԱՐԸ» . . . . .	— 03
18.       »               »               «ՆԻԱԶԻԱԾ ԿԵԱՆՔԸ» . . . . .	— 03
19.       »               »               «ՄԵՐ ԻՆՁԸ ԿԸ ՊԱԿՍԻ» . . . . .	— 03

20.	ՔԵՇՄԻՇԵԱՆՅ, ԱԼ.—«ԲՈՅՍԵՐԻ ՄԵԾԱՐԱՆՔԸ» . . . . .	— 15
21.	ԲԱԼԱՂԵԱՆ, ՍԱՄՈՒԷԼ.—«ՄԻԿՐՈԲՆԵՐԸ» . . . . .	— 10
22.	ՄԱՆՈՒԷԼԵԱՆՅ, ԼԵՒՈՆ.—«ՁԱԼԱԲԻՆԵՐԻ ԱՐՇԱԻԱՆՔԸ» . . . . .	— 10
23.	ՏՈՒԷՆ, ՄԱՐԿ.—«ԶԻԱՐՃԱԼԻ ՊԱՏՄԻԱԾՔՆԵՐ» . . . . .	— 15
24.	ՎՐՈՅՐ, Մ.—«ՊԵՏՐՈՍ ԱԴԱՄԵԱՆ» . . . . .	— 20
25.	ԱՐԾՐՈՒՆԻ, Վ. ԲԺՇ.—«ՀԻՊՆՈՏԻՍՄ» . . . . .	— 50
26.	ՄԱՆՈՒԷԼԵԱՆՅ, ԼԵՒՈՆ.—«ՏԻԳՐԱՆՈՒՀԻ» . . . . .	— 50

Գրվել է Վ. ԲժՇ-ի կողմից ընդհանուր խմբագրության համար, որը հրատարակվել է «ՄՍՐԿԵՆ» թերթի խմբագրության կողմից:

ՍՏԱՅԻՆՅՑ „ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԳՐԱԳԱՐԱՆԻ“ ԱՌԱՋԻՆ ԳԻՐՔԸ  
ԵՒ ՇՈՒՑՈՎ Կ՛ՈՒՂԱՐԿԻԻ ԲԱԺԱՆՈՐԳՆԵՐԻՆ

Առաջին Գրքի Բովանդատութիւնն է

- I Յառաջաբան. Հրատարակիչ:
- II Յովհաննէս Ամուս Կոմէնիոսն և նորա մանկավարժութիւնը.  
Յ. Բարխուդարեանց:
- III Պարիզի միջնակարգ դպրոցները (Լ. Լ. Մարկովից. Յ. Թ.):
- IV Ենայի ճեմարանական մանկավարժական սեմինարիոնը և  
նորա կազմակերպութիւնը. Յ. Բարխուդարեանց:
- V Բարոյական փիլիսոփայութիւն. Սահակ քհն. Սահակեանց:
- VI Կովկասեան մանկավարժների արդի դերը իրանց տաճկա-  
հպատակ ազգայինների գործում. Յ. Տէր-Միրաքեան:
- VII Համառօտ ծրագիր Ներսիս. Հոգ. ուսումնար. գիշերօթիկ  
սաների դպր. ճանապարհորդութեան. Ի. Յարութիւնեանց:
- VIII Կամքի զարգացումն (Հոգեբ.-մանկավ. խորհրդածութիւն.):
- IX Լինհարզ և Գերդրուդ, գործ Հայնրիխ Պետաւոցցու. Ի. Մ.
- X Գրագիտութ. Ռուսաստանի մէջ. (Վիճակագր. տեղեկութ.):
- XI Պրուսիայի ժողովր. դպր. մասին. (Վիճակ. տեղեկութ.):
- XII Բուլգարիայի դպրոցները. (Վիճակագր. տեղեկութիւններ):
- XIII Ընդհ. տեսութիւն մանկավարժ. աշխարհից. Մարթօնիկ:
- XIV Ընդհանուր Մանկավարժութիւն. Տ. Յիլլերի Ի. Յ.
- XV Մանկական խաղերի նշանակութ. դաստիարակն. համար:
- XVI Գրախօսութիւններ.

- 1) Արասխանեանց Աւետիք, Արևելեան ազգերի հին  
պատմութիւնը. Բար.
- 2) Prof. Dr. Lazarus, Ideale Fragen.
- 3) Rembrandt als Erzieher.

XII Մանկավարժական տեղեկութիւններ:

XIII Մի քանի խօսք. Յ. Բարխուդարեանց:

«ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԳՐԱԳԱՐԱՆ»-ի բաժանորդագրին է 2 ր.

Իւրաքանչիւր գիրքն առանձին արժէ. . . . . 1 ր. 50 կ.

Երկրորդ գիրքը լոյս կը տեսնի զեկտեմբերին: Բաժանորդագրութիւնը  
չարունակում է:

«Մանկավարժական Գրադարան»-ի խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ,  
Иоаннесу Бархударянъ. Николаевск. ул., № 23. Домъ Завриева.

Հրատարակիչ՝ ՅՈՎՀԱՆՆԵՍ ԲԱՐԽՈՒԴԱՐԱՆՅ:

ԻՍԿԱԿԱ՛Ն ԿԱՐԵՄԵՔԵՆԱՆԵՐ  
 „ԸՆԿԵՐՈՒԹԻՒՒՆ ԶԻՆԳԵՐԻ“ ՆԻՒ-ԵՕՐԿՈՒՄ

ԱՐԺԱՆԱՅԱԾ

աշխարհի մէջ կարեմեքեմաների բոլոր ցուցանանդէտներում

ԱՄԵՆԱԲԱՐՁՐ ՊԱՐԳԵՒՆԵՐԻ

կարեոր ընկերներ սան արկիւնների և աղյու օգնականներ  
 բոլոր արհեստագործների համար

ԳՏՆԻՈՒՄ ԵՆ ՄԻՄԻԱՅՆ

Թիֆլիսում: Զինգերի ընկերութեան կենդրոնական պահեստում: Գօ  
 օլիկնակի պրօպրիետարի վերայ: Մերիմանովի տան և նրա բաժանմունք-  
 ների մէջ:

Բազում: Մեքայիլեան փողոցում,  
 Մերզա Աւագեանի ա.  
 Քուլթայիսում: Բարվարի գէմ  
 Չերեկովի ա.  
 Բաթումում: Առիս-Մելիքեանի փո.

գոցում, Կազարի ա.  
 Առխարազում, Գոսպինի գւոր №  
 2, Տ. Աֆանասի  
 Երևանում՝ իմ ճամբորդ գործա-  
 կալների մօտ:

և նրանց ճանապարհորդ գործակալների Տօր

ՄԻԶԻՆ ԵՒ ՀԻՍԻՍԱՅՈՒՆ, ԵՒՐՈՊԱՅՈՒ ՀԱՄԱՐ ԶԻՆԳԵՐԻ ԵՒ ԸՆԿԵՐ,  
 ԳԼԽԱԻՐ ԳՈՐԾԱԿԱԼԻ ՄՕՏ

արտ. Նուլիս ստացած




առևտրական գրոշմը.



Գ. ՆԷՅԴԻԼԻՆԳԵՐ


Գնողները կարող են, եթէ կամենում են, գրամը հետզհետէ վճարել սակաւ քանակութեամբ, այն է՝ չարաթով կամ  
 աճառով և կամ ժամանակամիջոց ստանալ գրուականով գրամը վճարելու համար:

Յ. Գ. Զինգերի և ընկ. բոլոր պահեստներում գտնուում են մեքենաներին պատկանելի գործիքները, ինչպէս ևն  
 ասեղներ, թել, մուտաքս և այլ մեքենային պատկանելի իրերը և նրանց ամենազարաւոր գներով:



# THE LIBRARY

OF THE  
UNIVERSITY OF  
CAMBRIDGE



# ՏԵԽՆԻԿՈՒՄ ՄԻՏՎԱՅԴԷ

## Մաքսուհիայում (Գերմանիա)

ԳԻՐԵԿՏՈՐ՝ ՎԷՅՅԵԼ

ՄԵԲԵՆԱՆԵՐԻ-ԻՆՃԵՆԵՐԱԿԱՆ-ԴՊՐՈՅ.-ԱՐՀԵՍՏԱՆՈՅՆԵՐԻ  
ՎԱՐՊԵՏՆԵՐԻ ԴՊՐՈՅ

23-ԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Այս դպրոցը, որը գտանում է Միտլալդե, քաղաքում, Գերմանիայում, (Թագաւորութիւն Սաքսոնիա), տալիս է մի ամբողջացրած կրթութիւն ՄԵԲԵՆԱՆԵՐ շինելու և ջրաղաց-տեխնիկ և ջրաղացների շինութիւն:

Միտեմական ուսումով այդ հիմնարկութիւնը պատրաստում է հետեւեալ մասնագիտութիւնների համար.

1. Ինժեներներ և կոնստրուկտորներ՝ մեքենաներ շինելու, ելեքտրո-տեխնիկ և ջրաղացներ շինելու համար:

2. Ապագայ մեքենաների գործարանների տէրերին, որոնք իրանց ստորադրեալների չափ պէտք է հասկացողութիւն ունենան, այդ դպրոցը տալիս է սրաշաճաւոր կրթութիւն:

3. Ամեն ուրիշ տեսակ գործարաններ ունենալու համար, ուր հարկաւորում է մեքենաների սարք ու կարգ, որպէս՝ թղթի, փայտեմեքենայի գործարաններ, շաքի և ջրի աղացներ, մանկու, գործելու, ապակու, կրախմալի, չաքարի, ասեղների, պողպատէզրիչների, կահ-կարասիների, քիմիական գործարաններ, գազի, լուցիկի գործարաններ և այլն և այլն:

4. Գիրեկտորներ և կառավարիչներ պատրաստելու համար չիշւած գործարանների համար:

Արհեստանոցների վարպետների դպրոցը պատրաստում է վարպետներ՝ այդ բոլոր տեսակ մեքենաները շինելու համար:

Բնդունելութիւնը լինում է ամեն տարւայ ասլրիլի և հոկտեմբերի կէսին:

ՏԵԽՆՈԳՈՒԹԻԻՆԵՐ ուսման առաջին դպրոցում, նալած աշակերտի նախապատրաստութիւններին, լինում է 2<sup>1</sup>/<sub>2</sub> կամ 3 տարի, երկրորդ դպրոցում 1<sup>1</sup>/<sub>2</sub> տարի:

ՏԱՐԻՔԸ ընդունողի պէտք է լինի 16 տարեկանից ոչ պակաս:

Մտն 18<sup>89</sup>/<sub>90</sub> թւականին բոլոր աշակերտույների թիւն է 886, որոնցից Ռուսաստանից՝ 66 հոգի:

Դպրոցի բոլոր միւս մանրամասնութիւնների համար կարելի է գիմնել «ՄՈՒՐՆ» ԱՄՍԱԿՐԻ ԽՄԲԱԿՐԱՏՈՒՆԵՐ, ուր ի միջի աղոց կարելի է իմանալ ծրագրի, ամեն տեսակ ծախքերի և Միտլալդէի կեանքի և զբարոցի վարչութեան պահանջմանքների մասին:

THE HISTORY OF THE

REIGN OF

CHARLES

THE SECOND

BY

J. H. BURTON

The reign of Charles the Second was a period of great  
importance in the history of England. It was a time  
when the monarchy was at its height, and when the  
country was united under a single ruler. The king  
was a man of great ability and courage, and he  
led his people through many difficult times. His  
reign was marked by the Restoration of the  
monarchy, and by the great victory at the  
Battle of Marston. The king was a just and  
merciful ruler, and he was loved by his people.  
His reign was a golden age for England, and it  
was a time when the country was at its best.

